ՆԵՐԱՌՈՂ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ

3

ՄԵԹՈԴԱԿԱՆ

ՁԵՌՆԱՐԿ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՆԵՐԱՌՈՂ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ 3

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Երևան

Սեկո-Պրինտ
2025

ՀՏԴ 373:376(07)
ԳՄԴ 74.2+74.5g7
Ն 610

Ներառող դասավանդում 3: Մեթոդական ձեռնարկ մանկավարժների համար / Ն 610 Մնացականյան Լ.Ա. և ուրիշ.; Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն.- Եր.: Սեկո-Պրինտ, 2025.– 270 էջ:

Ձեռնարկը երաշխավորվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 03.02.2025 թվականի 324-Ա/2 հրամանով որպես ուսումնական նյութ:

Ձեռնարկը հրատարակության է երաշխավորվել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի խորհրդի կողմից:

Մասնագիտական խմբագիր՝ Լ.Ա.Մնացականյան

Գրախոսներ՝
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Թադևոսյան Հ.Վ.
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Մուրադյան Ս.Վ.

Հեղինակներ՝
Մնացականյան Լ.Ա.
Սարգսյան Թ. Ա.
Ադամյան Հ. Ա.
Մսրիկյան Գ. Ա.
Մարգարյան Հ. Հ.
Հայթյան Ս. Հ.
Բեջանյան Լ. Ջ.
Բալայան Լ. Բ.
Միքայելյան Ա. Ա.
Խալաթյան Ա. Բ.
Մկրտչյան Մ. Կ.

Խմբագիրներ՝ Սարգսյան Հ. Ա., Մարգարյան Հ. Հ., Սարգսյան Թ.Ա.

Համակարգչային ձևավորում՝ Ստեփանյան Ա.Ռ., Դավթյան Հ.Լ.

Սույն ձեռնարկի նպատակը հանրակրթական դպրոցների ուսուցիչներին և ուսուցչի օգնականներին համընդհանուր ներառական կրթության համատեքստում դասավանդման արդյունավետ ռազմավարությունների ներդրման և կիրառման գործընթացում տեսամեթոդական աջակցության տրամադրումն է: Այն 2024թ-ին հրատարակված համանուն ձեռնարկի տրամաբանական շարունակությունն է:

ՀՏԴ 373:376(07)
ԳՄԴ 74.2+74.5g7

ISBN 978-9939-1-2038-6

© Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 4
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ 7
ՕԺՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԱՐԲԵՐԱԿՈՒՄ 23
ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ԵՎ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ 38
Դասագրքերի և առարկայական ծրագրերի հարմարեցման սկզբունքները 38
ԲՏՃՄ առարկաների, մասնավորապես քիմիա առարկայի ներառականության ապահովումը նոր չափորոշչի լույսի ներքո 69
ՆԵՐԱՌՈՂ ԴԱՍԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ 86
Դասի պլանավորման մոտեցումներ 86
Ինչպես օգնել սովորողներին հմտանալ ընթերցանության մեջ 138
Դասի պլանավորումը նոր չափորոշչի և ներառականության լույսի ներքո «Իմ հայրենիքը» առարկայի դասերի օրինակով 160
Ներառական կրթության համատեքստում կիրառելի գործիքակազմը կենսաբանության դասերին 198
ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 235
Նախագծային ուսուցումը որպես ներառող դասավանդման միջոց 235
ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԹԻՄԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ 250

ՆԱԽԱԲԱՆ

«Ներառող դասավանդում» մեթոդական ձեռնարկի առաջին համարը հրատարակվել է դեռևս 2023 թվականին: Սույն ձեռնարկը երրորդն է և նախորդ երկու ձեռնարկների տրամաբանական շարունակությունը: Այս շարքի ձեռնարկների հիմնական նպատակն է կրթական բարեփոխումների արդի փուլում աջակցել ուսուցիչների և ուսուցչի օգնականների մասնագիտական զարգացմանը, ժամանակակից դասավանդման ռազմավարությունների, տեխնոլոգիաների, մեթոդների և հնարների կիրառմանը, դասերի նպատակային պլանավորմանը, ուսումնական գործընթացի համընդհանուր ներառականությանն ու մասնակցայնության ապահովմանը:

«Ներառող դասավանդում 3» մեթոդական ձեռնարկը բաղկացած է Ներածությունից և հետևյալ վեց բաժիններից՝ «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսումնառության արդյունքների գնահատում», «Օժտվածություն ունեցող սովորողների բացահայտում և աշխատանքի տարբերակում», «Դասագրքերի և առարկայական ծրագրերի հարմարեցումներ», «Ներառող դասի պլանավորում», «Նախագծային ուսուցումը ներառականության համատեքստում» և «Մանկավարժահոգեբանական աջակցության թիմի համագործակցություն»: Ձեռնարկում զետեղված է տասը հոդված, համապատասխանաբար՝ յուրաքանչյուր բաժնում՝ մեկից չորս հոդված:

Ձեռնարկն ամբողջովին գործնական ուղղվածություն ունի. դրանում զետեղված բոլոր հոդվածներում հիմնականում շեշտադրված են ուսուցման գործընթացում յուրաքանչյուր սովորողի, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ակտիվ ընդգրկվածություն ապահովող գործընթացները, միջավայրային հարմարեցումները, ուսումնադիտողական նյութերը, կիրառվող տեխնոլոգիաները, ռազմավարությունները, մեթոդները, ուսումնական գործունեության ձևերը և այլն:

«Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսումնառության արդյունքների գնահատման առանձնահատկությունները» հոդվածում ներկայացված է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսումնառության արդյունքների գնահատման մեթոդաբանությունը, որը մշակված է ՀՀ կրթության ոլորտում ներառական քաղաքականության զարգացման շրջանակներում: Մեթոդաբանությունը ներառում է անհատականացված և ճկուն մոտեցումներ, որոնք ուղղված են յուրաքանչյուր

սովորողի կարիքներին համապատասխան գնահատման գործընթացի ապահովմանը՝ առանց խտրականության: Հոդվածում ներկայացված մոտեցումները կաջակցեն ուսուցիչներին և մասնագետներին՝ ստեղծելու ուսուցման ներառական ու արդյունավետ միջավայր, որտեղ սովորողները կարող են լիարժեք զարգացնել իրենց ներուժը:

«Օժտվածություն ունեցող սովորողների բացահայտման և աշխատանքի տարբերակման առանձնահատկությունները» հոդվածում ներկայացված են օժտված երեխաների ուսումնասիրության մոտեցումները, տրված են օժտվածության տեսակները, դրսևորման ձևերը, օժտվածություն ունեցող սովորողների առանձնահատկությունները, ինչպես նաև բազմաթիվ գործնական խորհուրդներ՝ օժտվածություն ունեցող սովորողների հետ արդյունավետ աշխատելու համար:

«Դասագրքերի և առարկայական ծրագրերի հարմարեցումներ» խորագրի ներքո զետեղված հոդվածներում շեշտադրված են դասագրքերի և առարկայական ծրագրերի հարմարեցման սկզբունքները: Առաջարկվում են ուսումնական նյութերի անհատական հարմարեցումներ, որոնք կապահովեն տարբեր կարողություններ ունեցող սովորողների ներգրավվածությունը: Հիմնական ուշադրությունն ուղղված է այն մեթոդներին, որոնք ուսուցիչներին հնարավորություն են տալիս ավելի մատչելի և արդյունավետ դարձնել ուսուցման գործընթացը՝ հաշվի առնելով սովորողների անհատական կարիքները: Բարդ հասկացությունները մատչելի դարձնելու համար հատուկ կարևորվել է ուսումնական նյութերի պարզեցումը: Հեղինակները քիմիայի, պատմության, մաթեմատիկայի, կենսաբանության և այլ առարկաների համար օրինակներով ներկայացրել են պարզեցման մեթոդներ, բարդ թեմաները հետաքրքիր և հասկանալի դարձնելու համար զետեղել են բազմաթիվ գործնական առաջադրանքներ, օրինակներ, խաղային և փուլային ուսուցման մեթոդներ և այլն:

Ուսուցման գործընթացի արդյունավետությունը մեծապես կախված է դասի ճիշտ պլանավորումից: «Ներառող դասի պլանավորում» խորագրի ներքո զետեղված հոդվածներում ներկայացված են ներառող դասի պլանավորման առանձնահատկությունները տարրական դպրոցում և առարկայական դասաժամերին: Այս խորագրի տակ ներկայացված են նոր չափորոշիչներին համապատասխան կազմված օրվա դասերի ընդարձակ պլանների բազմաթիվ նմուշօրինակներ, որոնցում մեծ ուշադրություն է դարձված կրթության

առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին և նրանց ներգրավմանը ուսուցման գործընթացում:

Ուսումնական նախագծերի իրականացման պահանջը ամրագրված է Հանրակրթության պետական նոր չափորոշչով: Այն թույլ է տալիս ցուցաբերել անհատական մոտեցում և սովորողներին հնարավորություն է տալիս դրսևորել ինքնուրույնություն իրենց գործունեության պլանավորման ընթացքում: Նախագծային ուսուցումը կարող է նպաստել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթական, հուզական, սոցիալական և այլ հմտությունների զարգացմանը: «Նախագծային ուսուցումը ներառականության համատեքստում» հոդվածում անդրադարձ է կատարված ուսուցման գործընթացում ուսումնական նախագծերի կարևորությանը, ներառող դասավանդման համատեքստում նախագծային ուսուցման իրականացման առանձնահատկություններին:

«Մանկավարժահոգեբանական աջակցության թիմի համագործակցություն» հոդվածում ներկայացված են մանկավարժահոգեբանական աջակցության թիմի համագործակցության առանձնահատկությունները: Ինչպես կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման, այնպես էլ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման գործընթացներում առանցքային նշանակություն ունի կառուցողական փոխգործակցությունը՝ հիմնված փոխադարձ հարգանքի վրա: Առանձին ենթաբաժիններով անդրադարձ է կատարվել գնահատման գործընթացում տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների (ՏՄԱԿ) մասնագետների կողմից ծնողների հետ իրականացվող աշխատանքներում փոխվստահության ձևավորմանը, գնահատվող երեխայի հետ արդյունավետ կոնտակտ հաստատելու կարևորությանը, մասնագիտական արհեստավարժությանը, ՏՄԱԿ-ի և ուսումնական հաստատության ղեկավարների համագործակցությանը և հարակից այլ հարցերի: Առանձնահատուկ կերպով ընդգծվել է ղեկավարումը ժողովրդավարական կառավարման սկզբունքներին համահունչ իրականացնելու կարևորությունը:

Համոզված ենք, որ «Ներառող դասավանդում 3» մեթոդական ձեռնարկը մեծապես կօժանդակի ուսուցիչների մեթոդամանկավարժական գիտելիքների ու կարողությունների զարգացմանը, որն իր հերթին կրթական բարեփոխումների ներկա փուլում կնպաստի ուսուցման գործընթացի որակի ու արդյունավետության բարձրացմանը:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսումնառության արդյունքների գնահատման առանձնահատկությունները

2014 թվականից ՀՀ կառավարությունը սկսեց ակտիվորեն զարգացնել ներառական կրթության քաղաքականությունը՝ նպատակ ունենալով **կրթության մեջ** ապահովել **հավասար հնարավորություններ բոլոր երեխաների համար**: Այս քաղաքականության շրջանակներում անհրաժեշտություն առաջացավ մշակել մեթոդաբանություն, որը կերաշխավորի, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները գնահատվեն օբյեկտիվորեն և հարմարեցված ձևով՝ առանց խտրականության:

Հայաստանում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսումնառության արդյունքների գնահատման մեթոդաբանության մշակման անհրաժեշտությունն առաջացավ մի շարք պատճառներով, որոնք կապված են ինչպես կրթական, այնպես էլ սոցիալական մարտահրավերների հետ: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները հաճախ ունենում են անհատական կարիքներ, որոնք կարող են խոչընդոտել նրանց ուսումնառության արդյունքների արդար գնահատմանը: Օրինակ՝ տեսողության, լսողության, մտավոր և այլ դժվարություններով պայմանավորված՝ անհրաժեշտ էր մշակել գնահատման մեթոդներ, որոնք կարձագանքեին սովորողների առանձնահատկություններին և հնարավորություն կտային նրանց ցուցադրել իրենց իրական գիտելիքներն ու հմտությունները: Սա կարևորվեց հատկապես կրթական նոր չափորոշիչների ներդրման համատեքստում, քանի որ դրանք ուղղված են սովորողների **կարողունակությունների զարգացմանը**, այլ ոչ սոսկ տեղեկատվության վերարտադրմանը: ՀՀ հանրակրթության պետական չափորոշչի ներդրումը փոփոխություններ առաջ բերեց նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների գնահատման սկզբունքներում: ՀՀ նոր չափորոշիչները շեշտադրում են **անձնակենտրոն և ներառական մոտեցումները**, որոնք ապահովում են յուրաքանչյուր սովորողի կրթության հասանելիությունը և օգնում հետևել նրանց առաջընթացին՝ առանց

խախտելու կրթական հավասարության սկզբունքը: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների դեպքում ևս սա կարևոր է, քանի որ գնահատման ճկուն մեթոդները հնարավորություն կտան ոչ թե համեմատել նրանց մյուսների հետ, այլ գնահատել նրանց **անձնական աճը և առաջընթացը**:

2024 թվականի սեպտեմբերին ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից շրջանառության դրվեց «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսումնառության արդյունքների գնահատման մեթոդաբանություն» փաստաթուղթը[1], որի նպատակն էր պարզաբանում մտցնել ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թվականի փետրվարի 24-ի N 11-Ն հրամանի կետ 6-ում շարադրված՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների գնահատման գործընթացի վերաբերյալ:

Մեթոդաբանության մշակումն ուղղված էր ուսուցիչների աշխատանքի դյուրացմանը՝ հստակ ուղեցույցներ տրամադրելով, թե ինչպես պետք է գնահատել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսումնառության արդյունքները:

Իհարկե, պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները սահմանելու մասին ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թվականի փետրվարի 24-ի N 11-Ն հրամանի 6-րդ կետի համաձայն՝ «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների գնահատումն իրականացվում է նույն սկզբունքներով՝ ապահովելով սովորողի անհատական ուսուցման պլանով նախատեսված խելամիտ հարմարեցումները, մատչելի ձևաչափերը, անհատական օժանդակ սարքավորումներն ու միջոցները», այնուամենայնիվ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների գնահատման գործընթացում դեռևս առկա են դժվարություններ և տարակարծություններ: «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը» ընդգրկուն հասկացություն է, ինչը ենթադրում է, որ սովորողը գնահատման գործընթացում կարող է ունենալ պարզագույն միջավայրային հարմարեցումներից մինչև անհատական խելամիտ հարմարեցումների, գնահատման ձևերի և բովանդակության հարմարեցման կամ պարզեցման կարիք:

[1] «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսումնառության արդյունքների գնահատման մեթոդաբանություն», Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Կրթության զարգացման և նորարարության ազգային կենտրոն, 2024:

Այսպիսով, անհրաժեշտություն էր առաջացել մշակելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսումնառության արդյունքների գնահատման մեթոդաբանություն:

Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները սահմանելու մասին ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թվականի փետրվարի 24-ի N 11-Ն հրամանի կետ 6-ի համաձայն՝ «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների գնահատումն իրականացվում է նույն սկզբունքներով՝ ապահովելով սովորողի անհատական ուսուցման պլանով նախատեսված խելամիտ հարմարեցումները, մատչելի ձևաչափերը, անհատական օժանդակ սարքավորումներն ու միջոցները»:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների գնահատումն իրականացվում է վերոհիշյալ փաստաթղթի նույն սկզբունքներով, 1-10 միավորային սանդղակի բնութագրիչներին համապատասխան, որի բոլոր միավորները դրական են, ինչպես նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանի հիման վրա՝ ելնելով հետևյալ մոտեցումներից.

1. Եթե կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողը ուսումնառության արդյունքների գնահատման ժամանակ ունի միջավայրային հարմարեցումների և/կամ անհատական, խելամիտ հարմարեցումների կարիք, ապա.
   1) Սովորողի ուսումնառության արդյունքների գնահատումն իրականացվում է ընդհանուր դասարանի համար նախատեսված գնահատման նույն ձևաչափով՝ ապահովելով սովորողի անհատական ուսուցման պլանով նախատեսված միջավայրային հարմարեցումները, խելամիտ հարմարեցումները, մատչելի ձևաչափերը և անհատական օժանդակ սարքավորումներն ու միջոցները:
   2) Հայտորոշիչ, ձևավորող և ամփոփիչ գնահատման ձևեր ընտրելիս ուսուցիչը պետք է առաջնորդվի նրանով, որ խելամիտ հարմարեցումները սովորողի համար անհատական են և չեն տարածվում այլ սովորողների վրա: Օրինակ, եթե սովորողը տեքստը 24 տառաչափով կազմելու կարիք ունի, բնական է, որ դրա անհրաժեշտությունը չկա մնացած սովորողների համար, կամ եթե սովորողը գրավոր աշխատանքը համակարգչով գրելու հարմարեցման կարիքն ունի, այլ ոչ ձեռագրով, ինչպես մյուս սովորողները,

կամ թեստը նկար-բառերով փոխարինելու և այլն, այդ հարմարեցումները վերաբերում են կոնկրետ սովորողներին և չպետք է ազդեն մնացած սովորողների գնահատման ձևաչափի վրա: Նույնը վերաբերում է գրավոր աշխատանքը բանավոր աշխատանքով և հակառակը փոխարինելու դեպքերին:

2. Եթե կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողն ունի ուսումնական ծրագրերի բովանդակային հարմարեցման կարիք, ապա.
   1) Սովորողի ուսումնառության արդյունքների գնահատումն իրականացվում է ուսուցչի կողմից ողջ դասարանի համար ընտրված ձևաչափով՝ գնահատման առաջադրանքների մեջ, ինչպես և մնացած բոլոր դեպքերում՝ ներառելով նաև 1-ին կարգի բարդության առաջադրանքներ կամ հարցեր՝ հաշվի առնելով սովորողի անհատական ուսուցման պլանով սահմանված նպատակները:
   2) Ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների 2-րդ, 3-րդ և 4-րդ աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողի կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ գնահատումն իրականացվում է ընդհանուր դասարանի համար կազմված ձևաչափից առանձին՝ սովորողի անհատական ուսուցման պլանում սահմանված նպատակների հիման վրա և համապատասխանեցվում է 1-10 միավորային սանդղակի բնութագրիչներին: Այն դեպքում, երբ սովորողի անհատական ուսուցման պլանում սահմանված նպատակները չեն ապահովում 10 միավորային սանդղակի 1 միավորը, սովորողի նիշը կլորացվում է մինչև 1 միավոր[2]:

[2] Տվյալ կետը վերաբերում է միայն ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների 2-րդ, 3-րդ և 4-րդ աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողի գնահատմանը:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսումնառության գնահատման գործընթացի հարմարեցումներ

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսումնառության արդյունքների գնահատումը պահանջում է առանձնահատուկ մոտեցումներ՝ հաշվի առնելով նրանց անհատական կարիքները և կարողությունները: Ստորև ներկայացված են այն հիմնական առանձնահատկությունները, որոնք պետք է հաշվի առնել այս գործընթացում:

Անհատականացված մոտեցում

Նախքան գնահատման մեթոդների ընտրությունը անհրաժեշտ է հասկանալ սովորողի ուժեղ կողմերը, սահմանափակումները և ուսուցման նախընտրելի ոճը: Ուստի գնահատման գործընթացն արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է սովորողի անհատական ուսուցման պլանի մշակման գործընթացում ներգրավել ծնողներին, ինչպես նաև մյուս մասնագետներին (լոգոպեդներ, հատուկ մանկավարժներ):

Մասնավորապես՝

- Եթե սովորողը ավելի լավ է ընկալում տեսողական տեղեկատվությունը, ապա օգտագործվում են գրաֆիկներ, պատկերներ կամ տեսանյութեր:
- Եթե սովորողն ունի լսողական խնդիրներ, նյութը մատուցվում է տեսողական կամ գրավոր ձևով:

Անհատական մոտեցումը նպաստում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի ուսուցման արդյունավետության բարձրացմանը՝ ապահովելով ներառական միջավայր, որտեղ նա իրեն հարմարավետ է զգում և կարող է ցուցադրել իր իրական ներուժը: Գնահատման գործընթացը պետք է համապատասխանեցվի սովորողի ուսումնական ծրագրին և առանձնահատուկ կարիքներին:

Ժամանակի ավելացում՝ հաշվի առնելով սովորողի ուսումնառության տեմպը

Սովորողները սովորում են տարբեր տեմպերով, ուստի գնահատման համար տրամադրվում է բավարար ժամանակ, որպեսզի սովորողն առանց շտապելու կարողանա կենտրոնանալ և պատասխանել: Օրինակ՝ եթե ստանդարտ թեստի համար նախատեսված է 30 րոպե, սովորողին կարելի է տրամադրել 45-60 րոպե՝ առանց սթրեսի աշխատելու համար:

Մասնավորապես՝

- Եթե սովորողն ունի լսողության հետ կապված խնդիրներ, ապա լրացուցիչ ժամանակ կպահանջվի տեսողական նյութերի ընկալման ու մշակման համար:
- Եթե սովորողն ունի հաղորդակցման խնդիրներ, ապա անհրաժեշտ կլինի տրամադրել լրացուցիչ ժամանակ՝ առաջադրանքները կատարելու համար, քանի որ նա կարող է ավելի երկար մտածել կամ ուշ արձագանքել:
- Եթե սովորողն ունի ինտելեկտուալ խնդիրներ, ապա պետք է ապահովվի բավարար ժամանակ՝ առաջադրանքները կատարելու համար, քանի որ սովորողին կարող է ավելի երկար ժամանակ պահանջվել կենտրոնանալու համար կամ դանդաղ արձագանքել, ինչպես նաև պարբերաբար դադարների կարիք ունենալ՝ հոգնածությունից խուսափելու համար:

Կարևոր է չշտապեցնել և թույլ տալ սովորողին աշխատել իր «սեփական» արագությամբ:

Զարգացման առաջընթացի մշտադիտարկում

Կարևոր է, որ գնահատումը կենտրոնանա սովորողի սեփական առաջընթացի վրա, իսկ արդյունքները ցույց տան, թե ինչպես է սովորողը հասնում իր անհատական նպատակներին: Կարևոր է գնահատել սովորողի իրական հմտությունները:

Օրինակ՝

- Եթե առաջադրանքը պահանջում է ձեռքով ինչ-որ բան ստեղծել, բայց դա ֆիզիկապես դժվար է, անհրաժեշտ է առաջարկել այլընտրանք:
- Հաղորդակցման խնդիրներ ունեցող սովորողների գնահատման գործընթացում պետք է հաշվի առնել նրանց զարգացման յուրահատկությունները, հաղորդակցման հնարավորությունները, սոցիալական դժվարությունները և զգայական առանձնահատկությունները:
- Ինտելեկտուալ խնդիրների դեպքում անհրաժեշտ է խուսափել գնահատման այնպիսի չափանիշներից, որոնք վեր են հանում միայն սովորողի դժվարությունները:

Գնահատման մատչելի կամ այլընտրանքային եղանակներ

Սովորողի ուսումնառության գնահատման նպատակով անհրաժեշտ է

կիրառել ոչ միայն ստանդարտ թեստեր կամ գրավոր աշխատանքներ, այլև այլընտրանքային մեթոդներ, օրինակ՝ օգտագործել մատչելի (վիզուալ նյութեր՝ նկարներ, նշաններ կամ գծապատկերներ, աուդիո ձևաչափերով հարմարեցված նյութեր, պարզեցված հարցաշարեր) կամ անհատական ձևաչափեր[3]: Օրինակ՝

- Տեսողության խնդիրների դեպքում կարելի է օգտագործել **աուդիո ձայնագրություններ**՝ հարցերը կամ առաջադրանքները ձայնագրելու համար, առաջադրանքները տրամադրել գունային մեծ հակադրությամբ (դեղին ֆոնին սև տառեր), իսկ տեքստերը կարող են տրամադրվել **հատուկ ձևաչափերով**՝ Բրայլի այբուբենով, խոշոր տառերով կամ թվային տարբերակով:
- Լսողության խնդիրների դեպքում անհրաժեշտ է խուսափել առաջադրանքներից, որոնք գերազանցապես հիմնված են լսողական ընկալման վրա: Օրինակ՝ թեստերը, որոնք ներառում են աուդիո նյութերի վերլուծություն, պետք է փոխարինել գրավոր կամ տեսողական առաջադրանքներով: Բանավոր հարցերը պետք է կրկնվեն դանդաղ, պարզ և ուղեկցվեն տեսողական հուշումներով[4]:
- Եթե սովորողը դժվարանում է գրել, գնահատումը կարելի է իրականացնել բանավոր զրույցի կամ նկարների միջոցով, ինչպես նաև բոլոր հնարավոր և անհրաժեշտ դեպքերում գիտելիքների ստուգմանն ուղղված բանավոր հանձնարարությունները կարելի է փոխարինել գրավոր հանձնարարություններով և հակառակը:
- Շարժողական խնդիրների դեպքում ձեռագիր գրառումները փոխարինել տպագիր կամ տեխնոլոգիական գործիքներով, օրինակ՝ ստեղնաշարով գրելով: Եթե սովորողը դժվարանում է գրել, առաջարկել օգտագործել խոսքը գրի վերածող (speech-to-text) ծրագրեր կամ պարզապես պատասխանել բանավոր կամ ձայնագրված տարբերակով: Առաջադրանքները վերանայել այնպես, որ դրանք նվազագույնի հասցնեն շարժողական ջանքերը: Օրինակ, եթե թեստը պահանջում է երկար գրավոր պատասխաններ, թույլատրել հակիրճ պատասխաններ կամ առաջարկել

[3] Graham, S., & Harris, K. R. (2013). *Writing better: Effective strategies for teaching students with learning difficulties*:

[4] Marschark, Marc, and Peter E. Spencer. The Oxford Handbook of Deaf Studies, Language, and Education. Vol. 2, Oxford UP, 2011.

բանավոր տարբերակ[5]:

- Եթե սովորողը դժվարանում է բանավոր հաղորդակցման մեջ, թույլատրել պատասխանել գրավոր, նկարազարդումների կամ այլընտրանքային հաղորդակցման համակարգերի (օրինակ՝ PECS՝ նկարների փոխանակման համակարգ) միջոցով: Բոլոր հարցերը կամ հրահանգները ձևակերպել պարզ, ուղիղ և բառերի նվազագույն օգտագործմամբ: Հաղորդակցման խնդիրների դեպքում հնարավոր է՝ սովորողի գնահատման ձևաչափը փոխելու անհրաժեշտություն առաջանա՝ օգտագործելով սովորողի հետաքրքրության ոլորտները: Օրինակ՝ եթե սովորողը սիրում է կենդանիներ, մաթեմատիկայի առաջադրանքները կարելի է ձևակերպել կենդանիների հետ կապված օրինակներով, կամ, օրինակ՝ սովորողը կարող է օգտագործել պլանշետ, որտեղ հարցերին պատասխանում է՝ սեղմելով պատկերների կամ բառերի վրա[6]:
- Խոսքի հետ կապված խնդիրներ ունեցող սովորողների գնահատման գործընթացը պետք է հարմարեցնել՝ հաշվի առնելով նրանց հաղորդակցման դժվարությունները, հստակ արտահայտվելու կամ խոսքը լսելի դարձնելու բարդությունները: Հարմարեցումները պետք է ապահովեն, որ սովորողը կարողանա արտահայտել իր գիտելիքները և հմտությունները այլընտրանքային եղանակներով՝ առանց հաղորդակցական սահմանափակումների ազդեցության: Օրինակ՝ տրամադրել պարզ թեստեր կամ առաջադրանքներ, որտեղ առաջարկված տարբերակներից պետք է ընտրել ճիշտ պատասխանը[7]:
- Աշխատանքները կատարելու ընթացքում տրամադրեք դադարներ գերհոգնածությունից խուսափելու համար:

Գնահատման բովանդակության հարմարեցում

Եթե կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողն ունի նաև ուսումնական ծրագրերի բովանդակային հարմարեցման կարիք, ապա

---

[5] «Կրթության կազմակերպման գործընթացում կիրառվող աջակցող տեխնոլոգիաներ», Ուղեցույց-ձեռնարկ. - Եր.: Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2023. -148 էջ:

[6] Beukelman, David R., and Pat Mirenda. Augmentative and Alternative Communication: Supporting Children and Adults with Complex Communication Needs. 5th ed., Baltimore: Brookes, 2020.

[7] Fogle, Paul T. Foundations of Communication Sciences and Disorders. 3rd ed., Delmar Cengage Learning, 2019.

գնահատման բովանդակությունը կազմվում է այնպես, որ դրանք համապատասխանեն սովորողի հնարավորություններին և նրա՝ անհատական ուսուցման պլանով սահմանված նպատակներին: Ինտելեկտուալ խնդիրներ ունեցող սովորողների գնահատման գործընթացը պետք է հարմարեցվի՝ հաշվի առնելով նրանց մտավոր զարգացման մակարդակը, ընկալման արագությունը, հիշողության դժվարությունները և ուսուցման առանձնահատկությունները[8]: Հարմարեցումները պետք է նպատակաուղղված լինեն նյութի և/կամ հրահանգների պարզեցմանը, ուշադրության կենտրոնացմանը և նրանց իրական կարողությունների բացահայտմանը:

Օրինակ՝

- Եթե սովորողը դժվարանում է գրել, հնարավոր է առաջարկել բազմակի ընտրության հնարավորություն տվող հարցեր, վիզուալ առաջադրանքներ կամ բանավոր պատասխաններ:
- Առաջադրանքների քանակը կամ բարդությունը կարող է հարմարեցվել սովորողի գիտելիքների մակարդակին՝ առանց ուսումնական նպատակները փոխելու:
- Առաջադրանքները ներկայացվում են պարզ և հասկանալի լեզվով՝ խուսափելով բարդ ու մասնագիտական եզրույթներից:
- Բովանդակությունը բաժանվում է ավելի փոքր, հեշտ իրականացվող քայլերի՝ նվազեցնելով տեղեկատվական ծանրաբեռնվածությունը: Եթե առաջադրանքը պահանջում է բազմակի գործողություններ, կարելի է այն բաժանել առանձին մասերի «մեկ հարց, մեկ քայլ» սկզբունքով:
- Տեքստային նյութերը ներկայացվում են հստակ կառուցվածքով, առանց բարդ և երկիմաստ ձևակերպումների:

Գնահատման միջավայրի հարմարեցում

Գնահատման միջավայրի հարմարեցումը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար կարևոր դեր ունի՝ նրանց ուսուցումը և գնահատման գործընթացը հնարավորինս արդյունավետ և հասանելի դարձնելու համար: Ահա հարմարեցման մի քանի օրինակներ.

[8] American Psychological Association. Intellectual Disability: Definition, Classification, and Systems of Supports. 12th ed., Washington: APA, 2019.

- Հաշվի առնել ֆիզիկական, ճանաչողական կամ հոգեբանական խնդիրները: Օրինակ՝ երկարաձգել հանձնարարության կատարման ժամանակը կամ առաջարկել հանգիստ միջավայր:
- Գնահատումն անցկացնել հանգիստ և աղմուկից զերծ միջավայրում՝ նվազագույնի հասցնելով խանգարող գործոնների ազդեցությունը:
- Ապահովել ճիշտ լուսավորություն:
- Գնահատման գործընթացը կազմակերպել այնպես, որ ֆիզիկական միջավայրը հարմար լինի սովորողին. օրինակ՝ հարմարավետ նստատեղեր, հասանելի աշխատանքային տարածք:
- Ստեղծել հանգիստ և վստահություն ներշնչող մթնոլորտ, որտեղ սովորողը չի վախենա սխալվելուց կամ քննադատությունից:
- Սովորողին նախապես ծանոթացնել գնահատման գործընթացին, տարածքին և օգտագործվող նյութերին՝ նվազեցնելու անորոշությունից առաջացող անհանգստությունը:
- Եթե սովորողը ունի հաղորդակցման դժվարություններ, գնահատումը կազմակերպել հանգիստ և կանխատեսելի միջավայրում, որտեղ քիչ են ուշադրությունը շեղող գործոնները (հնչյուններ, լույսեր, վառ գույներ):
- Եթե սովորողը կարդում է շրթունքներից, ապա անհրաժեշտ է նրան նստեցնել դասասենյակի այն հատվածում, որտեղից ուսուցիչը կամ գնահատող անձը լավ տեսանելի են՝ խոսքի ընթերցման հնարավորությունն ապահովելու համար[9]:

Աջակցող անձնակազմի ներգրավում

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսումնառության գնահատման գործընթացում աջակցող անձնակազմի ներգրավումը կարևոր է, քանի որ այն նպաստում է գործընթացի ավելի ներառական և արդյունավետ կազմակերպմանը: Աջակցող անձնակազմը կարող է գնահատման ժամանակ պարզեցնել առաջադրանքները՝ դրանք մատչելի դարձնելով սովորողի համար: Սովորողի ուսումնառության արդյունքների գնահատման գործընթացում ուսուցչին կարող են աջակցել տարբեր

[9] Graham, Steve, and Karen R. Harris. *Writing Better: Effective Strategies for Teaching Students with Learning Difficulties*. Baltimore: Brookes, 2013.

մասնագետներ՝ ուսուցչի օգնական, հատուկ մանկավարժ, լոգոպեդ, հոգեբան, սոցիալական մանկավարժ, ինչպես նաև ծնողներ:

Աջակցությունը կարող է ունենալ հետևյալ հիմնական նպատակներն ու գործառույթները.

- Աջակցել կրթության առանձնահատուկ պայմանների ապահովման նպատակով, ինչպես օրինակ՝
  - օգնել կազմել սովորողի կարողություններին համապատասխան անհատական հարմարեցված առաջադրանքներ, թեստեր,
  - օգնել հարմարեցնել ֆիզիկական, հոգեբանական կամ հաղորդակցման միջավայրերը սովորողի կարիքներին (օրինակ՝ լոգոպեդը կարող է օգնել հաղորդակցման խնդիրներ ունեցող սովորողին հստակ արտահայտվելու կամ այլընտրանքային հաղորդակցման միջոցներ օգտագործելու հարցում):
- Աջակցել սովորողի կարիքների նախնական գնահատմանը: Օրինակ, եթե սովորողն ունի լսողության խնդիր և կրում է լսողական սարք, ապա սուրդոմանկավարժը կամ լոգոպեդը պետք է աջակցեն ուսուցչին՝ ապահովելու սովորողի լսողական սարքի անխափան աշխատանքը, ինչպես նաև առաջարկեն նրան բանավոր հրահանգները փոխարինել գրավոր ցուցումներով կամ առաջադրանքներով: Հատուկ մանկավարժը կարող է օգնել ուսուցչին վերաձևակերպել բարդ հարցերը՝ դրանք ավելի հասկանալի դարձնելով սովորողի համար:
- Աջակցել սովորողին որպես օգնական, օրինակ՝ տեսողության խնդիրներ ունեցող սովորողին աջակցել ընթերցելիս կամ գրառումներ կատարելիս (հանձնարարությունը կատարելու ժամանակ աջակցողը կարող է գրի առնել սովորողի բանավոր պատասխանը), լսողության խնդիրներ ունեցողին (անհրաժեշտության պարագայում) աջակցել որպես ժեստերի լեզվի թարգմանիչ, շարժողական խնդիրներ ունեցող սովորողին՝ թեստերը լրացնելու, գրելու կամ նյութերի կազմակերպման հարցում, ձայնագրել սովորողի պատասխանը, եթե գրելը կամ այլ տեխնոլոգիաներ կիրառելը հնարավոր չէ ապահովել[10], ինտելեկտուալ խնդիրների պարագայում՝

[10] UNICEF. Guidelines on Inclusive Education for Children with Physical Disabilities. New York: UNICEF, 2018.

կրկնել առաջադրանքի կամ հարցի հրահանգները՝ ապահովելով, որ սովորողը ճիշտ հասկանա այն: Կարևոր է, որ օգնականը լինի միայն օժանդակ դերում՝ առանց սովորողի փոխարեն պատասխանելու կամ արդյունքների վրա ազդելու:

Մոտիվացիա և աջակցություն

Հարկավոր է խրախուսել սովորողին իր յուրաքանչյուր փոքր հաջողության համար՝ ձևավորելով ինքնավստահություն և մոտիվացիա:

Օրինակ՝

- Գնահատման արդյունքները ներկայացնել խաղային ձևով կամ տրամադրել ստեղծագործական առաջադրանքներ, որոնք կհետաքրքրեն սովորողին:
    - Կենտրոնանալ գնահատման ընթացքի, ոչ թե միայն վերջնական արդյունքի վրա: Սա նպաստում է սովորողի մոտիվացիայի բարձրացմանը:
    - Պարբերաբար վերահսկել և գնահատել առաջընթացը՝ խթանելու ուսուցման գործընթացը:
    - Սովորողի գրավոր աշխատանքները ստուգելիս հասկանալ նրա սխալների պատճառները և հնարավորություն տալ ուղղել դրանք այդ պահին, ինչը թույլ կտա հասկանալ, թե նա հատկապես ինչ բնույթի սխալներ է թույլ տալիս:
    - Գնահատել պատասխանը՝ անտեսելով սովորողի խոսքի տեմպի, ռիթմի, սահունության հետ կապված խանգարումները:
    - Գնահատել միայն ճիշտ նշված տարբերակները՝ չկենտրոնացնելով սովորողին սխալների վրա և օգտագործելով կանաչ գույնի գրիչ՝ գրված ճիշտ տարբերակներն ընդգծելու համար:
    - Բառերի ուղղագրության իմացությունը գնահատելիս գրիչը բռնելու և գրելու դժվարություններ ունեցող սովորողին թույլ տալ գրել միայն այն բառերը, որոնք վերաբերում են բուն թեմային: Գրավոր աշխատանքները ստուգելիս ուղղել միայն թեմայի հետ կապված սխալները և չկենտրոնանալ տեխնիկական խնդիրների վրա, ինչպիսիք են անհամաչափ գրված տառերը, բառերի միջև անհամաչափ հեռավորությունները, տողի և լուսանցքի սահմաններից դուրս գալը և այլն:

Կառուցողական և խթանող հետադարձ կապ

Գնահատումը պետք է ունենա խրախուսող բնույթ՝ ցույց տալով սովորողի ուժեղ կողմերն ու հնարավորությունները: Կարևոր է՝

- Ապահովել, որ սովորողը հասկանա իր ուժեղ և թույլ կողմերը, ինչը կօգնի նրան բարելավել հմտությունները:
- Եթե սովորողը սխալվում է, առաջարկել հուշում կամ ուղղորդել, որը կօգնի հասկանալ սխալը:
- Հաճախակի տրամադրել դրական արձագանքներ (feedback)՝ ընդգծելով սովորողի ուժեղ կողմերը: Օրինակ՝ «Ապրես, դու ճիշտ ես լուծել այս խնդիրը, արի փորձենք հաջորդ քայլը»:
- Կիրառել պարգևատրման համակարգ՝ սովորողին մոտիվացնելու համար:

Աջակցող տեխնոլոգիաների կիրառում

Միայն մատչելի ֆիզիկական միջավայրով դպրոցական շենքերի ստեղծումը բավարար չէ՝ ապահովելու կրթության համապատասխան հասանելիություն բոլոր երեխաների համար: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կարողությունները կարող են մեծապես ընդլայնվել, եթե առկա լինեն համապատասխան աջակցող սարքեր և տեխնոլոգիաներ՝ արձագանքելու նրանց կրթական կարիքներին: Աջակցող տեխնոլոգիաներն օգնում են սովորողներին սովորել, խթանում են հաղորդակցումը, բարելավում տեղեկատվության հասանելիությունը, մեծացնում անկախությունը տանը, դպրոցում և համայնքում[11]:

- Թույլատրել սովորողին օգտագործել էլեկտրոնային ընթերցողներ, խոշորացույց ծրագրեր, տեքստի ընթերցիչներ կամ այլ հարմարանքներ: Տեքստի ընթերցիչները նպաստում են տեքստի վրա կենտրոնանալուն, նվազեցնում բառերը և տողերը բաց թողնելու հավանականությունը, հեշտացնում հաջորդ տող տեղափոխվելը (նկար 1):



Նկար 1: Տեքստի ընթերցիչ

[11] "Assistive Technology for Children with Disabilities" (UNICEF) https://www.unicef.org/media/126246/file/Assistive-Tech-Web.pdf

- Ապահովել համակարգիչ կամ պլանշետ, որոնք դասարանում կարող են օգտագործվել որպես աջակցող տեխնոլոգիա՝ առաջադրանքները կատարելու համար, տեքստային խմբագրիչներ, որոնք կօգնեն սովորողին շրջանցել ձեռքով գրելու դժվարությունը: Համակարգիչներն ունեն մատչելիության բազմաթիվ կարգավորումներ, որոնք հեշտացնում են դրանց օգտագործումը՝ խոշորացում, մեծ տպագրություն, բարձր գունային հակադրությամբ էկրան և այլն (նկար 2):

Նկար 2: Զգայական էկրանով պլանշետ

- Այլընտրանքային հաղորդակցման համակարգեր և մեթոդներ, որոնք կօգնեն սովորողին արտահայտել իր ցանկություններն ու կարիքները:
- Աջակցող սարքեր ու տեխնոլոգիաներ, որոնք կարող են օգնել երեխային հաղթահարել մաթեմատիկական դժվարությունները (հաշվիչներ, գրաֆիկական թուղթ, մատիտներ սխալները ջնջելու համար, բռնակով քանոններ (նկար 3), հեռախոսային հիշեցումներ ու զարթուցիչներ, որոնք կօգնեն երեխային հետևել ժամանակին)[12]:

Նկար 3: Բռնակով

- Մանր մոտորիկայի համար նախատեսված սարքեր՝ հարմարեցված մկնիկ, ստեղնաշար, հարմարեցված գրիչ, ռետինե բռնակներ մատիտի և գրչի համար և այլն (նկար 4):

Նկար 4: Ռետինե բռնակներ մատիտի և գրչի համար

[12] UNICEF. Assistive Technology for Children with Disabilities: Creating Opportunities for Education, Inclusion, and Participation. New York: UNICEF, 2015.

- Թույլատրել սովորողին օգտվել օժանդակ տեխնոլոգիաներից, օրինակ՝ լսողական սարքեր, հուշող սարքեր կամ ենթագրեր (նկար 5):

Նկար 5: Հուշող սարք

Այսպիսով, պետք է հիշել, որ այս հարմարեցումներն ուղղված են ուսուցման և գնահատման հավասար հնարավորությունների ապահովմանը, ինչպես նաև սովորողի իրական կարողությունները ճիշտ գնահատելուն:

Գնահատման պայմանների հարմարեցումը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար կարևոր է՝ նրանց ուսուցումը և գնահատման գործընթացը հնարավորինս արդյունավետ և հասանելի դարձնելու համար: Այս մոտեցումները նպաստում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ներառմանը, նրանց անհատական զարգացմանը և ուսումնառության նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսումնառության արդյունքների գնահատման մեթոդաբանություն», Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Կրթության զարգացման և նորարարության ազգային կենտրոն, 2024:
2. «Կրթության կազմակերպման գործընթացում կիրառվող աջակցող տեխնոլոգիաներ», Ուղեցույց-ձեռնարկ. - Եր.: Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2023. -148 էջ:
3. "Assistive Technology for Children with Disabilities" (UNICEF) https://www.unicef.org/media/126246/file/Assistive-Tech-Web.pdf
4. American Psychological Association. Intellectual Disability: Definition, Classification, and Systems of Supports. 12th ed., Washington: APA, 2019.
5. Beukelman, David R., and Pat Mirenda. Augmentative and Alternative Communication: Supporting Children and Adults with Complex Communication Needs. 5th ed., Baltimore: Brookes, 2020.
6. Fogle, Paul T. Foundations of Communication Sciences and Disorders. 3rd ed., Delmar Cengage Learning, 2019.
7. Graham, Steve, and Karen R. Harris. Writing Better: Effective Strategies for Teaching Students with Learning Difficulties. Baltimore: Brookes, 2013.
8. Marschark, Marc, and Peter E. Spencer. The Oxford Handbook of Deaf Studies, Language, and Education. Vol. 2, Oxford UP, 2011.
9. UNICEF. Assistive Technology for Children with Disabilities: Creating Opportunities for Education, Inclusion, and Participation. New York: UNICEF, 2015.
10. UNICEF. Guidelines on Inclusive Education for Children with Physical Disabilities. New York: UNICEF, 2018.
11. Graham, S., & Harris, K. R. (2013). Writing better: Effective strategies for teaching students with learning difficulties.

Օժտվածություն ունեցող սովորողների բացահայտման և աշխատանքի տարբերակման առանձնահատկությունները

Երեխաների օժտվածության կամ բացառիկ ընդունակությունների վերաբերյալ հետազոտությունների շրջանակներում առկա են բազմաթիվ սահմանումներ: Դրանցից մեկի համաձայն՝ «Օժտված անձը ցուցաբերում է կամ ունի ներուժ ցուցաբերելու գերազանց մակարդակ արտահայտման մեկ կամ մի քանի ոլորտներում»: Այդ հմտությունների որոշ մասն ընդհանրական է և կարող է վերաբերել մարդու կյանքի լայն շրջանակին, ինչպես, օրինակ՝ առաջնորդությունը կամ ստեղծագործական մտածողությունը: Որոշ դեպքերում խոսքը հատուկ տաղանդների մասին է, որոնք ի հայտ են գալիս կոնկրետ դեպքերում, ինչպես, օրինակ՝ հատուկ ընդունակությունները մաթեմատիկայի, գիտության կամ երաժշտության ոլորտում: Մառլանդ Ռեփորթի սահմանմամբ՝ «Ինտելեկտուալ և տաղանդավոր երեխաները ճանաչվում են որակավորված մասնագետների կողմից և իրենց բացառիկ ընդունակությունների արդյունքում կարող են բարձր արդյունքներ գրանցել: Այս երեխաները, բացի ընդհանուրից, նաև լրացուցիչ կրթական ծրագրի և ծառայությունների կարիք ունեն, որպեսզի կարողանան բացահայտել սեփական ներուժը թե՛ իրենց, թե հասարակության համար: Բարձր արդյունքները կապվում են հետևյալ ոլորտներից որևէ մեկի հետ՝ ընդհանուր մտավոր ընդունակություններ, հատուկ ակադեմիական հակումներ, ստեղծարար և արդյունավետ մտածողություն, առաջնորդության հմտություններ, տեսողական կամ թատերական հմտություններ, շարժողական հմտություններ»:[13]

Հայաստանի Հանրապետության «Հանրակրթության մասին» օրենքով սահմանված է, որ բացառիկ ընդունակություններ ունեցող անձը ևս համարվում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող: Օժտված երեխաները կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող մյուս բոլոր երեխաների նման ունեն որոշակի հատուկ բնութագրեր, որոնց միջոցով հնարավոր է վերջիններիս ճանաչել: Նախ, համաձայն հետազոտությունների՝ այս երեխաները

[13] Education Journal 2020; 9(4): 112-115

բավական վաղ տարիքում են սկսում հաշվել և կարդալ: Երկրորդ՝ նրանց ֆիզիկական ընդունակությունները զարգացման բարձր տեմպ ու մակարդակ են ապահովում, և նրանք ունենում են ուսումնառության յուրահատուկ ոճ: Այս երեխաներն արագ են սովորում, նախընտրում են միայնակ աշխատել և հետաքրքրությունների լայն շրջանակ ունեն: Բացի այդ, նրանք բարձր արդյունավետություն են ցուցաբերում շատ կարճ ժամանակահատվածում և ամբողջական ինքնակենտրոնացման կարիք ունեն: Ավելին, նրանք կարող են արագորեն յուրացնել տեղեկատվության մեծ ծավալներ: Հատուկ հետաքրքրություն է ներկայացնում նրանց դիտողունակությունը և լավ հիշողությունը, զարգացած երևակայությունը և զգայունակությունը տարբեր սոցիալական խնդիրների և մարդկանց հանդեպ: Ի հավելումն՝ նրանք մաթեմատիկայի հատուկ հակումներ ունեն, կարող են բարդ խնդիրներ և գլուխկոտրուկներ լուծել: Ավելին, նրանք ընդունակ են ինքնատիպ գաղափարներ առաջարկել և խնդիրների լուծումներ գտնել: Եվ վերջինը՝ նրանք առավել ակտիվ են և կարող են ավելի երկար մնալ կենտրոնացած, քան մյուս երեխաները:[14]

Նշված տարրերը կարևոր ազդակ են ուսուցիչների համար, եթե նրանք դասարանում այս բնութագրերով սովորողներ ունեն: Վաղ բացահայտումը, հատկապես ուսուցիչների կողմից, կարևոր առավելություն է ինչպես երեխաների, այնպես էլ օժտվածության գնահատման ճշգրտության համար: Իրենց վաղ զարգացման շնորհիվ օժտված երեխաները պետք է ներառվեն ավելի մեծ երեխաների համար նախատեսված գործողություններում, որպեսզի իրենց առանձնահատկությունները կարողանան զարգացնել:

Այլ կերպ ասած՝ եթե օժտված երեխայի կարողությունները չնկատվեն ժամանակին, դրանք կարող են թուլանալ: Մյուս կողմից՝ գերծանրաբեռնվածությունը երեխայի համար լուրջ հետևանքներ կարող է առաջացնել հատկապես հոգեհուզական առումով: Վաղ բացահայտումը և հետագա զարգացումը կարող են ավելացնել երեխայի բավարարվածության և երջանիկ լինելու հավանականությունը հետագա կյանքի համար:

Հաշվի առնելով օժտված երեխաների առանձնահատկությունները՝ ակնհայտ է, որ նրանք հատուկ ուշադրության կարիք ունեն կրթության և ուսուցման

[14] Manning, S. (2006). Recognizing Gifted Students: A practical Guide for Teachers. KAPPA DELTA PI RECORD, 66.

ընթացքում: Կոլեմանը և Գալլագերը առաջիններից էին, որոնք անդրադարձել են օժտված երեխաների համար անհրաժեշտ բազմազան մոտեցումներին: Այդ մոտեցումները կարող են ներդրվել կրթական ծրագրի զարգացման, հարստացման և տարբերակված ուսուցման միջոցով, անգամ հատուկ դպրոցներում կամ հատուկ աջակցություն ենթադրող համակարգերում:

Արագ զարգացումը երեխաներին հնարավորություն է տալիս սովորել ավելի բարձր մակարդակում (դասարաններում): Նրանք կարող են հաճախել ավելի բարձր դասարանների այն դասերին, որոնք լավագույնն են համապատասխանում իրենց մակարդակին:[15]

«Կրթական ծրագրի հարստացում» հասկացության ներքո նկատի է առնվում ավելի շատ նյութերի մշակում, քան նախատեսված է ծրագրով՝ անդրադառնալով թե՛ նյութի խորությանը, թե՛ ծավալին, ստեղծելով առավել ընդգրկուն կրթական փորձառություն: Այսպես լավագույնս իրացվում են օժտված սովորողների ընդունակությունները դպրոցի ներսում և դպրոցից դուրս:

Տարբերակված ուսուցումն ուսուցիչների համար դասավանդման ամենատարածված և ընդունված եղանակն է: Սա վերաբերում է ամբողջ ուսումնական գործընթացի նախնական համակարգված և կազմակերպված պլանավորմանը, որը ներառում է թե՛ սովորողին, թե ծրագիրը փոխհամագործակցության մեջ: Դա պայմանավորված է սովորողների ուսումնական պատրաստվածությամբ, ուսումնառության ոճով և ուսուցման մոտիվացիայով: Այս բոլոր տարրերը ձևավորում են ուսուցման բովանդակությունը (ինչ պետք է սովորեցնել), ընթացքը (ինչպես պետք է սովորեցնել) և վերջնարդյունքը (ինչպես է արդեն յուրացված գիտելիքը գնահատվելու):[16]

Օժտված երեխաների համար նախատեսված դպրոցները հիմնականում ենթադրում են սպորտային, երաժշտական, արվեստի և փորձարարական ու գիտական ուղղվածություն:

Այստեղ կարևոր է շեշտել օժտված երեխաների հանդեպ ուսուցիչների ճիշտ դիրքորոշման կարևորությունը: Ինչպես նշվել է վերևում, ուսուցիչները նախ պետք է բացահայտեն օժտված երեխաներին, ինչը ենթադրում է ամենից առաջ

[15] Ward, V. S. (1975). Basic concepts. In Berde, W. B. & Renzulli, J. S. (ed.). Psychology and Education of the Gifted (2nd ed.), NY: Invington Publishers (61-71).

[16] Tomlinson 2001 How to Differentiate Instruction in Mixedability Classrooms (2001).

ուսուցիչների շարունակական վերապատրաստում և խրախուսում: Նրանք պետք է կարողանան օբյեկտիվորեն գնահատել երեխաներին՝ հաշվի առնելով նրանց կրթական, հուզական և սոցիալական կարիքները: Չափազանց կարևոր է, որպեսզի ճկուն ռազմավարություններ կիրառվեն սովորողների համապատասխան խմբեր ձևավորելու ուղղությամբ: Ի վերջո, շատ կարևոր է, որ ուսուցիչները խրախուսեն սովորողների հետաքրքրությունները և անհատականացված ուսումնական ծրագրեր կիրառեն:[17]

1972 թվականին Ամերիկայի Միացյալ Նահանգների կրթության հանձնաժողովի կողմից հաստատված օժտվածության սահմանման տեսանկյունից դիտարկվում են գործունեության հետևյալ ոլորտներից մեկը կամ մի քանիսը.

- շփումներ և առաջնորդություն,
- գեղարվեստական,
- սպորտային,
- ինտելեկտուալ,
- ակադեմիական,
- ստեղծագործական կամ արդյունավետ մտածողություն:

Օժտվածության հիմնական տեսակներն առաջարկել է Ս. Մարլենդը 1972 թվականին: Դրանք են.

- ընդհանուր ինտելեկտուալ օժտվածությունը,
- հատուկ օժտվածությունը,
- երեխայի նախապատվությունը զբաղվել գործունեության որևէ հատուկ տեսակով,
- ստեղծագործական կամ արդյունավետ մտածողությունը,
- առաջնորդության կարողությունը,
- տեսողական և կատարողական բնույթի գործունեության կարողությունը,
- հոգեշարժողական կարողությունները:

Ս. Մարլենդը տարբերակում է գործունեության մի որոշակի տեսակի հանդեպ օժտված և ընդհանուր օժտվածությամբ երեխաների:

[17] Rotigel, J. (2003). “Understanding the Young Gifted Child: Guidelines for Parents, Families, and Educators”. Early Childhood Education Journal, 30 (4).

Օժտված երեխաների ուսումնասիրության ևս մեկ մոտեցում ընդգծվում է Ն. Ս. Լեյտեսի աշխատանքներում: Վերջինս առանձնացնում է օժտված երեխաների երեք խումբ.

1. Արագացված մտավոր զարգացում ունեցող երեխաներ, որոնց մտավոր զարգացումը մի քանի տարով առաջանցիկ է ֆիզիկական տարիքին: Վերջիններիս բնորոշ է բացառիկ մտավոր ակտիվությունը և ընդգծված ճանաչողական պահանջմունքները:
2. Մտավոր որոշակի ուղղվածությամբ օժտված երեխաներ, որոնք ինտելեկտի սովորական մակարդակի պայմաններում առանձնահատուկ հակումներ են ցուցաբերում գիտության կամ տեխնիկայի առանձին ոլորտի նկատմամբ, որտեղ գերազանցում են իրենց հասակակիցներին:
3. Առանձին արտասովոր կարողություններով երեխաներ:

Օժտվածության նշանները

Օժտվածության արտաքին դրսևորումները տարբեր անձնային կարողությունների առումով շատ բազմազան են: Դրանք մանկության շրջանում դրսևորվում են առաջին հերթին որպես արագ զարգացում (խոսքի և մտածողության), մտավոր գործողությունների իրականացման արագություն և ճշգրտություն, վաղ տարվածություն (երաժշտությամբ, սպորտով, նկարչությամբ և այլն), ստեղծագործական գործունեության հակվածություն, մանկական հետաքրքրասիրություն, բարձր ճանաչողական ակտիվություն, որը դրսևորվում է նորությունների նկատմամբ բարձր զգայունակությամբ, ինքնուրույն հարցադրումներ անելու և խնդիրներ առաջադրելու կարողություն: Օժտված երեխան առանձնանում է հարուստ ակտիվ բառապաշարով. բառային զուգորդությունների (ասոցիացիաների) արագությամբ և յուրատիպությամբ նրանք գերազանցում են ոչ միայն հասակակիցներին, այլ նաև շատ մեծահասակների:

Օժտված երեխայի միանշանակ տարբերակիչ հատկություններից է մտածողության ինքնատիպությունը, որն արտահայտվում է լուծումների յուրօրինակությամբ, առկա լուծումներից տարբերվելու ձևով: Գերազանցապես յուրատիպությամբ էլ գնահատվում է ստեղծագործական հակվածությունը: Յուրատիպությունն առաջանում է ընդհանուր, ճիշտ, ընդունված մոտեցումների հաղթահարման արդյունքում:

Երեխայի կողմից ուսումնական նյութի յուրացման հաջողությունը և ստեղծագործական հակվածությունը ևս օժտվածության առավել տարածված նշաններից են: Պակաս հայտնի են օժտվածության այնպիսի նշանները, ինչպես տարբեր հարցադրումներ, խնդիրներ բարձրացնելը, ենթադրություններ անելը, որոնք ուղղակիորեն կապված չեն ուսուցման հաջողության հետ, սակայն մեծամասամբ բնութագրում են տաղանդավոր մարդուն. զարգացման բարձր մակարդակներին համապատասխանում է հետազոտական հարցեր առաջադրելու բարձր ակտիվությունը:

Հետաքրքրական է, որ օժտված երեխաներն ինտելեկտուալ և բարոյական իմաստով գերազանցում են իրենց հասակակիցներին, ինչը չի կարելի ասել ֆիզիկական և հուզական զարգացման մասին. վերջինները տարիքային զարգացման նորմայի սահմաններում են: Անձնային առանձնահատկություններով պայմանավորված՝ օժտված երեխաներն առավել զգայուն են ոչ համարժեք գնահատականների, անարդարության և բացասական ներգործությունների նկատմամբ:

Օժտված երեխայի գլխավոր պահանջմունքը ճանաչողությանը ձգտելն է՝ անկախ տարիքից, խառնվածքից, բնավորությունից, հետաքրքրություններից, սեռից և առողջությունից: Մտավոր ակտիվությունն ուղղակիորեն կապված է կարողությունների զարգացման հետ: Կարողությունները զարգանում են, եթե երեխայի գործունեությունը նրան դրական հույզեր, ուրախություն և բավարարվածություն է պատճառում:

Լ. Ս. Վիգոտսկին ենթադրում է, որ օժտվածության նշանները դրսևորվում են երեխայի իրական գործունեության մեջ և կարող են բացահայտվել նրա գործողությունները դիտելու արդյունքում: Ակնհայտ օժտվածության նշաններն արդեն իսկ տրված են դրա սահմանման մեջ և կապված են գործունեության իրականացման բարձր մակարդակի հետ: Միևնույն ժամանակ երեխայի օժտվածության մասին կարելի է դատել «ուզում եմ» և «կարողանում եմ» գործառույթների միասնականության դեպքում, այդ պատճառով օժտվածության նշանները ներառում են օժտված երեխայի վարքի երկու կողմերը. գործառութային և մոտիվացիոն: Գործառութայինը բնորոշում է նրա գործունեության եղանակները, իսկ մոտիվացիոնը՝ երեխայի վերաբերմունքը իրականության այս կամ այն երևույթի նկատմամբ:

Օժտված երեխայի վարքի գործառութային կողմը հավանաբար ենթադրում է գործունեության առանձնահատուկ ռազմավարությունների առկայություն: Օժտված երեխայի գործունեության ձևերն ապահովում են նրա յուրահատուկ, որակապես ինքնատիպ արդյունավետությունը: Ընդ որում, առանձնացվում է գործունեության արդյունավետության երեք հիմնական մակարդակ, որոնցից յուրաքանչյուրի հետ կապված է դրա իրականացման յուրահատուկ ռազմավարությունը.

1. գործունեության արագ յուրացում և դրա իրականացման բարձր արդյունավետություն,
2. գործունեության նոր եղանակների ստեղծում և կիրառում տրված իրավիճակում լուծումներ փնտրելու պայմաններում,
3. գործունեության նոր նպատակների առաջադրում խնդրին առավել խորը տիրապետելու արդյունքում, ինչը հանգեցնում է իրավիճակը նոր տեսանկյունից դիտարկելուն և առաջին հայացքից անսպասելի գաղափարների և լուծումների ի հայտ գալուն:

Բացի այդ, օժտված երեխայի գիտելիքները տարբերվում են բարձր «կպչողականությամբ» (երեխան անմիջապես ընկալում և յուրացնում է իր ինտելեկտուալ ուղղվածությանը համապատասխանող տեղեկատվությունը), ընթացակարգային գիտելիքների բարձր տեսակարար կշռով, այսինքն՝ գործողությունները կատարելու եղանակների իմացությամբ, մետակոգնիտիվ գիտելիքների մեծ ծավալով և այլն:

Օժտված երեխայի վարքի մոտիվացիոն կողմը կարող է բնութագրվել հետևյալ նշաններով.

- Բարձր ստեղծագործական զգայունակություն գործունեության կոնկրետ տեսակների (նշաններ, ձայներ, գույներ, տեխնիկական սարքեր, բույսեր և այլն) կամ սեփական ակտիվության կոնկրետ ձևերի նկատմամբ (ֆիզիկական, ճանաչողական, գեղարվեստական և այլն), ինչը, որպես կանոն, ուղեկցվում է բավարարվածության զգացումով:
- Բարձր ճանաչողական պահանջմունք, որը դրսևորվում է չհագեցող հետաքրքրասիրության, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ գործունեության նախնական պահանջների շրջանակից դուրս գալու պատրաստակամության ձևով. ինչ-որ ոլորտների նկատմամբ վառ արտահայտված հետաքրքրությունը, չափազանց տարվածությունը ինչ-որ երևույթով, առարկայով, ինչ-որ գործի մեջ խորամուխ լինելը: Որոշակի

ոլորտի հանդեպ այդպիսի եռանդագին հակումը հանգեցնում է մեծ համառության և աշխատասիրության:

- Բարձր պահանջկոտություն սեփական աշխատանքի արդյունքների նկատմամբ, գերբարդ նպատակներ սահմանելու հակում և դրանց հասնելու համառություն, կատարելության անընդհատ ձգտում:[18]

Տարբեր հեղինակների կողմից օժտվածության տեսակների դասակարգման տարբեր մոտեցումներ են առաջարկվել՝ հիմք ընդունելով տարբեր գործոններ: Օժտվածության տեսակների դասակարգման՝ Ա. Մ. Մատյուշկինի կողմից առաջարկված ցուցանիշները չորսն են.

- գործունեության ձևը և դրա հիմքում ընկած հոգեկան գործոնները,
- ձևավորվածության աստիճանը,
- դրսևորման ձևը,
- արտահայտման ընդգրկունությունը գործունեության տարբեր ձևերի մեջ,
- տարիքային զարգացման առանձնահատկությունները:

Գործունեության հիմնական ձևեր են համարվում գործնականը, տեսականը (հաշվի առնելով մանկական տարիքը՝ նախընտրելի է խոսել ճանաչողական գործունեության մասին), գեղարվեստական-գեղագիտական, հաղորդակցական և հոգևոր-արժեքային ոլորտները: Հոգեկան կողմը ներկայացված է ինտելեկտուալ, հուզական և մոտիվացիոն-կամավոր ոլորտներով:

Հետևաբար առաջարկվում է առանձնացնել օժտվածության հետևյալ տեսակները.

- պրակտիկ գործունեության մեջ՝ արհեստների, մարզական և կազմակերպչական ուղղվածությամբ օժտվածություն,
- ճանաչողական գործունեության մեջ՝ տարաբնույթ ինտելեկտուալ օժտվածություն՝ կախված բնագավառից (բնագիտական կամ հումանիտար գիտություններ, ինտելեկտուալ խաղեր և այլն),
- գեղարվեստական-գեղագիտական գործունեության մեջ՝ խորեոգրաֆիկ, բեմական, գրական-բանաստեղծական, պատկերային և երաժշտական օժտվածություն,

[18] Выготский Л.С. Воображение и творчество в детском возрасте . –– СПб.: СОЮЗ, 1997. – 96 с.

- հաղորդակցական գործունեության մեջ՝ առաջնորդային և հռետորական օժտվածություն,
- հոգևոր-արժեքային գործունեության մեջ՝ նոր հոգևոր արժեքներ ստեղծելու և մարդկանց ծառայելու միջոցով դրսևորվող օժտվածություն:

Կարելի է ասել, որ այս գործոնի վրա հիմնված օժտվածության տեսակների դասակարգումը բազային է և առավել կարևոր տեղ է զբաղեցնում օժտվածության էության ըմբռնման իմաստով:

Օժտվածության ձևավորվածության մակարդակի գործոնով պայմանավորված՝ կարելի է տարբերակել.

- Առկա օժտվածությունը, որն արդեն իսկ երեխայի մոտ դրսևորվող հոգեկան զարգացման առանձնահատկություն է: Այն արտահայտվում է կոնկրետ ոլորտում գործունեության իրականացման բարձր արդյունավետությամբ:
- Հնարավոր օժտվածությունը, որը երեխայի հոգեբանական բնութագիր է: Այն ունի որոշակի հոգեկան հնարավորություններ բարձր արդյունքներ ցուցաբերելու համար, սակայն չի կարողանում տվյալ ժամանակահատվածում իրացնել իր հնարավորությունները ֆունկցիոնալ անբավարար պատրաստվածության հետևանքով: Այդ ներուժի զարգացմանը կարող են խանգարել մի շարք անբարենպաստ պայմաններ (բարդ ընտանեկան հանգամանքներ, անբավարար մոտիվացիա, ինքնակառավարման-ինքնակարգավորման ցածր մակարդակ, անհրաժեշտ կրթական միջավայրի բացակայություն և այլն): Օժտվածության այս տեսակի բացահայտումը կիրառվող ախտորոշիչ մեթոդներին բարձր կանխատեսող պահանջներ է ներկայացնում, քանի որ խոսքը դեռևս չձևավորված որակների մասին է, որոնց զարգացման հնարավորության մասին կարելի է դատել միայն առանձին նշանների առկայությամբ:

Դրսևորման եղանակով պայմանավորված՝ կարելի է առանձնացնել.

- **Ակնհայտ օժտվածություն,** որը երեխայի գործունեության մեջ շատ վառ և հստակ դրսևորում է ունենում անգամ անբարենպաստ պայմաններում: Երեխայի ձեռքբերումներն այնքան ակնհայտ են, որ նրա օժտվածությունը կասկածներ չի առաջացնում:
- **Թաքնված օժտվածություն**, որն արտահայտվում է ոչ տիպիկ, քողարկված ձևով, կարող է չնկատվել շրջապատողների կողմից: Այս դեպքում մեծանում

է օժտվածության բացակայության վերաբերյալ եզրակացության հավանականությունը, երեխան կարող է դասակարգվել որպես «անհեռանկար» և զրկվել անհրաժեշտ օգնությունից և աջակցությունից: Թաքնված օժտվածության դեպքում օժտված երեխայի անձնային առանձնահատկությունները ճանաչելը չափազանց կարևոր է:

Ի վերջո, **գործունեության տարբեր ձևերում արտահայտման ընդգրկունության** չափանիշով կարելի է առանձնացնել.

- **ընդհանուր օժտվածություն,**
- **հատուկ օժտվածություն:**

Ընդհանուր օժտվածությունը դրսևորվում է գործունեության տարբեր եղանակներում՝ որպես դրանց արդյունավետության հիմք: Որպես ընդհանուր օժտվածության հոգեբանական միջուկ հանդես է գալիս մտավոր կարողությունների, մոտիվացիոն ոլորտի և արժեհամակարգի ինտեգրացիան, որի շուրջ կազմավորվում են անձի հուզական, կամային և մյուս որակները: Ընդհանուր օժտվածության կարևորագույն կողմերը մտավոր ակտիվությունը և դրա ինքնակարգավորումն են:

Հատուկ օժտվածությունը դրսևորվում է գործունեության կոնկրետ ձևերում և հիմնականում սահմանվում է որոշակի բնագավառի առնչությամբ (գրականություն, մաթեմատիկա, սպորտ, շփում և այլն):

Ըստ տարիքային զարգացման առանձնահատկությունների տարբերակում են.

- **վաղ օժտվածություն,**
- **ուշ օժտվածություն:**

Այստեղ վճռորոշ գործոն է համարվում երեխայի հոգեկան զարգացման արագությունը, ինչպես նաև այն տարիքային փուլերը, որտեղ օժտվածությունն ակնհայտ ձևով է դրսևորվում: Հարկավոր է հաշվի առնել, որ արագացված հոգեկան զարգացումը և օժտվածության վաղ բացահայտումը միշտ չէ, որ հասուն տարիքում մեծ ձեռքբերումների երաշխիք են: Ամենավաղ օժտվածությունը դրսևորվում է արվեստի, հատկապես երաժշտության ոլորտում: Քիչ ավելի ուշ օժտվածությունը դրսևորվում է գեղարվեստի բնագավառում: Գիտության մեջ էական արդյունքների հասնելը, ինչպես, օրինակ՝ գյուտերը, նոր բնագավառների և ուսումնասիրության մեթոդների ստեղծումը, սովորաբար ավելի ուշ է տեղի ունենում, քան արվեստում:

Խորհուրդներ ուսուցիչներին օժտվածություն ունեցող սովորողների հետ աշխատանքում

Կա ենթադրություն, որ շնորհալի և տաղանդավոր սովորողները դպրոցահասակ երեխաների 5-15%-ն են կազմում: Սովորողները կարող են այդ օժտվածությունը դրսևորել ակադեմիական, ստեղծագործական, երաժշտության, պարի, արվեստի, առաջնորդության կամ վերը նշված այլ ոլորտներում: Դասարանում այս սովորողների հետ արդյունավետ աշխատելու համար առաջարկվում է.

1. Համալրել և խորացնել ուսումնական ծրագիրը: Անհրաժեշտ է հնարավորինս փորձել ստեղծել այնպիսի միջավայրեր, որոնք խթանում են շնորհալի երեխաների ճանաչողական, ֆիզիկական, հուզական և սոցիալական պահանջմունքները ուսուցման ընթացքում: Թույլ տվեք սովորողներին ավելի արագ անցնել ուսումնական ծրագրի պահանջվող բովանդակությունը, առաջանցիկ և խորը նյութեր ուսումնասիրել՝ նաև ակադեմիական խստություն ապահովելով:
2. Իրականացնել բազմաստիճան և բազմաչափ ուսումնական ծրագիր: Տարբերակեք ուսումնական ծրագիրը՝ ուսուցման արագության, խորության և տեմպի տարբերությունները հասցեագրելու համար: Սա դասարանի բոլոր սովորողներին հնարավորություն կտա ուսումնասիրել որոշակի ոլորտ՝ ստեղծելով իրենց սեփական կարողությունների մակարդակին համապատասխան նախագծեր: Օրինակ՝ եթե սովորողներն աշխարհագրության դասաժամին որևէ պետություն են ուսումնասիրում, կարողությունների տարբեր մակարդակների պարագայում տարբեր առաջադրանքներ կարող են ունենալ՝ սկսած տվյալ պետության մասին պարզ գիտելիքներից (տարածք, բնակչության թիվ, դեմոգրաֆիական պատկեր, դիրքը քարտեզի վրա և այլն) մինչև խորը մանրամասներ վերջինիս տնտեսության, բնակչության, լեզվի կամ այլ բնագավառի վերաբերյալ: Իսկ թեմայի ավարտին յուրաքանչյուրը կամ խմբերը կարող են իրենց յուրացրածը ներկայացնել մյուսներին:
3. Ուսումնական ծրագիրն իրականացնելիս եղեք հնարավորինս ճկուն: Օգտվեք իրական կյանքի փորձից, որը կարող է բոլոր սովորողներին դարձնել հետազոտողներ: Օրինակ, ի նկատի ունենալով մոտալուտ ձնաբուքը՝

կարողությունների տարբեր մակարդակներ ունեցող սովորողներին կարող են տրվել տարբեր առաջադրանքներ՝ պարզել, թե ինչից է կազմված ձյունը, կանխատեսել ձյան տեղումների քանակը կամ որոշել, թե քանի ձյուն մաքրող սարք կպահանջվի, եթե 1,5 մետր ձնածածկույթ ձևավորվի:

4. Ուսումնական ծրագիրը դարձրեք սովորողակենտրոն: Օժտված սովորողներին ներգրավեք ուսումնառության հետ կապված որոշումների կայացման գործընթացում՝ նրանց հնարավորություն տալով սովորել, թե ինչպես պատասխանատվություն ստանձնել իրենց ուսման համար:
5. Թույլ տվեք սովորողներին իրականացնել անկախ նախագծեր՝ հիմնված իրենց անհատական հետաքրքրությունների վրա: Անկախ նախագծերը կարող են իրականացվել՝ ելնելով նրանց կարողությունների մակարդակից: Խրախուսեք ստեղծագործական և ինքնատիպ մտածողությունը, թույլ տվեք նրանց բացահայտել իրար հետ չկապված խնդիրները ստեղծագործաբար միացնելու և լուծելու ուղիներ:
6. Թույլ տվեք շնորհալի երեխաներին իրենց ուսման համար պատասխանատվություն ստանձնել ծրագիրն արագ յուրացնելու միջոցով: Հանձնարարեք նրանց նախապես աշխատել այն թեմաների կամ խնդիրների ուղղությամբ, որոնք նրանք չգիտեն: Որպեսզի գիտելիք ձեռք բերելը կարողանան արժևորել, խրախուսեք սովորել հանուն իմացության՝ շեշտը չդնելով վերջնական արդյունքների կամ ձեռքբերումների վրա: Տեղեկատվություն ստանալու համար սովորեցրեք հետազոտական հմտություններ, այն մշակելու համար՝ ավելի բարձր մակարդակի մտածողության հմտություններ, տեղեկատվության ստեղծման ճկունության համար՝ ստեղծագործական մտածողություն և խնդիրների լուծման հմտություններ, հաղորդակցման հմտություններ՝ այն կիսելու համար: Խրախուսեք նրանց առաջ գնալ հնարավորինս արագ: Աջակցեք նախագծերի մշակմանը, որոնք թույլ են տալիս նրանց քայլ առ քայլ հասնել հաջողության:
7. Սովորեցրեք ինտերակտիվ կերպով: Թույլ տվեք սովորողներին աշխատել միասին, սովորեցնել միմյանց և ակտիվորեն մասնակցել իրենց և իրենց դասընկերների կրթությանը: Իհարկե, սա չի նշանակում, որ օժտված սովորողները պետք է դառնան իրենց հասակակիցների դաստիարակները. նրանց ևս պետք է մարտահրավեր նետել: Շեշտը պետք է դրվի դասարանում միասին աշխատելու վրա: Երբեմն խմբային աշխատանքների ժամանակ

դասարանի բոլոր օժտված սովորողներին ներառեք մեկ խմբում, նրանց համար օգտագործեք խորացված, այլ ուսումնական ռեսուրսներ և փոփոխություններ՝ նրանց բացառիկ կարողությունները բավարարելու համար:

8. Բացահայտեք բազմաթիվ տեսակետներ ժամանակակից թեմաների վերաբերյալ և հնարավորություն տվեք վերլուծել ու գնահատել նյութը: Դասարանում կազմակերպեք բաց քննարկումներ և բանավեճեր վիճելի հարցերի շուրջ: Որպես շնորհալի երեխաների ուսուցիչ՝ ակտիվ կեցվածք ընդունեք. եղեք օժտված սովորողների դեսպանը: Կիրառեք խորը մասնագիտացված կրթության ռազմավարություններ՝ ապահովելու վերջիններիս կարիքները բավարարելու միջավայրը: Կիսվեք անձնական հետաքրքրություններով բոլորի հետ՝ հարստացնելու և ընդլայնելու նրանց աշխարհը:
9. Մտածեք թիմային ուսուցման, համագործակցության և այլ ուսուցիչների հետ խորհրդակցելու մասին: Օգտագործեք այլ մանկավարժների կամ մասնագետների գիտելիքները, հմտությունները և աջակցությունը:
10. Տրամադրեք հնարավորություններ շնորհալի երեխաներին շփվելու այլ շնորհալի երեխաների հետ դասարանների և դպրոցների տարբեր մակարդակներում մրցույթների կամ համատեղ նախագծերի միջոցով:
11. Խրախուսեք նրանց մասնակցելու արտադպրոցական գործունեությանը, որը ներառում է ակադեմիական հմտություններ: Դրանք կարող են լինել մաթեմատիկայի, ընթերցանության կամ թատերական խմբակներ, բանավեճի կամ ինտելեկտուալ խաղերի ակումբներ և այլն: Քանի որ շնորհալի երեխաները հաճախ բնական առաջնորդներ են, կարևոր է, որ նրանց տաղանդն ու կարողություններն օգտագործվեն հօգուտ ինչ-որ բանի, ոչ թե հակառակը: Օրինակ, խրախուսեք անդամակցել աշակերտական խորհրդում կամ դպրոցի արտադասարանական այլ ակտիվ գործունեության մեջ:
12. Սովորողներին ներգրավեք ակադեմիական մրցույթներում: Տաղանդավոր սովորողներն իրենց բնույթով մրցունակ են: Հետևաբար, մասնակցությունը տարածաշրջանային և ազգային մրցույթներին, ինչպիսիք են օլիմպիադաները, մշակութային նախագծերը, ակադեմիական մրցույթները, գիտության փառատոնները և շարադրությունների մրցույթները, հետաքրքիր մարտահրավեր կարող են լինել:

13. Անհատական նպատակներ դրեք: Օգնեք սովորողներին ստեղծելու իրենց սեփական նպատակները և սահմանել նպատակներ, որոնք կլինեն կոնկրետ, չափելի, հասանելի, իրատեսական և ողջամիտ ժամկետներում: Համոզվեք, որ ակնկալիքները չափազանց բարձր կամ շատ ցածր չեն:
14. Հաշվի առեք ծնողների կարծիքը իրենց շնորհալի երեխաների կրթության վերաբերյալ:
15. Միաժամանակ միշտ հիշեք, որ շնորհալի երեխաները շատ առումներով նման են դասարանի մյուս սովորողներին: Անիրատեսական ակնկալիքները և նրանց վրա ճնշումներ գործադրելը կարող են բացասական հետևանքների հանգեցնել:
16. Անհրաժեշտության դեպքում բավարարեք սովորողի կարիքները համապատասխան խորհրդատվությամբ՝ աջակցելով նրա հուզական և անձնային աճին: Որոշ շնորհալի սովորողներ դժվարանում են կառավարել իրենց հույզերը՝ զայրույթը, ձանձրույթը, մեկուսացումը, դեպրեսիան: Նրանք կարող են բուլինգի ենթարկվել կամ իրենք լինել ագրեսիվ: Օժտված երեխաների 20-25%-ը հուզական դժվարություններ է ունենում:
17. Հիշեք, որ օժտված երեխաները չեն կարող գերազանցել մյուսներին բոլոր ոլորտներում. նրանք կարող են մյուսներից առաջ անցնելով՝ միաժամանակ որոշ ոլորտներում հետ մնալ: Իմացեք ձեր դասարանի երեխաների ուժեղ և թույլ կողմերի մասին:
18. Օժտված երեխաներին լրացուցիչ առաջադրանքներ հանձնարարելը միշտ չէ, որ արդյունավետ կարող է լինել: Սա անարդար և հիասթափեցնող է նրանց համար: Փոխարենը նրանց թույլ տվեք աշխատել անկախ նախագծերի կամ այլ անավարտ աշխատանքի վրա, երբ շուտ են ավարտում ընդհանուր հանձնարարությունը:
19. Խորհրդակցե՛ք դպրոցի հոգեբանի հետ՝ ամենօրյա աշխատանքները համալրելու առաջարկների վերաբերյալ:
20. Տրամադրե՛ք բազմաթիվ հնարավորություններ սոցիալական գործունեությամբ զբաղվելու համար. նրանք կարող են օգնության կարիք ունենալ իրենց սոցիալական հմտությունները զարգացնելու առումով:
21. Միջավայրը կազմակերպեք այնպես, որ ազատվեք առանձին երեխաների հետ աշխատելու անհրաժեշտությունից և երեխաներին ուսումնական իրավիճակը վերահսկելու ավելի մեծ հնարավորություն տվեք: Լրացուցիչ գրքերը և

ուսումնական գործիքները, համայնքային ռեսուրսները և հատուկ հմտությունները կարող են օգտակար լինել:

22. Ստեղծեք և պահպանեք ջերմ, «ընդունող» միջավայր, սովորեցրեք ձեր սովորողներին ընդունել բազմազանությունը և հարգել տարբերությունները: Ապահովեք այնպիսի միջավայր, որտեղ երեխան կարող է դրսևորել իր ներուժը կամ ընդունակությունը: Ուսուցիչները պետք է ձգտեն ստեղծել ոչ մրցակցային, անհատականացված և բաց դասարան, որը թույլ կտա յուրաքանչյուրին սովորել իր տեմպով:
23. Հիշեք, որ այս ռազմավարությունների իրականացումը օգտակար է ոչ միայն օժտված, այլ նաև դասարանի բոլոր երեխաների համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Callahan, C. (1997). Giftedness. In G.G. Bear & K.M. Minke (Eds.), Children's needs II: Development, problems, and alternatives. Bethesda, MD: National Association of School Psychologists.
2. Designing & developing programs for gifted students. (2003). Thousand Oaks, CA: Corwin Press.
3. Handbook of gifted education. (2003). Boston, MA: Allyn & Bacon.
4. Henage, D. (1990). The Gifted Intervention Manual. Columbia, MO: Hawthorne.
5. Heward, W.L. (2009). Exceptional Children: An Introduction to Special Educaation (9th ed.). New Jersey: Pearson.
6. Taylor, S. (2003). Your top students: Classroom strategies that meet the needs of the gifted. Portland, ME: Stenhouse Publishing.
7. Winner, E. (1996). Gifted children: myths and realities. New York: Basic Books.

ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ԵՎ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ

Դասագրքերի և առարկայական ծրագրերի հարմարեցման սկզբունքները

«Լավ ուսուցիչը նա չէ, ով իր երեխաներին պատրաստի պատասխաններ է տալիս, այլ նա, ով հասկանում է նրանց կարիքները և մարտահրավերները և տալիս է գործիքներ՝ հաջողության հասնելու համար»

Ջասթին Թրյուդո

Կրթությունն արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է ստեղծել ներառականություն ապահովող կրթական միջավայր: Մատչելի և անհրաժեշտ հարմարեցումներով կրթական միջավայրը հնարավորություն է տալիս բոլոր սովորողներին լիարժեք կերպով ներգրավվելու կրթական գործընթացում՝ ապահովելով նրանց հավասար մասնակցությունը ուսումնական գործունեությանը:

Արդյունավետ ներառման հիմնական մարտահրավերներից մեկը ուսուցիչների պատրաստվածության, այդ թվում և՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների հետ աշխատանքում հարմարեցված մեթոդների և գործիքների կիրառման հմտությունների պակասն է: Նման կրթություն կազմակերպելու համար ուսուցիչները պետք է օգտագործեն ճկուն մեթոդաբանություն, հաշվի առնեն սովորողի անհատական առանձնահատկությունները՝ ներառյալ կրթական պահանջները, զարգացման տեմպերը, կարողություններն ու ընդունակությունները: Մատչելիության ապահովումը պահանջում է ուսումնական նյութերի, դասագրքերի և առարկայական ծրագրերի հարմարեցումներ, որոնք պետք է իրականացվեն յուրաքանչյուր երեխայի կրթական կարիքներին համապատասխան, նպաստեն նրանց ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպմանը և հնարավորություն տան զարգանալու: Նման միջավայրի ձևավորումը պահանջում է ստեղծագործական մոտեցում և նորարարական լուծումներ՝ ուսումնական գործընթացը ավելի մատչելի և արդյունավետ դարձնելու համար:

Ուսումնական գործընթացի կարևոր հիմքերն են դասագրքերն ու առարկայական ծրագրերը, որոնք, սակայն, հաճախ նախատեսված են ընդհանուր ուսուցման համար՝ առանց հաշվի առնելու տվյալ դասարանում սովորողների

հետաքրքրությունները, ուսումնական կարիքներն ու կարողությունները: Բնականաբար, յուրաքանչյուր սովորողի հանդեպ անհրաժեշտ է ցուցաբերել անհատական մոտեցում, որի դեպքում միայն հնարավոր է հասնել առավելագույն արդյունքի: Այս առումով կարևոր է դասագրքերի առարկայական ծրագրերի հարմարեցումը, այսինքն՝ նրանց բովանդակության համապատասխանեցումը սովորողների տարիքային, մտածողության, ընկալման առանձնահատկություններին՝ ապահովելով դասագրքերում ներառված ուսումնական նյութի մատչելիությունը տարբեր կարողություններ ունեցող սովորողների համար:

Ինչո՞ւ է անհրաժեշտ հարմարեցումը, ինչպե՞ս դասագրքային նյութերը հարմարեցնել սովորողների տարիքային, ճանաչողական և կրթական առանձնահատկություններին: Օրինակ՝ ուսուցման հետ կապված դժվարություններ ունեցող սովորողների համար նյութը կարող է լինել չափազանց բարդ և դժվար հասկանալի, մինչդեռ առաջադիմող կամ օժտված սովորողները կարող են պահանջել նյութի խորը ուսումնասիրություն՝ թեմայի նկատմամբ հետաքրքրությունը պահպանելու համար:

Այս մարտահրավերները հաղթահարելու համար ուսուցիչները պետք է կիրառեն համապատասխան մեթոդներ և գործիքներ՝ ուսուցումն առավել մատչելի և արդյունավետ դարձնելու համար:

Հարմարեցման նպատակը և սկզբունքները

Դասագրքերի և առարկայական ծրագրերի հարմարեցման նպատակն է՝

- Նյութը մատչելի դարձնել տարբեր կարողություններ ունեցող սովորողների համար առանց բովանդակային փոփոխություններ կատարելու:
- Խթանել ուսուցման արդյունավետությունը՝ հաշվի առնելով սովորողների տարիքային և ճանաչողական առանձնահատկությունները:
- Ապահովել ուսումնական նյութի հասանելիությունը բոլոր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար:

Այս նպատակների իրագործման համար անհրաժեշտ է կիրառել մի շարք սկզբունքներ.

1. **<u>Բարդ նյութերի պարզեցում</u>**

Բարդ գաղափարներն ու եզրույթները վերաձևակերպելով ավելի մատչելի լեզվով՝ ուսուցիչը կարող է նյութը հասկանալի դարձնել **ուսուցման հետ կապված դժվարություններ** ունեցող սովորողների համար:

Օրինակներ տարբեր առարկաներից

Առարկա՝ Համաշխարհային պատմություն

8-րդ դասարան

Թեմա՝ Ֆրանսիական հեղափոխություն: Թեման ներառում է այնպիսի գաղափարներ, ինչպիսիք են «ազատություն, հավասարություն, եղբայրություն», և դրանց սոցիալական և քաղաքական ազդեցությունը: Բարդ ձևակերպումներով ներկայացված նյութերը կարող են դժվար հասկանալի լինել հատկապես ուսուցման հետ կապված դժվարություններ ունեցող սովորողների համար:

Օրինակ՝ «Ֆրանսիական հեղափոխության ընթացքում խախտվեց ֆեոդալական կարգը, և հասարակությունը սկսեց առաջնորդվել ժողովրդավարական սկզբունքներով»: Այս **բարդ հասկացության պարզեցված ձևակերպումը կլինի** «Ֆրանսիայում մի ժամանակ հարուստ մարդիկ ունեին հատուկ իրավունքներ, իսկ հասարակ մարդիկ զուրկ էին այդ իրավունքներից: Հեղափոխության ընթացքում մարդիկ պայքարեցին, որպեսզի բոլորը հավասար լինեն օրենքի առաջ և ունենան նույն հնարավորությունները»:

Պարզեցման մեթոդներ

Օրինակների կիրառում

Թեման պետք է կապել սովորողների առօրյա կյանքի հետ. «Ինչպես դուք եք ուզում, որ դասարանում բոլորն ունենան հավասար իրավունքներ, նույն կերպ հեղափոխության ժամանակ մարդիկ ուզում էին, որ բոլորը հավասար լինեն»:

Եզրույթների պարզաբանում

«Ֆեոդալ» բառը կարելի է բացատրել որպես «հատուկ իրավունքներ ունեցող հարուստ մարդ, որը ղեկավարում էր գյուղական համայնքները»:

Կարելի է օգտագործել նաև նկարներ կամ պարզ գծապատկերներ՝ ցույց տալու, թե ինչպես փոխվեց հասարակական կառուցվածքը հեղափոխության ժամանակ:

Առարկա՝ Մաթեմատիկա

5-րդ դասարան

Թեմա՝ Բաժանում մնացորդով

Բարդ հասկացություն

«Բաժանում մնացորդով՝ նշանակում է, որ թիվը բաժանելուց հետո ամբողջ թիվ չի ստացվում: Օրինակ՝ 10÷3=3 մն.1: Մնացորդը այն թիվն է, որը մնում է վերջում և այլևս չի կարող բաժանվել տվյալ թվին (բաժանարարին) առանց մնացորդի»:

Պարզեցված տարբերակ

«Երբ թիվը բաժանվում է մեկ այլ թվի, բայց բաժանումը չի կատարվում հավասարապես, ստացվում է մնացորդ»:

Օրինակներով պարզեցում

Դիտարկել 10÷3 բաժանումը:

10 կոնֆետը պետք է հավասարապես բաժանել 3 երեխաների միջև: Ամեն մեկը կարող է ստանալ 3 կոնֆետ, բայց 9-րդ կոնֆետից հետո կմնա 1 կոնֆետ, որը չի կարող հավասար բաժանվել: Այսինքն՝ 10÷3=3 մն.1

Մեթոդներ պարզեցման համար

Թեման կապել առօրյայի հետ:

Ինչպե՞ս 13 խնձորը հավասար բաժանել 4 ընկերների միջև: Քանի՞ խնձոր կստանա յուրաքանչյուրը, և ինչքա՞ն կմնա:

Դիդակտիկ պատկերների ցուցադրում

Օգտագործել գունավոր քարտեր կամ փոքր առարկաներ (օրինակ՝ քարեր, կոնֆետներ), որոնք երեխաները կարող են բաժանել և տեսնել, թե ինչ է ստացվում:

Խաղի ձևաչափով վարժանք

Հաշվե՛լ, թե 5-ը քանի անգամ կարող ես տեղավորել 16-ի մեջ: Ի՞նչ կմնա:

Նկարների միջոցով կամ պաստառի վրա երեխաները կարող են տեղադրել թվերը՝ հաշվարկը ճիշտ պատկերացնելու և կատարելու համար:

Այսպիսի պարզ խաղային մոտեցումները բարդ հասկացությունները դարձնում են հասկանալի և հիշվող տարրական դպրոցի սովորողների համար:

Առարկա՝ Ֆիզիկա
8-րդ դասարան
Թեմա՝ Ջերմության փոխանցում
Բարդ ձևակերպում

«Ջերմության փոխանցումը մարմինների միջև կարող է տեղի ունենալ երեք եղանակով՝ ջերմահաղորդմամբ, ճառագայթմամբ և կոնվեկցիայով, որոնք կախված են նյութի կառուցվածքից և միջավայրից»:

Պարզեցված տարբերակ

«Ջերմությունը կարող է անցնել մեկ առարկայից մյուսին: Օրինակ՝ գդալը թեյի մեջ թողնելու դեպքում այն կտաքանա, որովհետև թեյի ջերմությունը փոխանցվում է գդալին»:

Պարզեցված բացատրություն և օրինակներ

Երբ ձեռքդ տաքացնում ես կրակի մոտ, կրակի ջերմությունը գալիս է ձեռքիդ ուղղությամբ:

Եթե ձեռքդ դնես սառը բաժակի վրա, կսառչի, որովհետև բաժակին է փոխանցվում ձեռքիդ ջերմությունը, իսկ ձեռքիդ՝ բաժակի սառնությունը:

Հարցեր սովորողներին

- Ինչպե՞ս է ջերմությունը փոխանցվում թեյից գդալին:
- Ինչո՞ւ է սառույցը հալվում, երբ դնում ես ձեռքիդ վրա:

Գործնական առաջադրանք՝ փորձ

Վերցնել սառույցը և դնել ձեռքի վրա: Դիտարկել, թե ինչպես է այն հալվում, և բացատրել, թե ինչու է դա տեղի ունենում:

Լրացնել բաց թողնված բառերը.

Ջերմությունը անցնում է ____ առարկայից ____ առարկային:

Եթե գդալը մտցնես տաք թեյի մեջ, այն ____:

Պատասխաններ՝ տաք, սառը, կտաքանա:

Այս մոտեցումը ուսուցման հետ կապված դժվարություններ ունեցող սովորողներին կօգնի հեշտությամբ հասկանալ նյութի էությունը:

Առարկա՝ Քիմիա

7-րդ դասարան

Թեմա՝ Խառնուրդներ և մաքուր նյութեր

Բարդ ձևակերպում

«Խառնուրդը կազմված է երկու կամ ավելի նյութերից, որոնք կարող են միմյանց հետ մեխանիկորեն խառնված լինել՝ առանց քիմիական փոփոխությունների: Մաքուր նյութերն ունեն հաստատուն կազմ և բնորոշ հատկություններ, ինչպես, օրինակ՝ հալման կամ եռման կայուն ջերմաստիճաններ»:

Պարզեցված տարբերակ

«Խառնուրդներ ստացվում են, երբ տարբեր նյութեր միանում են իրար, բայց չեն ձևափոխվում: Օրինակ՝ ջրին շաքար ավելացնելիս ստացվում է քաղցր ջուր:

Մաքուր նյութերը կազմած են մեկ բաղադրիչից, ինչպես, օրինակ, ջուրը կամ ոսկին: Նրանց բաղադրությունը չի փոխվում թե՛ հալման և թե՛ եռման ջերմաստիճանում:

Պարզեցված բացատրություն և օրինակներ

Խառնուրդ է, օրինակ, աղի և պղպեղի միացությունը՝ առանց դրանց հատկությունների փոփոխության:

Մաքուր նյութ է, օրինակ՝ մի բաժակ ջուրը՝ առանց այլ նյութի միացության:

Հարցեր սովորողներին

Ինչպե՞ս կարելի է տարբերել խառնուրդները մաքուր նյութերից:

Պատասխան: Խառնուրդում տարբեր նյութերը միասին են, բայց մնում են անփոփոխ, իսկ մաքուր նյութը կազմված է միայն մեկ տեսակի բաղադրիչներից:

Գործնական առաջադրանք՝ փորձ

Աղը ջրի մեջ լցնել և խառնել: Ի՞նչ կստացվի:

Պատասխան: Աղաջուր, որը խառնուրդ է, քանի որ ջուրը կարելի է գոլորշիացնել և ստանալ աղ:

Լրացնե՛լ բաց թողնված բառերը.

Աղաջուրը ____ է, իսկ ոսկին՝ ____:

Պատասխաններ՝ խառնուրդ, մաքուր նյութ:

Առարկա՝ Քիմիա

7-րդ դասարան

Թեմա՝ Քիմիական և ֆիզիկական փոփոխություններ

Բարդ ձևակերպում

«Քիմիական փոփոխության ընթացքում տեղի են ունենում ատոմների վերադասավորումներ, ինչի հետևանքով առաջանում են նոր նյութեր նոր քիմիական կազմով: Ֆիզիկական փոփոխությունները վերաբերում են նյութի վիճակի կամ ձևի փոփոխություններին՝ առանց դրա քիմիական կազմի փոփոխության»:

Պարզեցված տարբերակ

«Քիմիական փոփոխությունների ժամանակ նյութը վերածվում է այլ նյութի: Օրինակ՝ երբ մոմը վառում ենք, այն վերածվում է ածխաթթու գազի և ջրի: Ֆիզիկական փոփոխության դեպքում նյութը մնում է նույնը, բայց փոխվում է նրա տեսքը: Օրինակ՝ սառույցը հալչում է և դառնում ջուր»:

Օրինակներ

Ֆիզիկական փոփոխություն

Սառույց → ջուր: Սառույցը հալչում է, բայց մնում է ջուր:

Ծալված թուղթ: Թուղթը ծալվում է, բայց մնում է թուղթ:

Քիմիական փոփոխություն

Մոմի այրում: Մոմը վառվում է, և առաջանում են նոր նյութեր՝ ածխաթթու գազ և ջուր:

Խնձորի փտում: Խնձորը փոփոխության է ենթարկվում և այլևս նույնը չէ:

Գործնական առաջադրանք

Նշել՝ տվյալ փոփոխությունը ֆիզիկակա՞ն է, թե՞ քիմիական:

- Սառույցի հալչելը:
- Թղթի այրվելը:
- Աղը ջրում լուծելը:

Պատասխաններ

- Սառույցի հալչելը՝ ֆիզիկական:
- Թղթի այրվելը՝ քիմիական:
- Աղը ջրում լուծելը՝ ֆիզիկական:

Լրացնե՛լ բաց թողնված բառերը.

Մոմի այրվելը ____ փոփոխություն է:

Սառույցի հալչելը ____ փոփոխություն է:

Պատասխաններ՝ քիմիական, ֆիզիկական:

Նման պարզ օրինակներով սովորողները հեշտությամբ կհասկանան քիմիական և ֆիզիկական փոփոխությունների տարբերությունը:

2. <u>Ուսուցման փուլային ներկայացում</u>

Բարդ թեմաները բաժանելով կարճ ու հասկանալի մասերի՝ ուսուցումը կազմակերպել այնպես, որ սովորողները նյութը յուրացնեն աստիճանաբար:

Օրինակներ տարբեր առարկաներից

Առարկա՝ Ֆիզիկա

Թեմա՝ Ուժ և նրա ազդեցությունը մարմինների վրա

Նպատակ: Սովորողները պետք է հասկանան, թե ինչ է ուժը, ինչպես է այն ազդում մարմինների շարժման կամ ձևի վրա:

Ուսուցման փուլեր

Փուլ 1: Ի՞նչ է ուժը:

Նպատակ: Ձևավորել տարրական գաղափար այն մասին, որ ուժը ազդում է մարմնի շարժման վրա և փոխում նրա ընթացքը:

Գործունեություն

Օրինակ՝ երեխայի գրքի շարժումը սեղանի վրա:

Հարց: Ինչպե՞ս է գիրքը շարժվում (հրելով, վերցնելով, քաշելով):

Ուժը սահմանել որպես մարմինը շարժման դրդող կամ նրա ձևը փոխող ազդեցություն:

Դիդակտիկ նյութեր՝ գիրք, գնդակ, սեղան

Հարց: Երբ գնդակը գլորում ենք գետնի վրա, ինչո՞ւ է որոշ ժամանակ անց այն կանգ առնում:

Փուլ 2: Ուժի տեսակները

Նպատակ: Տարբերակել ուժի հիմնական տեսակները (ձգողականություն, շփում, մագնիսականություն):

- Գործունեություն: Ներկայացրե՛ք օրինակներ առօրյա կյանքից:

- Ձգողականություն: Գնդակը ընկնում է գետնին:
- Շփում: Ձեռքի օգնությամբ գիրքը տեղաշարժվում է:
- Մագնիսական ուժ: Մագնիսը ձգում է մետաղյա իրերը:

Կատարել պարզ փորձեր՝ լարով կամ մագնիսով տեղաշարժել տուփը:

Հարց: Ի՞նչ տարբերություն կա տուփը մագնիսով և ձեռքով քաշելու միջև:

Փուլ 3: Ուժի ազդեցությունները

Նպատակ: Ցույց տալ, թե ինչպես է ուժը փոխում մարմնի շարժումը կամ ձևը:

Գործունեություն: Կատարել փորձ.

- Գնդակին դիպչել՝ փոխելով նրա շարժման ուղղությունը:
- Կավե գնդակը սեղմել՝ փոխելով նրա ձևը:

Սովորողների հետ քննարկել՝ ինչ է տեղի ունենում գնդակի կամ կավի հետ:

Հարց: Ո՞ր ուժի ազդեցությամբ կարող է տեղի ունենալ մարմնի շարժման և ձևի փոփոխություն:

Հարց: Ինչո՞ւ է կավը ձևափոխվում, իսկ գնդակը՝ ոչ:

Փուլ 4: Ուժի մեծության չափում

Նպատակ: Սովորեցնել ուժը չափել նյուտոնաչափով:

Գործունեություն: Ցո՛ւյց տալ նյուտոնաչափի աշխատանքը նրանից տարբեր ծանրություններ կախելու դեպքում:

Հիշե՛լ: 1 նյուտոնը մարմնի վրա ազդող այնպիսի ուժ է, որը 1 կգ զանգվածին հաղորդում է 1 մ/վ² արագացում: Կատարե՛լ չափումներ՝ տարբեր իրերի ուժերի մեծությունը գտնելու համար:

Խնդիր: Նյուտոնաչափի միջոցով պարզել տուփի քաշը:

Հարց: Ի՞նչն է ազդում ուժի մեծության վրա: (զանգվածը)

Փուլ 5: Ուժերի գրաֆիկական պատկերում

Նպատակ: Ուժը ներկայացնե՛լ սլաքի միջոցով՝ ցույց տալով նրա ուղղությունը և մեծությունը:

Գործունեություն: Կատարե՛լ փորձ. սլաքների միջոցով ներկայացնել սեղանին դրված գիրքը (գրքի վրա ազդող ձգողականությունը և սեղանի հակազդեցությունը): Ուժերը գումարելով կամ հանելով՝ պարզել շարժման ուղղությունը:

Խնդիր: Ո՞ր ուղղությամբ կշարժվի գիրքը 5 Ն ուժով ձախ ուղղությամբ և 3 Ն ուժով աջ ուղղությամբ քաշելու դեպքում:

Փուլային ուսուցման շնորհիվ սովորողները ոչ միայն կհասկանան ուժի հիմնական գաղափարները, այլև կկարողանան կիրառել դրանք տարբեր իրավիճակներում:

Առարկա՝ Բնություն

6-րդ դասարան

Թեմա: Ջրի հատկությունները և դերը առօրյայում

Նպատակ: Պարզ ու փուլային ձևով սովորեցնել, թե ինչ է ջուրը, ինչ հատկություններ ունի, և ինչպես ենք այն օգտագործում կյանքում:

Փուլ 1: Ի՞նչ է ջուրը

Նպատակ: Հիմնական հասկացողություն տալ ջրի մասին:

Գործունեություն: Հարց: Ինչո՞վ ենք հագեցնում ծարավը կամ լվանում ձեռքերը:

Բերե՛լ պարզ օրինակներ. բաժակի մեջ ջուր լցնել: Ցույց տալ, որ ջուրը հեղուկ է, անգույն և թափանցիկ:

Ստուգիչ հարցեր

- Ջուրը ինչո՞ւ չունի գույն կամ ձև:
- Ինչո՞ւ է ջուրը միշտ ընդունում տարաների ձևը:

Փուլ 2: Ջրի տարբեր վիճակները

Նպատակ: Սովորողներին ծանոթացնել ջրի հեղուկ, պինդ կամ գազային վիճակներին:

Գործունեություն: Կատարե՛լ փորձ:

Սառույց (պինդ վիճակ)

Ջուր (հեղուկ վիճակ)

Եռման միջոցով ջրի գոլորշիացում (գազային վիճակ):

Հարց: Ի՞նչ տեղի ունեցավ սառույցի հետ այն տաքացնելուց հետո: Ի՞նչ եղավ գոլորշին:

Պատասխան՝ Ջերմաստիճանի ազդեցությամբ ջուրը փոխում է իր վիճակը:

Խնդիր: Ի՞նչ կլինի, եթե սառույցը հալվի արևի տակ:

Փուլ 3: Ջրի հատկությունները

Նպատակ: Ծանոթացնել ջրի հիմնական հատկություններին՝ հոսելիություն, թափանցիկություն, լուծելիություն:

Գործունեություն: Կատարել պարզ փորձեր.

Ջուրը մի բաժակից լցնել մյուս բաժակի մեջ և ցույց տալ, որ այն հոսում է:

Ջրի մեջ մատիտ մտցնել՝ ցույց տալու համար, որ այն թափանցիկ է:

Ջրի մեջ աղ լցնել և խառնել՝ ցույց տալու համար, որ այնտեղ լուծվում են որոշ նյութեր:

Հարց: Ի՞նչ է տեղի ունենում աղը ջրի հետ խառնելիս:

Փուլ 4: Ջրի կարևորությունը կյանքում

Նպատակ: Ցույց տալ ջրի դերը առօրյայում:

Գործունեություն: Ինչպե՞ս պետք է օգտագործել ջուրը խմելու, լողանալու, սնունդ պատրաստելու համար:

Բերել ջրի օգտագործման օրինակներ:

Խնդիր: Ինչպիսի՞ն կլիներ մեր կյանքը առանց ջրի:

Փուլ 5: Եզրակացություն և ամփոփում

Նպատակ: Կրկնել հիմնական գաղափարները՝ ամրապնդելու համար:

Գործունեություն: Ստուգիչ հարցեր.

- Ի՞նչ վիճակներում է հանդիպում ջուրը:
- Ո՞ր նյութերն են լուծվում ջրում:
- Ի՞նչ սովորեցիք:

Փուլային ուսուցման այս ձևը կօգնի թեմայի հեշտ ընկալմանը, իսկ առօրյայից բերված օրինակները կմեծացնեն առարկայի հանդեպ հետաքրքրությունը:

Առարկա՝ Մաթեմատիկա

6-րդ դասարան

Թեմա՝ Հավասարումների լուծում

Նպատակ: Սովորողները կսովորեն փուլային եղանակով լուծել պարզ գծային հավասարումները:

Փուլ 1: Ի՞նչ է հավասարումը

Նպատակ: Սահմանել և ընկալելի դարձնել հավասարման գաղափարը:

Գործունեություն: Հարց: Ի՞նչ թիվ պետք է ավելացնել 5-ին 10 թիվը ստանալու համար:

Խնդիրը ներկայացնել հավասարման ձևով՝ 5+x=10:

Բացատրել, որ հավասարումը նույնպես խնդիր է, որտեղ պետք է գտնել x-ի արժեքը:

Փուլ 2: Հավասարման պարզ լուծում

Նպատակ: Սովորեցնել պարզ քայլեր հավասարումը լուծելու համար:

Գործունեություն :

- 5+x=10 հավասարման լուծումը բացատրել քայլերով:
- Հաշվել, թե ինչ է նշանակում 10–5:
- Ցույց տալ, որ x=5:
- Միասին լուծել ևս մեկ հավասարում՝ x–3=7:

Փուլ 3: Հավասարումների լուծման ընդհանուր կանոններ

Նպատակ: Ներկայացնե՛լ կանոնները, որոնք կարելի է կիրառել ավելի բարդ հավասարումների համար:

Գործունեություն: Բացատրե՛լ հետևյալ կանոնները.

- Նման անդամները տեղափոխել հավասարման մի կողմից մյուսը՝ փոխելով նշանը:
- Պարզեցնել և գտնել x-ը:

Օրինակ՝ Լուծել 3x+2=11 հավասարումը՝ կատարելով հետևյալ քայլերը.

3x=11–2

3x=9

x=9÷3

x=3

Փուլ 4: Բարդ հավասարումների լուծում

Նպատակ: Սովորեցնել լուծել հավասարումներ, որոնց լուծման համար պետք է կատարել մի քանի գործողություն:

Գործունեություն: Դիցուք տրված է 2x+5=3x–7 հավասարումը.

- Անհայտ անդամները տեղափոխել նույն կողմ՝ 2x–3x=–7–5
- Պարզեցնել՝ –x=–12
- Գտնել անհայտ անդամը՝ x=12

Փուլ 5: Հավասարումների կիրառումը խնդիրների լուծման մեջ

Նպատակ: Ցո՛ւյց տալ, թե ինչպես կարելի է կիրառել հավասարումները իրական կյանքում:

Գործունեություն: Լուծել խնդիրը. «Խանութում երկու ապրանքը միասին արժեն 200 դրամ, որոնցից մեկը 70 դրամ է: Որքա՞ն արժե մյուսը»:

1. Խնդրի լուծումը ներկայացնել հավասարման տեսքով՝ x+70=200:
2. Գտնել անհայտ անդամը՝ x=200–70=130:

Սովորողներին հանձնարարել ինքնուրույն լուծել նմանատիպ խնդիրներ:

Նշված թեմայի փուլային ներկայացումը կզարգացնի սովորողների տրամաբանությունն ու հաշվելու հմտությունները: Նրանք կսովորեն հասկանալ և կիրառել հավասարումների լուծման տարբեր մեթոդները:

3. <u>Բարդության տարբեր մակարդակի առաջադրանքներ</u>

Յուրաքանչյուր թեմայի շրջանակում տրվող առաջադրանքները պետք է լինեն տարբեր բարդության՝ սկսած պարզ հաշվարկներից մինչև վերլուծական մտածողություն պահանջող խնդիրներ:

Առարկա՝ Բնություն

6-րդ դասարան

Թեմա՝ Ջրի շրջապտույտը բնության մեջ

Առաջադրանքներ՝ բարդության տարբեր մակարդակների

1. Ճանաչողական (հիմնական) մակարդակ

Նպատակ: Ստուգել հիմնական հասկացությունների իմացությունը:

Առաջադրանք: Տրված են ջրի շրջապտույտի փուլերը՝ գոլորշիացում, կոնդենսացիա՝ խտացում, տեղումներ:

Հարց: Դասավորե՛լ փուլերը ճիշտ հերթականությամբ:

Պատասխան. Գոլորշիացում → Կոնդենսացիա → Տեղումներ:

2. Կիրառական (միջին) մակարդակ

Նպատակ: Ստուգել սովորողների գործնական կարողությունները:

Առաջադրանք: Ասֆալտը հաճախ ավելի արագ է չորանում քամու ժամանակ: Բացատրել՝ ջրի շրջապտույտի որ փուլը կարող է կապված լինել այդ երևույթի հետ:

Պատասխան՝ Գոլորշիացում. քամին արագացնում է ջրի գոլորշիացումը:

3. Վերլուծական (բարձր) մակարդակ

Նպատակ: Զարգացնել սովորողների վերլուծական մտածողությունը և տարբեր երևույթներ համադրելու կարողությունը:

Ստուգիչ հարց: Ի՞նչ հետևանքներ կունենա Երկրագնդի վրա ջրի շրջապտույտի դադարումը:

Պատասխան. Ջուրը չի գոլորշիանա, ինչն էլ կնվազեցնի ամպերի առաջացումը:

Տեղումները կդադարեն, ինչն էլ կհանգեցնի երաշտների ու կենսաբազմազանության նվազման:

Կխախտվի կլիմայական հավասարակշռությունը:

Առարկա՝ Կենսաբանություն

7-րդ դասարան

Թեմա՝ Ֆոտոսինթեզ

Բարդության 1-ին աստիճան (ճանաչողական)

Նպատակ: Սովորողներին բացատրել ֆոտոսինթեզի ընթացքը:

Ստուգիչ հարց: Ի՞նչ է ֆոտոսինթեզը:

Պատասխան: Ֆոտոսինթեզը բույսերի կողմից լույսի, ջրի և ածխաթթու գազի միջոցով սննդանյութերի (գլյուկոզա) արտադրության գործընթացն է:

Բարդության 2-րդ աստիճան (կիրառական)

Նպատակ: Սովորողներին բացատրել, թե ինչ պայմաններում է տեղի ունենում ֆոտոսինթեզը:

Առաջադրանք: Գտնե՛լ ճիշտ պատասխանները՝ նշելով, թե ֆոտոսինթեզի համար որ բաղադրիչներն են անհրաժեշտ.

ա) Լույս

բ) Ածխաթթու գազ

գ) Ջուր

դ) Օդ

Պատասխան՝ ա), բ), գ):

Բարդության 3-րդ աստիճան (վերլուծական)

Նպատակ: Սովորողներին բացատրել ֆոտոսինթեզի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:

Ստուգիչ հարց: Բացատրե՛լ, թե ինչու է ֆոտոսինթեզը կարևոր՝

- մարդկանց համար

- կենդանիների համար
- շրջակա միջավայրի համար:

Պատասխան: Ֆոտոսինթեզի արդյունքում մարդկանց և կենդանիների համար արտադրվում է թթվածին: Այն նվազեցնում է ածխաթթու գազի քանակը շրջակա միջավայրում՝ բարելավելով մթնոլորտի որակը:

Բարդության 4-րդ աստիճան (ստեղծագործական)

Նպատակ: Սովորեցնել ստացած գիտելիքները կիրառել ստեղծագործաբար:

Առաջադրանք: Նկարել մի պաստառ, որում ներկայացված կլինի ֆոտոսինթեզի գործընթացը և դրա կարևորությունը: Պաստառի վրա ներկայացնել ֆոտոսինթեզի բանաձևը, փուլերը (լույսի կլանում, ջրի առանձնացում, գլյուկոզայի սինթեզ), պատճառները, և թե ինչու ֆոտոսինթեզը ունի կենսական նշանակություն:

Ակնկալվող արդյունքը՝ պաստառում կներառվեն նշված բոլոր կետերի պատասխանները, և գործընթացը կներկայացվի սովորողների ստեղծագործական մոտեցմամբ:

Առարկա՝ Մայրենի

3-րդ դասարան

Թեմա՝ Ածական

Բարդության 1-ին մակարդակ (ճանաչողական)

Հարց՝ նշված բառերից ո՞րն է ածական:

- գիրք
- կարմիր
- խաղալ

Պատասխան՝ կարմիր:

Բարդության 2-րդ մակարդակ (կիրառական)

Առաջադրանք: Նախադասությունը լրացնել համապատասխան ածականով.

Օրը շատ _____ էր:

Պատասխան՝ տաք:

Բարդության 3-րդ մակարդակ (վերլուծական)

Առաջադրանք: Բացատրել, թե ինչ դեր ունի ածականը հետևյալ նախադասության մեջ.

Տիկնիկի մազերը շագանակագույն էին:

Պատասխան՝ *շագանակագույն* ածականը նկարագրում է տիկնիկի մազերի գույնը:

Բարդության 4-րդ մակարդակ (ստեղծագործական)

Առաջադրանք: Գրե՛լ փոքրիկ պատմություն՝գործածելով 5 ածական:

Պատասխան. Ամռանը մենք գնացինք մի գեղեցիկ ծովափ: Ամպերը սպիտակ էին, իսկ ջուրը՝ սառը: Ծովափին շատ մարդիկ կային: Հեռվում երևում էին վիթխարի, կանաչապատ լեռները:

3. Դիդակտիկ նյութերի օգտագործում

Պատկերների, գծապատկերների, սիմվոլների և գունային ընդգծումների կիրառումը կարող է հեշտացնել նյութի ընկալումը հատկապես տարրական դպրոցում:

Առարկա՝ Մաթեմատիկա

6-րդ դասարան

Թեմա՝ Տոկոսներ

Դիդակտիկ նյութ: Գունավոր շրջանագծային դիագրամ

Առաջադրանք: Սովորողներին ցույց ենք տալիս պիցցայի պատկեր (շրջանագծային դիագրամ)՝ բաժանված 8 մասի, որի 3 մասը կարմիր է, իսկ 5 մասը՝ դեղին:

Հարց: Ո՞ր տոկոսն է կազմում պիցցայի կարմիր մասը:

Գծել և գունավորել պիցցայի տարբեր օրինակներ գունային (տոկոսային) այլ հարաբերությամբ:

Օգնություն: Սովորողներին պետք է բացատրել, որ գունավոր հատվածներն արտահայտում են ընդհանուրի որոշակի մասը՝ տոկոսը:

Առարկա՝ Մայրենի

3-րդ դասարան

Թեմա՝ Գործնական պատկերացում *գոյական, բայ, ածական* խոսքի մասերի վերաբերյալ

Դիդակտիկ նյութ: Աշխատանք աղյուսակով

Առաջադրանք 1: Յուրաքանչյուր խոսքի մաս նշված է մեկ գույնով. տրված բառերը տեղադրել համապատասխան վանդակներում:

Առաջադրանք 2: Յուրաքանչյուր խոսքի մասի դիմաց տեղադրել համապատասխան նկարը:

Խոսքի մաս	Օրինակներ
Գոյական	թիթեռ, տուն, գիրք
Բայ	վազել, երգել, խաղալ
Ածական	կարմիր, փոքր, համեղ

Առարկա՝ Հայոց պատմություն

7-րդ դասարան՝

Թեմա՝ Հայկական թագավորությունների ժամանակագրական հաջորդականությունը

Դիդակտիկ նյութ: Ժամանակացույց, որտեղ գունավոր հատվածներով ներկայացված են Ուրարտուի, Արտաշեսյանների, Բագրատունիների ժամանակաշրջանները:

Առաջադրանք՝

- Միացնել պատմական իրադարձությունները համապատասխան ժամանակաշրջանին:
- Ի՞նչ գույնով է ներկայացված Բագրատունիների թագավորությունը:

Առարկա՝ Հայոց պատմություն

7-րդ դասարան

Թեմա՝ Մեծ Հայքի տարածքային ընդլայնումը Տիգրան Մեծի օրոք

1. Հիմնական մակարդակ (ճանաչողական)

Հարց: Տիգրան Մեծի իշխանության ներքո ո՞ր երկրներն են ընդգրկվել:

ա) Պարսկաստան, Մակեդոնիա

բ) Միջագետք, Սիրիա

Պատասխան՝ բ) Միջագետք, Սիրիա:

2. Միջին մակարդակ (կիրառական)

Խնդիր: Նշված քարտեզի վրա ընդգծե՛լ Տիգրան Մեծի իշխանության սահմանները:

Պատասխան: Ուսուցչի պատրաստած քարտեզի վրա սովորողը պետք է նշի համապատասխան հատվածը:

3. Բարձր մակարդակ (վերլուծական)

Խնդիր: Վերլուծե՛լ Տիգրան Մեծի տարածքային նվաճումների ազդեցությունը Հայաստանի տնտեսական և ռազմական զարգացման վրա:

Պատասխան.

- Տարածքային ընդլայնումը նպաստեց միջազգային առևտրի զարգացմանը:
- Նվաճված տարածքների տնտեսությունները կարևոր միջոցներ էին հայոց բանակի համար:
- Տարածքային մեծությունը դժվարացնում էր միասնական կառավարման համակարգի պահպանումը:

Առարկա՝ Աշխարհագրություն

7-րդ դասարան

Թեմա՝ Երկրագնդի խոշոր կլիմայական գոտիները

Դիդակտիկ նյութ: Գունավոր կլիմայական քարտեզ

Կլիմայական գոտիները քարտեզի վրա նշել տարբեր գույներով: Այսպես՝ տաք գոտիները (արևադարձային և հասարակածային)՝ կարմիր և նարնջագույն, բարեխառն գոտիները՝ դեղին և կանաչ, ցուրտ գոտիները (բևեռային)՝ կապույտ և մանուշակագույն:

Յուրաքանչյուր կլիմայական գոտու կողքին նշել նրա հիմնական բնութագրիչները (օրինակ՝ միջին ջերմաստիճան, տեղումների քանակ):

Աշխարհագրական պատկերները նշել ըստ գոտիների: Տաք գոտիներում նշել լանդշաֆտներ՝ անձրևային անտառներ, անապատներ, բարեխառն գոտիներում՝ մարգագետիններ, լայնատերև անտառներ, ցուրտ գոտիներում՝ սառցադաշտեր, տունդրաներ:

Տեսական բացատրություն

Ցույց տալ կլիմայական գոտիները՝ օգտագործելով քարտեզը և հարցերի միջոցով ամփոփել նյութը:

- Ինչո՞ւ է երկրի տարբեր մասերում եղանակը տարբեր:
- Ինչպե՞ս են լայնությունները ազդում կլիմայի վրա:
- Որո՞նք են խոշոր կլիմայական գոտիները:
  - Տաք գոտիներ՝ մշտապես բարձր ջերմաստիճան, մեծ տեղումներ կամ չորություն (օրինակ՝ հասարակածային անտառներ և անապատներ):
  - Բարեխառն գոտիներ՝ չորս եղանակների առկայություն, միջին ջերմաստիճան:
  - Ցուրտ գոտիներ՝ երկար ձմեռներ, ցածր ջերմաստիճան:

Աշխատանք քարտեզով

1. Սովորողները քարտեզի վրա ուսումնասիրում են գունավոր գոտիները:
2. Գտնում են իրենց երկիրը (օրինակ՝ Հայաստան):
3. Ասում են, թե ինչ գույնով է նշված գոտին, որում այն գտնվում է:

Օրինակներ՝ տարբեր երկրների համեմատություն

Հարցեր սովորողներին

- Ի՞նչ կլիմա է մեր երկրում, եթե այն գտնվում է բարեխառն գոտում:
- Ի՞նչ կլիմա կլիներ, եթե ապրեինք տաք կամ ցուրտ գոտում:

Անհատական աշխատանք

Յուրաքանչյուր սովորող տարբեր կլիմայական գոտիներից գտնում է 1-2 երկիր և գծագրում այդ երկրներին բնորոշ լանդշաֆտները (օրինակ՝ արմավենի, սառցաբեկոր, լայնատերև ծառ):

Խմբային քննարկում

Ձևավորել խմբեր՝ կլիմայական գոտիներին համապատասխան:

Յուրաքանչյուր խումբ պետք է ներկայացնի իր կլիմայական գոտուն բնորոշ հատկանիշները, օրինակ՝ տաք գոտին ներկայացնող խումբը. «Մեր գոտում շատ արևոտ է, տեղումներ քիչ են լինում, այստեղ կարող են լինել անապատներ, օրինակ՝ Սահարան»:

Կապ առօրյա կյանքի հետ

Օրինակ՝

- Ինչպե՞ս է կլիման ազդում գյուղատնտեսության վրա:
- Ինչո՞ւ են տաք գոտիներում մարդիկ ավելի շատ բամբակյա, իսկ ցուրտ գոտիներում՝ բրդե հագուստ կրում:

Աշխատանք քարտեզով

Գտնե՛լ երեք երկիր տարբեր կլիմայական գոտիներում և նշել, թե ինչ գույներով են դրանք ներկայացված քարտեզի վրա:

Հետազոտական աշխատանք

Յուրաքանչյուր գոտու համար մեկ նախադասությամբ նկարագրել տվյալ գոտում բնակվելու առավելությունները:

Ստեղծագործական առաջադրանք

Պատկերացրեք, որ բարեխառն գոտուց տեղափոխվել եք տաք գոտի: Գրե՛ք փոքրիկ պատմություն այն մասին, թե ինչպես է ձեր կյանքը փոխվում տեղի կլիմայի պատճառով:

Առարկա՝ Ֆիզիկա

7-րդ դասարան

Թեմա՝ Օդի խտություն

Օդի խտության թեման ուսումնասիրելով՝ սովորողները պատկերացում են կազմում գազերի հատկությունների մասին, կարողանում են հաշվել օդի և մյուս գազերի խտությունը:

1. Դիդակտիկ նյութի կիրառում:

Գունավոր սխեմայի կամ նկարի միջոցով պատկերել տաք և սառը օդի միջավայրը:

Տաք օդը գունանշել կարմիր, սառը օդը՝ կապույտ գույնով: Մոլեկուլները ներկայացնել փոքր գնդիկների տեսքով:

- Տաք օդի գնդիկները միմյանցից հեռու են, ինչը նշանակում է, որ նրա խտությունը ցածր է:
- Սառը օդի գնդիկները մոտ են իրար, ինչը նշանակում է, որ խտությունը բարձր է:

Օրինակ. Գրատախտակի վրա նկարել կամ ցուցադրել պատկերը պրոյեկտորի միջոցով:

2. Բացատրություն:

Ուսուցիչը բացատրում է, որ.

- Տաք օդը ավելի թեթև է, քանի որ մոլեկուլները արագ են շարժվում և հեռանում են միմյանցից:
- Սառը օդը ավելի ծանր է, քանի որ մոլեկուլները շարժվում են դանդաղ և իրար ավելի մոտիկ են:

Գործնական առաջադրանք՝ ուսուցում փորձի միջոցով

- Պատրաստել երկու պոլիէթիլենային փուչիկ՝ մեկը սառը, մյուսը՝ տաք օդով:
- Տեղադրե՛լ փուչիկները նույն կշեռքի վրա:

Սառը օդով փուչիկը կթվա ավելի ծանր (ավելի խիտ): Տաք օդով փուչիկը կթվա ավելի թեթև (ավելի նոսր):

Այս փորձով սովորողները գործնականում կտեսնեն օդի խտության տարբերությունը:

Գործնական առաջադրանք

- Սխեմայի վրա նշել, թե որտեղ է օդի խտությունը բարձր:
- Նկարագրել, թե ինչու է սառը օդը ծանր թվում, իսկ տաք օդը՝ թեթև:
- Նկարել սխեմա և ցույց տալ մոլեկուլների դասավորվածությունը տաք և սառը օդում:

Օգնություն

- Գունավոր պատկերները պարզեցնում են թեման՝ սովորողներին օգնելով տեսնել և տարբերել նյութի խտությունը՝ նախքան ֆիզիկական փորձի կատարումը:
- Թեմայի յուրացմանը օգնում են նաև հարցերը: Օրինակ՝
  - Ինչո՞ւ է տաք օդով փուչիկը բարձրանում:
  - Ինչո՞ւ է ցուրտ օրերին տաք օդն ավելի դանդաղ դուրս գալիս շշից:

Տեսական և գործնական մոտեցումների, դիդակտիկ նյութերի կիրառման և համադրման շնորհիվ թեման դառնում է հետաքրքիր և հեշտ ընկալելի:

Առարկա՝ Կերպարվեստ

6-րդ դասարան

Թեմա՝ Գույներ և ոճեր

1. Դիդակտիկ նյութեր և միջոցներ

Պատկերների ցուցադրում

Ցուցադրել տարբեր ոճերի նկարներ՝ համապատասխան մեկնաբանությամբ:

- **Իմպրեսիոնիստական ոճ**: Կլոդ Մոնեի «Ջրաշուշաններ» աշխատանքում սառը գույները (կապույտ, կանաչ) ներդաշնակ կերպով փոխանցում են հանգստության և նրբագեղության զգացողություն:
- **Մոդեռնիստական ոճ**: Անրի Մատիսի «Խխունջը» աշխատանքում, ի տարբերություն Մոնեի նկարի, վառ և տաք գույների համադրությունը (կարմիր, դեղին) ստեղծում է էներգիայի և դինամիկայի զգացողություն:

2. Գծապատկերներ

Գծապատկերների միջոցով ներկայացնել գույների տեսակները:

- **Հիմնական գույներ**՝ կարմիր, կապույտ, դեղին:
- **Երկրորդական գույներ**՝ ստացվում են հիմնական գույներն իրար խառնելու միջոցով (օրինակ՝ դեղին + կապույտ = կանաչ):
- **Սառը գույներ**՝ կապույտ, կանաչ, մանուշակագույն (փոխանցում են հանգստություն և թարմություն):
- **Տաք գույներ**՝ կարմիր, նարնջագույն, դեղին (փոխանցում են ջերմություն և էներգիա):

Դիդակտիկ խաղեր

- Նկարների որոշ հատվածներ կտրված են: Սովորողները դիտում են միայն հատվածները և փորձում գուշակել, թե որ գույնով կշարունակվի հորինվածքը և ինչպիսի ազդեցություն կունենա:
- Ուսուցիչը սովորողների հետ քննարկում է, թե ինչպես են գույների համադրությունները փոխում նկարի ընդհանուր տրամադրությունը:

Գործնական առաջադրանքներ

1. **Գույների վերլուծություն**

   Սովորողները ստանում են երկու տարբեր պատկերներ և նշում, թե որտեղ են գերակշռում տաք, և որտեղ՝ սառը գույները:

2. **Գույնի համադրության ստեղծում**
   - Սովորողներն աշխատում են՝ օգտագործելով միայն երկու հիմնական գույն:
   - Կարող են ընտրել թե՛ տաք, թե՛ սառը գույների համադրություն:

3. **Ներկայացում**

   Յուրաքանչյուր սովորող ներկայացնում է իր աշխատանքը և բացատրում, թե ինչու է ընտրել տվյալ գույները:

Խմբային քննարկում

- Ո՞ր գույների համադրությունը փոխանցեց առավել հաճելի կամ ուժեղ զգացողություններ:
- Ինչպե՞ս եք պատկերացնում գույների համադրությունը առօրյա կյանքում (հագուստի, ինտերիերի դիզայնում):

Առարկա՝ Երաժշտություն

3-րդ, 4-րդ դասարաններ

Թեմա՝ Երգի մեղեդու բնույթը և տոնայնությունը

1. Պաստառ երգի բառերով

Ներկայացնել պաստառ՝ երգի բառերով, որոնք պաստառի վրա տեղադրված են տպավորիչ, ակնառու և հասկանալի:

Գույների կիրառություն: Կարևոր բառերը կամ արտահայտությունները նշել տարբեր գույներով: Օրինակ՝ բարձր տոնայնությամբ բառերը նշել կարմիր, իսկ մեղմ հատվածները՝ կանաչ գույնով:

2. Հնչյունային սանդղակ

- Նոտաներն ու հնչյունները պատկերել գծերով կամ սանդղակի տեսքով, որտեղ տեսանելի է յուրաքանչյուր նոտայի բարձրությունը:
- Օրինակ՝ «դո», «մի» և «սոլ» նոտաները ընդգծել սանդղակով, որը ցույց կտա դրանց փոփոխությունը երգի ընթացքում:

3. Համապատասխան պատկերներ

Երգի ընթացքում ցուցադրել թեմային համապատասխան պատկերներ: **Օրինակ**՝ հայրենասիրական երգի դեպքում՝ ազգային դրոշի կամ պատմական վայրի նկարներ, սիրային երգի դեպքում՝ ծաղիկների կամ ռոմանտիկ տեսարաններ:

4. Մատրիցա կամ նշանների համակարգ

Ստեղծել պարզ նշաններ, որոնք կհաղորդեն երգի տարբեր հատվածների շեշտադրումները:

Օրինակ՝ բարձր տոնայնության համար՝ սլաքներ դեպի վեր, մեղմ տոնայնության համար՝ դեպի ներքև ուղղությամբ:

Առաջադրանքներ՝ պարզեցված տարբերակ

1. Շեշտադրման վարժություն

Օրինակ: Սովորողներին տրվում է տեքստը՝ առանց նշված շեշտադրումների:

Նրանք լսում են երգը և նշում, թե որ բառերը պետք է ընդգծել:

Հարց: Ո՞ր բառերն են ավելի կարևոր երգի տրամադրության համար:

2. Ներդաշնակության վարժություն

Օրինակ: Սովորողները բաժանվում են խմբերի և երգում երգի տարբեր հատվածներ՝ միասին փորձելով պահպանել ներդաշնակությունը:

Հարց: Ինչպե՞ս է ազդում միասնական հնչյունավորումը երգի գեղեցիկ կատարման վրա:

3. Տոնայնության վարժություն

Օրինակ: Ուսուցիչը միևնույն հատվածը երգում է երկու տարբերակներով՝ ճիշտ և սխալ տոնայնությամբ: Սովորողները լսում և նշում են սխալները:

Հարց: Ո՞ր հատվածում է տոնայնությունը ավելի ճիշտ ու բարեհունչ:

Դիդակտիկ նյութերի օգտագործումը պարզեցնում է երգի ընկալումը:

- **Գունավոր տարբերակները** օգնում են սովորողներին կենտրոնանալ կարևոր հատվածների վրա:
- **Հնչյունների գրաֆիկան** պարզեցնում է նոտաների և տոնայնության ընկալումը:
- **Պատկերների կիրառումը** ստեղծում է կապ երգի բովանդակության և էմոցիոնալ տպավորությունների միջև:

Այս մեթոդները նպաստում են ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպմանը, և երգի կատարումը դառնում է ավելի հեշտ ու հաջողված:

Առարկա՝ Երաժշտություն

3-րդ դասարան

Թեմա՝ Երաժշտության ռիթմի ընկալումը և գործնական կիրառությունը

Դիդակտիկ նյութեր

1. **Ռիթմի գրաֆիկական ցուցադրում**
   - Ցուցադրել երաժշտության ռիթմի գրաֆիկական տարբերակը՝ օգտագործելով գծապատկերներ:
     - Օրինակ՝ **համաչափ ռիթմը**՝ որպես նույն չափի կրկնվող կլոր կետեր (● ● ● ●), իսկ **անհամաչափ ռիթմը**՝ որպես տարբեր չափերի կետեր (● ○ ● ● ○):

2. Տողերի համեմատություն քայլերի հետ

- Գրատախտակին նկարել քայլեր պատկերող գծեր և ցույց տալ, թե ինչպես է ռիթմը կապված քայլելու հետ:
  - Օրինակ՝ համաչափ քայլերը՝ _____, իսկ արագ ու դանդաղ քայլերը՝ _____:

3. Տեմպի գույների աղյուսակ

- **Գույների օգտագործում՝** արագ ռիթմը նշել վառ կարմիրով, միջին ռիթմը՝ դեղինով, իսկ դանդաղը՝ կապույտով:

4. Փոքր երաժշտական գործիքներ

- Պարզ գործիքների միջոցով (դափ կամ թմբուկ) ցույց տալ ռիթմի ձևավորումը գործնականում:

Առաջադրանքներ

1. **Ռիթմի համեմատություն քայլելու հետ**
   - **Վարժություն**: Սովորողները փորձում են քայլել տարբեր ռիթմերով՝ կրկնելով ուսուցչին:
   - **Հարց**: Ինչպե՞ս են տարբեր ռիթմերը փոխում մեր քայլելու տեմպը:
2. **Ռիթմի խաղ**
   - **Վարժություն**: Խաղարկել տարբեր ռիթմեր (օրինակ՝ համաչափ և անհամաչափ) և սովորողներին հանձնարարել դրանք կրկնել ծափերով:
   - **Հարց**: Ի՞նչպես են համաչափ ռիթմերը տարբերվում անհամաչափ ռիթմերից:
3. **Խմբային կատարում**
   - **Վարժություն**: Սովորողները բաժանվում են խմբերի, յուրաքանչյուր խումբ ընտրում է մի ռիթմ և ծափահարում կամ գործիքով նվագում՝ պահելով տեմպը:
   - **Հարց**: Ինչպե՞ս տարբեր ռիթմերի միավորմամբ ստեղծել ներդաշնակ կատարում:

Դիդակտիկ նյութերի դերը

Ռիթմի ուսուցման գործընթացում կարևոր են դիդակտիկ նյութերը, քանի որ՝

- **Գրաֆիկական ցուցադրումը** թույլ է տալիս սովորողներին ավելի հեշտ հասկանալ ռիթմի կառուցվածքը:
- **Գույնի օգտագործումը** օգնում է տարբերել ռիթմերի տեսակները՝ ստեղծելով հստակ պատկերացում տեմպի մասին:
- **Գործիքների կիրառումն** ամրապնդում է սովորողների գործնական հմտությունները և հաղորդում երաժշտության ռիթմի իրական էությունը:

Այս մոտեցումը հեշտացնում է ռիթմի ընկալումը:

4. Եզրույթների ճշգրիտ կիրառում

Եզրույթները պետք է լինեն պարզ, պատկերավոր և առնչվեն առօրյա կյանքին: Անհրաժեշտ է օգտագործել համեմատություններ, խաղային մեթոդներ, ինչպես նաև պատմություններ, որոնք կօգնեն սովորողներին հասկանալ հիմնական եզրույթների իմաստը:

4. Երաժշտություն

Եզրույթ՝ Ռիթմ

Հիմնական բացատրություն: Ռիթմը երաժշտական երկար ու կարճ հնչյունների որոշակի հաջորդականությունն է:

Եզրույթի կիրառություն

Պարզաբանել ռիթմ հասկացությունը՝ այն համեմատելով քայլելու գործընթացի հետ: Օրինակ՝ «Երբ մենք քայլում ենք, սովորաբար պահպանում ենք որոշակի ռիթմ կամ չափ: Եթե քայլում ենք նույն արագությամբ, ուրեմն դա համաչափ ռիթմ է: Եթե յուրաքանչյուր քայլ համարենք մի երաժշտական հնչյուն, ապա քայլերի ստեղծած տարբեր տատանումները միասին կձևավորեն երաժշտության ռիթմը: Եթե քայլելու ընթացքում արագությունը փոփոխվում է, արագանում կամ դանդաղում, ապա ստեղծվում է անհամաչափ ռիթմ»:

Կերպարվեստ

Եզրույթ՝ Հակադրություն (կոնտրաստ)

Հիմնական բացատրություն: Կոնտրաստը տարբերվող այնպիսի գույների կամ տարրերի համադրությունն է, որոնք ուշադրություն են գրավում:

Եզրույթի կիրառություն

«Հակադրություն» գաղափարը պարզաբանելիս կարելի է համեմատություն անցկացնել ինչ-որ ուտեստի բաղադրիչների հետ, որպեսզի սովորողների համար այն ավելի ընկալելի լինի:

Օրինակ՝ «Հակադրությունը նման է ուտեստում համեմունքների տարբեր համերի համադրությանը. կծու և թթվաշ համերը միասին կարող են ավելի վառ դարձնել ուտեստի համը: Արվեստում նույնպես տարբեր գույների կամ ձևերի համադրությունը ստեղծում է վառ և հիշվող դիդակտիկ էֆեկտ: Գունային հակադրությունը կարևոր է նաև ուշադրությունը գրավելու և ստեղծագործության ուղերձը ուժեղացնելու համար»:

Հասարակագիտություն

Եզրույթ՝ Դեմոկրատիա

Հիմնական բացատրություն: Դեմոկրատիան իշխանության այնպիսի ձև է, որի ժամանակ ժողովուրդը մասնակցում է կառավարման գործընթացին ընտրությունների միջոցով կամ այլ մեթոդներով, և իշխանությունը կախված է ժողովրդի կամքից:

Եզրույթի կիրառություն: Ուսուցիչը կարող է հստակ բացատրել այս եզրույթը՝ օգտագործելով պատկերավոր օրինակներ և համեմատություններ: «Դեմոկրատիայի դեպքում խմբի բոլոր անդամների կարծիքը կարևոր է: Օրինակ՝ մի խումբ երեխաներ որոշում են, թե ինչ խաղ խաղալ: Եթե նրանք որոշումը կայացնում են դեմոկրատական եղանակով՝ իրար հետ քննարկելով և լսելով մեկը մյուսի կարծիքը, ապա բոլորն էլ ունեն հնարավորություն ընտրելու՝ ինչ խաղ խաղալ: Իսկ եթե միայն մեկը կամ երկուսն են որոշում, թե ինչ խաղ խաղալ, ապա դա չի լինի դեմոկրատիա, այլ՝ միայն մեկի կամ մի քանիսի կամքի թելադրում:

Այսպիսով՝ դեմոկրատիայի գաղափարը կարելի է բացատրել՝ օգտագործելով պարզ օրինակներ իրական կյանքից:

Աշխարհագրություն

Եզրույթ՝ Մակրոտարածք

Հիմնական բացատրություն: Մակրոտարածքը մեծ տարածք է, որն ընդգրկում է բազմաթիվ երկրներ կամ տարածաշրջաններ, որոնք կապված են ընդհանուր աշխարհագրական, կլիմայական կամ մշակութային հատկանիշներով: Օրինակ՝ Եվրոպան, Աֆրիկան կամ Խաղաղ օվկիանոսը կարող են դիտարկվել որպես մակրոտարածքներ:

Եզրույթի կիրառություն

«Մակրոտարածք» եզրույթը կարելի է բացատրել՝ օգտագործելով առօրյա օրինակներ, որոնք սովորողների համար հեշտ ընկալելի կլինեն:

Օրինակ՝ Մեկ մեծ տարածք կարելի է համարել յուրաքանչյուր տուն, որի ներսում կան փոքրիկ սենյակներ՝ խոհանոց, ննջասենյակ, հյուրասենյակ: Աշխարհը նույնպես մեծ տուն է, իսկ մակրոտարածքները՝ նրա սենյակները: Օրինակ՝ Եվրոպան կամ Աֆրիկան ներառում են փոքր երկրներ, ինչպես տան սենյակները: Սենյակները կարող են տարբեր լինել ըստ մեծության և օգտագործման, ինչպես երկրներն են տարբերվում իրենց մշակույթով կամ բնական պայմաններով:

Նման պարզ համեմատությունները կօգնեն սովորողներին հասկանալ բարդ հասկացությունները և կապել դրանք իրական կյանքի հետ:

Քիմիա

Եզրույթ՝ Քիմիական ռեակցիա

Հիմնական բացատրություն: Քիմիական ռեակցիան այն գործընթացն է, որի ընթացքում որոշակի նյութեր փոխարկվում են, և առաջանում են նոր նյութեր: Սա տեղի է ունենում այն դեպքում, երբ մոլեկուլները փոխազդում են միմյանց հետ՝ առաջացնելով նոր կապեր կամ խախտելով առկա կապերը:

Եզրույթի կիրառություն: Եզրույթը կարելի է բացատրել՝ օգտագործելով հետևյալ համեմատությունը:

Տարբեր գույների ներկեր խառնելու արդյունքում կստացվի մի նոր գույն: Քիմիական փոխազդեցությունների դեպքում նույնպես նյութերը միախառնվում են, և առաջանում են նոր նյութեր:

Բարդ նյութերի պարզեցումն ու տարբեր մակարդակների առաջադրանքների կատարումը կնպաստեն թեմայի յուրացմանը և կապահովեն սովորողների ակտիվ մասնակցությունը ուսուցման գործընթացին:

Ուսուցման փուլային ներկայացման մեթոդները, դիդակտիկ նյութերի օգտագործումը, համեմատությունների ու խաղային մեթոդների կիրառումը, իրական կյանքից բերված օրինակները կօգնեն ուսուցիչներին բարդ թեմաները ավելի մատչելի և հետաքրքիր դարձնել տարբեր կարողություններ ունեցող սովորողների համար:

Ամփոփելով նշենք, որ դասագրքերի և ուսումնական այլ նյութերի հարմարեցումը, որպես ամբողջական համակարգ, ներառում է մեթոդական տարատեսակ վարժանքներ և նորարարական մոտեցումներ՝ ուսուցման գործընթացը դարձնելով ավելի հասկանալի, հետաքրքիր և արդյունավետ և այդպիսով նպաստելով սովորողների կարողությունների զարգացմանը:

Սովորողների կարիքների, հնարավորությունների և հետաքրքրությունների վրա հիմնված ուսուցման գործընթացում կարևոր են ուսուցիչներին առաջադրվող հետևյալ նախապայմանները.

1. Հստակ նպատակների սահմանում և պլանավորում

- Ուսուցման հստակ սահմանված նպատակներ և ակնկալվող արդյունքներ,

- Դասերի ճիշտ պլանավորում և համապատասխանեցում սովորողների մակարդակին ու տարիքային առանձնահատկություններին,

2. Դասավանդման հարմարեցված մեթոդներ

- Ուսուցանվող նյութին համապատասխան ուսուցման ձևերի և մեթոդների ընտրություն,
- ՏՀՏ գործիքների կիրառում՝ սովորողների ներգրավվածությունն ապահովելու և նյութերը հետաքրքիր դարձնելու նպատակով,

3. Միջավայրի հարմարեցում

- Սովորողների համար հարմարավետ և անվտանգ ուսումնական միջավայրի ապահովում,

4. Դրական մոտիվացիա

- Սովորելու հանդեպ հետաքրքրության աճ,
- Նյութի կապը առօրյա կյանքի կամ սովորողների նախասիրությունների հետ,

5. Ուսուցման կազմակերպում՝ ելնելով սովորողների կարիքներից և առանձնահատկություններից

- Ուշադրություն սովորելու արագությանը և հնարավորություններին,
- Դասերին սովորողների արդյունավետ մասնակցության ապահովում և՛ արագ, և՛ դանդաղ տեմպերով,

6. Մասնագիտական պատրաստվածություն

- Թեման մատչելի ներկայացնելու և սովորողների հետ արդյունավետ համագործակցելու, հաղորդակցվելու կարողություններ,
- Նորարարական մեթոդների և գործիքների տիրապետում,

7. Ուսուցչի ստեղծագործական մոտեցում

- Տրված նյութի մեջ ինքնուրույն փոփոխություններ կատարելու, լրացուցիչ նյութերով այն համալրելու և դասն ըստ սովորողների կարիքների հարմարեցնելու կարողություն,

8. Տեխնոլոգիաների օգտագործում

- Տեսանյութերի, խաղերի կամ թվային հարթակների օգտագործում՝ սովորողների մտածողությունն ակտիվացնելու նպատակով,

9. Հետադարձ կապի ապահովում

- Հետադարձ կապի ապահովում՝ սովորողների ուսումնառությունը արդյունավետ կազմակերպելու համար,

10. Արդյունքների մշտադիտարկում և վերլուծություն

- Թեմայի յուրացման աստիճանը ստուգելու համար հարցաշարերի, ստուգաթերթերի կիրառում կամ խմբային քննարկումների կազմակերպում:

Առաջադրվող նախապայմանների ճիշտ և նպատակային կիրառման դեպքում ուսուցման գործընթացը կդառնա արդյունավետ յուրաքանչյուր սովորողի համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սվաջյան Ա. Հ., Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների դպրոցական ուսուցման կազմակերպման ժամանակակից հիմնահարցերը, (Երեխաների սոցիալ-հոգեբանական զարգացում, մեթոդական ձեռնարկ), «ԱՍՀԱԻ» հր. Երևան-2013:
2. Սվաջյան Ա. Հ., Ադամյան Հ. Ա., Գարեգինյան Ա. Ա., Մարգարյան Լ. Հ., Հակոբյան Լ. Գ., Քալաշյան Ա. Ա., Գրիգորյան Լ. Կ., Զաքարյան Լ. Կ., Ներսիսյան Ա. Ռ., Հարությունյան Գ. Հ., Մուրադյան Ռ. Մ., Մարգարյան Հ. Վ., (2021). Ինչպես խթանել ներառումը դասարանում: Մեթոդական ուղեցույց: Ձեռնարկ. Երևան, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 235 էջ:
3. Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Ֆիզիկա» առարկայի 7-12-րդ դասարանների առարկայական չափորոշիչ: *from* https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=176065
4. Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Մաթեմատիկա» առարկայի 1-12-րդ դասարանների առարկայական չափորոշիչ: *from* https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=176064
5. Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Քիմիա» առարկայի 7-9-րդ և 10-12-րդ դասարանների առարկայական չափորոշիչ: *from* https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=176067
6. Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Աշխարհագրություն» առարկայի 7-8-րդ, 10-12-րդ և «Հայաստանի աշխարհագրություն» առարկայի 9-րդ դասարանների առարկայական չափորոշիչ: *from* https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=187957
7. Հանրակրթության պետական չափորոշիչ *from* https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788
8. Հույսի կամուրջ ՀԿ, ՀՄԿ. (2021). ՀՀ պետական հանրակրթական դպրոցներում կրթության կազմակերպման գործընթացի ներառականության գնահատման ամփոփ արդյունքները:
9. Феталиева Л.П., Шихалиева С.Х., Караева С.А. Методы обучения младших школьников с особыми образовательными потребностями/ Международный научный журнал «Инновационная наука. №1/2016 ISSN 2410-6070.

ԲՏՃՄ առարկաների, մասնավորապես քիմիա առարկայի ներառականության ապահովումը նոր չափորոշչի լույսի ներքո

Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը: Այս համակարգը հնարավորություն է ընձեռում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունն ու դաստիարակությունը կազմակերպել առանց երեխային ընտանիքից զատելու՝ ապահովելով նրա համակողմանի հասարակական զարգացումը և ներառելով նրան հանրակրթական ուսումնական հաստատություն:

2021թ-ի հուլիսին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից մեկնարկեց Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում պետական նոր կրթական չափորոշիչների ներդրման մեկամյա փորձարարական ծրագիրը:

Միջնակարգ կրթության պետական չափորոշչի համաձայն՝ «Քիմիա» ուսումնական առարկան «Բնագիտություն, Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ, Ճարտարագիտություն, Մաթեմատիկա (ԲՏՃՄ)» ուսումնական բնագավառը ներկայացնող պարտադիր առարկաներից մեկն է:

«Քիմիա» առարկայի գլխավոր նպատակը սովորողների մոտ քիմիական գիտելիքների համակարգի և դրանց կիրառման հմտությունների ձևավորումն է, որպեսզի նրանք դառնան ժամանակակից արագ փոփոխվող հասարակության լիարժեք անդամներ և նախապատրաստվեն քիմիային առնչվող հետագա ուսումնառությանը:

«Քիմիա» առարկայի հիմնական նպատակն է սովորողներին հնարավորություն տալ.

- ձևավորել և կիրառել քիմիական գիտելիք, հասկանալ գիտության բնույթը քիմիային առնչվող համատեքստում և գնահատել քիմիայի և մյուս գիտությունների միջև գոյություն ունեցող կապերը,
- զարգացնել գիտական հետազոտություններ կատարելու ունակությունները, ստեղծարար և քննականորեն մտածելու և քիմիայի համատեքստում անհատապես կամ խմբերով խնդիրներ լուծելու կարողությունը,

- հասկանալ քիմիական տերմինաբանությունը և հաղորդակցվել՝ ներկայացնելով քիմիային առնչվող հարցերի վերաբերյալ գաղափարներ և տեսակետներ,
- զարգացնել պատասխանատու քաղաքացու վերաբերմունք բնական ռեսուրսների օգտագործման և բնապահպանական հարցերի վերաբերյալ:

Քիմիան անքակտելի կապի մեջ է բնական գիտությունների՝ ֆիզիկայի, կենսաբանության, մաթեմատիկայի, աշխարհագրության հետ:

Դասավանդող ուսուցիչը պետք է դասավանդման և ուսումնառության գործընթացը հարմարեցնի սովորողների առանձնահատկություններին, նախասիրություններին և կարողություններին՝ կիրառելով տարբերակված ուսուցման տարաբնույթ ռազմավարություններ: Կարևոր է, որ դասավանդման ընթացքում կիրառված մոտեցումները, աշխատանքների տեսակները և մեթոդները լինեն բազմազան և հետաքրքիր, ուղղակիորեն կապված լինեն ծրագրի նպատակներին և ակնկալվող վերջնարդյունքներին:

Հանրակրթության պետական նոր չափորոշչում կրթության բովանդակության հիմքում ներդրվել է կարողունակությունների վրա հիմնված կրթություն, որի դեպքում սովորողները պետք է կարողանան կիրառել ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները:

Կարողունակությունները սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքների, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա իրավիճակին համապատասխան արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերն են: Կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում՝ դաստիարակության միջոցով, և բխում են հանրակրթության հիմնական նպատակներից: Ուսուցման ընթացքում սովորողները ձեռք են բերում.

Ա. սովորել սովորեցնելու կարողունակություն,

Բ. լեզվական կարողունակություն և գրագիտություն,

Գ. ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն,

Դ. թվային և մեդիակարողունակություն,

Ե. մշակութային կարողունակություն:

Հանրակրթական տարրական, հիմնական և միջնակարգ ծրագրերով սովորողների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները նկարագրում են, թե հանրակրթական հիմնական ծրագրերի կրթական աստիճանների ավարտին սովորողը ինչ պիտի իմանա, կարողանա անել և հասկանա: Վերջնարդյունքներն ուղղված են կարողունակությունների ձևավորմանը: Չնայած հաճախ դրանց հասնել դժվար է, քանի որ դասարանում կան կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներ, որոնց ներառումը ուսուցման գործընթացում ևս կարևոր է:

Ինչպե՞ս ապահովել ներառականություն

Ներառական կրթությունը կարևոր դեր ունի ժամանակակից կրթության համաշխարհային օրակարգում, իսկ բոլոր սովորողների հավասար ներգրավվածությունը ուսումնական ամբողջ գործընթացում առանցքային դեր է խաղում համընդհանուր ներառական կրթության համատեքստում:

Ցանկացած, այդ թվում՝ քիմիա առարկայի դասապրոցեսը պետք է կազմակերպվի այնպես, որ ներգրավվեն բոլոր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները:

- Դասերին նախապատրաստվելու համար ուսուցիչները պետք է ճանաչեն իրենց սովորողների կարիքները և որոշակի ժամանակ հատկացնեն դասի ներկայացմանը պատրաստվելուն:

- Նյութը ներկայացնելիս պետք է հաշվի առնել, որ սովորողները տարբեր ունակություններ ունեն, և մատուցել այնպես, որ հասանելի ու հասկանալի դառնա բոլոր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար:
- Ըստ անհրաժեշտության կարելի է տրամադրել սովորողների զգայական կարիքներին համապատասխան լրացուցիչ օժանդակություն. օրինակ՝ ուսուցիչները կարող են կիրառել ժեստեր, օգտագործել տարբեր չափերի դիդակտիկ, ուսումնական նյութեր, այլընտրանքային հաղորդակցման տեխնոլոգիաներ:
- Ուսուցման գործընթացում պետք է լայնորեն կիրառել փոխօգնության սկզբունքը: Եթե դասարանում կան կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներ, ապա պարապմունքների ընթացքում խմբերի բաժանվելիս անհրաժեշտ է նրանց հավասարաչափ ներառել բոլոր խմբերում և առավել բարձր առաջադիմություն ունեցող սովորողներին առաջարկել կամ հանձնարարել, որ հնարավորինս օգնեն նրանց:
- Կարևոր է հիշել ընտանիքի և դպրոցի համագործակցության մասին, որը բարձրացնում է ուսումնական գործընթացի արդյունավետությունը և ենթադրում միասնական մոտեցումներ սովորողների, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսումնառության գործընթացում:

Ներառական կրթությունը միտված է ապահովելու հավասար, սակայն ոչ նույնակերպ վերաբերմունք բոլոր սովորողների հանդեպ: Այն ենթադրում է համագործակցող, աջակցող, հարգալից վերաբերմունք միմյանց նկատմամբ դաստիարակող միջավայրում և անհրաժեշտ պայմաններ ու հարմարություններ, որպեսզի բոլոր սովորողները հասնեն հաջողության:

Ներառական կրթության համատեքստում ուսումնառության համընդհանուր ձևավորումը՝ ՈՒՀՁ, միտված է կրթական համակարգերը հարմարեցնելու բոլոր սովորողների կարիքներին ու առանձնահատկություններին:

Հաշվի առնելով յուրաքանչյուր սովորողի առանձնահատկությունները, այդ թվում՝ նրանց անհատականությունը, կենսափորձը, բազմաբնույթ մտածողությունը, լեզվական ընդունակությունները, մշակութային ու կրոնական

գիտակցությունը և հաշմանդամության փաստը՝ ՈՒՀՁ-ն կիրառում է բազմազան մոտեցումներ:

Ինչպես գիտենք, ուսումնառության համընդհանուր ձևավորումը հիմնված է երեք հիմնական սկզբունքների վրա.

1. նյութի ներկայացման ձևերի բազմազանություն,
2. գիտելիքի արտահայտման ձևերի բազմազանություն,
3. ներգրավման ձևերի բազմազանություն:

Նկար 6

Ներառականության ապահովումը քիմիայի դասաժամերին

Ներառականությունը կրթական գործընթացի կարևոր մաս է, որն ապահովում է բոլոր սովորողների հավասար մասնակցությունը և հնարավորություն է տալիս նրանց զարգացնել իրենց կարողություններն ու գիտելիքները՝ անկախ ֆիզիկական, մտավոր, սոցիալական կամ այլ առանձնահատկություններից: Քիմիայի դասերին ներառականության ապահովումը կարող է խթանել բոլոր սովորողների ներգրավվածությունը և հասկանալի դարձնել ուսուցման նյութը: Քիմիայի դասերին ներառականության ապահովումը ոչ միայն օգնում է սովորողներին զարգացնել իրենց գիտելիքները, այլև ստեղծում համերաշխ և աջակցող միջավայր, որտեղ յուրաքանչյուրը կարող է զարգանալ:

Ինչպե՞ս ապահովել ներառականություն քիմիայի դասաժամերին

1. **Ուսուցման մեթոդների բազմազանություն**
   - Նյութը ներկայացնել տեսական, տեսողական և գործնական ձևերով՝ ընդգրկելով սլայդներ, փորձեր, տեսանյութեր և նկարներ:
   - Օգտագործել խաղեր, վիկտորինաներ և խմբային աշխատանքներ՝ սովորողների ակտիվ մասնակցությունն ապահովելու համար:
2. **Անհատականացված մոտեցում**
   - Հաշվի առնել յուրաքանչյուր սովորողի ուժեղ և թույլ կողմերը:
   - Հատուկ կարիքներ ունեցող սովորողների համար տրամադրել հավելյալ ուսումնական նյութեր կամ պարզեցված բացատրություններ:

3. **Միջավայրի հարմարեցում**
   - Ապահովել ֆիզիկական միջավայր, որը հարմար է հատուկ կարիքներ ունեցող սովորողների համար (օրինակ՝ տեղաշարժվելու համար հարմար սեղաններ և աթոռներ):
   - Օգտագործել տեխնոլոգիական միջոցներ, ինչպիսիք են աուդիոգրքերն ու ինտերակտիվ ծրագրերը:
4. **Համագործակցություն և փոխօգնություն**
   - Խմբային նախագծերում խրախուսել սովորողների համագործակցությունը:
   - Ստեղծել աջակցող մթնոլորտ, որտեղ սովորողները կօգնեն միմյանց և կկիսվեն իրենց գիտելիքներով:

Սույն հետազոտության նպատակն է բացահայտել ներառական կրթության տեսական ասպեկտները, ցույց տալ, թե քիմիայի դասաժամերին ինչպես ներգրավել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին:

Հենվելով սեփական փորձառության վրա՝ այժմ փորձենք այս ամենը տեղայնացնել քիմիա առարկայի շրջանակներում՝ որպես օգնություն ուսուցիչներին տարբեր կարիքներ ունեցող սովորողների հետ աշխատելիս:

Քիմիան բավականին բարդ գիտություն է և, միևնույն ժամանակ, շատ հետաքրքիր, եթե ուսուցիչը այն կապում է իրական կյանքի հետ:

Քիմիայի դասաժամերին կարելի է կիրառել հետևյալ ռազմավարությունները.

1. «Արժեքավոր նոթատետր»

Այստեղ սովորողները հավաքում են հիմնական տեղեկատվությունը՝ բանաձևեր, սահմանումներ, խնդիրների լուծման ալգորիթմներ և այլն: Վերջինս օգնում է սովորողներին և՛ դասի ընթացքում, և՛ տնային աշխատանք կատարելիս, բայց ոչ ինքնուրույն աշխատանքի ժամանակ:

2. Տեսողական խնդիրներ ունեցող սովորողի հետ աշխատանք

Տեսողական խնդիրներ ունեցող սովորողի հետ արդյունավետ աշխատանքը պահանջում է հատուկ մոտեցումներ, համբերություն և համապատասխան գործիքներ: Ահա մի քանի խորհուրդ, որոնք կօգնեն ապահովել աջակցություն նման սովորողներին:

- Վստահ լինել, որ ուսումնական միջավայրը հարմար է, ապահով և առանց խոչընդոտների:

- Ապահովել լավ լուսավորություն՝ հաշվի առնելով սովորողի տեսողության հնարավոր սահմանափակումները:
- Նախատեսել հատուկ տեղ դասարանում, որը սովորողի համար առավել հարմար կլինի:

Քննարկենք «Անօրգանական միացությունների հիմնական դասեր» թեմայի հաղորդումը, եթե դասարանում ունենք տեսողական խնդիր ունեցող սովորող:

ա. Տեքստը մատչելի դարձնելու համար կարելի է օգտվել դասանյութերի աուդիո տարբերակներից և սովորողին տրամադրել տեսանյութ անօրգանական միացությունների մասին, օր.՝ https://esource.armedu.am/ կրթական կայքից:

բ. Նպատակահարմար է օգտվել հասանելի մասնագիտացված կայքերից, որոնք հնարավորություն են ընձեռում ձայնագրել առաջադրանքը կամ դասանյութը և ուղարկել սովորողին: Ստորև ներկայացված են այդ կայքերը.

- https://www.mote.com/activity/0
- https://vocaroo.com/
- https://www.naturalreaders.com/online/

գ. Կան դեպքեր, երբ տեսողության խթանման համար անհրաժեշտ է նյութը ներկայացնել խոշորացված տառերով (գրավոր առաջադրանքների դեպքում), կամ օգտագործել մեծացնող սարքեր:

դ. Տարբերակված ուսուցում խմբային աշխատանքների տարրերով: Այստեղ կարելի է օգտագործել բավականին հայտնի տեխնիկա. նոր նյութը բացատրելիս դասարանը բաժանվում է խմբերի կամ զույգերի: Աշխատանքները կազմակերպվում են այնպես, որ ուժեղ սովորողը կրթության առանձնահատուկ պայմաններ ունեցող սովորողին կամ սովորողներին ևս մեկ անգամ բացատրի նյութը:

ե. Տարբերակված առաջադրանքների քարտեր: Այս մեթոդը անցկացվում է զույգերով: Քարտերի վրա գրված են առաջադրանքներ, որոնք պետք է լրացնել միասին: Զույգերից մեկը բարձր կարդում է առաջադրանքը և, քննարկելով ընկերոջ հետ, լրացնում այն:

զ. «Ձեռքերը վեր» պարզ խաղի օրինակ: Ուսուցիչը թվարկում է ֆիզիկական մարմինների և նյութերի անվանումներ՝ շեշտելով, որ եթե հնչեցնում է ֆիզիկական մարմնի անուն, ապա պետք է ձեռքերը վեր բարձրացնել, եթե

նյութի՝ ձեռքերը մնում են սեղանին: Սխալվող սովորողները պետք է սահմանեն, թե ինչ է ֆիզիկական նյութը, ինչ՝ ֆիզիկական մարմինը: Խաղին ակտիվորեն կարող են մասնակցել բոլոր սովորողները, բացի լսողական խնդիր ունեցող սովորողներից:

է. Քիմիական թելադրություն, որի նպատակը սովորողների մոտ քիմիայի վերաբերյալ գիտելիքների ամրապնդումն ու գնահատումն է: Այն օգնում է ստուգել նրանց՝ քիմիական հասկացությունները, օրենքներն ու տեսությունները կիրառելու կարողությունը: Թելադրությունը նպաստում է նաև քննադատական մտածողության, վերլուծական հմտությունների և խնդիրների լուծման կարողության զարգացմանը: Բացի այդ, քիմիական թելադրությունները սովորողներին հնարավորություն են տալիս **խորացնել իրենց գիտելիքները**՝ կիրառելով տարբեր թեմաների մասին ստացած տեղեկությունները:

3. Լսողական խնդիր ունեցող սովորողի ներառումը քիմիայի դասերին

Քիմիայի դասերն անհրաժեշտ է պլանավորել այնպես, որ ապահովվի սովորողների լիարժեք մասնակցությունն ու ուսումնական նյութի ընկալումը:

Ահա մի քանի քայլ, որոնք կօգնեն այս գործընթացում: Անհրաժեշտ է սովորողին նստեցնել լավ լուսավորությամբ և տեսանելի տեղում, որպեսզի նա հնարավորություն ունենա տեսնելու ուսուցչի շուրթերը, ժեստերը կամ գրատախտակը:

Քննարկենք «Լուծույթներ» թեմայի հաղորդման հնարները, եթե դասարանում ունենք կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, մասնավորապես լսողական խնդիրներ ունեցող սովորող:

Ա. Անհրաժեշտ է կազմել քարտեր, որոնց վրա գրված կլինեն դասի հիմնական հասկացությունները, կանոնները, ինչպես նաև նկարներ լուծիչների, լուծված նյութերի վերաբերյալ:

Առաջադրանքի օրինակ

Համապատասխանեցրո՛ւ.

Ջուր	**Չի լուծվում ջրում:**
Նավթ	**Համընդհանուր լուծիչ է:**
Կերակրի աղ	**Համասեռ խառնուրդ է:**
Աղաջուր	**Լուծվում է ջրում:**

Առաջադրանք

Լուծույթ = Լուծված նյութ+լուծիչ

Առաջադրանք



Նկար 7

Լրացրու բաց թողնված բառերը:
——————— է կոչվում այն համասեռ համակարգը, որը բաղկացած է ——— —— և ———————:

Նայելով նկարին՝ սովորողը կկարողանա պատկերացում կազմել լուծույթների վերաբերյալ:

Պետք է կապ ստեղծել նաև իրական կյանքի հետ՝ շեշտադրելով, որ մեր կենցաղում շատ են լուծույթները (թեյ, աղաջուր, սուրճ և այլն):

Բ. Իրականացնել **խմբային** կամ զույգերով աշխատանք՝ սովորողին ներառելով թիմային քննարկումներում, որտեղ անհրաժեշտ են **նախօրոք պատրաստված գրավոր հանձնարարություններ**, որպեսզի սովորողը կարողանա ինքնուրույն ուսումնասիրել թեման և քննարկել ընկերների հետ: **Կարևոր է շուրթերի շարժման հստակությունը**՝ խոսելիս դիմել սովորողին, դանդաղ և հստակ արտասանել: Կարևոր է առհասարակ մ**արմնի լեզվի և ժեստերի օգտագործումը**՝ հիմնական գաղափարները շեշտելու համար:

Գ. Լսողական խնդիրներ ունեցող սովորողների համար կազմել խաղեր առցանց գործիքների միջոցով (օրինակ՝ https://learningapps.org/), որոնք ուսուցիչը կարող է ինքնուրույն կազմել, կամ օգտվել արդեն պատրաստի հղումներից:

Այստեղ բերված են քիմիայի դասերի համար նախատեսված խաղերի հղումներ, որոնք ուսուցիչը կարող է տրամադրել սովորողին.

https://learningapps.org/5331812

https://learningapps.org/5380840

https://learningapps.org/11363804

https://learningapps.org/33877180

Այս ամենից հետո կարևոր է հետադարձ կապը.

- **Հարցեր տալ**՝ պարզելու, թե որքանով է թեման հասկանալի:
- **Գրավոր արձագանք** սովորողից՝ պարզելու, թե նա ինչ է հասկացել թեմայից:
- **Անհատական աջակցություն** դասից հետո, եթե կարծում եք, որ դրա կարիքը կա:

Այս մեթոդները կօգնեն ապահովել, որ լսողական խնդիրներ ունեցող սովորողն ունենա հավասար հնարավորություն թեման հասկանալու և ուսումնական գործընթացում ներգրավված լինելու համար:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ամենամեծ խումբը ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներն են, և մեծագույն խնդիրներից է այն, որ նրանք չեն կարողանում հաղթահարել ուսումնական պլանը:

Ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների 1-ին աստիճանի աջակցության կարիք ունեցող երեխաներն այլ խնդիրներ են ունենում: Առաջին հերթին այդ խնդիրները կապված են հանրակրթական դպրոցի ծրագիրը չհասցնելու հետ: Աշխարհի տարբեր երկրներում մոտեցումները տարբեր են:

Ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների 1-ին աստիճանի աջակցության կարիք ունեցող երեխաների ընդգրկումը քիմիայի դասերին կարող է դրական փորձ լինել ինչպես սովորողի, այնպես էլ նրա հասակակիցների համար: Պատշաճ պլանավորման և աջակցության դեպքում այս սովորողները կարող են բովանդակալից մասնակցել և օգուտ քաղել ուսուցման գործընթացից: Ահա մի քանի հիմնական ռազմավարություններ հաջող ընդգրկման համար.

1. Ուսումնական պլանի հարմարեցում

Պարզեցրեք բովանդակությունը. բարդ հասկացությունները բաժանեք փոքր, ավելի կառավարելի մասերի: Օգտագործեք պարզ լեզու և կոնկրետ օրինակներ:

Կենտրոնացեք հիմնական գաղափարների վրա. ընդգծեք էական հասկացությունները բոլոր մանրամասները լուսաբանելու փոխարեն:

Քննարկենք 7-րդ դասարանի «Նյութերի և երևույթների ճանաչում» թեմայի հարմարեցումը, եթե դասարանում ունենք ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կարիք ունեցող սովորող:

Առաջին հերթին պետք է կազմել անհատական ուսուցման պլան, սահմանել երկարաժամկետ և կարճաժամկետ նպատակներ՝ պարզեցնելով վերջնադյունքները:

Ստորև բերված են այն վերջնարդյունքները, որոնք նախատեսված են «Քիմիա» առարկայի առարկայական չափորոշչով տվյալ թեման ուսումնասիրելու համար.

1. «Ք7.ՆՄԲ.ՄՆ.1 Նկարագրի և համեմատի նյութի որոշ ֆիզիկական հատկություններ՝ գույն, խտություն, լուծելիությունը ջրում:
2. Ք7.ՆՄԲ.ՄՆ.2 Համեմատի և դասակարգի ֆիզիկական և քիմիական երևույթները՝ նշելով համապատասխան հատկանիշները:
3. Ք7.ՆՄԲ.ՄՆ.3 Նկարագրի քիմիայի ուսումնասիրման առարկան՝ նյութի կառուցվածքը, հատկությունները և կիրառությունը:
4. Ք7.ՆՄԲ.ՄՆ.4 Թվարկի և կիրառի անվտանգության որոշ կանոնները քիմիայի լաբորատորիայում:
5. Ք7.ՆՄԲ.ՄՆ.5 Սահմանի և տարբերի նյութ և մարմին հասկացությունները:
6. Ք7.ՆՄԲ.ՄՆ.6 Ճանաչի և օգտագործի պարզ լաբորատոր սարքեր (փորձանոթ, չափիչ գլան, պիպետ, կոլբ, ձագար, բաժակ, կաթոցիկ, հավանգ, սպիրտայրոց, կալան, բռնակներ և այլն)»:

Մատչելիություն ապահովելու նպատակով այս վերջնարդյունքներից ընտրվել են մի քանիսը և պարզեցվել՝ հիմք ընդունելով կապը իրական կյանքի հետ.

1. Նկարագրի դասասենյակում և իրենց տանը հանդիպող որոշ նյութերի և մարմինների, օրինակ՝ կավիճ, փայտ, երկաթ, շաքարավազ, բուսական յուղ, ջուր, սեղան, գրատախտակ և այլն, ֆիզիկական հատկությունները՝ գույնը և ագրեգատային վիճակը (պինդ է, հեղուկ, թե գազային):
2. Թվարկի և կիրառի անվտանգության որոշ կանոններ քիմիայի լաբորատորիայում և կենցաղում նյութերի և սարքերի հետ աշխատելիս:

3. Ճանաչի և օգտագործի պարզ լաբորատոր սարքեր (փորձանոթ, չափիչ գլան, պիպետ, կոլբ, ձագար, բաժակ, կաթոցիկ, հավանգ, սպիրտայրոց, կալան, բռնակներ և այլն):

2. Դասի ընթացքը

Քարտ 1.

Մտածի՛ր

Փորձենք նկարագրել մեր կենցաղը: Մենք ապրում ենք հիմնականում քարից և բետոնից պատրաստված տներում: Կենցաղում օգտագործում ենք օճառ, ատամի մածուկ, ներկեր, օծանելիք և այլն: Խմում ենք ջուր, շնչում ենք օդ՝ յուրացնելով թթվածին, արտաշնչում՝ ածխաթթու գազով հարուստ օդ: Հիվանդանալիս երբեմն ընդունում ենք դեղեր ու վիտամիններ:

Թվարկի՛ր քեզ ծանոթ այլ նյութերի օրինակներ:

Քարը, բետոնը, օճառը, ատամի մածուկը, ներկերը, օծանելիքը, թթվածինը, ածխաթթու գազը, ջուրը նյութեր են: Մեր շրջապատում նյութերը բազմազան են ու բազմատեսակ:

Սովորողները զույգեր են կազմում: Նրանց տալիս ենք քարտեր և հանձնարարում առանձին սյունակներով տեքստից դուրս գրել նյութերը և մարմինները: Հանձնարարվում է նաև աշխատանքի մեջ ներգրավել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողին՝ աջակցելով նրան:

Այնուհետև տրվում է առաջադրանք ԿԶՆԱԿ հիմնադրամի «Քիմիա 7-րդ դասարանի առարկայի բնութագրիչներ» փաստաթղթից, որի հղումը տեղադրված է ստորև՝ որպես օգնություն ուսուցիչներին.

https://docs.google.com/document/d/18kYz1nVNvFDG39-AqtHgUfOHOZs27AmQ/edit

ա. *Ջուր, շաքար, ձեթ, ոսկի, կերակրի աղ, պղինձ* նյութերը բաժանել ըստ գույնի՝ գունավոր, սպիտակ և անգույն, նշել գույները և տետրում գրել այդ նյութերի անունները:

Աղյուսակ

Սպիտակ	Անգույն	Գունավոր

բ. *Բերված* շարքից ընտրել գույն ունեցող նյութի անունը.

1. բժշկական սպիրտ,

2. ջուր,

3. ձեթ:

Կարելի է հանձնարարել նաև խաղեր առցանց գործիքներով:

Օրինակ՝ https://learningapps.org/watch?v=p115v3gy222

Կարող ենք կատարել նաև հետևյալ աշխատանքը: Հանձնարարել նկար և սովորողին հրահանգել դուրս գրել այն մարմինների անվանումները, որոնք տեսնում է նկարում:

Նկար 8

Հանձնարարել համապատասխանեցնել լաբորատոր սարքավորումների անվանումները նկարների հետ: Առաջադրանքի նպատակն է, որպեսզի սովորողը ճանաչի և օգտագործի պարզ լաբորատոր սարքեր (փորձանոթ, չափիչ գլան, պիպետ, կոլբ, ձագար, բաժակ, կաթոցիկ, հավանգ, սպիրտայրոց, կալան, բռնակներ և այլն):

Առաջադրանք

Նկար	Անվանում
	1) պիպետ 2) չափիչ բաժակ 3) փորձանոթի բռնիչ 4) փորձանոթի կանգնակ 5) փորձանոթ 6) չափիչ գլան

Նկար 9

Եթե դասարանում ունենք ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների 3-րդ և 4-րդ աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողներ, կարելի է նրանց տալ որոշ լաբորատոր սարքավորումների նկարներ և առաջարկել գունավորել մեկը կապույտ, մյուսը՝ կարմիր գույնով:

Նկար 10

2. Գործնական ուսուցում

«Քիմիա» առարկայի դասավանդման կարևոր պայմաններից են փորձերը և գործնական աշխատանքները, որոնք սովորողներին հնարավորություն են ընձեռում սովորել կատարելով:

Ցանկացած լաբորատոր աշխատանքի ժամանակ հնարավոր է գտնել որոշակի առաջադրանք, որը կարող է կատարել ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կարիք ունեցող սովորողը ուսուցչի, լաբորանտի կամ առավել ակտիվ դասընկերոջ օգնությամբ:

Օրինակներ գործնական փորձից

Ա. Երբ ուսումնասիրում ենք հիմնային օքսիդները, կարելի է սովորողին հանձնարարել կալցիումի օքսիդը լցնել ջրի մեջ, խառնել և ապա ունիվերսալ ինդիկատորի օգնությամբ որոշել միջավայրը:

Բ. Սպիրտայրոցով աշխատելիս թույլ տալ սպիրտայրոցը փակել կափարիչով, որպեսզի կրակը հանգչի:

Գ. Նպատակահարմար է հանձնարարել պատրաստել կերակրի աղի չհագեցած և հագեցած լուծույթներ (8-րդ դասարանի «Լուծույթներ» թեմայի լաբորատոր աշխատանքը կատարելու ժամանակ):

3. Դասարանի միջավայր

Խթանեք հասակակիցների աջակցությունը. խրախուսեք համագործակցությունը և կազմակերպեք կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների խմբային գործունեություն աջակցող հասակակիցների հետ:

Խթանեք ներառական մթնոլորտ. ստեղծեք հարգալից և խրախուսող միջավայր, որտեղ բոլոր սովորողներն իրենց գնահատված են զգում:

Կարգավորեք ակնկալիքները. սահմանեք իրատեսական նպատակներ՝ հիմնվելով յուրաքանչյուր սովորողի կարողությունների վրա:

4. Դասավանդման մեթոդներ

Օգտագործեք կրկնությունը. ամրապնդեք հիմնական հասկացությունները կրկնության և տարբեր պրակտիկաների միջոցով:

Ներառեք բազմազգայական ուսուցում. օգտագործեք լսողական, տեսողական և կինեստետիկ մոտեցումների համադրություն:

Պարբերաբար ստուգեք փոխըմբռնումը. ըմբռնում ապահովելու համար օգտագործեք պարզ վիկտորինաներ կամ բանավոր ստուգումներ:

5. Ուսուցիչների վերապատրաստում և համագործակցություն

Մասնագիտացված վերապատրաստում. ձեռք բերեք արդյունավետ ռազմավարություններ մշակելու հմտություններ:

Համագործակցեք մասնագետների հետ. աշխատեք հատուկ կրթության մասնագետների հետ՝ ներառական ուսուցման ծրագրեր մշակելու և իրականացնելու համար:

6. Գնահատման ճշգրտումներ

Օգտագործեք այլընտրանքային գնահատումներ. գրավոր թեստերի փոխարեն առաջարկեք տարբերակներ, ինչպիսիք են բանավոր ներկայացումները, նախագծերը կամ գործնական ցուցադրությունները:

Լրացուցիչ ժամանակ տրամադրեք առաջադրանքների և թեստերի համար:

Օգտագործելով այս ռազմավարությունները՝ քիմիայի դասերը կարող են մատչելի և գրավիչ դառնալ ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կարիք ունեցող

սովորողների համար՝ նրանց մոտ խթանելով ուսուցումը, վստահությունը և պատկանելության զգացումը:

Եզրակացություն

Քիմիայի դասերին ներառականության ապահովումը ոչ միայն օգնում է սովորողներին զարգացնել իրենց գիտելիքները, այլև ստեղծում համերաշխ և աջակցող միջավայր, որտեղ յուրաքանչյուրը կարող է զարգանալ: Այն կենսական նշանակություն ունի ընդունող ուսումնական միջավայր ստեղծելու համար, որտեղ բոլոր սովորողներն իրենց գնահատված և աջակցված կզգան: Ահա մի քանի հիմնական ռազմավարություններ՝ ներառականությունն ապահովելու համար.

1. Բովանդակության մեջ բազմազան ներկայացվածություն

Ներառեք տարբեր ծագման և սեռի, տարբեր մշակույթների պատկանող գիտնականների և նրանց ձեռքբերումների մասին տեղեկատվություն՝ ոգեշնչելու բոլոր սովորողներին:

Ընդգծեք քիմիայի գլոբալ ազդեցությունը այնպիսի խնդրի լուծման գործում, ինչպիսին է մաքուր ջրի հասանելիությունը՝ շեշտելով դրա կարևորությունը բոլոր համայնքների համար:

2. Մատչելի ուսումնական նյութեր

Տրամադրեք նյութեր բազմաթիվ ձևաչափերով, ինչպիսիք են տեսողական օժանդակ միջոցները, տեսանյութերը և տեքստերը, որոնք կհամապատասխանեն ուսուցման տարբեր ոճերին:

Ապահովեք, որ լաբորատոր սարքերը և սարքավորումները հասանելի լինեն ֆիզիկական հաշմանդամություն ունեցող սովորողների համար:

3. Խրախուսեք համագործակցությունը

Խրախուսեք խմբային և զույգերով աշխատանքը. այն նպաստում է տարբեր ուժեղ կողմեր և կարողություններ ունեցող, տարբեր մշակույթներ կրող սովորողների միջև փոխգործակցությանը:

Զարգացրեք հարգալից հաղորդակցման և թիմային աշխատանքի հմտություններ տարբեր խմբերում:

4. Հարմարվող ուսուցման տեխնիկա

Ներառեք հարցումների վրա հիմնված ուսուցում, որը թույլ կտա սովորողներին ուսումնասիրել անձնական և մշակութային կարևոր թեմաներ:

Օգտագործեք հստակ, ընդգրկուն լեզու՝ խուսափելով չափազանց տեխնիկական բառապաշարից, հատկապես եթե բացատրությունը տրված չէ:

5. Մշակութային արձագանքող ուսուցում

Քիմիայի դասի թեմաները զուգորդեք իրական աշխարհի ծրագրերին, որոնք ռեզոնանսվում են սովորողների կյանքի և համայնքների հետ:

Ընդունեք և ինտեգրեք քիմիայի հետ կապված մշակութային պրակտիկաներն ու գիտելիքները, ինչպիսիք են սննդի պահպանման ավանդական մեթոդները կամ բնական ներկումը:

6. Աջակցման համակարգեր

Լրացուցիչ աջակցություն առաջարկեք սովորողներին, ովքեր կարող են ունենալ լեզվական խոչընդոտներ, դժվարություններ կամ չունենալ նախնական ծանոթություն քիմիային:

Ստեղծեք մենթորության կամ գործընկերների աջակցության ծրագրեր՝ խրախուսելու չներկայացված խմբերի մասնակցությունը:

7. Խթանել աճի մտածելակերպը

Ընդգծեք բնածին կարողությունները կատարելագործելու ջանքերի կարևորությունը՝ օգնելով սովորողներին հասկանալ, որ քիմիայում հաջողությունը հասանելի է բոլորի համար:

Նշեք փոքր հաջողությունները՝ վստահություն և մոտիվացիա ստեղծելու համար:

Քիմիայի ներառական դասարանի ստեղծումը երաշխավորում է, որ բոլոր սովորողները հավասար հնարավորություն կունենան ներգրավվելու ուսուցման գործընթացին՝ խթանելով գիտության մեջ ավելի արդար և բազմազան ներկայացվածություն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Քիմիա-7-Դասագիրք-Ք.-Բդոյան-Զ.-Կարապետյան-Մ.-Գափոյան.pdf
2. https://chalikyansusanna.home.blog/2019/12/08/%D5%B4%D5%BF%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80-%D5%B0%D5%A5%D5%BF%D5%A1%D5%B4%D5%B6%D5%A1%D6%81%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/https://infourok.ru/inklyuzivnoe-obrazovanie-v-prepodavanii-himii-4536535.html

ՆԵՐԱՌՈՂ ԴԱՍԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Դասի պլանավորման մոտեցումներ

«Բոլոր գիտությունները սկիզբ են առնում մեր միակ մոլորակի և մեր ապրած միակ կյանքի պահանջներից: Մենք չունենք շերտավորված երկրագունդ, որի մի շերտը մաթեմատիկական, մյուսը՝ ֆիզիկական, մեկ ուրիշը՝ պատմական բնույթ ունենա: Մենք ապրում ենք մի աշխարհում, որտեղ բոլոր ոլորտները ներհյուսված են: Բոլոր գիտությունները բխում են մեկ ընդհանուր աշխարհում առկա հարաբերություններից: Երբ երեխան այս ընդհանուր աշխարհին հարաբերվում է բազմազան, բայց կոնկրետ ու գործուն կերպով, նրա գիտելիքը, բնականաբար, ընդհանրական է»:

Ջոն Դյուի
Դպրոցը և հասարակությունը, 1900թ

Ուսուցանել նշանակում է ներգործել սովորողների գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի և արժեքների վրա: Առարկայական գիտելիքները, կարողություններն ու հմտությունները միշտ արդիական կլինեն կրտսեր դպրոցի համար, քանի որ դրանք հզոր միջոց են մտածողության զարգացման համար: Սակայն դրանք չեն կարող դիտարկվել իբրև ուսուցման նպատակ և կարևոր արդյունք: Կրտսեր դպրոցում ուսումնառության արդյունքը ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների զարգացումն է: Ուսուցանել կարելի է մեկնաբանելով, ցույց տալով և ցուցադրելով, սովորողի ջանքերն ուղղորդելով կամ էլ այս բոլոր գործողությունները համադրելով: Սա էլ հենց թելադրում է, թե ուսումնառությունը խրախուսելու համար ինչպես դասավանդել կամ ինչ ռազմավարություն կիրառել: Գիտելիքներից բացի, սովորողին անհրաժեշտ են դրանք կիրառելու իրական կարողություններ և հմտություններ՝ ընդգրկելով նրան ճանաչողական գործունեության մեջ, ստեղծագործական միտք ձևավորել, ուղղորդել նրա ներքին ուժերն ու հնարավորությունները:

Այսպիսով, ուսուցման արդյունավետությունը չափվում է ոչ միայն և ոչ այնքան սովորողի յուրացրած գիտելիքներով, որքան նրա ձեռք բերած կարողություններով՝ շեշտը դնելով արդյունքի վրա, այսինքն՝ ի՞նչ կարող է նա անել: Այս խնդիրը լուծելի է դառնում, երբ ուսուցման ընթացքում վերաբաշխվում են հիմնական արժեքները. ուսումնառության ընթացքում սովորողները պասիվ ընկալողից վերածվում են ակտիվ և գործուն մասնակցի, սովորեցնողի: Ուսուցիչը հրաժարվում է վերահսկողի, խրատողի դերից, դառնում այդ գործընթացը կազմակերպող, խորհրդատու, և որպես գործընկեր՝ սովորողի հետ մասնակցում որոնողական աշխատանքներին:

Եթե դիտարկենք, որ կրթության գլոբալ նպատակը կազմակերպված գիտելիքների ձեռքբերումն է, մտավոր կարողությունների, սովորելու հմտությունների զարգացումը և արժեքների ըմբռնումը, ապա պետք է կարևորել նպատակներին հասնելու միջոցներն ու ոլորտները: Ոլորտները դասավանդվող առարկաներն են իրենց բովանդակությամբ, միջոցները՝ դասագրքերը, ուսումնաօժանդակ նյութերը, բազմաբնույթ առաջադրանքները, հետաքրքրաշարժ հարցադրումներն ու գործուն մասնակցությունը: Մտավոր կարողությունները որոշվում են սովորողի մտածողության գործընթացի երեք աստիճաններով.

- մետա բաղադրիչներ՝ երբ մտածողությունն օգտագործվում է պլանավորելու համար,
- կատարողական բաղադրիչներ, երբ մտածողությունն օգտագործվում է առաջադրանքի կատարման համար,
- գիտելիքի ձեռքբերման բաղադրիչներ, երբ մտածողությունն օգտագործվում է սովորելու, խնդիրներ լուծելու համար:

Հետևաբար կրթության ազդեցությունը պետք է դիտարկել՝ ելնելով այն իրողությունից, թե սովորողներն ինչպես են սովորում, իսկ ուսուցիչներն ինչպես են սովորեցնում: Ուսումնական նյութերն ու միջոցներն առավել արժեքավոր են, երբ արտացոլում են բազմազան տեսակետներ և քաջալերում սովորողին՝ որոնելու և գտնելու նոր գաղափարներ: Ուստի պետք է կարևորել հետևյալ մոտեցումները.

- **Բոլոր սովորողները, անկախ տարիքից, առանձնահատկություններից և տեղեկատվության ըմբռնման յուրահատկություններից, կարող են հաջողության հասնել:**

Անհրաժեշտ է մշակել համոզմունքների և գործողությունների համակարգ, որի միջոցով սովորողները կբացահայտեն, որ հաջողությունն ակնկալվում է ոչ թե մի

քանիսից, այլ բոլորից: Արդյունավետ դասավանդումը ենթադրում է սովորողների մտավոր որակների զարգացում: Ուսուցիչն անշուշտ բախվում է բազմաթիվ խնդիրների, մասնավորապես՝ ինչպե՞ս ապահովել յուրաքանչյուր սովորողի հաջողությունը ուսման մեջ, ինչպե՞ս աշխատել դասին ամբողջ դասարանի և միևնույն ժամանակ յուրաքանչյուր սովորողի հետ: Անժխտելի է, որ սովորողները տարբեր են իրենց ունակություններով, միատեսակ չեն նրանց գիտելիքների պաշարը, հիշողության, մտապահման, մտածելու կարողությունները, կամքը, ներքին ակտիվության որակները: Դա ենթադրում է շերտավորված ուսուցման կազմակերպում՝ հաշվի առնելով յուրաքանչյուր սովորողի անհատական հետաքրքրությունները, հնարավորություններն ու ընդունակությունները: **Խրախուսվում են թիմային աշխատանքն ու անհատական ջանքերը**. ուսուցումը մրցակցայինից տեղափոխվում է համագործակցային դաշտ:

- **Կրտսեր դպրոցում կարևոր է դասավանդման միասնական մոտեցումը, ոչ թե առարկաների «մեկուսացումը»:**

Ինչո՞ւ է արդարացված կրտսեր դպրոցում թեմատիկ միավորներով դասավանդումը: Տարրական դպրոցը միայն գիտելիքների ձեռքբերման օղակ չէ. գիտելիքն այս փուլում դիտարկվում է որպես անձի զարգացման միջոց: Տարրական դպրոցում պետք է կարևորել ոչ թե գիտելիքների մեծ ծավալի հաղորդումը, այլ դրանց՝ երեխաների կարիքներին համապատասխանությունը, նրանց կողմից յուրացման ձևերը, դրանց գործածման արդյունավետությունը, անհրաժեշտությունը և սովորողների բարձրակարգ մտածողության ձևավորման պիտանիությունը: Ծավալած ուսումնական գործունեության արդյունավետությունը, սովորողների վերաբերմունքը հետագա ուսման նկատմաբ և նրանց բոլոր հաջողությունները հետագա գործունեության ընթացքում պայմանավորված են ուսումնառության առաջին տարիների մանկավարժահոգեբանական ճիշտ կազմակերպմամբ: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նյութի յուրացումն ավելի արագ է կատարվում, երբ այն կազմակերպվում է միաժամանակ բոլոր զգայարանների մասնակցությամբ: Մինչև սովորողը ակտիվ ստեղծագործական գործունեությամբ չմասնակցի գիտելիքների ձեռքբերման գործընթացին, նա չի կարող հասկանալ և մտապահել գիտելիքները և իմաստավորել դրանք: Մեզ շրջապատող աշխարհը միասնական է ու ամբողջական, բնության մեջ բոլոր տարրերը փոխկապակցված են, ուստի կարելի է այդ միասնականությունը տեղափոխել նաև ուսումնական միջավայր: Թեմատիկ միավորներով պլանավորված դասավանդումն ապահովում

է նոր որակ ու արդյունավետություն. այն տարբեր առարկաներից գիտելիքների, ուսումնական նյութերի և տեխնոլոգիաների միասնացման ճանապարհով սովորողների մտավոր ներուժի բացահայտման և զարգացման լուրջ, տեսանելի հնարավորություններ է ընձեռում: Իրականության տարբեր երևույթների և ուսումնական առանձին առարկայի կտրվածքով ընդունված դրույթների մեկուսացված դիտարկումից անցում է կատարվում ուսումնասիրվող նյութի համակարգված և ամբողջական ուսումնասիրության: Տարրական դպրոցի առարկայական ծրագրերի բովանդակությունը թեմատիկ միավորներ ստեղծելու հնարավորություն է տալիս դասավանդողներին:

Թեմատիկ միավորը ուսումնական ծրագիր կամ դասի պլան է, որը մշակվում է կոնկրետ թեմայի կամ առարկայի շուրջ և ներառում է բովանդակության տարբեր ոլորտներ՝ ընթերցանություն, մաթեմատիկա, գրավոր աշխատանք, արվեստ, ապահովում է սովորողների կարիքների և նախասիրությունների վրա հիմնված տարբերակված դասավանդման հնարավորությունը: Հավատարիմ մնալով առարկաների ծրագրային բովանդակությանը՝ հնարավոր է ստեղծել փորձառության այնպիսի դաշտ, որտեղ հաստատվում են ճանաչողական, զգացմունքային, սոցիալական կապեր, սովորողը դառնում է գործուն մասնակից, մեծանում են նրա ակնկալիքներն ու մասնակցայնությունը: Թեմատիկ միավորը հնարավորություն է տալիս այլ տեսանկյունից անդրադառնալ կրթության բովանդակությանը վերաբերող առանցքային հարցերին՝ սովորողներն ինչպես են սովորում, ուսուցիչներն ինչպես են սովորեցնում: Կարևոր են առանցքային հետևյալ մոտեցումները.

- **Կրթության մեջ չկա միակողմանի մոտեցում**

Յուրաքանչյուր սովորող եզակի է և դասարան է բերում կարողությունների, մարտահրավերների և ուսուցման ոճերի տարբեր շերտեր: Մանկավարժները պատասխանատու են ներառական ուսումնական միջավայր ստեղծելու համար, որը բավարարում է սովորողների բազմազան կարիքները: Սովորողների տարբերությունները հաշվի առնելու համար ուսումնական պլանի հարմարեցումը կարևոր քայլ է՝ երաշխավորելու, որ յուրաքանչյուր սովորող կարող է ակադեմիական հաջողությունների հասնել: Ճիշտ պլանավորելով դասավանդումը՝ կկարողանանք բովանդակությունը, գործընթացը, միջավայրն ու վերջնարդյունքի ներկայացումը հարմարեցնել տարբեր կրթական կարիքներ ունեցող սովորողներին և ընտրել արդյունավետ ռազմավարություններ:

- **Հասկանալով կրթական կարիքների բազմազանությունը**

Ուսումնական ծրագրերի հարմարեցման առաջին քայլերից մեկը կրթական տարբեր կարիքների բազմազանության վերաբերյալ ավելի լավ պատկերացում կազմելն է: Ուսուցման դժվարությունները կարող են տարբեր ձևերով ազդել սովորողի՝ տեղեկատվություն ձեռք բերելու, մշակելու կամ արտահայտելու կարողության վրա: Այնպիսի խնդիրները, ինչպիսիք են դիսլեքսիան, դիսկալկուլիան և լսողության մշակման խանգարումը, կարող են դժվարություններ առաջացնել նրանց համար:

- **Ներառական ռազմավարությունների իրականացում**

Տարբերակված ուսուցումը, ճկուն գնահատումները և օժանդակ տեխնոլոգիաների կիրառումը հզոր գործիքներ են, որոնք կարող են օգտագործվել ուսուցման տարբեր ոճերին համապատասխանեցնելու համար: Օգտագործելով ուսուցման տարբեր մեթոդներ՝ ստեղծում ենք ավելի ներառական և գրավիչ ուսումնական միջավայր բոլոր սովորողների համար: Երբ մենք կողմնորոշվում ենք ուսումնական պլանը տարբեր կրթական կարիքներին հարմարեցնելու բարդ լանդշաֆտում, պարզ է դառնում, որ մասնագիտացված ուսուցումն ու ռեսուրսները կարևոր են: Կրթական տարբեր կարիքներ ունեցող սովորողների համար ուսումնական պլանի հարմարեցումը ոչ միայն անհրաժեշտություն է, այլև բարոյական հրամայական: Յուրաքանչյուր սովորող արժանի է հաջողության հասնելու հավասար հնարավորությունների, և մանկավարժները պարտավոր են ստեղծել այնպիսի միջավայր, որը կաջակցի նրանց «անհատական ճանապարհորդությանը»:

- **Գիտակցել պլանավորման կարևորությունը**

Ուսուցիչները առանցքային դեր ունեն ներառական ուսումնական միջավայր ստեղծելու գործում: Պլանավորումը հնարավորություն է տալիս արդյունավետորեն բավարարելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կարիքները, տրամադրում գործիքներ և ռազմավարություններ, որոնք անհրաժեշտ են ուսումնական պլանը հարմարեցնելու և այնպիսի միջավայր ստեղծելու համար, որը նպաստում է հաջողությունների արձանագրմանը:

Ուսուցչի մասնագիտական կյանքում առաջնայինը դասն է: Իհարկե, սա ծանր աշխատանք է՝ ներառյալ որոշակի ժամանակահատվածի ընթացքում կենտրոնացնել կամքն ու ուշադրությունը: Բայց հենց այս պահերին է ուսուցիչը իրեն լիարժեք գիտակցում: Դասը հաղորդում է մասնագիտական գործունեության

օգտակարության զգացում. ուսուցիչը դրսևորում է ստեղծագործելու և անկախության իր ցանկությունը: Հաշվի առնելով մանկավարժության, հոգեբանության և առաջավոր փորձի ոլորտում նոր ձեռքբերումները՝ ստեղծագործական մոտեցումը դասին ապահովում է ուսուցման բարձր մակարդակ: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև անձնական փորձը, ուսուցչի անհատական որակները, դասի կառուցվածքը և ընթացիկ ուսումնական նյութի առանձնահատկությունները: Ի վերջո, դասին պատրաստվելը ոչ միայն գիտություն է, այլև արվեստ, որը ուսուցչից պահանջում է ոգեշնչում, ազդակ, ստեղծագործականություն: Փաստենք, որ ոչ մի դաս չի կարող լուծել ուսուցման բոլոր խնդիրները: Դա թեմայի, դասընթացի, առարկայի մի մասն է: Կարևոր է միշտ տեղյակ լինել, թե այն ինչ տեղ է զբաղեցնում ակադեմիական առարկայի համակարգում, որոնք են դրա դիդակտիկ նպատակները: Դասը պետք է լինի թեմայի, հատվածի, դասընթացի տրամաբանական միավոր, և քանի որ այն նաև մանկավարժական աշխատանք է, դրա բովանդակությունը պետք է լինի ամբողջական՝ մասերի ներքին փոխկապակցվածությամբ, ուսուցչի և սովորողների գործունեության զարգացման մեկ տրամաբանությամբ: Դասն արդյունավետ կազմակերպելու համար պահանջվում է ժամանակ, տվյալներ և դասավանդման ռազմավարությունների հավասարակշռություն: Դասի պլանները օգնում են ուսուցիչներին կազմակերպել դասավանդումը: Կարևոր է հստակեցնել դասապլանի հետևյալ առանցքները.

1. Նպատակ

Կարևոր է հասկանալ և արժևորել յուրաքանչյուր դասի համար նպատակ սահմանելու ազդեցությունը: Ինչո՞ւ: Նախ՝ նպատակ ունենալը ստիպում է մատնանշել այն հատուկ գործողությունները, որոնց վրա պետք է կենտրոնանալ: Նպատակը նպաստում է սովորողների մտքի կենտրոնացմանը ամբողջ դասի ընթացքում: Նրանք պետք է տեսնեն, լսեն և դիտարկեն նպատակին հասնելու ողջ գործընթացը:

2. Վերջնարդյունք

Նշանակում է աշխատանքը պլանավորել՝ հակառակ ուղղությամբ մտածելով: Այս մոտեցումը պետք է կիրառել ոչ միայն դասեր, այլև ուսուցման ավելի մեծ միավորներ պլանավորելիս: Պետք է իմանալ վերջնարդյունքը նախքան գործընթացը սկսելը, պետք է հասկանալ, թե ինչ ենք ակնկալում մեր սովորողներից նախքան դասավանդելը: «Ինչպե՞ս ենք դրան հասնելու» հարցին կարող ենք

պատասխանել և կազմել գործողությունների ծրագիր: Սա կարևոր է գործունեության և ակնկալիքների համապատասխանեցման համար: Ամեն ինչ պետք է նպատակին համահունչ լինի և համակարգված:

3. Ուսուցման ուղղորդված մաս

Դանդաղ ու հաստատուն ընթացողն է հաղթում մրցավազքում: Այսպես է նաև ուսուցման գործընթացում: Պլանավորելիս կարևոր է մտածել՝ արդյո՞ք այն, ինչ պատկերացնում ենք տվյալ ժամանակահատվածի համար, շատ է, թե քիչ, ճիշտ է, թե ոչ: Չափազանց շատ տեղեկատվություն հաղորդելը կարող է ճնշող լինել սովորողների համար: Դաս պլանավորելիս շատ կարևոր է համոզվել, որ այն ամենը, ինչ մենք նախատեսում ենք անել և հարցնել, համահունչ է դասի համար մեր ընտրած նպատակին: Յուրաքանչյուր հարց և կատարած յուրաքանչյուր գործողություն պետք է ունենա պատակ և խնդիր: Ընթացքից շեղվելը կարող է հանգեցնել շփոթության և ժամանակային խնդիրների: **Պետք է գրել քայլերը դասավանդման համար անհրաժեշտ հերթականությամբ: Սա հնարավորություն է ընձեռում ավելի լավ կազմակերպել դասը՝ անհրաժեշտ մտավոր գործողությունների ճիշտ հաջորդականությամբ, անհրաժեշտ յուրաքանչյուր գործողության միջոցով:**

4. 100% մասնակցություն

Ամեն դասի վերջում մենք պետք է արձանագրենք, որ յուրաքանչյուր սովորող 100% հնարավորություն է ունեցել խոսելու, ցուցադրելու իր մտածողությունը և հարցեր տալու: Կարևոր է համոզվել, որ բոլոր սովորողներն ընդգրկված են զրույցի մեջ: Դասարանային քննարկման բազմաթիվ զարմանալի ռազմավարություններ կան, որոնք օգնում են բոլոր սովորողներին խոսել: Ո՞ւմ համար է դասը. իհարկե, սովորողների: Համոզվելու համար, որ նրանք ուսուցչից ավելի շատ խոսելու հնարավորություն ունեն, անհրաժեշտ է օգտագործել զրույցի կամ ներգրավվածության ռազմավարություններ: Յուրաքանչյուր դասին սովորողները պետք է հնարավորություն ունենան ցուցադրելու դասի ընթացքում իրենց յուրացրած գաղափարները: Կարևոր է, որ նրանք ցույց տան իրենց աճը, և գրանցվեն տվյալներ, որոնց վրա կկառուցվի հաջորդ դասը:

5. Դժվար հարցեր

Փաստացի հիշողության հետ կապված հարցերից բացի հարկ է տալ հարցեր, որոնք իրականում ստիպում են սովորողներին մտածել: Այս բաց հարցերը

ենթադրում են մեկից ավելի պատասխաններ: Ժամանակ տրամադրելով ավելի բարդ հարցեր վերլուծելու և դրանց պատասխանելու համար՝ սովորողներին հնարավորություն է տրվում խորապես մտածել բովանդակության մասին: Դաս պլանավորելիս միշտ պետք է նախօրոք մտածել խորքային հարցերի մասին:

6. Տարբերակում

Տարբերակումը ուսուցչի պատասխանն է սովորողների կարիքներին: Սա նշանակում է, որ քայլեր ենք ձեռնարկում աջակցելու նրանց, ովքեր աջակցության կարիք ունեն: Դա անում ենք մոդելավորման, գործունեության համար ձևանմուշներ ստեղծելու, հարցերի և այլ ձևերով: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների հետ աշխատելու բազմաթիվ մեթոդներ և տեխնոլոգիաներ կան: Լայնորեն կիրառվող մեթոդը անհատականացված ուսուցումն է, որը թույլ է տալիս սովորողին սովորել իր սեփական տեմպերով և ըմբռնման մակարդակով: Մեկ այլ տարածված մեթոդ է մուլտիմեդիա ռեսուրսների օգտագործումը, որը կարող է օգտակար լինել հատկապես այն սովորողների համար, ովքեր տեղեկատվությունն ավելի լավ են ընկալում այն տեսնելով: Այլ օգտակար մեթոդներ ներառում են հարմարվողական ուսուցման տարբեր ձևեր և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին աջակցելու տարբեր ռազմավարություններ (օրինակ՝ ծավալուն առաջադրանքները փոքր մասերի բաժանելը, տեսողական միջոցների օգտագործումը, առաջադրանքները կատարելու համար լրացուցիչ ժամանակ տրամադրելը): Տարբերակում նշանակում է դասը համապատասխանեցնել սովորողների բազմաբնույթ կարիքներին՝ կիրառելով ճիշտ հարմարեցումներ և փոփոխություններ: Տարբերակման հինգ բաղադրիչներն են.

- **Բովանդակություն** - տարբերակվում է, երբ համապատասխանեցվում է սովորողների ընկալման մակարդակներին:
- **Գործընթաց** – տարբերակվում է մեթոդներով:
- **Վերջնարդյունք** – տարբերակվում է, երբ խրախուսվում է ներկայացնել ուսումնառության արդյունքը սովորողների նախընտրելի տարբերակներով:
- **Ուսուցման միջավայր** - տարբերակվում է, երբ ուսումնառությունն իրականացվում է համագործակցային միջավայրում:
- **Գնահատում** - տարբերակվում է այն ժամանակ, երբ սովորողներին հնարավորություն է տրվում բարելավել սեփական ուսումնառությունը:

Տարբերակված դասավանդումն իրականացվում է այնպես, որ բոլոր սովորողներն աշխատում են նույն թեմայի շուրջ, բայց տարբեր մակարդակներում:

7. Գնահատում

Յուրացման գնահատումն հարկ է իրականացնել ուսուցման համատեքստում: Այս դեպքում ստուգվում է ոչ միայն գիտելիքների ծավալն ու ճշգրտությունը, այլև դրանց խորությունը, տեղեկացվածությունը, ճկունությունն ու արդյունավետությունը, դրանք գործնականում կիրառելու կարողությունը: Ներառական կրթության համակարգում գիտելիքների ստուգումն ու գնահատումն, ըստ էության, պետք է արտացոլի բազմազանություն, որպեսզի համապատասխանի դասարանում տարբեր սովորողների զանազան կարիքներին ու խնդիրներին՝ միևնույն ժամանակ ապահովելով արդարություն ու հավասարություն: Ի վերջո, ուսուցման գործընթացի գագաթնակետը դրա արդյունքի՝ որևէ ձևով ներկայացումն է: Դա սովորողների որոշակի գիտելիքների և հմտությունների առկայության վկայությունն է: Գնահատումը առաջադիմության վերաբերյալ դատողություններ անելու միջոց լինելուց զատ նաև ուսումնական ռազմավարություն է:

Իրատեսական, խելամիտ պլանավորման նպատակը յուրաքանչյուր սովորողի եզակիության, ինքնատիպության և պահանջմունքների կարևորումն է: Կրթության բովանդակությունը սովորողների ընդունակության աստիճանին հարմարեցնելը խիստ պատասխանատու աշխատանք է: Այսպես ավելի է ընդգծվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների նկատմամբ ներգործությունը նվազեցնելու և տարբերակված մոտեցում ցուցաբերելու անհրաժեշտությունը: Խելամիտ հարմարեցումները յուրաքանչյուր սովորողից, ինչպես նաև բոլորից միաժամանակ պահանջում են իրական և համակողմանի համագործակցություն, դասավանդման ռազմավարությունների և մոտեցումների փոփոխություն: Ըստ էության յուրաքանչյուր սովորող անհատական ուսուցման պլանի կարիք ունի: Անհատականացված պետք է լինեն ուսուցման թե՛ բովանդակությունը, թե՛ մեթոդները: Դասավանդման ընթացքում կարող ենք նախատեսել տարբեր բարդություն ունեցող առաջադրանքների ընտրության հնարավորություն՝ սկսած շնորհալի, տաղանդավոր սովորողների համար դժվարամարս նյութից մինչև ցածր առաջադիմություն ունեցող սովորողի չափավոր ջանքերի արդյունքում յուրացվող նյութը: Իրական կյանքի տարբեր երևույթների կապակցվածության նկատառումը հնարավորություն է ընձեռում թեմատիկ

միավորներով առարկաների բովանդակության պլանավորումը բնական եղանակով: Մտավոր հաղորդակցությունը, սոցիալական, տեխնոլոգիական, ֆիզիկական հմտություններին տիրապետումը և դրանց կիրառումն իրականացվում են ամբողջապես և կապակցված: Քննադատական մտածողությունը, որոշումներ ընդունելու կարողությունը և ստեղծագործական ունակություններն ավելի են ընդլայնվում, երբ սովորողներն ընդլայնում են համապատասխան խնդիրները և դրանք լուծելու քայլեր կատարում: Նման դեպքերում սովորողներն ավելի շուտ գիտելիքներ են կառուցում, ստեղծում, քան հանդես գալիս դրանք սպառողի դերում: Ընտրվում են գործունեության կազմակերպման այնպիսի ձևեր, որոնք համապատասխան պայմաններ կապահովեն տարբեր կարողություններ և ունակություններ ունեցող սովորողների համար:

Թեմատիկ միավոր՝ «Առաջին տասնյակ»

Հիմնավորում

Մինչև առաջին տասնյակի թվերի ուսումնասիրումը, նախապատրաստական փուլում սովորողների մոտ ձևավորվում են տարրական հաշվողական հմտություններ, տարածական պատկերացումներ, առարկաների և դրանց խմբերի միջև հարաբերություններ ստեղծելու կարողություններ՝ նկարագրել, համեմատել, վերլուծել: Դասավանդման հիմքում մտածողության զարգացման խնդիրն է՝ հաշվի առնելով սովորողների անհատական առանձնահատկությունները: Ուսուցման արդյունավետ մեթոդները համադրելով խաղային գործունեությանը և ստեղծագործաբար մոտենալով դասագրքի առաջադրանքներին՝ խթանում ենք սովորողների մտածողությունը: Այս կերպ դասավանդումը դառնում է գրավիչ, հետաքրքիր և տրամադրող: Սովորողները շատ հաճախ դժվարությամբ են հասկանում թվի կազմությունը, թվերի հաջորդականության սկզբունքը: Կարևոր խնդիր է թվի հասկացության ընկալումը: Ուստի առաջարկում ենք դասավանդման միապաղաղությունից խուսափելու համար ստեղծել զարմանքի, հայտնագործելու, հետազոտելու իրավիճակներ:

«Մաթեմատիկայի անկյունում թվերի մոլորակն է»:

Նկար 11. Թվերի մոլորակ

Նախօրոք պատրաստվում են տարբեր թվերով քարտեր, և հավաքվում է «Թվերի մոլորակը»:

Նկար 12. Թվերի մոլորակ՝ հավաքված սովորողների կողմից

Սկսվում է «ուրախ ճանապարհորդությունը»:



Նկար 13. Ճանապարհորդություն թվերի մոլորակում

Սովորողները հայտնվում են «Բնական թվեր» քաղաքում, որտեղ արդեն սկսվում է «Միանիշ թվեր» թաղամասի կառուցումը /**Բնական կոչվում են այն թվերը, որոնք կիրառվում են հաշվելիս կամ նման առարկաները համարակալելիս/:**

Նկար 14. Բնական թվերի քաղաքի նմուշօրինակ

Քաղաքը ստեղծվում է համատեղ ուժերով: Յուրաքանչյուր թվի ուսուցման դաս պլանավորվում է համապատասխան վերջնարդյունքներով և դրանց համապատասխան քայլաշարով: Յուրաքանչյուր թիվ թաղամաս է մուտք գործում հանդիսավոր, երգ ու խաղով, պատմություններով և հանելուկներով: Այսպես պահպանվում է նյութի ներկայացման ձևերի բազմազանությունը, ապահովվում է գիտելիքի՝ տարբեր ձևերով արտահայտման և սովորողների՝ ուսումնական գործունեության մեջ ներգրավման ձևերի հնարավորություն: Բնականաբար պահպանվում է ծրագրային բովանդակությունը: Օգտագործվող դասագրքերի առաջադրանքները կիրառվում են տարբեր ձևերով և քայլաշարով: Ավելի ակնառու է դառնում բնական թվերի հաջորդականության գաղափարի ընկալումը, «հաջորդ», «նախորդ» եզրույթների ամրապնդումը, «հարևան» թվերի գաղափարը: Բնականաբար բոլոր միանիշ թվերի տները տարբերվում են միմյանցից: Այստեղ կարևորվում է թվի կազմության ուսուցումը ավելի պատկերավոր ձևով: Տները կառուցվում են համատեղ ջանքերով, ձևավորվում և նկարազարդվում են սովորողների մտահղացումներով: Այս աշխատանքի ընթացքում կարևորվում է կառուցումների համաչափությունը, գնահատվում են բոլորի ներդրումն ու ջանքերը, կարևորվում է համագործակցությունը:

Թաղամասում կան պայմանական նշաններ՝ «>»,«<»,«=»,«+»,«-»: Պետք չէ մոռանալ երկրաչափական պատկերների և մարմինների մասին, որոնց միջոցով իրականացվելու են կառուցումները: Թաղամասում կառուցվում են նաև ժամանցի վայրեր՝ տրամաբանական առաջադրանքներով, խաղահրապարակներ՝ մաթեմատիկական խաղերով:

Թաղամասում հյուր է 0-ն, որը տուն չունի և ամեն օր ցանկալի հյուր է որևէ մեկի տանը: Այս գաղափարն ընդլայնվում է հետագայում՝ երկրորդ տասնյակի թվերն ուսուցանելիս, ինչպես նաև 0-ի վերաբերյալ հատուկ դեպքերը քննարկելիս: Յուրաքանչյուր թվի վերաբերյալ նրա տարածքում տեղադրվում է առաջադրանքների փաթեթ, խաղ-հանելուկներ, հայտորոշիչ և ձևավորող գնահատման առաջադրանքներ:

Ստորև ներկայացված են դասապլանների նմուշօրինակներ առաջարկված մոտեցումներով: Նշենք, որ դասապլանները փորձարկվել են, դիտարկվել է դրանց համապատասխանությունը ծրագրային բովանդակությանը, սովորողների տարիքային առանձնահատկություններին:

Դասի պլան 1

Առարկա	**Մաթեմատիկա**
Դասարան	1-ին
Կիսամյակ	1-ին
Թեմա/թեմատիկ միավոր/	Առաջին տասնյակ
Թեմայի նպատակ	Ծանոթացնել թվանշաններին, թվերի անվանումներին, Ուսուցանել միանիշ թվերի կազմությունը և գրությունը, Ձևավորել միանիշ թվերով գումարում և հանում կատարելու, միանիշ թվերը համեմատելու կարողություններ, Ձևավորել առարկաները հաշվելու, համարակալելու հմտություններ, Ձևավորել խնդիրներ լուծելու հմտություններ:
Թեմայի վերջնարդյունքներ	Ճանաչի, կարդա և թվանշաններով գրի 0-10 ամբողջ թվերը:

	Իմանա գումարման և հանման գործողությունների բաղադրիչները: Գումարի և հանի 10-սահմաններում: 10-ի սահմաններում կատարի ուղիղ հաշիվ և հետհաշվարկ 1-ական, 2-ական սկզբունքով: Համեմատի թվերը 1-10-սահմաններում և պարզի՝ մեկը մյուսից ինչքանով է մեծ կամ փոքր, դասավորի աճման և նվազման կարգով: Գրանցի թվերի համեմատման արդյունքը նշանների միջոցով: Լուծի պարզ խնդիրներ: Չափի երկարությունը իր ընտրած չափի միավորով՝ թիզ, ոտնաչափ, մատիտ, սանտիմետր, ու գրանցի արդյունքը:
Գերիշխող առարկա	Մաթեմատիկա
Երկրորդային առարկայախումբ	Մայրենի, Տեխնոլոգիա, Կերպարվեստ, Երաժշտություն Մայրենի՝ գրական ունկնդրման, մաթեմատիկայի դասաժամերին առաջադրանքների կատարման ընթացում կիրառվող գրական ստեղծագործությունների ընթերցում, դերային իրավիճակների ստեղծում /հեքիաթներ, հանելուկներ, փոքրիկ տեղեկատվական տեքստեր/: Հեքիաթների ամբողջական տարբերակների ընթերցանություն, իրավիճակների վերլուծություն, դեմ և կողմ փաստարկների քննարկում: Տեխնոլոգիա՝ դետալների պատրաստում/աշխատանք տարբեր բնական նյութերով, թղթով և ստվարաթղթով,

	թեմատիկ պատկերների ստեղծում, ձևավորում/: Կերպարվեստ՝ թվերով նկարչություն/ ինչպես թվերից ստանալ տարբեր պատկերներ, զարդանախշեր/, թեմատիկ պատկերների ստեղծում, գունավորում, նկարազարդում: Երաժշտություն՝ թվերը երաժշտության մեջ /թվերի մասին մանկական երգերի ուսուցանում/:
Դասի թեմա	7 թվի գրությունը թվանշանով
Տևողությունը	2 դասաժամ/ 90 րոպե/
Դասի նպատակը	Ուսուցանել 7-ի կազմությունն ու գրությունը, Ամրապնդել 10-ի սահմաններում թվեր գումարելու և հանելու կարողությունները, Ձևավորել պարզ խնդրի վերլուծության կառուցվածքը, Զարգացնել տրամաբանական մտածողությունը, Ընդլայնել երեխաների մտահորիզոնը, իմացության սահմանները, Զարգացնել թիմում աշխատելու կարողությունը:
Դասի վերջնարդյունքները	Ճանաչի, կարդա, գրի 7 թիվը թվանշանով: Կատարի գումարում և հանում 10-ի սահմաններում: Համեմատի թվերը 10-ի սահմաններում և գրանցի համեմատման արդյունքը նշանների միջոցով: Լուծի տրամաբանական հիմքով խաղային առաջադրանքներ: Լուծի պարզ խնդիրներ և մեկնաբանի:

Ընդհանրական Խաչվող հասկացությունները	Օրինաչափություն՝ միանիշ թվերի հաջորդականության սկզբունքը, Կառուցվածք, գործառույթ՝ թվերի կազմությունը, Համակարգ և մոդել՝ ինչպես են ստեղծվել թվերը, թվերի համեմատում, գործողությունների կատարման քայլաշար:
Կապը ՀՊՁ-ով սահմանված վերջնարդյունքների հետ	1) ազատ գրավոր և բանավոր հաղորդակցվի գրական հայերենով. 3) օգտագործի ունեցած գիտելիքները և հմտությունները օբյեկտները չափելու, հաշվելու, համեմատելու, նկարագրելու, դրանց քանակական, որակական և տարածական պարզ հարաբերակցությունները գնահատելու համար. 4) ճանաչի և պատկերի որոշ երկրաչափական պատկերներ, ունենա պարզ տարածական պատկերացում. 6) գրավոր և բանավոր կատարի գործողություններ թվային արտահայտությունների հետ. 7) մտքերն արտահայտելիս բերի պարզ հիմնավորումներ, կատարի ընդհանրացումներ և պարզ դասակարգումներ. 8) դրսևորի տրամաբանական և ստեղծագործական մտածողություն, կարողանա անդրադառնալ ու արձագանքել սեփական և ուրիշների ստեղծած աշխատանքին. 9) հասկանա իր առջև դրված խնդիրը, մշակի և կատարի քայլեր այն լուծելու համար.

	10) նկարագրի շրջակա աշխարհի օբյեկտները, երևույթները և դրանց փոխադարձ կապերը.
Անհրաժեշտ պարագաներ, տեխնիկական միջոցներ	Գրքեր և նկարազարդումներ՝ «Գայլը և յոթ ուլիկները», քարտեր օրինակներով և տարբերակված առաջադրանքներով, դասագիրք, աշխատանքային տետր, մագնիսական թվեր, թվերի կազմության տնակներ, սահիկաշար, մուլտֆիլմ:
Գնահատում, տեսակները	Ձևավորող գնահատում Ինքնագնահատում, խմբային գործունեության գնահատում
Դասի փուլերը, յուրաքանչյուր փուլի համար ընտրված մեթոդներ, փուլերի տևողությունը	Դասի սկիզբ՝ Վարքային և այլ սպասելիքների ներկայացում: Ի՞նչ են սովորելու սովորողները. դասի թեմայի և նպատակի ներկայացում: Կարևոր դրույթների ու բառապաշարի ներկայացում, որոնք օգտագործվելու են դասի ժամանակ՝ միանիշ թիվ, բնական թիվ, կենտ թիվ, արտահայտություն, հավասարություն, անհավասարություն: Ինչպե՞ս է դա կապվում նրանց նախկին գիտելիքների հետ: Նրանք արդեն գիտեն 1, 2, 3, 4, 5, 6 թվանշանները, թվերի կազմությունը, կարողանում են կատարել հաշվարկներ: Ինչպե՞ս է դասը կապվում իրական կյանքի հետ: Ինչո՞ւ է դա կարևոր: 7 թվի մասին հետաքրքիր տեղեկություններ, 7-ը բնության մեջ, տեքստեր, հեքիաթներ: Ի՞նչ են պատրաստվում անել դասին: Ներկայացնել դասի ընթացքը: Նոր նյութի մատուցում

	Ի՞նչ են սովորում սովորողները: - 7 թիվն ու թվանշանը, կատարում են համապատասխան առաջադրանքներ: Ինչպե՞ս են սովորում այդ նյութը: - Խաղային իրավիճակներում հաղթահարում են փորձություններ: Նոր նյութը հանգում է կարևոր դրույթների և տանում դեպի դասի նպատակը: Ուղղորդված աշխատանք՝ խմբային առաջադրանքներ: Ի՞նչ հնարավորություն է տրվում սովորողներին աշխատելու: - Սովորողները ստանում են խմբերով աշխատելու առաջադրանքներ, որոնք համապատասխանում են դասի նպատակներին և նպաստում վերջնարդյունքների ապահովմանը: Արդյո՞ք այդ աշխատանքը վերահսկվում է. սովորողներին ի՞նչ օգնություն է տրամադրվում: - Ուսուցիչն ունի հստակ ընթացակարգեր աշխատանքի վերահսկման և ըստ անհրաժեշտության ուղղորդումներ անելու նպատակով: Ի՞նչ ակնկալիքներ կան սովորողների մասնակցության և փոխօգնության առումով: - Սովորողներն արդեն ունեն խմբում աշխատելու և փոխօգնության նախնական հմտություններ և փորձառություն: Արդյո՞ք կատարվող գործողությունները կազմակերպված են: - Դասարանում առկա են համապատասխան հրահանգներ, կան հատուկ ընթացակարգեր կազմակերպված,

	ուղղորդված աշխատանք իրականացնելու համար: 4. Ինքնուրույն աշխատանք՝ առաջադրանքների ինքնուրույն կատարում Ինչպե՞ս է ուսուցիչը հնարավորություն տալիս սովորողներին ինքնուրույն աշխատելու: - Ինքնուրույն աշխատանքի առաջադրանքները կազմված են այնպես, որ սովորողներն աշխատում են բացառապես ինքնուրույն: Ի՞նչ վարժություն կամ առաջադրանք է նախատեսված սովորողների ինքնուրույն աշխատանքի համար: - Առաջադրանքները ընտրված են դասագրքից, աշխատանքային տետրից և սովորողների մատչելիության սահմաններում են: 5. Դասի ամփոփում Ինչպե՞ս է անդրադարձ կատարվում կարևոր դրույթներին ու դասի նպատակներին: - Կատարվում է անդրադարձ դասի քայլերին՝ որտեղից սկսեցին և ուր հասան: Ինչպե՞ս է իրականացվում քննարկումը սովորածի կարևորության և հետագա կիրառելիության վերաբերյալ: - Առանձնացվում են հիմնական գաղափարները, կարևոր, առանցքային կետերը: Ի՞նչ անդրադարձ է կատարվում սովորողների վարքին և կատարողականին (գնահատում/խրախուսանք), ինչպե՞ս է դասին հետադարձ կապ ապահովվում: - Անդրադարձ վարքին, մասնակցությանը, տրամադրությանը: Անդրադարձ դասի մուտքի վարժանքին՝ աշխատելու կանոններին:

Դասի ընթացքի մանրամասն նկարագրություն

1. Դասի սկիզբ

<u>Քայլ 1.</u> Կազմակերպում

- Վարքային և այլ սպասելիքների ներկայացում: Հիշեցնել դասի ընթացքում աշխատելու կանոնները.



Նկար 15. Աշխատանքային կանոններ

	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները հեշտությամբ են ինտեգրվում, քանի որ արդեն յուրացրել են վարքային սպասելիքները: Վարքային խնդիրներ ունեցող սովորողին հնարավորություն է տրվում մոտենալ հրահանգների պաստառին, ցուցադրել, ներկայացնել և որոշում կայացնել: Իհարկե, դժվար է ակնկալել լիարժեք դրական վարքագիծ, սակայն ժամանակի ընթացքում խնդիրը կլուծվի, եթե ապահովվի տվյալ սովորողի մասնակցությունն ու ստեղծվի համբերատարության և հանդուրժողականության միջավայր:

- Ծանոթացում դասի թեմային

Ուսուցիչը ներկայացնում է դասի նպատակները: Քանի որ թեմատիկ միավորի շրջանակում սովորողներն արդեն տեղայնացրել են 1-6 թվերը «Միանիշ թվեր» թաղամասում, նրանց համար ակնհայտ է, որ օրվա հերոսը 7 թիվն է: Ուսուցչի խնդիրն է կարևորել 7-ի դերը, ընդլայնել գիտելիքների շրջանակը:

2. Նոր նյութի մատուցում /զուգահեռաբար իրականացվում է նաև խմբային աշխատանք/

<u>Քայլ 2.</u> Հեքիաթի մուտք հանելուկներով: Տեխնոլոգիայի դասաժամին նախօրոք պատրաստված տնակի շուրջը «Գայլը և յոթ ուլիկները» հեքիաթի բովանդակության սյուժետային պատկերի ստեղծում հերոսների կերպարներով և աշնանային միջավայրով: Միաժամանակ մեծադիր էկրանին ցուցադրվում է սահիկաշարը:

Նկար 16. Հեքիաթի ձևավորում

	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ընկալման մակարդակն ապահովելու համար զուգահեռաբար էկրանին ցուցադրվում է սահիկաշարը՝ մեծադիր գրառումներով, նկարներով, միացվում է նաև տեքստի ձայնագրությունը տեսողական պատկերներով: Վարքային խնդիրներ ունեցող սովորողները կկարողանան վերահսկել իրենց վարքագիծը, քանի որ նման միջոցներով ուսուցիչն ապահովում է նյութի նկատմամբ հետաքրքրությունը: Միաժամանակ երեխաները ներգրավվում են կառուցողական, ստեղծագործական աշխատանքներում. նրանք գտնվում են շարժման մեջ, կատարում են որոշակի հանձնարարություններ: Ուսուցչի նպատակն է տալ ուղիղ և նպատակային հրահանգներ: https://www.youtube.com/watch?v=PxkoWRakkoc&t=40s

Գուշակել հանելուկները և կռահել հեքիաթի հերոսներին:

Մորուք ունի, պապիկ չէ,
Պոզեր ունի, ցլիկ չէ,
Կաթ է տալիս, կովիկ չէ:

Նկար 17. Հեքիաթի ձևավորում

Իբրև թե հյուր մտավ գոմ՝ տարավ, կերավ հորթ ու կով:

Նկար 18. Հեքիաթի ձևավորում

Եթե գուշակեն, թե որ թիվն է հանելուկի պատասխանը, կիմանան, թե քանի ուլիկ ունի մայր այծիկը:

Նա էլ գերանդու նման, ափսոս, չունի սուր բերան,
Կոթն էլ բարակ ու երկար և բռնելուն՝ շատ հարմար:
Այս թիվը երջանիկ բոլորին է սիրելի,
Ծիածանն է մեզ հյուր բերում,
Շաբաթվա օրերը հերթով շարում,
Նոտաներով երգեր ստեղծում:

Նկար 19. Հեքիաթի ձևավորում

Նկար 20. Հեքիաթի ձևավորում

	Գրատախտակին միասին ստեղծում են սյուժետային տեսարանը: Տարբերակված առաջադրանքներ մտավոր/ինտելեկտուալ/դժվարություն ունեցող սովորողների համար. Հաշվել ուլիկների քանակը և գրատախտակի համապատասխան հատվածում տեղադրել նույն քանակով շրջաններ: Ի՞նչ երկրաչափական պատկերներ են օգտագործվել տնակը կառուցելու համար. նմուշօրինակներ տեղադրել նշված տեղում: Հաշվել, թե յուրաքանչյուր պատկերից քանիսն է օգտագործվել: Հաշվել ծառերի քանակը: Հաշվել տերևների քանակը: Կատարել համեմատություններ:

<u>Քայլ 3.</u> Փորձությունների հաղթահարում հեքիաթի հատվածների ներկայացման միջոցով

	Վերևում նշվեց, որ ընթերցվող նյութի բովանդակությունը բոլոր սովորողների համար ընկալելի դարձնելու նպատակով օգտագործվում է տեսանյութ: Ապահովվում է ինչպես տեսողական, այնպես էլ լսողական ընկալումը, ինչը միաժամանակ նպաստում է ուշադրության կենտրոնացմանը:

Մաս 1

Լինում է չի լինում, մի ծեր այծ է լինում: Ունենում է յոթ ուլիկ ու էնպես է սիրում իր փոքրիկներին, ինչպես կսիրի միայն մայրը: Մի անգամ, երբ ուզում է գնալ անտառ կեր բերելու, կանչում է բոլոր ուլիկներին ու ասում.

— Սիրուն բալիկներ, ես գնում են անտառ, տեսեք, հա՛, զգույշ կմնաք գայլից: Որ նա մտավ այստեղ, ոչ մեկդ կենդանի չեք մնա: Այդ չարագործը երբեմն ձևացնում է, թե գայլ չէ, բայց նրա հաստ ձայնից ու սև-սև թաթերից դուք իսկույն կճանաչեք:

Ուլիկներն ասում են.

— Մի վախենա, մայրիկ, հանգիստ գնա, զգույշ կլինենք:

Ծեր այծը մկկում է ու խիղճը հանգիստ ճամփա ընկնում: Քիչ հետո մեկը ծեծում է դուռն ու կանչում.

— Սիրուն բալիկներ, բաց արեք դուռը, ձեր մայրն է եկել, համով-համով բաներ է բերել:

Բայց ուլիկները հաստ ձայնից անմիջապես ճանաչում են գայլին:

ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆ 1. Եթե կատարենք առաջադրանքները ճիշտ և ժամանակին, գայլը չի կարողանա մտնել տնակ:

1. **Նկարագրել 7 թիվը:**

7-ը թիվ է բնական,
Ունի երկու հարևան,
Հաջորդում է ?-ին,
Նախորդում է ?-ին:

1. Լրացնել թվերի շարքը (աշխատանք խմբով):

ա) Նույն աշխատանքը զույգերով կատարում են գրատախտակին մագնիսական թվերով:

1		3			6			9	

բ) Լրացնել թվերի շարքը և շրջագծել կենտ թվերը:

1		3			6			9	

գ/ Լրացնել թվերի շարքը և շրջագծել զույգ թվերը:

1		3			6			9	

	Միևնույն աշխատանքը կատարվում է տարբեր ձևերով: Ուսուցչի խնդիրն է նախապես պատրաստել համապատասխան աշխատանքային նյութերը, աշխատանքային անկյունները, հստակեցնել խմբերը, մասնակիցներին, համագործակցության ձևերը: Միևնույն առաջադրանքը ներկայացվում է բարդության տարբեր աստիճաններով:

2. Խաղ՝ «Գտի՛ր զույգը»:



ա) Լրացնել պակասող թիվը յուրաքանչյուր թերթիկի վրա այնպես, որ գումարը ստացվի 7:

բ) Նույն աշխատանքը գրատախտակին կատարում են մագնիսական թվերով:

գ) Տեղում կատարում են առաջադրանքը՝ ընտրելով ծաղկաթերթիկի պակասող մասին համապատասխան գույնով թվաքարտը:



Նկար 21. 7-ի կազմությունը

ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆ 2: Ուլիկները սովորողների օգնության կարիքն ունեն:

Մաս 2

Այդ ժամանակ գայլը գնում է, խանութից մի մեծ կտոր կավիճ գնում, ուտում: Ձայնը բարակում է. նորից ետ է գալիս, ծեծում դուռն ու ասում.

– Սիրուն բալիկներ, բաց արեք դուռը, ձեր մայրն է եկել, համով-համով բաներ է բերել:

Գայլն իր սև թաթը դնում է պատուհանին, ուլիկները տեսնում են ու ասում.

– Դուռը բաց չենք անի, մեր մայրիկի թաթերը սև չեն: Դու գայլն ես:

1. ա) Օգտվելով նկարներից՝ կազմիր հավասարություններ:

բ) Համապատասխանեցրո՛ւ հավասարությունները նկարներին:

4 + 3 = 7 1 + 3 = 4 3 + 3 = 6

Նկար 22. Հավասարությունների կազմում

2) Խաղ «Տերևաթափ»: Օգնի՛ր մայր այծին հավաքել այն տերևները, որոնց վրա գրված հավասարությունները ճիշտ են:

Սովորողները դասասենյակում եղած տերևներից ընտրում և տեղադրում են զամբյուղի մեջ: Խաղի ընթացքում չեն խոսում, վերցնում են տերևը, համոզվում, որ ճիշտ է, և դնում համապատասխան տեղում: Սխալ գրառումները տեղադրում են տեսանելի տեղում: Խաղից հետո կազմակերպվում է քննարկում:

	Ակտիվ ուսումնառության հնարավորություն է ստեղծվում, միաժամանակ ուսուցիչը անընդհատ վերահսկում է ուսումնական իրավիճակը՝ ապահովելով վարքային ակնկալիքները: Սովորողները շարժվում են, կատարում հրահանգները, մտածում, համագործակցում, վերահսկում սեփական վարքագիծը:

Մաս 3

Այդ ժամանակ գայլը վազում է հացթուխի մոտ, ասում.

– Թաթս ջարդել եմ, մի քիչ խմոր քսիր վրան:

Հացթուխն առաջարկում է նախ կատարել առաջադրանքը:

Պետք է հավասարեցնել հացերի քանակները արկղերում /Առաջադրանքը համապատասխանում է դասագրքի նյութին/:



Նկար 23. Հավասարեցնել բազմությունների տարրերը

Հացթուխը խմոր է քսում նրա թաթին:

Նկար 24. Հեքիաթի ձևավորում

Հիմա էլ գայլը ջաղացպանի մոտ է վազում ու ասում.

— Մի քիչ ալյուր ցանիր թաթիս վրա:

Նկար 25. Հեքիաթի ձևավորում

Ջաղացպանը վախենում է, բայց առաջարկում է լուծել խնդիրը:

Երբ ինքը ջրաղացից հանեց 3 պարկ ալյուր, այնտեղ մնաց 7 պարկ ալյուր: Քանի՞ պարկ ալյուր կար ջրաղացում:

Ջաղացպանը ալյուր է ցանում նրա թաթին: Չարագործը երրորդ անգամ է ծեծում այծի դուռն ու ասում.

— Սիրուն բալիկներ: Բաց արեք դուռը, ձեր մայրն է եկել, համով–համով բաներ է բերել ձեզ համար:

Այծիկներն ասում են.

— Նախ ցույց տուր թաթդ, տեսնենք՝ մեր մայրն ես, թե չէ: Գայլը թաթը դնում է պատուհանին, ուլիկները տեսնում են, որ սպիտակ է, կարծում են՝ ճիշտ է ասում, ու բացում են դուռը: Գայլը ներս է մտնում: Վախից ուլիկները բոլորը թաքնվում են: Մեկը մտնում է սեղանի տակ, մյուսը բարձրանում է մահճակալի վրա, երրորդը՝ վառարանին, չորրորդը թաքնվում է խոհանոցում, հինգերորդը՝ պահարանում, վերցերորդը՝ լվացարանի տակ, յոթերորդը՝ պատի ժամացույցի մեջ:

ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆ 3: Եթե հաղթահարենք այս փորձությունը ևս, գայլը կպարտվի: Մենք կփրկենք ուլիկներին:

Անտառում շատ հանելուկային սնկեր կան, պիտի կարողանանք կռահել պատասխանները և տեղադրել սնկերը զամբյուղում:

Ծնվում է նա հրից, ջրից,
Մեզ ժպտում է հորիզոնից,
Ունի աղեղ յոթնալար՝
Կամրջում է դաշտ ու սար: /ծիածան/

Գիտե՞ք դուք արդյոք
Յոթ սիրուն քույրեր,
Հասակով նման,
Անունով՝ տարբեր: /շաբաթվա օրեր/

Յոթն են նրանք,
Ապրում են հաշտ, համերաշխ,
Հստակ շարված գծերին՝
Կյանք են տալիս երգերին: /7 նոտաներ/

Մաս 4

Մայր այծը վերադառնում է, տեսնում է՝ տան դուռը բաց, գայլը գետնին նստած լաց է լինում անզորությունից: Չէ՞ որ սովորողները խելացի գտնվեցին և կարողացան հաղթահարել փորձությունները: Մայր այծը այնպես է զայրացած հայացքով նայում գայլին, որ խեղճը միանգամից փախչում է անտառ, այնպես է փախչում, որ մոռանում է այծի տան ճանապարհը: Սակայն մայր այծը չի կարողանում գտնել ուլիկներին:

Երեխաներն ունեն հանձնարարություն:

3. Ուղղորդված աշխատանք

1. Լրացնել 7 թվի կազմության աղյուսակը:

	Ուսումնառության դժվարություն ունեցող սովորողներին տրամադրվում են տարբերակված առաջադրանքներ. • Նկարների, պատկերների միջոցով պատկերել 7-ի կազմությունը, • Մաթեմատիկական դոմինո, • Լրացնել պակասող թիվը, • Ծիածանի վրա գրառել 1-7 թվանշանները:



Նկար 26. Տարբերակված առաջադրանքներ



Նկար 27. Տարբերակված առաջադրանքներ

2. Հավաքել կտրտված նկարը, ստանալ ամբողջական պատկերը: Նկարների տակ գրված մաթեմատիկական արտահայտությունները գրառել և հաշվել արտահայտության արժեքը: Մինչև աշխատանքը սկսելը ուսուցիչը էկրանին, գրատախտակին ցուցադրում է 7-ի գրելաձևը:



Նկար 28. Հեքիաթի ձևավորում

	• Նախ գրառում են արտահայտությունները: • Խմբի անդամների միջև կատարվում է աշխատանքի բաժանում: • Մեկը հաշվում է արտահայտության արժեքը: • Մեկը կատարում է գրառումները: • Մեկը դասավորում է նկարները, սոսնձում և ստանում ամբողջական պատկերը: Ապահովվում է բոլորի մասնակցությունը: Վերջում խմբի անդամները քննարկում են աշխատանքի արդյունքը և ներկայացնում համապատասխան տեղում: Կազմակերպվում է կատարված աշխատանքների համընդհանուր քննարկում: Կարևոր է, որ ուսուցիչը հստակ պատրաստի աշխատանքային նյութերը, վերջնարդյունքի ներկայացման թերթիկների վրա գրված լինեն խմբերի համարները, սովորողներին տրվեն հասկանալի հրահանգներ, վերահսկվի ժամանակը:

Մաս 5

Ուլիկները վերադառում են մայրիկի մոտ: Նրանք սպասում են սովորողների ինքնուրույն աշխատանքի արդյունքներին:

1. Ինքնուրույն աշխատանք

	Ինքնուրույն աշխատանքի նպատակն է հայտորոշել դասի վերջնարդյունքների յուրացման մակարդակը, ինչպես նաև որոշակի իրավիճակներում սովորողների կողմնորոշվելու կարողությունը: Սովորողներին տրամադրվում են տարբերակված առաջադրանքներով քարտեր՝ հաշվի առնելով դասարանում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների սովորելու առանձնահատկությունները:



Նկար 29. Ինքնուրույն աշխատանքի նմուշօրինակ

2. Դասի ամփոփում

Անդրադարձ դասի կանոններին

Յուրաքանչյուր սովորող բարձրացնում է համապատասխան պատկերը և կատարում ինքնավերլուծություն:

	7 թվի տեղեկատվական անկյունում տեղ են գտնում հետաքրքիր փաստեր, սովորողների կատարած առաջադրանքները, «Թվերը նկարչության մեջ» աշխատանքի ընթացում 7 թվից ստացված պատկերները: Հետազոտական աշխատանքներ «Իմ սիրելի 7 թիվը» Հեքիաթներ, պատմություններ, հանելուկներ

Դասի պլան 2

Դասի թեման՝ Ի հնչյուն-տառի ուսուցում

Վերջնարդյունքներ

Սովորողները՝

- կզարգացնեն մտքերը հասկանալի ձևակերպելու կարողությունները՝ որոշելով պատմության մանրամասները: Խմբային աշխատանքի միջոցով տառային համադրություններով կստանան վանկեր ու բառեր և կկարդան դրանք,
- կզարգացնեն կարդալու նախնական կարողությունները՝ ընթերցելով բառաշարքերը և երկխոսությունները,
- կհորինեն երկխոսություն «զրույց հեռախոսով» սկզբունքով,
- կկատարեն բառակազմական աշխատանքներ՝ ստանալով բառեր *իկ* վերջածանցի և տրված բառ-նկարների միջոցով,
- գաղափար կկազմեն հարցական նշանի մասին,
- կկարողանան համագործակցել, ինքնուրույն աշխատել և եզրահանգումներ կատարել:

Ընթացքը

I. Խթանում

1. Հանելուկի պատասխանի կռահում.

Ի՞նչ թռչուն է, չի հանում ձագ,
Սլանում է միշտ համարձակ:
Թռչունը այդ երկթևանի
Ու որ ուզես՝ քեզ կտանի:

ի ն ք նա թ **ի** ռ

Սեղաններին դրված են տարբեր գույների քառակուսի թղթեր: Օգտվելով մեծադիր գծագրից՝ պատրաստել թղթե ինքնաթիռ:



Նկար 30. Ինքնաթիռի պատրաստման քայլաշար

II. Իմաստի ընկալում

1. Բացել անակնկալների տուփը, որտեղ մեծադիր գիրքն է:

Կարդալ վերնագիրը, բարձրաձայն մտածել գրքի բովանդակության մասին՝ մոդելավորել սովորողների մտածողությունը: Խնդրել սովորողներին գուշակել, թե ինչի մասին է լինելու պատմությունը: Այնուհետև ընթերցել բարձրաձայն, առոգանությամբ: Կարդալիս ձեռքը սահեցնել բառերի տակով՝ կարդալու տեմպին համապատասխան: Ընթերցանությունն ավարտելուց հետո որոշել, թե ով է գլխավոր հերոսը:

Ստորև բերված նկարներն օգտագործել մեծադիր գիրք պատրաստելու համար:

Ի ՏԱՌՆ ՈՒ ՄԱՍԻՍԸ



Ինքնաթիռից Ի տառը

Վերից տեսավ Սիս սարը:

Ասաց.

__Կանգնի՛ր, օդաչու՛,

Իջնեմ Սիսի գագաթին

Ու բարևեմ Մասիսին:

Վերընթերցել տեքստը մի քանի անգամ, սովորել անգիր, կազմակերպել քննարկում արդեն ծանոթ կետադրական նշանների շուրջ: Ցուցաքարտերով փակել առանձին բառեր և տառեր և հանձնարարել գուշակել դրանք: Բաժանել բառաքարտեր և հանձնարարել, որ տեքստում գտնեն այդ բառերը: Բանաստեղծության «քանդված տողերը» դնել գրատախտակին և հանձնարարել «կառուցել» այն:

III. Կշռադատում

1. Ընթերցանությունն ավարտելուց հետո որոշել, թե ով է գլխավոր հերոսը: Կազմակերպել զրույց Ի տառի շուրջ / Ինչի՞ նման է Ի տառը, ինչի՞ց է պատրաստված…/

2. Խմբային հանձնարարություն՝ նկարել ի տառը՝ անձնավորելով, ծեփել, պատրաստել թելերից, վերականգնել կտրտված տառամասնիկները, պատրաստել մետաղալարից:
3. Թղթե ինքնաթիռների վրա գրել Ի տառը /ձևավորել ի-երով/, նկարել Հայաստանի Հանրապետության դրոշը:

Հիշել՝ դադարի պահերին նպատակահարմար է կազմակերպել մնջախաղ՝ ինչպես է ինքնաթիռը օդ բարձրանում, սավառնում, վայրէջք կատարում:

Տարբերակված առաջադրանքներ

ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱԺԱՄ

Դասարանում շատ օդապարիկներ կան, որոնց մեջ կտրտված տառեր են/ նպատակահարմար է, որ յուրաքանչյուր տառից լինի մի քանի հատ, ձեռագիր տարբերակով, մի քանիսը լինեն նաև մեծատառ/: Սովորողներին զույգ-զույգ հանձնարարել ընտրել մեկական օդապարիկ, հանել տառերը և կազմել բառեր:



Ա, ս, ա, ի, կ, Ս, ր

Նկար 31. Գործնական աշխատանքի քարտեր

1. Սեղանին դասավորել կազմած բառերը և կարդալ նախ՝ զույգերով, ուսուցանելով միմյանց, ապա՝ ուսուցչի ընտրությամբ՝ բարձրաձայն:
2. Միևնույն բառերը կազմած զույգերին հանձնարարել միավորվել՝ կազմելով քառյակներ և նորից կարդալ կազմած բառերը:
3. Մեծադիր թղթերի վրա սոսնձով փակցնել այդ բառերը, տեղադրել բոլորին տեսանելի տեղում և կարդալ ՝
   - Ընտրովի՝ միայն ա-ով սկսվող, միայն ս-ով սկսվող, միայն կ-ով սկսվող, միավանկ, երկվանկ, եռավանկ բառերը:

- Միայն այն բառերը, որտեղ ի-ն բառամիջում է:
- Միայն մեծատառով գրվող բառերը /կազմակերպել քննարկում՝ ինչո՞ւ են այդ բառերը գրվում մեծատառով/:

Ակնկալվում է, որ սովորողները կստանան հետևյալ բառերը: Բնականաբար ուսուցիչը անհրաժեշտության դեպքում հանդես է գալիս օգնողի դերում՝ որպես հետաքրքրված և ընթերցող մոդել:

Սիսակ, իր, կիր, կիրակի, կար, սար, Սիս, ասա, արի, կարաս, կրակ, ակ, սա, կա, Արիս, կիսիր, սիրիր, կարիր, կրիա, իսկ:

4. Գրել Ի տառը և կազմած բառերից արտագրել մի քանիսը:

IV. Կշռադատում

Բառախաղեր

1. **-իկ** ածանցով և տրված նկարներով ստանալ բառեր:



Նկար 32. Գործնական առաջադրանքի քարտեր

լորիկ, ամպիկ, մատիկ, սագիկ, բադիկ, շնիկ

Նկարների տակ գրել բառերը, որպեսզի սովորողները փորձեն կարդալ. *-իկ* ածանցն առանձնացնել գունանշումով:

2. Գտիր ավելորդը:

կար
կարաս
Սիսակ
սար
ակ

- Նախ կարդում են բառաշարքը: Տրվում է ժամանակ մտածելու համար: Այս բառաշարքում «ավելորդ»-ի մի քանի տարբերակներ կան: Կարևորն այն է, որ սովորողներին մտածելու, ազատ արտահայտվելու, տրամաբանելու և եզրահանգումներ կատարելու հնարավորություն տրվի/ Ավելորդ կարող է

համարվել **Սիսակ** բառը, քանի որ մարդու անուն է և գրվում է մեծատառով, **ակ** բառը, քանի որ բաղկացած է երկու տառից, **սար** բառը, որում *կ* չկա/:

ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱԺԱՄ

I. Խթանում

Ստեղծել իրավիճակ. ուսուցչուհին հանդես է գալիս տատիկի դերում, ձեռքին իլիկ է, որով թել է մանում: Հանկարծ զանգում է հեռախոսը: Նրան զանգահարել է թոռնիկը և անընդհատ հարցեր է տալիս, իսկ ուսուցչուհի-տատիկը դիտավորյալ կրկնում է հարցերը /նպատակը՝ սովորեցնել վարել երկխոսություն հեռախոսով/:

__Ալո՜, ո՞վ է: Վա՜յ, դու՞ ես, թոռնիկս: Ինչպե՞ս ես, Սուսա՛ն ջան:

__Լավ եմ, տատի ջան: Ի՞նչ ես անում:

__Ասում է՝ ի՞նչ ես անում: Ի՞նչ եմ անում /Հարցնում է սովորողներին և լսում պատասխաններ՝ ակնկալելով, որ կասեն **իլիկ** բառը/:

__Թել եմ մանում:

__Իսկ ինչո՞վ:

__ Ասում է ինչո՞վ: Դե իհարկե՝ իլիկով:

__Իլիկն ի՞նչ է:

__Ասում է՝ իլիկն ի՞նչ է: Ի՞նչ է իլիկը, երեխաներ (Հնարավորություն ստեղծել, որ սովորողները փորձեն նկարագրել իլիկը, քանի որ տատիկ-ուսուցչուհու ձեռքում դրանից կա: Հնարավոր է, որ երեխաներից շատերն առաջին անգամ են իլիկ տեսնում):

- Գրատախտակին գրել **իլիկ** բառը, որոշել *ի* հնչյունի տեղը և արտասանել երկարացված տոնայնությամբ:
- Բանաստեղծության ունկնդրում (գիրքը կամ տպագիր տարբերակը կդրվի ընթերցանության անկյունում և տառուսուցման ընթացքում կօգտագործվի որպես ուսումնական նյութ, իսկ իլիկը կհայտնվի արվեստի անկյունում, հետագայում երեխաները կփորձեն թել մանել): Իլի՜կ, իլի՜կ, պտտվիր,

Դու իմ լարած հոլի պես,
Գառան բուրդը շուտ մանիր,
Կծիկ-կծիկ թել տուր մեզ:
Տաք-տաք գուլպա թող գործի
Տատը փոքրիկ Մուշեղի,

Որ երբ ձմռան օրը գա
Ցուրտը նրան չնեղի:

II. Իմաստի ընկալում

1. Անակնկալների տուփից հանել երկու էջանոց մեծադիր գիրք, որտեղ ներկայացված է հետևյալ երկխոսությունը:

I էջ

__Սարի՛կ, արա:
__Ասա՛, Սիսա՛կ:

__Սարի՛կ, սարի կա՞:
__Կա՛: Արի՛ սար:

II էջ

__Սարի՛կ, իսկ կա՞:

__Կա՛: կա, կա, կա:

__Սարի՛կ, արի:

Նկար 33. Մեծադիր գիրք

2. Սովորողները բացում են գիրքը և մի քանի րոպե ուսումնասիրում: Ուսուցչուհին ընթերցում է մի քանի անգամ, այնուհետև խրախուսում սովորողներին նույնն անել: Սովորողները կատարում են որոշակի շարժումներ, ընթերցում դիմախաղով: Տարբեր ձևերով կարդալ, որպեսզի երեխաները վարժվեն և կարողանան յուրաքանչյուր տողը կարդալիս ցուցադրել հույզերը ինչպես դիմախաղով, այնպես էլ արտասանության հնչերանգով՝ հետաքրքրություն, ուրախություն, տագնապ: Կրկնել կետադրական նշանների իմացությունը՝ ամրապնդելով հատկապես

հարցական նշանի արտաբերումը ուրախ հարցման և տխուր հարցման ժամանակ:

III. Կշռադատում

Ընթերցողի թատրոն՝ երկխոսության ներկայացում դերային խաղի միջոցով:

Դասի պլան 3

Առարկան՝ Մայրենի

Դասարան՝ I

Ժամաքանակը՝ 2 դասաժամ

Թեման՝ Նախադասություն: Կետադրական նշաններ: Առոգանությամբ ընթերցանություն

Նպատակներ՝

- Համակարգել նախադասության կառուցվածքի մասին ունեցած գիտելիքները /գծապատկեր/:
- Սովորել կարդալ առոգանությամբ՝ փորձելով ճանաչել կետադրական նշանները:
- Սովորել կառուցել բանավոր խոսք՝ զարգացնելով հիշողությունը:
- Կարողանալ լսել, համագործակցել, հաղորդակցվել միմյանց հետ:

Կահավորում՝ խնձորենի, տառերով խնձորներ, գծապատկեր, առաջադրանքներ:

Ընթացքը

IV. Խթանում

ա/ Բանաստեղծության խմբային արտասանություն

Երկար ու զիլ զանգը հնչեց,
Ու մեր դասը սկսվեց:
Հնչյուններն են շարք կանգնել,
Բազմաթիվ բառեր կազմել:
Լինենք աշխույժ, ուշադիր՝
Դասը կստացվի կարգին ու ժիր:

բ/ **Այբուբենի հարցաթերթիկ**

Տարբեր եղանակներով ստուգել սովորողների տառաճանաչության մակարդակը (ինչպես մեծատառերի, այնպես էլ փոքրատառերի). պատին փակցված տառերից, տառերի պատկերներով քարտերից առանձնացնել նրանք, որոնք ճանաչում են, և բարձրաձայն արտասանել:

V. Իմաստի ընկալում

ա/ Լեզվական փորձառության մոտեցում

Ցույց տալ սովորողներին խնձոր (կարելի է նաև նկար) և կազմակերպել 5 րոպեանոց քննարկում: Նպաստել, որպեսզի սովորողներն օգտագործեն այն բառերը, որոնք կներկայացվեն տեքստում /բանաստեղծության մեջ/:

Մեծադիր թղթի վերին մասում գրում ենք վերնագիրը, լսում երեխաների մտքերը, համակարգում և տող առ տող գրառում:

Խնձոր

Կլորիկ, գլորիկ՝
Միրգ է կարմիր ու քաղցրիկ,
Եվ մեծերի, և փոքրերի միրգն է շատ սիրելի:

Սովորողները պաստառի վրա ցույց են տալիս այն տեղը, որտեղից պետք է սկսել գրել բանաստեղծությունը: Սովորողները թելադրում են, իսկ ուսուցիչը գրի է առնում՝ ընթացքում բնական կերպով արտաբերելով յուրաքանչյուր բառը: Յուրաքանչյուր նախադասություն գրի առնելուց հետո ուսուցիչը բարձրաձայն կարդում է տեքստը՝ ցուցաքարտը պահելով ընթերցվող յուրաքանչյուր բառի տակ: Հետո սովորողներից մեկը կարդում է նախադասությունը, իսկ խումբը՝ կրկնում: Նույն ձևով ընթերցում են բոլոր նախադասությունները: Ուսուցիչը օգնելու նպատակով ցածր ձայնով ընթերցում է սովորողների հետ: Մի քանի անգամ կարդալուց հետո սովորողներին տրվում են **միրգ, կարմիր, կլորիկ, սիրելի** բառերով բառաքարտեր, որպեսզի նրանք կարդան և տեքստում գտնեն այդ բառերը՝ յուրաքանչյուրի տակ դնելով համապատասխան բառաքարտը:

բ/ Տառերի ճանաչում և բառերի կազմում

Պաստառի վրա նկարված է խնձորենի: Սա կախարդական խնձորենի է, որի խնձորների վրա գրված են տառեր: Խմբով կարդում են տառերը, հետո կազմում բառեր:

գ/ Նախադասության գծապատկերի կառուցում /զույգերով աշխատանք/

Զույգերին տրվում են նախադասության գծապատկերի առանձին մասեր՝ բառեր: Սովորողները կազմում են 3 բառից կազմված նախադասություններ և տեղադրում գծապատկերում: Օրինակ՝ Պապիկը խնձորենի տնկեց:

Տղան խնձոր կերավ:
Արամը պոկեց խնձորը:
Կարենը ջրեց խնձորենին:

Կարևոր է նաև գունային տարբերակումը: Զույգերին տրվում է ժամանակ աշխատանքները համեմատելու համար: Կազմակերպել քննարկում՝ ի՞նչ նշան է դրվում նախադասության վերջում:

Նկար 34. Նախադասության գծապատկեր

I. Դադարի պահ՝ շարժողական վարժանք

Ձեռքերը վեր պարզենք, որ խնձոր պոկենք,
Տեսեք՝ քամի փչեց, ճյուղերը տարուբերեց:
Կցատկեմ, կնգվեմ, ա՛յ այն խնձորը պոկեմ:

II. Հիմնախնդրային իրավիճակ

Քաղցած մկնիկը վազեց,
Նշանները կուլ տվեց,
Մենք մկնիկին կբռնենք,

Թե հանելուկը գուշակենք:



Նկար35. Կետադրական նշաններ

1. Բարեկամնե՛ր իմ սիրելի,

Ապրում եմ ես շատ ձգված,

Ընդունեք բացականչակա՛ն

Իմ ողջույնը երկարացված:

2. Տարբեր հարցեր եմ տալիս ես բոլորին անընդհատ,

Ինչո՞ւ, ինչպե՞ս, ինչքա՞ն, որտե՞ղ, ո՞ւր և ե՞րբ:

3. Ես կանգնում եմ միշտ վերջում,

Կազմած մտքերն եմ ավարտում:

4. Աշխատում եմ անընդհատ,

Ամենուր եմ, ամեն տեղ,

Բաժանում եմ բառ ու տառ,

Կեռ քթի եմ ես նման:

5. Նշան եմ շատ կարևոր,

Ասելիքս է հիմնավոր,

Խոսքում դադար է հարկավոր՝

Բանավոր, թե գրավոր:

6. Առանց իրար շատ տխուր ենք,

Միասին ու անբաժան ենք,

Մեծի, փոքրի նշաններին

Շատ նման ենք:

7. Երեք քույրիկ իրար կողքի հայտնվեցին՝

Ուրեմն վերջ չկա խոսքին:

V. Կշռադատում

ա/Գտնել կետադրական նշանների տեղը:

ԱՂՎԵՍԸ ԵՎ ՄԿՆԻԿԸ
- Վայ մկնիկ ջան ինչու է քիթդ կեղտոտ:
- Հողն եմ փորել:
- Ինչի համար ես փորել:
-Բույն եմ պատրաստել:
- Ինչի համար ես պատրաստել:
-Որ քեզնից թաքնվեմ աղվես:

Համր բնագիր

բ/ Ասացվածքի մեկնաբանություն

ՆԱԽ՝ ՄՏԱԾԻ՛Ր, ՀԵՏՈ՝ ԽՈՍԻ՛Ր:

Համընկնու՞մ է արդյոք մեր դասի բովանդակությանը և ինչո՞ւ:

VI. Ամփոփում /հարցադրումներ/.

Ինչի՞ մասին խոսեցինք, ի՞նչ սովորեցինք, ի՞նչ կարող ենք անել:

Ստորև՝ տարբերակված մոտեցումներով առաջադրանքներ մաթեմատիկայից

1. Աշխատանք թվարկման աղյուսակով

I մակարդակ - Անվանել առաջին և երկրորդ դասերի կարգերը:

II մակարդակ - Աղյուսակի համապատասխան գրպանիկներում տեղադրել թվերը:

III մակարդակ - Գտնել կարգային միավորը ըստ քարտերի վրա գրված առաջադրանքների:

Միավորների կարգի միավորը ամենափոքր միանիշ թիվն է:	Տասնյակների կարգի միավորը ամենամեծ միանիշ թիվն է:
Հարյուրյակների կարգի միավորը ամենամեծ միանիշ թվից 3 անգամ փոքր թիվն է:	Տասհազարյակների կարգի միավորը ամենափոքր երկնիշ թվից փոքր է 2 անգամ:
Հազարյակների կարգի միավորը 4-ի կրկնապատիկն է:	Հարյուրհազարյակների կարգի միավորը ամենափոքր երկնիշ թվին նախորդող թիվն է:

Հազարյակների դաս		**Միավորների դաս**			**Թիվը**
Տասհազարյակ V	**Հազարյակ IV**	**Հարյուրյակ III**	**Տասնյակ II**	**Միավոր I**	

Տարբերակված առաջադրանք

I մակարդակ

- Կարդալ ստացված թիվը՝ 958 391:
- Մատնանշել կարգային միավորները:
- Անվանել տարբեր կարգերում գրված միևնույն թվանշանը:

II մակարդակ

- Ի՞նչ է ցույց տալիս աղյուսակի յուրաքանչյուր գրպանիկում տեղադրված թվանշանը:
  - 1-ը ցույց է տալիս, որ առաջին կարգում կա 1 կարգային միավոր՝ **1 միավոր**:
  - 9-ը ցույց է տալիս, որ երկրորդ կարգում կա 9 կարգային միավոր՝ **9 տասնյակ**:
  - 3-ը ցույց է տալիս, որ երրորդ կարգում կա 3 կարգային միավոր՝ **3 հարյուրյակ**:

- 8-ը ցույց է տալիս, որ չորրորդ կարգում կա 8 կարգային միավոր՝ **8 հազարյակ**:
- 5-ը ցույց է տալիս, որ հինգերորդ կարգում կա 5 կարգային միավոր՝ **5 տասհազարյակ**:
- 9-ը ցույց է տալիս, որ վեցերորդ կարգում կա 9 կարգային միավոր՝ **9 հարյուրհազարյակ**:

III մակարդակ

- Գտնել թվի գրության կրկնվող թվանշանը, որոշել, թե որ կարգերում է գրված:
- Մեկնաբանել, թե ինչ է ցույց տալիս 9 թվանշանը տասնյակների և հարյուրհազարյակների կարգում:
- Ի՞նչ թիվ կարող է լինել յուրաքանչյուր կարգում և ինչո՞ւ: /միանիշ/
- Այսպիսով՝ ի՞նչ է ցույց տալիս թվի գրության յուրաքանչյուր թվանշան:

2. Արան ունի 780 դրամ, իսկ Հայկը՝ 140 դրամով պակաս: Կարենն ունի այնքան դրամ, որքան Հայկն ու Արան միասին: Կարո՞ղ են արդյոք նրանք միասին գնել Հ. Թումանյանի «Հեքիաթներ» և Մ. Դյուշարի «Եկեք ստեղծենք մեծ արվեստ» գրքերը, որոնցից յուրաքանչյուրն արժե 2800 դրամ:

Խնդիրը լուծել դերային իրավիճակ ստեղծելով:

Գրախանութում դրված են գրքերը իրենց գնային պիտակներով: Հաշվել գումարը և կատարել գնումը՝ պատասխանելով խնդրի հարցին:

2800 դրամ



2800 դրամ

Նկար 36. Խնդրի ձևավորում

I մակարդակ

- Պարզի՛ր, թե որքան գումար ունի նրանցից յուրաքանչյուրը:
- Հաշվի՛ր նրանց ունեցած ընդհանուր գումարը:

II մակարդակ

- Հաշվի՛ր նրանց ունեցած ընդհանուր գումարը:
- Հաշվի՛ր գրքերի ընդհանուր գինը և պարզի՛ր, թե տղաներն արդյո՞ք կարող են գնել այդ գրքերը:

III մակարդակ

- Իրենց ունեցած ընդհանուր գումարով քանի՞ գիրք կարող են գնել տղաները:
- Որքա՞ն գումար պետք է ավելացնեն, որպեսզի կարողանան կատարել գնումը:
-Որոշել՝ ո՞ր գիրքն է ավելի առաջնահերթ և գնել այն:

3. Խաղ՝ Զարգացրու՛ ուշադրությունդ և հիշողությունդ:

Ստեղծել մեծադիր պաստառ և հրահանգների թերթիկներ: Քաշել թերթիկները և կատարել հրահանգները. հաղթում է առաջադրանքը ամենաարագ կատարող սովորողը (կամ խումբը, եթե աշխատանքը կազմակերպվում է խմբերով):

Աղյուսակ

9	19	5	18	10	2	13	4
14	3	22	24	7	15	11	20
12	1	23	6	17	16	8	21
Ե	Ա	Մ	Ն	Զ	Ի	Յ	ՈՒ
Ա	Ր	Ա	Հ	Մ	Ս	Հ	Շ
Ա	Ս	Ր	Ե	Ա	Տ	Ք	Ծ

Տարբերակված առաջադրանք

Առաջին աղյուսակի կարմիր թվերը կարդա աճման կարգով և փորձիր գրել հիշողությամբ:
Առաջին աղյուսակի կարմիր թվերը կարդա նվազման կարգով և փորձիր գրել հիշողությամբ:
Գրիր 2-ին պատիկ թվերը:
Գրիր զույգ թվերը:
Առաջին աղյուսակի սև թվերը կարդա աճման կարգով և փորձիր գրել հիշողությամբ:
Առաջին աղյուսակի սև թվերը կարդա նվազման կարգով և փորձիր գրել հիշողությամբ:
Կարդա՛ ձայնավորներին համապատասխանող թվերը:
Կարդա՛ բաղաձայններին համապատասխանող թվերը:
Առաջին աղյուսակի թվերի աճման կարգով կարդա՛ երկրորդ աղյուսակի համապատասխան տառերը և ստացի՛ր նախադասություն:

3. **Բնակարանն ունի 3 ննջասենյակ: Առաջինի մակերեսը 18 մ² է: Դա երկու անգամ մեծ է երկրորդի մակերեսից: Իսկ երկրորդի մակերեսը 6 մ²–ով փոքր է երրորդի մակերեսից: Որքա՞ն է այդ բնակարանի ննջասենյակների ընդհանուր մակերեսը:**

Պատկերել ննջասենյակները ուղղանկյունների տեսքով:

I ննջասենյակ - **18 մ²**
III ննջասենյակ - **9 + 6 = 15 մ²**
II ննջասենյակ - **18 : 2 = 9 մ²**

I մակարդակ

- Ուղղանկյուններում լրացնել տվյալներն ու հաշվել ննջասենյակների մակերեսները:

II մակարդակ

- Կազմել արտահայտություն և հաշվել բնակարանի ննջասենյակների ընդհանուր մակերեսները:

III մակարդակ

- Ըստ խնդրի տվյալների որոշել, թե ինչքան կարող են լինել ննջասենյակների երկարություններն ու լայնությունները:
- Ո՞ր ննջասենյակը կունենա քառակուսու ձև:
- Ձևակերպել ուղղանկյան և քառակուսու մակերեսների հաշվեկանոնը:

Եզրակացություն

Մարտահրավերներին ընդառաջ

- Սահմանված մասնագիտական չափանիշների մեջ ուսուցիչներից ակնկալվող կարողունակություններից մեկն էլ դասընթացների, դասերի պլանավորումը և վարումն է: Այն ներառում է առարկայական իմացությունը, ՏՀՏ ինտեգրումը, ռեսուրսների կառավարումը, սովորողների կարիքների բացահայտումը, ուսումնական գործընթացի ներառականությունն ու մասնակցայնությունը, ուսումնառության գնահատումը:
- Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցիչն իրականացնում է դասավանդած առարկայի բոլոր դասերի պլանավորումը (գրավոր) այն դասարանների համար, որտեղ իրականացնում է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը՝ համաձայն Հաստատության տվյալ ուսումնական տարվա դասաբաշխման և իր կողմից մշակված թեմատիկ պլանի. /16 փետրվարի 2023 թվականի N 216-Ն/:
- Դաս պլանավորելիս ուսուցիչը պետք է պատասխանի 4 հարցի.
  - Ի՞նչ պետք է անի ուսուցիչը դասին նախապատրաստվելիս կամ ընթացքում:
  - Ի՞նչ պետք է անեն ուսուցիչն ու սովորողները միասին:
  - Ի՞նչ պետք է անեն սովորողներն իրար հետ՝ առանց ուսուցչի միջնորդության:
  - Ի՞նչ պետք է անի յուրաքանչյուր սովորող ինքնուրույն:
- Դասի յուրաքանչյուր փուլ պետք է միտված լինի նպատակին և վերջնարդյունքներին հասնելուն:

- Փուլաբաժանումը և մեթոդների ընտրությունը կախված են դասի թեմայից, առարկայի, դասարանի առանձնահատկություններից և կատարվում են ուսուցչի ընտրությամբ:
- Դասի պլանը ուսուցչի կողմից ուսուցման ընթացքի մանրամասն նկարագրությունն է:

Այն ուսուցչի՝ տվյալ դասը վարելու համար նախատեսված ուղեցույց է: Դասի պլանը մշակվում է դասարանային ուսումնառությունը կանոնակարգելու և հստակեցնելու համար: Դասի պլանավորման միջոցով առարկայի ուսուցումը կազմակերպվում է հստակ սկզբունքներով և մեթոդաբանությամբ: Պլանավորումը ուսուցչին զերծ է պահում չմտածված գործողություններից, իրավիճակային սխալներից:

Պետք չէ վախենալ կոտրել կարծրատիպերը, ստեղծագործել, չօգտվել պատրաստի կաղապարներից: Դասի հանդեպ հետաքրքրության մարումը նմանատիպ աշխատանքների կրկնության արդյունք է: Ձանձրալի և միապաղաղ աշխատաոճի շղթան պետք է քանդել, դասի ընթացքում սովորողներին զբաղված պահելու համար նախատեսված առաջադրանքներ մշակել: Ստեղծել սեփական մեթոդական զինանոցը և անընդհատ համալրել հաջողված, հետաքրքիր և հրապուրիչ առաջադրանքներով, հնարներով, օգտագործել ուշագրավ նյութեր յուրաքանչյուր դասի ընթացքում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հանրակրթության պետական չափորոշիչ:
   from https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788
2. «ԿԶՆԱԿ» ՀԻՄՆԱԴՐԱՄի կայք: Ձևավորող գնահատման գործիքներ:
3. from https://kznakhimnadram.blogspot.com/
4. Կառուցողական կրթության հիմունքները, Ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան 2004:
5. Ժամանակակից մանկավարժական մոտեցումները գործողության մեջ, Երևան 2005:
6. Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ, Ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան:
7. Ինտեգրված թեմատիկ միավորներ, Ձեռնարկ տարրական դպրոցի ուսուցիչների պատրաստման ու վերապատրաստման համար, Երևան 2003:
8. Ընթերցանության կարողությունների ձևավորումը տարրական դասարաններում, Դասավանդման ձեռնարկ, Երևան, 2014:

Ինչպես օգնել սովորողներին հմտանալ ընթերցանության մեջ

Մայրենիի դասավանդման հիմնական նպատակներից են.

- զարգացնել սովորողների հաղորդակցական, կարդալու, գրելու կարողությունները,
- հարստացնել բառապաշարը,
- զարգացնել հոգեկան գործընթացները,
- ընդլայնել աշխարհաճանաչողական գիտելիքները:

Երբ նպատակների ձևակերպման մեջ կիրառվում է «զարգացել» բառը, ենթադրվում է, որ բոլոր սովորողները ակտիվ մասնակցություն ունեն և ներգրավվում են այնպիսի գործընթացներում, որոնք ընթանում են փորձառության ու բացահայտումների ճանապարհով, ինչը կարող ենք անվանել *զարգացնող ուսուցում*: Այն մեծացնում է սովորելու ունակությունները սովորողների մոտ՝ հաշվի առնելով սեփական գիտելիքներն ու հմտությունները: Երբ կարդալ սովորելը դիտում ենք որպես զարգացնող ուսուցում, նկատի ենք ունենում, որ բոլոր երեխաները կարդալ սովորելիս անցնում են գրեթե նույն փուլերով:

Կարդալ ու գրել սովորելու ամենավաղ շրջանը գրաճանաչության փուլն է: Այդ փուլի նպատակներն են.

- բավարարել հաղորդակցվելու պահանջմունքը,
- խթանել ինքնարտահայտվելու կարողությունը,
- զարգացնել լսելու և խոսելու հմտությունները,
- զարգացնել հնչյունային լսողությունը, կարդալու և գրելու կարողությունները,
- զարգացնել իմացական գործընթացները,
- զարգացնել համեմատելու, հակադրելու և դասակարգելու կարողությունները:

Գրաճանաչությունը կարևոր և պատասխանատու փուլ է, որը ներառում է մեծ աշխատանք: Մենք գիտակցում ենք գրաճանաչության կարևորությունը, գիտենք, որ մինչև ընթերցել սովորելը երեխաները պետք է ծանոթ լինեն գրքի կառուցվածքին, կարողանան ունկնդրել և խոսք կառուցել: Այդ շրջանում հատուկ աշխատանք է իրականացվում նկարի, տեսածի, լսածի մասին կապակցված և ամբողջական ձևով պատմելու, պատմությունից նախադասություններ առանձնացնելու, նախադասությունը բառերի վերածելու, բառը վանկերի

բաժանելու, վանկերը հնչյունների վերածելու և հնչյունն առանձնացնելու կարողությունները մշակելու ուղղությամբ:

1-ին դասարանում երեխաները սկսում են կարդալ սովորել՝ հաղթահարելով գրաճանաչության փուլը: Պետք է նշել, որ այս փուլում երեխաները սովորում են ոչ միայն կարդալ, այլև՝ հասկանալ իրենց կարդացածը: Տառեր միավորելը և բառեր կարդալը բավական բարդ գործընթաց է. շատ երեխաներ դժվարությամբ են ընթերցում: Նրանք, ովքեր հանդիպում են դժվարությունների, սկսում են պայքարել «ընթերցանության» դեմ: Առաջին դասարանում վատ ընթերցող երեխաների մեծ մասը հետագայում էլ վատ է ընթերցում: Այս հարցը պետք է մտահոգի բոլորին՝ ծնողներին, ուսուցիչներին, քանի որ դժվարությունները պետք է բացահայտել ժամանակին՝ օգնելով երեխային դառնալ հմուտ ընթերցող:

Ընթերցանության դժվարություններից մեկը դիսլեքսիան է:

Ի՞նչ է դիսլեքսիան:

Դիսլեքսիան սահմանվում է որպես կարդալ սովորելու խնդիր կամ տարիքային մակարդակի նյութը կարդալու դժվարություն՝ չնայած նորմալ ֆիզիկական կարողություններին (տեսողություն, լսողություն) և մտավոր/ինտելեկտուալ զարգացմանը: Այլ կերպ ասած՝ դիսլեքսիան այն է, երբ անձը, ով չունի հատուկ ֆիզիկական կամ մտավոր սահմանափակումներ, դժվարանում է ընթերցել տարիքին համապատասխան նյութեր: Ընթերցանության այս խնդիրները ոչ մի կապ չունեն խելքի կամ կարողության հետ:

Անկախ նրանից՝ առկա է դիսլեքսիայի գրանցված ախտորոշում, թե պարզապես գիտակցում եք, որ սովորողի համար կարդալը հեշտ չէ, կարևոր է հասկանալ, թե նա երբ և ինչու է դժվարանում կարդալ: Եթե սովորողն ի վիճակի չէ կարդալ իր դասարանի մակարդակին համապատասխան նյութը, կարողանում է դա անել միայն մեծ ջանքերի դեպքում կամ հաճախակի սխալներով, ապա, հավանաբար, դժվարությունների կհանդիպի նաև հետագայում:

Սովորողները դժվարությամբ են ընթերցում, քանի որ նրանք չունեն անհրաժեշտ հմտություններ: Կարդալու համար միայն տառեր ճանաչելը բավական չէ, պետք է նաև դրանք վերածել համապատասխան հնչյունների, այսինքն՝ տեսողական տպավորությունները խոսքային կինեսթետիկ շարժումների միջոցով վերածել համապատասխան ձայնային կամ հնչյունային տպավորությունների: Այս նկատառումով էլ մեր դպրոցներում ուսումնական գործընթացների առաջին իսկ օրերից գրաճանաչության ուսուցումը կապվում է կարդալու ուսուցման, երեխայի

մեջ կարդալու կարողությունների մշակման հետ, որովհետև այն երեխայի ընդհանուր զարգացման ու մտավոր առաջընթացի հիմնական միջոցն է:[19]

Ներկայացնում ենք դասավանդման այնպիսի մեթոդներ ու հնարներ[20], որոնք ուսուցիչները կարող են կիրառել ինչպես դասարանի բոլոր սովորողների, այնպես էլ ընթերցելու դժվարություններ ունեցող առանձին խմբերի հետ:

Համատեղ ընթերցանություն

Ի՞նչ է տալիս «Համատեղ ընթերցանություն» ռազմավարության կիրառումը սովորողներին:

- Սովորում են նոր բառեր, և բառապաշարը հարստանում է:
- Ծանոթանում են գրավոր խոսքի սկզբունքներին:
- Հետաքրքրություն է առաջանում գրքի նկատմամբ:
- Զարգանում են քննադատական մտածողությունը, եզրահանգումներ, համեմատություններ անելու, կանխատեսելու և հարցեր տալու կարողությունները:

«Համատեղ ընթերցանություն» ռազմավարության նկարագրությունը

1. Երեխաների հետ նստեք հարմարավետ մի տեղ, օրինակ՝ գորգի կամ բազմոցի վրա: Նստեք այնպես, որ երեխաները կարողանան գիրքը տեսնել:
2. Ցույց տվեք երեխաներին գրքի կազմը, ծանոթացրեք հեղինակին և ձևավորողին, կարդացեք նրանց անունները, պատմեք նրանց մասին:
3. Կարդացեք վերնագիրը և բացատրեք, որ այն պատկերացում է տալիս գրքի բովանդակության մասին:
4. Մատնացույց արեք կազմի պատկերազարդումը: Խնդրեք սովորողներին գուշակել, թե ինչ դեպքեր են նկարագրվում, կամ ինչի մասին կարող է պատմել գիրքը: Սովորողների մտքերը գրի առեք պաստառին և պատասխանի կողքին նշեք սովորողի անունը:
5. Ներկայացրեք գիրքը գրավիչ ձևով: Թերթեք այն՝ ներկայացնելով նկարների շարքը: Երեխաները կարող են պատմություն հյուսել նկարների շուրջ:

---

[19] Ա. Տեր-Գրիգորյան, Ընթերցանության մեթոդիկա, 1978, էջ 89:

[20] Ընթերցանության կարողությունների ձևավորումը տարրական դասարաններում՝ հիմնված հավաստի գնահատման վրա, Դասավանդման ձեռնարկ , 2014,« Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ:

6. Ընթերցեք գիրքը: Տեքստը կարդացեք դանդաղ, արտահայտիչ, անհրաժեշտության դեպքում ձայնին հաղորդեք խորհրդավորություն: Սահեցրեք մատը տողերի տակով ոչ շատ դանդաղ և ոչ շատ արագ:
7. Առաջին ընթերցումն ավարտելուց հետո հարցրեք սովորողներին, թե ինչ զգացողություններ ունեցան, կամ ինչի մասին էին մտածում և ինչու:
8. Վերընթերցեք: Խրախուսեք, որ սովորողները միանան ձեզ և կարդան «արձագանքելով». դուք կարդում եք մի տող, երեխաները կրկնում են ձեզանից հետո: Կարող են կարդալ նաև ձեզ հետ զուգահեռ:
9. Երեխաներին առաջարկեք, որ ընթերցելու ընթացքում որոշ գործողություններ զուգորդեն համապատասխան շարժումներով:
10. Ընթերցանության ավարտից հետո անդրադարձեք երեխաների կանխագուշակումներին, որոնք գրանցել էիք թղթի վրա: Ընթերցեք հերթով և խնդրեք մեկնաբանել, թե արդյոք իրենց կռահումները համապատասխանում են գրքի բովանդակությանը: Հնարավորություն տվեք երեխաներին հիմնավորելու իրենց կարծիքները: Առաջինը թող մեկնաբանեն և հիմնավորեն այն երեխաները, ովքեր փորձել էին գուշակել բովանդակությունը:
11. Այնուհետև երեխաների հետ քննարկեք բովանդակությունը, տվեք 3-5 բաց հարց: Օրինակ՝
    - Պատմության ո՞ր հատվածը ամենից շատ դուր եկավ և ինչո՞ւ:
    - Ո՞ր նկարը հավանեցին, ինչո՞ւ:
    - Արդյո՞ք այս պատմությունը իրենց կյանքից որևէ բան հիշեցրեց:
    - Ի՞նչ կանեն, եթե լինեն գլխավոր հերոսի փոխարեն:
12. Գիրքը բաց վիճակում թողեք դասարանում, որ երեխաները կարողանան այն ուսումնասիրել, կարդալ: Հնարավորության դեպքում տպագրեք առանձին էջեր, փոքր պարբերություններ, նկարներ՝ զույգերով կարդալու համար:

Ընթերցանության ավարտից հետո կարող եք այն օգտագործել գրաճանաչության որոշ հասկացություններ սովորեցնելու կամ ամրապնդելու համար: Սովորողների կարիքներից ելնելով՝ կարող եք տարբեր աշխատանքներ ներառել, օրինակ՝

1. Թերթիկների վրա գրել չորս կամ հինգ նախադասություն ընթերցած տեքստից և հանձնարարել սովորողներին ըստ հերթականության

դասավորել դրանք գրատախտակի եզրին կամ գրպանիկներով պաստառի վրա:

2. Նախադասությունը բաժանել մասերի և հանձնարարել դասավորել մասերն ըստ հերթականության:
3. Սովորողներին բաժանել բառաքարտեր և խնդրել, որ նրանք տեքստում գտնեն նույն բառերը:
4. Բաժանել տառեր և խնդրել սովորողներին տեղադրել դրանք այն բառերի վրա, որոնք սկսվում են այդ տառով կամ ունեն այդ տառը:
5. Բաժանել փոքրատառերով քարտեր և հանձնարարել տեքստում գտնել դրանց համապատասխան մեծատառերը կամ հակառակը:
6. Հանձնարարել մատնացույց անել նախադասության սկիզբը, առաջին բառի գրությունը և մեկնաբանել, թե ինչու է մեծատառով գրված:
7. Հանձնարարել մատնացույց անել կետադրական նշանները, բացատրել դրանց կիրառման անհրաժեշտությունը և նպատակը:
8. Բաժանել զմայլիկներ, որոնք արտահայտում են զարմանք, ծիծաղ, ժպիտ, հիացմունք, տխրություն, ձանձրույթ: Կարդալ առանձին հատվածներ և առաջարկել սովորողներին ցույց տալ այն զմայլիկը, որն արտահայտում է իր հույզը:

Զարգացնում ենք սահուն ընթերցանությունը

Կարդալու որակական հատկանիշներից մեկը սահունությունն է: «Վարժ կամ սահուն կարդալ» ասելով հիմնականում պետք է հասկանալ կարդալու այն արագությունը, որի ժամանակ ապահովվում է ընթերցածի բովանդակության ամբողջական ըմբռնումը թե՛ ընթերցողի և թե՛ լսողների կողմից, և ոչ երբեք կարդալու մեխանիկական արագությունը, որը խանգարում է կարդացածի բովանդակության, լեզվի ու արտահայտչական միջոցների ճիշտ ընկալմանը:[21]

Սահուն ընթերցանության ուսուցման համար առաջարկում ենք հետևյալ ռազմավարությունները.

1. սահուն ընթերցանության մոդելավորում,
2. բարձրաձայն ընթերցում,

[21] Ա. Տեր-Գրիգորյան, Ընթերցանության մեթոդիկա, 1978, էջ 105

3. կրկնվող ընթերցանություն:

Սահուն ընթերցանության մոդելավորում

Երեխաներից շատերը չեն պատկերացնում, թե ինչ է սահուն ընթերցանությունը: Նրանք հաճախ լսում են, որ իրենց ընկերները կարդում են կմկմալով, սխալներով: Ուստի շատ կարևոր է սահուն ընթերցանության մոդելավորումն ուսուցչի կողմից, որ նրանք լսեն ու զգան դրա առանձնահատկությունները:

1. Ընտրեք հետաքրքիր որևէ տեքստ կամ տեքստի մի հատված:
2. Սկզբում կարդացեք միատոն, միապաղաղ ձայնով:
3. Հետո կարդացեք նույն հատվածը արտահայտիչ և առոգանությամբ:
4. Նորից նույն հատվածը կարդացեք դանդաղ, անհամարձակ ձայնով, կետադրական նշանները չպահպանելով:
5. Քննարկեք երեխաների հետ, թե որ հատվածը ինչպես ընթերցվեց, ընթերցանության որ ձևը հավանեցին և ինչու:
6. Երեխաների հետ կազմեք սահուն ընթերցանության բնութագրիչների աղյուսակ, օրինակ.

Ընթերցում ենք սահուն և արտահայտիչ այնպես, որ՝

1. լսողները հասկանան, թե ինչի մասին ենք կարդում,
2. բառերը հնչեն բարձր, պարզ, հստակ,
3. նախադասություններն արտասանենք ամբողջական, առանց ընդհատումների,
4. կատարենք դադարներ և փոփոխություններ՝ շեշտադրենք, եթե կա անհրաժեշտություն,
5. հետևենք կետադրական նշանների կանոններին:

Բարձրաձայն ընթերցում

Այս ռազմավարությունը կարելի է կիրառել և՛ մեծ, և՛ փոքր խմբով, և՛ զույգերով աշխատելիս: Ընթերցանության սահունությանն ուղղված ուսուցումն ընթանում է չորս փուլով: Կարևոր է, որ փոքր խմբում ընդգրկված սովորողներն ունենան ընթերցելու նույն կարողությունները: Աշխատանքի համար անհրաժեշտ է ունենալ տեքստի օրինակներ, որոնք կարող են լինել նաև դասագրքից:

1-ին փուլ

Աշխատանք մեծ խմբում:

Ուսուցիչը՝

- սովորողների համար կարդում է տեքստը սահուն, բարձրաձայն, հատված առ հատված,
- կարդալիս «բարձրաձայն մտածում է» և սովորողների ուշադրությունը հրավիրում այն հանգամանքին, թե ինչպես է ինքը բառերը շեշտադրում և ձայնի միջոցով առանձնացնում կարևոր մտքերն ու արտահայտությունները,
- բարձրաձայն մեկնաբանում է կարդացածը և խրախուսում սովորողներին միանալ իրեն,
- սովորողների հետ կարդում է տեքստը՝ «արձագանքման» սկզբունքով, այսինքն՝ ուսուցիչը սահուն և արտահայտիչ կարդում է մի տող, ապա սովորողներն են կարդում այդ նույն տողը: Այսպես հերթով նրանք կարդում են ամբողջ տեքստը արձագանքման մեթոդով:

2-րդ փուլ

Սովորողները կազմում են զույգեր և հերթով կարդում տեքստը: Յուրաքանչյուրը կարդում է մեկ տող:

3-րդ փուլ

Սովորողները կազմում են փոքր խմբեր: Իրականացվում է խմբային ընթերցանություն, այսինքն՝ նրանք բոլորն ասես մեկ ձայնով կարդում են տեքստը (շշուկով կամ շատ ցածր ձայնով):

4-րդ փուլ

Սովորողներն աշխատում են մեծ խմբով, միասին: Ենթախմբերի մասնակիցները մեծ խմբին ներկայացնում և կարդում են տեքստի առանձին պարբերություններ: Բոլորը միասին քննարկում են, թե որ խումբը ինչպես իրականացրեց սահուն ընթերցանությունը և կատարեց բնութագրիչներում ներառված պահանջները:

Կրկնվող ընթերցանություն

Ընթերցանության դասագրքերում հաճախ են տեղ գտնում բանաստեղծություններ և չափածո ստեղծագործություններ: Այդ ստեղծագործությունների ընթերցումը բավարար հնարավորություն է տալիս իրականացնել սահուն ընթերցանության ուսումնառություն, որովհետև դրանք

հիմնականում նախատեսված են բարձրաձայն կարդալու կամ անգիր արտասանելու համար:

Խմբային ընթերցանությունը շատ հետաքրքիր է, քանի որ երեխաները բացահայտում են բանաստեղծությունների և իրենց սեփական ձայնի բեմական հնարավորությունները: Կարևոր է նշել, որ նման ընթերցանությունը հնարավորություն է տալիս բոլորի ակտիվ ներգրավվածությունն ընթերցանության մեջ՝ անկախ նրանց կարդալու և արտասանելու կարողություններից. միասին աշխատելը հետաքրքիր է:

Մեկից ավելի ձայնով խմբային ընթերցանություն

Սա զույգերով ընթերցանության կազմակերպումն է: Նախ բանաստեղծությունը կարդում է ուսուցիչը, իսկ երեխաները ռիթմիկ ծափահարում են: Ապա երեխաները զույգերով ընտրում են կարդալու համար նախատեսված իրենց հատվածը և որոշ ժամանակ տրամադրում անսխալ կարդալ վարժվելուն, որից հետո նրանք միմյանց համար կարդում են այդ հատվածները, կատարում ուղղումներ:

Գրական «երգչախումբ»

Ձայնային տարբեր տարեղանակներ (վարիացիաներ) կարող են օգտագործվել խմբային ընթերցանության ժամանակ ճիշտ այնպես, ինչպես հանդիպում է երաժշտության մեջ:

I. Տարեղանակներ՝ վարիացիաներ.

1. բարձր՝ ֆորտե,
2. ցածր՝ պիանո,
3. ցածրից դեպի բարձր՝ կրեշենդո,
4. բարձրից դեպի ցածր՝ դիկրեշենդո,
5. ընդհատ-ընդհատ վանկերով՝ ստակատո,
6. անընդհատ սահուն միասնական վանկերով՝ գլիսանդո:

II. Դասարանը կարելի է բաժանել երկու խմբի և երկձայն ընթերցել.

1. բարձր ձայներ՝ ալտեր,
2. ցածր ձայներ՝ տենորներ և բասեր:

III. Կան բանաստեղծությունների հատվածներ, որոնց ընթերցանության մեջ ընդգրկվող ընթերցողների քանակը կարող է տարբեր լինել:

1. Բոլորը միաժամանակ են կարդում՝ ունիսոն:
2. Կարդում է միայն մեկը՝ սոլո:

3. Կարդում են զույգերով՝ դուետ:
4. Տարբեր ենթախմբեր կարդում են հատված առ հատված:
5. Կարդում են փոքր խմբերը՝ միմյանց շարունակելով:

Ցուցումներ՝ ուղղված ընթերցանության հմտությունների զարգացմանը[22]

(Այս ցուցումներն օգտակար են հատկապես այն սովորողների համար, որոնք կարդալու դժվարություններ ունեն):

1. Սովորողի հետ միասին կարդալ օրական 5-10 րոպե:
2. Սովորողը պետք է բարձրաձայն ընթերցի:
3. Ուշադիր հետևել, թե ինչպես է կարդում սովորողը՝ անմիջապես ուղղումներ կատարելու համար:
4. Սովորողից պահանջել, որ ուշադիր կարդա: Սովորեցնել նրան ուշադիր նայել բառերին արագ և «անզգույշ» կարդալու փոխարեն: Յուրաքանչյուր սխալի հանդիպելիս դադար տալ և ուղղել:
5. Եթե սովորողը բաց է թողնում բառը, մատնացույց անել այն՝ վերընթերցելու համար: Եթե սովորողը կարդալիս բաց է թողնում տողերը կամ հաճախ կորցնում է տեղը, օգտագործել էջանիշ՝ դնելով այն նախադասության ներքևում:
6. Եթե սովորողը բառը սխալ է կարդում (սխալ բառ է ասում կամ տառեր է բաց թողնում), խնդրել նրան ճիշտ վերընթերցել այն: Անհրաժեշտության դեպքում մատնանշել կոնկրետ սխալը:
7. Թույլ չտալ, որ սխալներով ընթերցեն, որքան էլ «փոքր» լինեն սխալները: Համոզվել, որ սովորողն ուշադրություն է դարձնում բոլոր մանրամասներին:
8. Սովորողը պետք է ուղղի իր սխալը: Հաճախ նա տիրապետում է բառը ճիշտ կարդալու հմտությանը, բայց կա՛մ ուշադրություն չի դարձնում, կա՛մ սխալ է կռահում ու տեսնում բառը:

---

[22] Տես հոդվածը, որը գրել է Միսսես Գագենը՝ մայրը, ով սիրում է երեխաներին սովորեցնել հմուտ կարդալ՝ օգտագործելով արդյունավետ մեթոդներ: Նա նաև ընթերցանության հաջող դասավանդող է և ընթերցանության ուսուցողական ծրագրերի հեղինակ՝ *Right Track Reading Lessons* և *Back on the Right Track Reading Lessons:* Այս հոդվածի նպատակն է տեղեկատվություն տրամադրել ծնողներին և ուսուցիչներին երեխաներին կարդալ սովորեցնելու վերաբերյալ: Լրացուցիչ տեղեկություններ՝ www.righttrackreading.com կայքում ~ Հեղինակային իրավունք 2007-2008 Miscese R. Gagen

9. Պահանջել, որ կարդալիս սովորողը մատիտով կամ այլ ցուցիչով հետևի կարդացածին: Այս կինեսթետիկ շարժումը ևս մեկ անգամ օգնում է յուրաքանչյուր տառի, վանկի կամ բառի՝ ուղղակի ճիշտ ընթերցմանը: Հետևելը սովորողին օգնում է նաև կենտրոնանալ բառի վրա և կենտրոնացնել ուշադրությունը:
10. Եթե սովորողը կարդում է «վազելով», օգնել նրան սովորել համապատասխան դադար տալ նախադասությունների վերջում, շունչ քաշել: Անհրաժեշտության դեպքում դնել մատիտն այն կետին, որտեղ պետք է դադար տալ:
11. Ստուգել սովորողի ընթերցելու կարողությունները և փոփոխել ուսուցումը՝ ըստ նրա կարիքի:

Սովորում ենք հասկանալով ընթերցել: Ընթերցածի ըմբռնում

Կարդացածն ըմբռնելը, իհարկե, ընթերցանության հիմնական նպատակն է: Տարրական դասարաններում դասավանդող շատ ուսուցիչներ փաստում են, որ առավել շատ են ուշադրություն դարձրել ընթերցանության այլ որակների ուսուցմանը, քան՝ տեքստի ըմբռնմանը: Սակայն այժմ վիճակն աստիճանաբար փոխվում է:

Հասկանալով ընթերցումն այն է, երբ կարդացողը ճիշտ, լրիվ և պարզ հասկանում է իր կարդացածը, իսկ մեխանիկական է, երբ չի հասկանում բնագրում եղած բառերը, նախադասությունները կամ բնագրի հատվածների միջև եղած տրամաբանական կապերը, կարդացածի գլխավոր միտքը:[23]

Ըմբռնման կարևոր կողմերից մեկը հիմնարար գիտելիքներ ունենալն է: Կարող է տարօրինակ թվալ, բայց ինչ-որ բան հասկանալու սովորողի ունակությունը կախված է նրանից, թե որքան բան գիտի նա ուսումնասիրվող նյութից: Ըմբռնման ձևերից մեկի համաձայն, որը հայտնի է «սխեմաների տեսություն» անվանմամբ[24], որևէ բան հասկանալու համար սովորողը պետք է մեկնաբանի նոր տեղեկությունը՝ օգտվելով արդեն ունեցած գիտելիքներից, հետո ներմուծի նոր տեղեկությունը իր՝ արդեն գոյություն ունեցող մտավոր կաղապարների կամ այն համակարգի մեջ, որը կոչվում է նախնական գիտելիք:

---

[23] Ա. Տեր-Գրիգորյան, Ընթերցանության մեթոդիկա, 1978, էջ 107:

[24] Ընթերցանության կարողությունների ձևավորումը տարրական դասարաններում՝ հիմնված հավաստի գնահատման վրա, Դասավանդման ձեռնարկ , 2014,« Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ:

Հիմնարար գիտելիքները ենթադրում են նաև բառապաշարի առկայություն արդեն հայտնի իրերի և երևույթների մասին:

Սովորողների մեծ մասը տեղյակ չէ, որ ըմբռնման համար ընթերցանությունն ակտիվ բնույթի աշխատանք է: Այդ իսկ պատճառով ուսուցիչները կարող են օգնել երեխաներին մասամբ հասկանալ, թե ինչ է կատարվում իրենց մտքում: Ուսուցիչները կարող են սովորողներին ներկայացնել մտածելու ձևեր, որոնցից օգտվում են հմուտ ընթերցողները, և դրանով օգնել նրանց հասկանալու, թե ինչ է դա նշանակում: Մտածողության այս ձևերի կամ վարքագծերի մասին կարելի է գրել գրատախտակին կամ պաստառին և ցուցադրել երեխաների համար տեսանելի տեղում, ինչը կարող է օգնել սովորողներին ավելի լավ ըմբռնել, թե իրենք ինչ պիտի անեն կարդալիս կամ լսելիս:

Հասկանալով ընթերցելու դեպքում սովորողներին բնորոշ վարքագծերից են՝

- կանխատեսումներ անել,
- հարցեր տալ,
- զգացմունքներն արտահայտել,
- կապեր ստեղծել,
- տեսողական պատկերներ ստեղծել,
- շփոթեցնող հանգամանքներ նկատել,
- բառերի կիրառությանը հետևել և այլն:

Տարրական դասարանների երեխաների հետ աշխատելիս ցանկալի է կենտրոնանալ վերոնշյալ մեկ կամ երկու վարքագծի վրա՝ կիրառելով հետևյալ հնարները:

Թռուցիկ գրառումներ

Այս ռազմավարությունը կարող է օգտագործվել ընթերցանությունից առաջ՝ ակտիվացնելու նախնական գիտելիքները: Սովորողներին խնդրել, որ գրեն այն, ինչ գիտեն տվյալ թեմայի մասին որոշակի կարճ ժամանակի ընթացքում, առանց մտահոգվելու ուղղագրության կամ քերականության մասին: Խթանման փուլում ուսուցիչը կարող է առաջարկել. «Գրեք, թե ինչ գիտեք _____-ի մասին»: Գրելու դժվարություն ունեցող սովորողները կարող են բանավոր ներկայացնել: Կարևոր է հիշել, որ թռուցիկ գրառումները չեն գնահատվում, բայց կարող են պատկերացում տալ սովորողների նախնական գիտելիքների մասին:

Ընթերցանություն զույգերով

Զույգերով ընթերցումը հետապնդում է մի շարք նպատակներ: Սահուն կարդալու մեջ հմտանալու համար սովորողները կարող են զույգեր կազմել և էջի պարբերությունները հերթով կարդալ միմյանց համար:

Ըմբռնման հմտությունները զարգացնելու նպատակով ընթերցանության ժամանակ սովորողները կարող են նաև ամփոփել իրենց կարդացածը: Սովորողներից մեկը կարդում է մի պարբերություն և բարձրաձայն ամփոփում այն՝ ընկերոջը տալով հարցեր, որոնք օգնում են ըմբռնելուն և վերհիշելուն և միտված են ստուգելու, թե որքան ուշադիր է եղել ընկերը և ինչքանով է հասկացել նյութը: Երկրորդ սովորողը պատասխանում է այդ պարբերությանն առնչվող հարցերին: Հետո նրանք դերերով փոխվում են. երկրորդ սովորողն է կարդում հաջորդ պարբերությունը, այնուհետև առաջինը պատասխանում է հարցերին:

Այս մեթոդով աշխատելու համար ուսուցչից պահանջվում է որոշակի նախապատրաստական աշխատանք.

- Տեքստը բաժանել երկու մասի:
- Մասերից յուրաքանչյուրի համար կազմել երկուական հարց՝ ուղղված վերհիշելուն և ըմբռնելուն:
- Ապահովել տեքստի տարբերակներ բոլոր երեխաների համար կամ ընտրել տեքստ դասագրքից, բայց հարցերը տրամադրել երեխաներին:

Մտածիր - զույգ կազմիր - քննարկիր

Սա պարզ մեթոդական հնար է ընթերցանության դասի բոլոր փուլերի համար, որին կարող են մասնակցել բոլոր սովորողները՝ անկախ կարդալու հնարավորություններից: Սա արագ միջոց է հասնելու նրան, որ դասարանում յուրաքանչյուր սովորող մտածի կոնկրետ հարցի մասին և մտքերը կիսի ընկերոջ հետ:

Այս մեթոդի քայլերն են.

1. Ուսուցիչը տալիս է հարց, որին պետք է պատասխանեն բոլոր սովորողները: Հարցը պետք է լինի «մտածելու», այսինքն՝ տրամաբանական, կամ առնչվի երեխայի անձնական կենսափորձին: Մեկ-երկու րոպե մտածում են հարցի շուրջ:
2. Սովորողներին առաջարկվում է քննարկել սեփական պատասխանը ընկերոջ հետ: Սա կարող է տևել մեկ-երկու րոպե:

3. Ուսուցիչը երկու կամ երեք զույգի առաջարկում է ամբողջ դասարանին ներկայացնել իրենց պատասխանները:

Լավ կլինի հիշեցնել դասարանին, որ ժամանակը չի բավականացնի, եթե ամեն անգամ լսեն բոլոր զույգերին, սակայն կարող ենք հավաստիացնել նրանց, որ ամեն անգամ այս վարժությունը կատարելիս տարբեր զույգերի կլսեն:

Երբ ուսուցիչներն արդյունավետ են աշխատում բոլոր երեխաների հետ անկախ նրանց կարդալու կարողություններից և հնարավորություններից, բոլոր երեխաներն էլ աստիճանաբար սկսում են ընթերցել հաճույքով և ավելացնում են ընթերցած գրքերի քանակը:

Բառապաշարի հարստացում

Երեխաների բառապաշարը խիստ տարբեր է լինում: Իսկ երբ նրանք սովորում են կարդալ, ընթերցանությունը դառնում է բառապաշարի հիմնական աղբյուրը:

Ի՞նչ կարող են անել ուսուցիչները՝ օգնելու բոլոր սովորողներին հարստացնել իրենց բառապաշարը:

Տարրական դասարաններում անծանոթ բառերը բացատրելու հիմնական և ամենահուսալի եղանակը բառն առարկայով բացատրելն է: Ամեն անգամ, երբ հնարավորություն կա բառն իրենով, առարկայով կամ երևույթով բացատրելու, պետք չէ խուսափել այդ արդյունավետ միջոցից:

Մյուս տարածված ձևը բառը նկարով բացատրելն է: Բոլոր այն դեպքերում, երբ հնարավոր չէ ցույց տալ բառը պարզաբանող առարկան կամ երևույթը, դրանց փոխարեն կարելի է ցույց տալ համապատասխան նկարը:

Բառը բացատրելու ամենատարածված ձևերից մեկն էլ բառը բառով փոխարինելն է, երբ անծանոթ բառի դիմաց դրվում է ծանոթ ու հայտնի բառ, որի միջոցով սովորողները ոչ միայն հասնում են անծանոթ բառով արտահայտված մտքի ըմբռնմանը, այլև նոր բառեր ու բառակապակցություններ են սովորում:

Եվ բոլոր այն դեպքերում, երբ առաջին երեք ձևերով հնարավոր չէ բառիմաստը լրիվ մեկնաբանել ու հասցնել երեխաների գիտակցությանը, օգտվում ենք նկարագրելով բացատրելու եղանակից, որը չնայած քիչ է օգտագործվում դպրոցներում, սակայն բառիմաստը ճիշտ և խորը մեկնաբանելու ամենահուսալի ու օգտակար ձևերից մեկն է:[25]

[25] Ա. Տեր-Գրիգորյան, Ընթերցանության մեթոդիկա, 1978, էջ 64:

Ժամանակակից հետազոտությունների մեծ մասը ցույց է տվել, որ բառապաշարը լավագույնս հարստացվում է, երբ սովորողներն անծանոթ բառերը կամ արտահայտությունները սովորում են այն համատեքստում, որտեղ դրանք կիրառվում են: Հետազոտողները համամիտ են, որ սովորողները պետք է ակտիվորեն մասնակցեն նոր բառապաշարի կարևորությունը հասկանալու գործընթացին այնպես, որ դրանք կապված լինեն ուրիշ բառերի հետ, և նաև՝ նոր բառերն առնչվեն սովորողների սեփական փորձառությանը:[26]

Առաջարկում ենք բառապաշարի հարստացման ուսումնառության ձևեր և հնարներ, որոնք կօգնեն դասարանի բոլոր սովորողներին ակտիվ մասնակցություն ունենալու գործընթացին, եթե նույնիսկ նրանց ունակությունները, իմացական և ճանաչողական կարողությունները տարբեր են:

Բառային զրույցներ[27]

Նոր բառեր սովորեցնելու համար ուսուցիչներին առաջարկում ենք ակտիվորեն քննարկել այդ բառերը: Նման քննարկումը կարելի է իրականացնել հետևյալ վեց քայլով.

1. Կարդալ տեքստի այն տողերը, որտեղ կա այդ բառը:
2. Խնդրել սովորողներին կրկնել բառը՝ այսպիսով տալով բառի հնչութաբանական պատկերը:
3. Բացատրել բառը երեխային հասկանալի լեզվով:
4. Նույն բառն օգտագործել այլ համատեքստում:
5. Խնդրել սովորողներին ասել իրենց սեփական օրինակները:
6. Ավարտել՝ նորից խնդրելով կրկնել այն բառը, որի մասին խոսում էին, որպեսզի ամրապնդեն բառի հնչութաբանական պատկերը:

«Բառային զրույցներ» վարելը ժամանակատար է, որովհետև ուսուցիչն ուսումնասիրում է տեքստը, ընտրում այն բառերը, որոնք կարող են անհասկանալի լինել երեխաների համար, նշում այն նախադասությունները, որոնցում դրանք հանդիպում են: Նախապատրաստվում է, որպեսզի կարողանա պարզ, մատչելի և հասկանալի բացատրել անծանոթ բառերը: Նա պլանավորում է այնպիսի հարցեր, որոնք կօգնեն նոր բառերը կապել սովորողների անձնական փորձառության հետ:

---

[26] Ընթերցանության կարողությունների ձևավորումը տարրական դասարաններում՝ հիմնված հավաստի գնահատման վրա, Դասավանդման ձեռնարկ , 2014,« Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ:

[27] Ընթերցանության կարողությունների ձևավորումը տարրական դասարաններում՝ հիմնված հավաստի գնահատման վրա, Դասավանդման ձեռնարկ , 2014,« Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ, էջ 66:

Ուսուցիչը նաև մտածում է, թե ինչպես պետք է ժամանակ առ ժամանակ հիշեցնի նրանց նոր սովորած բառերը՝ դրանք օգտագործելով բանավոր կամ գրավոր խոսքում:

Ուսումնական բառային պատ[28]

Ռազմավարության կիրառման նպատակն է սովորողների ուշադրությունը կենտրոնացնել տեքստի կարևոր բառերի վրա առաջին հերթին բնագիտության, պատմության, աշխարհագրության, մաթեմատիկայի և այլ առարկաների բառապաշարում: Այս գործընթացը ենթադրում է բառերի բազմակի ցուցադրություն, խրախուսում է բառերի վերաբերյալ զրույցները, քննարկումները և դրանց միջև կապեր ստեղծում:

Քայլեր

1) Տեքստից կամ թեմայից ընտրել այն կարևոր բառերը, որոնք պետք է սովորեցնել:
2) Հանձնարարել սովորողներին անհատական աշխատանք՝ դասակարգելով այդ բառերը հետևյալ կերպ. բառեր, որոնք իրենք գիտեն և հասկանում են իմաստը, ծանոթ բառեր, որ լսել են, բայց լավ չգիտեն դրանց իմաստը, անծանոթ բառեր, որ չեն լսել կամ չգիտեն, թե դրանք ինչ են նշանակում:
3) Սովորողներն իրենց աշխատանքները համեմատում են խմբում կամ ընկերոջ աշխատանքի հետ: Եթե առանձին սովորողներ գիտեն որևէ բառի իմաստը, ապա բացատրում են մյուսներին:
4) Գրատախտակին կազմվում է ծանոթ և անծանոթ բառերի ցանկ ամբողջ դասարանի համար: Ուսուցիչը բացատրում է դրանց իմաստը:
5) Սովորողներին հանձնարարվում է գրել բառը, նրա իմաստը ցուցադրող նկարներ անել, փակցնել դրանք այնպես, որ բոլորին տեսանելի լինեն:

[28] Ընթերցանության կարողությունների ձևավորումը տարրական դասարաններում՝ հիմնված հավաստի գնահատման վրա, Դասավանդման ձեռնարկ , 2014,« Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ, էջ 67:

Հատուկ գործողություններ, որոնք կարող եք օգտագործել բառապաշարը զարգացնելու համար[29]

Բառապաշարն ընդլայնվում է ինչպես ուղղակի ուսուցմամբ, այնպես էլ պատահական բացահայտմամբ: Հնարները, որոնք կարող եք օգտագործել՝ օգնելու սովորողներին ընդլայնել իրենց բառապաշարը, ներառում են.

Ուղղակիորեն սովորեցնել նոր բառեր: Արդյունավետությունն առավելագույնի հասցնելու համար սովորողը պետք է սովորի և կիրառի նոր բառեր ինչպես առանձին նախադասություններ կազմելիս, այնպես էլ համատեքստում:

- Ընդգծել և սահմանել անծանոթ բառերի շարք նախքան սովորողի համար որևէ հատված կարդալը: Ըմբռնումը բարելավվում է, երբ նոր բառերը սովորում են նախքան տեքստը կարդալը:
- Սովորողը կարող է դադարեցնել ընթերցելը, եթե չգիտի բառի իմաստը: Դուք կարող եք բանավոր բացատրել բառը, այնուհետև սովորողին հանձնարարել վերընթերցել նախադասությունը: Երբ նրանք կարդում են, հասկանում են նոր բառերի իմաստը պարզապես համատեքստից:
- Օգնել սովորողներին օգտագործել բառարանը որպես ռեսուրս: Սովորեցնել նրանց բառարանում նոր բառեր փնտրել:
- Օգնել և խրախուսել աշակերտներին, որ գտնեն նոր և անծանոթ բառեր:
- Կրկնությունը և նոր բառերի բազմաթիվ բացահայտումները բարելավում են բառապաշարը: Այլ կերպ ասած՝ սովորեցնել նոր բառը մեկից ավելի անգամ, և թողնել, որ սովորողը մեկից ավելի անգամ կիրառի այն:
- Նոր բառ կարելի է սովորել նաև անուղղակի, պատահականորեն, բացահայտման միջոցով: Բառապաշարը կարելի է հարստացնել բանավոր զրույցների, քննարկումների միջոցով:

---

[29] Տես հոդվածը, որը գրել է Միսսես Ռ. Գագենը՝ մայրը, ով սիրում է երեխաներին սովորեցնել հմուտ կարդալ՝ օգտագործելով արդյունավետ մեթոդներ: Նա նաև ընթերցանության հաջող դասավանդող է և ընթերցանության ուսուցողական ծրագրերի հեղինակ՝ *Right Track Reading Lessons* և *Back on the Right Track Reading Lessons:* Այս հոդվածի նպատակն է ծնողներին և ուսուցիչներին երեխաներին կարդալ սովորեցնելու վերաբերյալ տեղեկատվություն տրամադրել: Լրացուցիչ տեղեկություններ գտնվում են www.righttrackreading.com կայքում ~ Հեղինակային իրավունք 2007-2008 Miscese R. Gagen

Երեխաների համար ընթերցանության զարգացմանն ուղղված լրացուցիչ տեղեկություններ, հոդվածներ և ռեսուրսներ կարելի է գտնել « Right Track Reading» կայքի «Ազատ ընթերցանության մասին» էջում:

Գրավոր խոսքի զարգացմանն ուղղված մոտեցումներ

Գրելը գրագիտության կարևոր մասն է: Այն դիտարկվում է որպես աջակցություն ընթերցանությանը: Բառեր գրելով՝ երեխաները միաժամանակ սովորում են նաև հեգել, վանկատել: Տարբեր գրույթների վրա աշխատելով՝ նրանք միաժամանակ ջանում են կարդալ և զարգացնում են ըմբռնելով ընթերցանության հմտությունները: Գրավոր ուսուցանելիս պետք է ուշադրություն դարձնել ձեռագրին և ուղղագրությանը, սակայն շեշտը պետք է դրվի մտածողության, մտքերը ձևակերպելու վրա:

«Նախադասության սկիզբ» և «Նախադասության կաղապար»[30]

Եթե սովորողը դժվարանում է գրել ամբողջական նախադասությունը, կարող է լրացնել տետրում կամ գրատախտակին իր համար գրված նախադասությունը, որտեղ բաց է թողնված մեկ կամ մի քանի բառ:

Նախադասության սկիզբը սկսնակների համար կարող է լինել այսպիսին.

Բարև: Իմ անունը _____է:

Մենք ապրում ենք_____:

Իմ ընտանիքի անդամներն են _____:

Եթե երեխան ավելի վարժ է գրում, ապա.

Ես սիրում եմ_____:

Ես չեմ սիրում_____:

Ինձ ամենից շատ դուր է գալիս_____:

Եթե երեխան հմուտ է և լավ է գրում, ապա.

Ես սիրում եմ _____, որովհետև_____:

Ես չեմ սիրում _____, որովհետև_____:

Նախադասության կաղապարը կարող է օգտագործվել դասի վերջում՝ ամփոփելու համար այն, ինչ սովորել են:

Ծառերը լինում են _____:

---

[30] Ընթերցանության կարողությունների ձևավորումը տարրական դասարաններում՝ հիմնված հավաստի գնահատման վրա, Դասավանդման ձեռնարկ , 2014,« Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ, էջ 72:

Պետք է խնամել ու պաշտպանել ծառերը, քանի որ _____:

Նախադասությունները լրացնելիս երեխաները կարող են հարցնել, թե ինչպես է գրվում այս կամ այն բառը: Ուսուցիչները կարող են որոշ բառեր գրել գրատախտակին, ցույց տալ դրանք «բառային պատին»: Եթե այդ բառերն արդեն գրված են այնտեղ, ուսուցիչը կարող է ուղղորդել երեխաներին, որ ինքնուրույն գտնեն դրանք:

Հասկանալով ընթերցելու կարողության զարգացմանը, բառապաշարի հարստացմանն ուղղված ռազմավարությունների համախումբ ներառող դասի օրինակ՝

Նյութեր

- «Առյուծն ու մուկը» առակի տեքստ՝ բաժանված առանձին հատվածների՝ յուրաքանչյուր զույգի համար առանձին հատված:
- Հատվածներին համապատասխան ձևակերպված հարցեր:
- Առյուծի մասին գրառումներ կամ փոքրիկ տեքստեր բոլոր երեխաների թվով:

Ներածություն՝ 5 րոպե

- Քննարկում դասարանում. Խնդրել սովորողներին վերհիշել, թե «Ընթերցանություն զույգերով» և «Ուսումնական բառային պատ» ռազմավարություններն ինչ քայլերով են իրականացրել նախորդ դասերին:
- Քննարկել, թե ինչու են այդ ռազմավարությունները կարևոր և ինչ են սովորեցնում:
- Ուսուցիչը կարող է որևէ երեխայի հետ զույգ կազմել և մոդելավորել աշխատանքը:

Անհատական աշխատանք՝ 5 րոպե

- Խնդրեք սովորողներին կարդալ տեքստը:
- Անհրաժեշտության դեպքում ուսուցիչը կարող է տեքստը կարդալ այն սովորողների համար, ովքեր ընթերցելու մեծ դժվարություններ ունեն, բայց կարող են մասնակցել դասին, եթե որևէ մեկը ընթերցի իրենց համար:

Աշխատանք զույգերով՝ 10 րոպե

- Յուրաքանչյուր զույգի մոտ համապատասխան համարակալված հատվածն է և առանձին թերթիկի վրա՝ հատվածի հարցերը:

Հատված առաջին

Քնած առյուծի մարմնի վրայով մի մուկ վազեց: Առյուծը զարթնեց, բռնեց նրան և, այն է, ուզում էր խժռել, բայց մուկը խնդրեց բաց թողնել իրեն՝ հավատացնելով, որ բարությամբ կհատուցի իր փրկության համար: Առյուծը քահ-քահ ծիծաղեց ու բաց թողեց նրան:

1. Ի՞նչ պատահեց առյուծին, երբ նա քնած էր:
2. Ինչո՞ւ ծիծաղեց առյուծը:

Հատված երկրորդ

Բայց, շատ չանցած, այնպես պատահեց, որ առյուծն ընկավ որսորդների ճանկը, և նրան պարանով կապեցին ծառին: Մուկը, լսելով նրա հառաչանքները, իսկույն ևեթ վազեց, կրծեց պարանը և ազատեց նրան՝ ասելով. «Այն ժամանակ դու ծիծաղեցիր ինձ վրա և կարծես թե չհավատացիր ինձ, իսկ հիմա իմացի՛ր, որ մո՛ւկն էլ կարող է երախտահատույց լինել լավության համար»:

1. Ի՞նչ դժբախտություն պատահեց առյուծին:
2. Մուկն ինչո՞ւ օգնեց առյուծին:

Քննարկում դասարանում՝ 5 րոպե

- Խնդրել երեխաներին ներկայացնել, թե ինչպես աշխատեցին խմբում, ինչ դժվարություններ և հաջողություններ ունեցան:
- Երեխաները ներկայացնում են, թե ինչ հետաքրքիր պատասխաններ լսեցին:

Բառապաշարի ընդլայնում: «Բառային զրույցներ»՝ 5 րոպե

1) Ուսուցիչը ասում է.

– Այս առակում մենք հանդիպեցինք հետևյալ մտքին. «...հիմա իմացի՛ր, որ մո՛ւկն էլ կարող է երախտահատույց լինել լավության համար»:

2) Խնդրում է բարձրաձայն արտասանել «երախտահատույց» բառը:
3) Ուսուցիչը բացատրում է բառը երեխային հասկանալի լեզվով:

– -Երբ մեկին լավություն ես անում, օգնում ես նրան որևէ հարցում, նա փորձում է այդ լավության տակից դուրս գալ, ցանկանում է ցույց տալ, որ

չի մոռացել արված լավությունը, շնորհակալ է և ինքն էլ պատրաստ է օգնության ձեռք մեկնելու, այսինքն՝ երախտահատույց է լինում:

4) Ուսուցիչը կազմում է նախադասություն.

– Ամեն օր երախտահատույց եմ լինում մայրիկիս:

5) Խնդրել երեխաներին կազմել նախադասություն:

6) Ավարտել՝ երեխաներին նորից խնդրելով կրկնել «երախտահատույց» բառը: Գրել այն «Բառային պատ» պաստառին:

Բառապաշարի հարստացում: «Ուսումնական բառային պատ»

Անհատական աշխատանք՝ 10 րոպե

- Տեքստը տրամադրել սովորողներին՝ ինքնուրույն լուռ ընթերցանության համար:

Ուսուցիչը կարող է կարդալ սովորողների այն խմբի համար, ովքեր ընթերցելու դժվարություններ ունեն:

Առյուծն ունի **յուրահատուկ** տեսք: **Արուներ**ն **էգեր**ից տարբերվում են նրանով, որ նշանակալիորեն ավելի խոշոր են և ունեն ուսերը, մեջքի մի մասը և կուրծքը ծածկող **բաշ**: Գունավորումն ունի դեղնամոխրագույնի տարբեր երանգներ: Բաշն ավելի մուգ է կաշվի գույնից, երբեմն լինում է սև: Մարմնի վրայի մազերը կարճ են, միայն պոչի ծայրին ունենում է երկար մազափունջ: Վարում է **գիշերային կյանք**: Գիշատիչ է: Առյուծներն ապրում են խմբերով, որոնց անվանում են **պռայդ**, որտեղ լինում են երկուսից ավելի արուներ և էգեր: Նրանք ամբողջ կյանքն ապրում են միասին, միմյանցից անբաժան և միասին են մեծացնում իրենց ձագերին: Առյուծն ապրում է 25-30 տարի: Որսորդության դուրս են գալիս էգերը, հիմնականում՝ գիշերը: Արուները օգնում են էգերին, եթե որսը ընձուղտ է կամ այլ խոշոր կեղանի: Էգերն իրենց մեջ ընտրում են **հզորներ**ին, **ճարպիկ**ներին և **արագավազ**ներին: Որսի ժամանակ նրանք, **դարան** մտնելով, շրջապատում են **զոհ**երին, այնուհետև արագավազները, կատարելով առաջին քայլը, վազում են զոհերի հետևից: Զոհերի ճանապարհը կտրում են ճարպիկները և, ցատկելով զոհերի վրա, բռնում նրանց վզից, իսկ առջևից հզորները սեղմելով վզից՝ խեղդամահ են անում: Բայց թե՛ արագավազները և թե՛ ճարպիկները աշխատում են ոչնչացնել զոհերին: Երկար ժամանակ առյուծներն **աֆրիկյան սավաննաներ**ի տիրակալներն են եղել: Տեղի բնակիչները հազվադեպ են կարողացել առյուծ որսալ:

Պատահել է, որ առյուծը նույնիսկ գյուղեր է **ներխուժել** և մարդկանց աչքի առաջ քարշ տվել-տարել ցլիկ կամ կով: Մարդիկ կարծել են, թե առյուծների ոչնչացումով **կճղակավոր կենդանիների** քանակը կավելանա, սակայն ստացվել է հակառակը. հիվանդությունների տարածման հետևանքով ավելի շատ կենդանիներ են ոչնչացել: Պարզվել է, որ առյուծներն առաջին հերթին ոչնչացնում են հիվանդ, թույլ կենդանիներին: Այժմ առյուծների որսն արգելված է: Հատուկ թույլտվությամբ կարելի է որսալ միայն կենդանաբանական այգիների համար:

- Խնդրել սովորողներին տեքստում ընդգծված բառերով լրացնել աղյուսակը:

Ուսուցիչը կարող է օգնել նրանց, ովքեր չեն կարողանում ինքնուրույն գրել. նրանք միասին կարող են լրացնել աղյուսակը՝ գրի առնելով սովորողի ընտրած բառերը:

Հայտնի բառեր, որոնք գիտեմ և կարող եմ բացատրել:	Ծանոթ բառեր, որոնք լսել եմ, բայց լավ չեմ կարող բացատրել:	Անծանոթ բառեր, որոնք չեմ լսել և չեմ կարող բացատրել:

Աշխատանք փոքր խմբում՝ 5 րոպե

- Սովորողներն իրենց աշխատանքները համեմատում են խմբում կամ ընկերոջ աշխատանքի հետ: Եթե առանձին սովորողներ գիտեն որևէ բառի իմաստը, ապա բացատրում են մյուսներին:
- Գրատախտակին գրում են ծանոթ և անծանոթ բառերի ցանկը ամբողջ դասարանի համար: Ուսուցիչը բացատրում է դրանց իմաստը:
- Սովորողներին հանձնարարել գրել բառը և դրա իմաստը բացատրող նկարներ անել, փակցնել այնպես, որ բոլորին տեսանելի լինի:

Եզրափակում՝ 2 րոպե

Քննարկում դասարանում

- Խնդրել երեխաներին ներկայացնել, թե ինչ ռազմավարություններ են կիրառել և ինչ են սովորել:
- Հանձնարարել տանը առյուծի և մկնիկի մասին նոր առակ հորինել ու գրել՝ սովորած բառերի ցանկից օգտվելով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Տեր-Գրիգորյան Ա., Ընթերցանության մեթոդիկա, Լույս, 1978:
2. Ընթերցանության կարողությունների ձևավորումը տարրական դասարաններում, Դասավանդման ձեռնարկ, Երևան, 2014:
3. Ընթերցանության ըմբռնման զարգացում:
   https://shs.cairn.info/revue-l-annee-psychologique1-2014-4-page-613?lang=fr
   https://righttrackreading.com/readingcomprehension.html

Դասի պլանավորումը նոր չափորոշչի և ներառականության լույսի ներքո «Իմ հայրենիքը» առարկայի դասերի օրինակով

Ուսուցման գործընթացի արդյունավետությունը մեծապես կախված է դասի ճիշտ պլանավորումից: Պատահական չէ, որ վերջին տարիներին մեծ ուշադրություն է դարձվում դասի պլանավորմանը և «Հայաստանի Հանրապետության հիմնական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկ» փաստաթղթի «4. Ուսուցիչ՝ հանրակրթական ուսումնական հաստատության» բաժնի «Աշխատանքային գործառույթները» կետի երկրորդ ենթակետում նշված է. «2) իրականացնում է դասավանդած առարկայի բոլոր դասերի պլանավորումը (գրավոր) այն դասարանների համար, որտեղ իրականացնում է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը՝ համաձայն Հաստատության տվյալ ուսումնական տարվա դասաբաշխման և իր կողմից մշակված թեմատիկ պլանի»[31]:

Դասի պլանավորումը օգնում է ուսուցչին յուրաքանչյուր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի արդյունավետ ընդգրկմանը ուսուցման գործընթացում:

Դասը պլանավորելիս ուսուցիչը պետք է պատասխանի հետևյալ հարցերին:

- Ի՞նչ պետք է անի ուսուցիչը դասին նախապատրաստվելիս կամ ընթացքում:
- Ի՞նչ պետք է անեն ուսուցիչն ու սովորողները միասին:
- Ի՞նչ պետք է անեն սովորողները միասին՝ առանց ուսուցչի միջնորդության:
- Ի՞նչ պետք է անի յուրաքանչյուր սովորող ինքնուրույն:

Դասը պլանավորելիս ուսուցիչը նախ պետք է սահմանի դասի **նպատակը** և սովորողների, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի, ակնկալվող վերջնարդյունքները: Սրանք դասի պարտադիր բաղադրիչներն են:

---

[31] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=174349
Անվանացանկ Հայաստանի Հանրապետության հիմնական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների

Դասի **նպատակը** ուսուցչի տեսլականն է, այն սահմանվում է ուսուցչի տեսանկյունից: Դասի **նպատակը սահմանելիս** ուսուցիչը պետք է ուշադրություն դարձնի հետևյալ հանգամանքներին.

- Նպատակը պետք է լինի չափելի, իրատեսական, տվյալ դասի համար հասանելի:
- Նպատակը սահմանելիս պետք է օգտագործել չափելի բայեր (Տե՛ս Բլումի աստիճանակարգ):[32]
- Նպատակը պետք է ձևակերպել՝ նշելով, թե ինչ գիտելիքների, կարողությունների, հմտությունների, դիրքորոշումների և արժեքների ձևավորմանն ու զարգացմանն է այն ուղղված:

Դասի համար սահմանված **սովորողների ակնկալվող վերջնարդյունքները** նկարագրում են, թե դասի ավարտին սովորողը ինչ պիտի իմանա, կարողանա անել և հասկանա: Վերջնարդյունքները սահմանելիս ուսուցիչը պետք է ուշադրություն դարձնի, որ դրանք լինեն.

- Հստակ ձևակերպված
- Իրատեսական և հասանելի
- Չափելի
- Շարունակական և զարգացող:

Նպատակն ու ակնկալվող վերջնարդյունքները սահմանելուց բացի, ուսուցիչը պետք է մանրամասնորեն պլանավորի նաև այն քայլերը, որ պետք է կատարեն ուսուցիչն ու սովորողները՝ դասի նպատակի իրականացման և ակնկալվող վերջնարդյունքներին հասնելու համար: Դասի **խնդիրները** բխում են նպատակից և ուղղված են վերջնարդյունքների ձևավորմանը:

Դասի պլանավորման միասնական ձևաչափ սահմանված չէ: Ուսուցիչը ինքն է մշակում իրեն հարմար ձևաչափ, սակայն դասի պլանավորման ժամանակ նա պետք է հաշվի առնի նաև հետևյալ կարևոր բաղադրիչները.

- դասին առնչվող Խաչվող հասկացությունները,

---

[32]https://herearmenia.wordpress.com/2011/06/01/%D5%A2%D5%AC%D5%B5%D5%B8%D6%82%D5%B4%D5%AB%D5%BF%D5%A1%D6%84%D5%BD%D5%B8%D5%B6%D5%B8%D5%B4%D5%AB%D5%A1%D5%B6-%D6%87-%D5%AF%D6%80%D5%A9%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%BE%D5%A5%D6%80%D5%BB%D5%B6%D5%A1/
Բլյումի տաքսոնոմիան և կրթական վերջնարդյունքները:

- դասի ժամանակ կիրառվող ռազմավարությունները. տեխնոլոգիաներ, մեթոդներ, մեթոդական հնարներ, աշխատաձևեր,
- անհրաժեշտ ուսումնադիտողական նյութերն ու տեխնիկական միջոցները,
- միջառարկայական և ներառարկայական կապերը,
- տվյալ դասանյութի կապը ՀՊՁ-ի հետ,
- գնահատումը և գնահատման ձևերը,
- հետադարձ կապը, անդրադարձը:

Ստորև ներկայացնենք «Իմ հայրենիքը» առարկայի 5-րդ դասարանի «Ես ապրում եմ լեռնային երկրում: Քարտեզն իմ գործիքն է ժամանակի և տարածության մեջ» թեմայի «Խորհրդանիշներ: Զինանշաններ և դրոշներ՝ ժամանակակից և պատմական»[33] դասանյութի երկու դասաժամի համար կազմված դասի պլանների նմուշօրինակներ:

ԴԱՍ 1.

ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐ: ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐ

Առարկա	Իմ հայրենիքը
Դասարան	5 - րդ
Կիսամյակ	1 - ին
Թեմա	**ԹԵՄԱ 1.** Ես ապրում եմ լեռնային երկրում: Քարտեզն իմ գործիքն է ժամանակի և տարածության մեջ
Դաս	Խորհրդանիշներ: Ազգային և պատմական խորհրդանիշներ
Դասի տևողությունը	1 ժամ /45 րոպե/
Նպատակը	**Ձևավորել՝** • Ազգային և պատմական խորհրդանիշների վերաբերյալ գիտելիքներ:

[33] https://escs.am/files/files/2022-12-08/a78e1ea9e42c234fb1677fa1182d6ca7.pdf

	• Ազգային և պատմական խորհրդանիշների դերը հայոց պատմության մեջ բացատրելու կարողություններ: • Ազգային և պատմական խորհրդանիշներն արժևորելու հմտություններ: • Դաստիարակել հայրենասիրություն:
Ակնկալվող վերջնարդյունքները	1. Ներկայացնի իր հայրենիքի կարևոր խորհրդանիշները[34] /ազգային և պատմական/ գիտելիք/: 2. Բացատրի ազգային և պատմական խորհրդանիշների դերը հայոց պատմության մեջ /կարողություն, հմտություն/: 3. Արժևորի ազգային և պատմական խորհրդանիշները /արժեքային համակարգ/: **Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորող** 1. Նկարով ճանաչի ազգային և պատմական մի քանի խորհրդանիշներ: 2. Թվարկի առնվազն երկու ազգային խորհրդանիշ:
Խաչվող հասկացություններ	**Ժամանակ և տարածություն** Դիտարկել խորհրդանիշների փոփոխությունները ժամանակի և տարածության մեջ:
Միջառարկայական կապեր	**Հայոց լեզու** - Հաղորդակցվելիս մայրենի լեզուն չաղավաղի օտար բառերով և արտահայտություններով, կիրառի գրագետ հայերեն խոսք:[35] **Մայրենի –** «Որտեղ ենք մենք ժամանակի և տարածության մեջ» թեմայի հետ զուգորդումներ:[36] **Երաժշտություն –** Երաժշտության ունկնդրում:[37]

[34] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=179995
[35] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=176068
[36] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=192783
[37] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=176070

Ներառարկայական կապեր	**Կերպարվեստ –** Ստեղծել աշխատանքներ՝ ըստ թեմայի, /խորհրդանիշներ/:[38] **ՏՀՏ -** Համակարգչով ցուցադրում, ունկնդրում: Սահիկաշարի պատրաստում: **Իմ հայրենիքը -** «Ես ապրում եմ լեռնային երկրում: Քարտեզն իմ գործիքն է ժամանակի և տարածության մեջ» թեմայի՝ «Ես իմ փոքր հայրենիքում, իմ համայնքը, մարզը և երկիրը» ենթաթեմայի հետ զուգորդումներ:
Անհրաժեշտ ուսումնադիտողական պարագաներ և տեխնիկական միջոցներ	**Ուսումնադիտողական պարագաներ** 1. Գլոբուս, ՀՀ քարտեզ, 2. Հայկական խորհրդանիշների նկարներ (Արարատ լեռ, Էջմիածնի Մայր տաճար, Արցախի խորհրդանիշ «Պապիկ-տատիկի հուշարձան», դուդուկ, նուռ, լավաշ, խաղող, խաչքար և այլն), 3. Հայաստանի մասին երգ /հղում/ 4. Պատմական զինանշանների նկարներ 5. Երևանի խորհրդանիշների նկարներ 6. Երևանի հիմն /հղում/ 7. Ազգային որևէ խորհրդանիշի, Երևանի զինանշանի ուրվագծային պատկեր՝ գունավորելու համար 8. ՀՀ մի քանի քաղաքների խորհրդանիշներ **Տեխնիկական միջոցներ** 9. Համակարգիչ, համացանց, լուսացրիչ
Կապը ՀՊՉ-ով սահմանված վերջնարդյունքների հետ[39]՝	**«Հ 2)** հայերեն ազատ զրուցի իրեն հետաքրքրող թեմաների մասին, կառուցի ընտրված նպատակին, խնդիրներին և

[38] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=176060

[39] https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

	լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք, **Հ15)** նկարագրի տարբեր ժամանակաշրջանների բնական միջավայրի, հասարակական, տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացումների, հայոց և համաշխարհային պատմության իրադարձությունների փոխկապակցվածությունը, **Հ 25)** գնահատի իր և ուրիշների կարծիքն ու փաստարկները, **Հ 28)** դրսևորի հետազոտելու, փորձարկելու, տարբեր գործիքակազմեր համադրելու կարողություն, **Հ 30)** գտնի և օգտագործի տեղեկույթ տարբեր աղբյուրներից, որոշի և բնութագրի աղբյուրի արժանահավատությունը և այն օգտագործելիս կատարի հղումներ, **Հ 31)** արտահայտի, հիմնավորի և պաշտպանի սեփական տեսակետը և դիրքորոշումը. **Հ 45)** ճանաչի և արժևորի իր ազգային մշակույթը, նյութական և ոչ նյութական ժառանգությունը, դրա առանձնահատկությունները և ներդրումը համաշխարհային մշակույթի մեջ»:
Դասի փուլերը և դասի ժամանակ կիրառվող ռազմավարությունները. մեթոդներ, մեթոդական հնարներ, աշխատաձևեր	**ԴԱՍԻ ՍԿԻԶԲ** Անդրադարձ նախորդ դասին: Աշխատանք գլոբուսով, աշխատանք քարտեզով: Հարց ու պատասխան: Երգի ունկնդրում և քննարկում: **ՆՈՐ ՆՅՈՒԹԻ ՀԱՂՈՐԴՈՒՄ: ՆՈՐ ՆՅՈՒԹԻ ՅՈՒՐԱՑՈՒՄ, ԱՄՐԱՊՆԴՈՒՄ:** «Մտագրոհ» [40] մեթոդական հնար: Բացատրություն: Ցուցադրում: Համախմբային քննարկում:

[40] Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, ԿԱԻ Լոռու մասնաճյուղ, ք. Վանաձոր 2008 թ.:

	ԱՆԴՐԱԴԱՐՁ «Մտագրոհ» մեթոդական հնար: «Վարդ, կոկոն, փուշ»[41] մեթոդական հնար:

Դասի ընթացքի նկարագրություն

1. ԴԱՍԻ ՍԿԻԶԲ

1.1. Համախմբային հարց ու պատասխան: Աշխատանք գլոբուսով /3 րոպե/

<u>Ուսուցչի գործողությունները</u>

Ուսուցիչը սովորողներին ցույց է տալիս գլոբուսը և ուղղում հետևյալ հարցերը.

1. Ի՞նչ է իմ ձեռքին:
2. Ճի՞շտ է արդյոք, որ գլոբուսը երկրի մոդելն է:
3. Ինչե՞ր են պատկերված գլոբուսի վրա:
4. Ի՞նչ եք կարծում՝ քանի՞ երկիր կա աշխարհում:
5. Որտե՞ղ ենք մենք ապրում: Ո՞ր երկրում ենք մենք ապրում:

ԿԱՊԿ ունեցող սովորողին հարցնում է.

- Ո՞ր երկրում ենք մենք ապրում:

Նկար 1.

<u>Սովորողների գործողությունները</u>

- Սովորողները պատասխանում են հարցերին:
- Ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների 1-ին աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողը ևս պատասխանում է հարցին:

<u>Ուսուցչի գործողությունները</u>

Ուսուցիչը գլոբուսի վրա սովորողներին ցույց է տալիս, թե որտեղ է գտնվում Հայաստանի Հանրապետությունը:

[41] https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf

1.2. Աշխատանք քարտեզով /4 րոպե/

<u>Ուսուցչի գործողությունները</u>

Ուսուցիչը քարտեզի վրա ցույց է տալիս Հայաստանի Հանրապետությունը և ուղղում հետևյալ հարցերը.

1. Եկեք հիշենք. ի՞նչ է հայրենիքը:
2. Ինչո՞ւ ենք մենք Հայաստանի մասին խոսելիս այն անվանում մեր հայրենիք:

Նկար 37. ՀՀ քարտեզ

<u>Սովորողների գործողությունները</u>

- Սովորողները պատասխանում են հարցերին և օրինակներով հիմնավորում իրենց պատասխանները:
- Ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների 1-ին աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողը պետք է կրկնի հետևյալ նախադասությունը. «Հայաստանը մեր հայրենիքն է»:

1.3. Հայրենիքի մասին երգի ունկնդրում և քննարկում /5 րոպե/

<u>Ուսուցչի գործողությունները</u>

Ուսուցիչն առաջարկում է միասին ունկնդրել Հայաստանի մասին երգերից մեկը: Ունկնդրմանը զուգահեռ ուսուցիչը սովորողներին, ներառյալ ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների 1-ին աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողին հանձնարարում է նկարել հայրենիքը խորհրդանշող մեկ պատկեր:

Ուսուցիչն իր հայեցողությամբ կարող է ընտրել այս կատարումներից մեկը կամ հայրենիքի մասին այլ երգ:

- **Շուշան Պետրոսյան «Իմ անուշ հայրենիք»**

https://www.youtube.com/watch?v=TCSBqShLKnI

- **Վարդուհի Վարդանյան «Հայաստան»**

https://www.youtube.com/watch?v=zr3hewh4Q78

- **Շուշան Պետրոսյան «Հայաստան»**

https://www.youtube.com/watch?v=ABOplD72dyU

- **Սոնա Ռուբենյան «Հայաստան»**

https://www.youtube.com/watch?v=K6zgb-qU9Io

- **Հայկո և Շուշան Պետրոսյան «Երազ իմ երկիր հայրենի»**

https://www.youtube.com/watch?v=hrHsUv5mhfY

<u>Սովորողների գործողությունները</u>

- Բոլոր սովորողները, այդ թվում նաև ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների 1-ին աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողը, նկարում են հայրենիքի որևէ խորհրդանշան:

<u>Ուսուցչի գործողությունները</u>

Ունկնդրումից հետո ուսուցիչը սովորողներին հանձնարարում է կատարել հետևյալ առաջադրանքը.

- Ներկայացրե՛ք ունկնդրման ժամանակ ձեր ունեցած զգացողությունները և բացատրե՛ք, թե ինչու հենց այդ պատկերը նկարեցիք:

<u>Սովորողների գործողությունները</u>

- Սովորողները պատասխանում են հարցերին:
- Ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների 1-ին աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողը ուսուցչի օգնությամբ ներկայացնում է իր նկարած պատկերը:

2. ՆՈՐ ՆՅՈՒԹԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ: ՆՈՐ ՆՅՈՒԹԻ ՅՈՒՐԱՑՈՒՄ, ԱՄՐԱՊՆԴՈՒՄ

2.1. «Մտագրոհ» մեթոդական հնարի կիրառում /3 րոպե/

<u>Ուսուցչի գործողությունները</u>

Ուսուցիչը գրատախտակին գծում է Մտագրոհի գծապատկերը, կենտրոնում գրում է «խորհրդանիշ» եզրույթը և փորձում պարզել սովորողների գիտելիքները

հասկացության վերաբերյալ: Ուսուցիչը գրանցում է սովորողների բոլոր մտքերն ու գաղափարները:



Նկար-գծապատկեր 38. Մտագրոհ

<u>Սովորողների գործողությունները</u>

- Սովորողներից յուրաքանչյուրն արտահայտում է սեփական տեսակետը՝ առանց որևէ մեկնաբանության:
- Ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների 1-ին աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողը կարդում է գրատախտակին գրված միտքը:

2.2. Զույգերով աշխատանք /5 րոպե/

<u>Ուսուցչի գործողությունները</u>

Ուսուցիչը գրատախտակին փակցնում է Հայկական խորհրդանիշների նկարներ (Արարատ լեռ, Էջմիածնի Մայր տաճար, Արցախի խորհրդանիշ Պապիկ-տատիկի հուշարձան, դուդուկ, նուռ, խաղող, լավաշ, խաչքար) և յուրաքանչյուր զույգին տալիս է փոքր թղթերի վրա գրված հարցեր (կամ գրում է գրատախտակին).

- Ինչե՞ր են պատկերված նկարներում:

Ի՞նչ կապ ունեն դրանք մեր հայրենիքի հետ:

Ուսուցչի հայեցողությամբ կարող են լինել նաև հայկական այլ խորհրդանիշների նկարներ (Խորհրդանիշների մի մասը, օրինակ՝ լավաշը, նուռը, խաղողը, կարող են լինել իրական, ոչ թե նկարներով):

Նկար 39. Ազգային խորհրդանիշներ

- Ուսուցիչը ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների 1-ին աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողին նախ հարցնում է, թե նկարներում պատկերվածներից ո՞րը կամ որո՞նք են իրեն ծանոթ: Այնուհետև նրան տալիս է նռան ուրվագծով պատկեր, հանձնարարում գունավորել և գրել *նուռ* ու *հայրենիք* բառերը:



Նկար 40. Առաջադրանք ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների 1-ին աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողի համար

<u>Սովորողների գործողությունները</u>

- Յուրաքանչյուր զույգ մեկ նախադասությամբ պետք է ներկայացնի խորհրդանիշների կապը մեր հայրենիքի հետ:
- Ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների 1-ին աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողը կատարում է իր հանձնարարությունը:

2.3. «Մտագրոհ» մեթոդական հնարի ամփոփում /5 րոպե/

<u>Ուսուցչի գործողությունները</u>

Ուսուցիչը հավաքում է սովորողների գրառում-պատասխանները, բարձրաձայն ընթերցում և նրանց հետ միասին ընդհանրացնում. նկարներում պատկերվածները հայկական խորհրդանիշներ են:

Այնուհետև ուսուցիչը սովորողներին հանձնարարում է նայել Մտագրոհի գծապատկերին, ուղղել, լրացնել և ամբողջացնել այն: Աշխատանքի վերջում նրանց հանձնարարում է ձևակերպել «խորհրդանիշ» հասկացության սահմանման սեփական տարբերակը՝ օգտվելով Մտագրոհի բառապաշարից:

<u>Սովորողների գործողությունները</u>

- Ուսուցչի հետ ընդհանրացնում և ամբողջացնում են Մտագրոհի գծապատկերը: Ավելացնում են նոր մտքեր, որոնք առաջացել են իրենց մոտ զույգերով աշխատանքը կատարելուց հետո և, օգտվելով Մտագրոհի բառերից, ձևակերպում են *խորհրդանիշներ* հասկացությունը:
- Ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների 1-ին աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողը պետք է նկարներին նայելով թվարկի առնվազն երկու խորհրդանիշ:

2.4. Ցուցադրում: Բացատրություն /5 րոպե/

<u>Ուսուցչի գործողությունները</u>

Ուսուցիչը ցուցադրում է պատմական տարբեր զինանշաններ ու դրոշներ և նշում, որ հայոց պատմության տարբեր ժամանակահատվածներում արքայական, նախարարական տոհմերն ունեցել են իրենց դրոշներն ու զինանշանները: Նա

ներկայացնում է տարբեր ժամանակաշրջաններում խորհրդանիշների փոփոխությունները: Այնուհետև բացատրում է դրանցից մի քանիսի խորհրդաբանությունը:

Ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների 1-ին աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողին տալիս է Բագրատունիների, Արտաշեսյանների կամ Կիլիկյան Հայաստանի զինանշանի նկար, խնդրում ուշադիր նայել և ասել, թե ինչ է պատկերված զինանշանի վրա:

Նկար 41.Պետական խորհրդանիշներ

<u>Սովորողների գործողությունները</u>

- Ներկայացնում են խորհրդանիշների փոփոխությունները ժամանակի և տարածության մեջ: Նկարագրում են իրենց առավել դուր եկած խորհրդանիշը և հիմնավորում, թե ինչու ընտրեցին այդ զինանշանը: Արժևորում են պատմական զինանշանների դերը հայոց պատմության մեջ:
- Ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների 1-ին աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողը ներկայացնում է, թե ինչ է պատկերված իր մոտ եղած զինանշանի վրա:

2.5. Ցուցադրում: Բացատրություն /6 րոպե/

<u>Ուսուցչի գործողությունները</u>

Ուսուցիչը բացատրում է, որ ինչպես նախկինում, այսօր ևս մայրաքաղաքները, բնակավայրերը, վարչական տարբեր միավորներն ունեն իրենց խորհրդանիշները:

Նկար 42. Երևան քաղաքի խորհրդանիշները

Ուսուցիչը ցույց է տալիս Երևան քաղաքի զինանշանը, դրոշը: Նա նշում է, որ Երևան մայրաքաղաքը ևս ունի իր խորհրդանիշները, և բացատրում Երևան քաղաքի խորհրդանիշների խորհրդաբանությունը: Այնուհետև միասին ունկնդրում են Երևան քաղաքի հիմնը՝ «Էրեբունի – Երևան» երգը:[42]

Ուսուցիչը սովորողներին տալիս է նմանատիպ հարցեր.

- Արդյո՞ք իրենց մարզը, քաղաքը, բնակավայրը ունեն խորհրդանիշներ:
- Ի՞նչ գիտեն իրենք այդ խորհրդանիշների մասին:
- Ի՞նչ է պատկերված դրանց վրա:
- Որտե՞ղ են իրենք տեսել դրանք:
- Ուրիշ ի՞նչ խորհրդանիշներ գիտեն:

Ուսուցիչը ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների 1-ին աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողին տալիս է Երևանի զինանշանի նկարը, խնդրում ուշադիր նայել և ասել, թե ինչ է պատկերված զինանշանի վրա:

2.6. Համախմբային քննարկում /6 րոպե/

<u>Սովորողների գործողությունները</u>

---

[42] https://www.yerevan.am/hy/symbols-of-yerevan/
Երևանի քաղաքապետարանի կայք: Երևան քաղաքի խորհրդանիշները

- Նկարագրում են իրենց մարզի, քաղաքի, բնակավայրի կամ իրենց ծանոթ որևէ խորհրդանիշ: Փորձում են բացատրել դրանց խորհրդաբանությունը:

Նկար 43. ՀՀ տարբեր քաղաքների խորհրդանիշներ

- Ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների 1-ին աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողը ներկում է Երևանի զինանշանը համապատասխան գույներով:

Նկար 44. Երևանի զինանշան

3. ԱՆԴՐԱԴԱՐՁ

«Վարդ-Փուշ-Բողբոջ» մեթոդական հնարի կիրառում /4 րոպե/

<u>Ուսուցչի գործողությունները</u>

Ուսուցիչը հանձնարարում է «Վարդ-Փուշ-Բողբոջ» մեթոդական հնարի օգնությամբ կատարել ինքնանդրադարձ վերլուծություն:

Սովորողները պետք է նշեն՝

Վարդ - Մեկ բան, որը լավ և ամբողջական յուրացրեցին:

Փուշ - Մեկ բան, որը սովորելիս դժվարության բախվեցին:

Բողբոջ - Մեկ բան, որը սովորելուց հետո նրանց գլխում նոր միտք ծագեց:

<u>Սովորողների գործողությունները</u>

- Սովորողներն անհատապես կատարում են ինքնանդրադարձ վերլուծություն «Վարդ-Փուշ-Բողբոջ» մեթոդական հնարով:
- Ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների 1-ին աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողը ընտրում և ցույց է տալիս ազգային և պատմական խորհրդանիշների նկարներ և թվարկում առնվազն երկու խորհրդանիշ:

ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

1. Ինչո՞ւ է անհրաժեշտ, որ պետություններն ունենան իրենց խորհրդանիշները: Գրել առնվազն երեք հիմնավորում:
2. Իրենց ընտրությամբ որևէ խորհրդանիշի վերաբերյալ պատրաստել մի քանի սահիկից կազմված սահիկաշար:

ԴԱՍ 2.
ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐ. ԶԻՆԱՆՇԱՆ, ԴՐՈՇ, ՕՐՀՆԵՐԳ

Առարկա	**Իմ հայրենիքը**
Դասարան	5 - րդ դասարան
Կիսամյակ	1 - ին կիսամյակ
Թեմա	**ԹԵՄԱ 1.**[43] Ես ապրում եմ լեռնային երկրում: Քարտեզն իմ գործիքն է ժամանակի և տարածության մեջ:
Դաս	ՀՀ պետական խորհրդանիշներ. ՀՀ զինանշանը, դրոշը օրհներգը
Դասի տևողությունը	1 ժամ /45 րոպե/
Նպատակը	**Ձևավորել՝** • ՀՀ պետական խորհրդանիշների՝ դրոշ, զինանշան, օրհներգ, վերաբերյալ գիտելիքներ: • ՀՀ պետական խորհրդանիշների խորհրդաբանությունը բացատրելու կարողություններ: • Ժամանակակից և պատմական խորհրդանիշները համեմատելու կարողություններ: • ՀՀ պետական խորհրդանիշների դերն արժևորելու հմտություններ: • Դաստիարակել հայրենասիրություն և հարգալից վերաբերմունք ՀՀ պետական խորհրդանիշների հանդեպ:
Ակնկալվող վերջնարդյունքները	1. Ներկայացնի իր հայրենիքի կարևոր խորհրդանիշները[44] /ՀՀ

[43] https://escs.am/files/files/2022-12-08/a78e1ea9e42c234fb1677fa1182d6ca7.pdf
[44] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=179995

	ժամանակակից պետական խորհրդանիշներ/ /գիտելիք/: 2. Բացատրի ՀՀ պետական խորհրդանիշների խորհրդաբանությունը /կարողություն, հմտություն/: 3. Համեմատի ժամանակակից և պատմական խորհրդանիշները /կարողություն, հմտություն/: 4. Հարգի և արժևորի ՀՀ պետական խորհրդանիշները /արժեքային համակարգ/: **Ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների 1-ին աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորող՝** 1. Նկարով ճանաչի ՀՀ խորհրդանիշները՝ դրոշ, զինանշան: 2. Թվարկի ՀՀ դրոշի գույները: 3. Նկարով ճանաչի ՀՀ զինանշանը: 4. Նշի, որ ՀՀ զինանշանի կենտրոնում պատկերված է Արարատ լեռը (կարող է նշել նաև զինանշանի վրայի այլ պատկերներ) և թվարկի ՀՀ զինանշանի գույները: 5. Անվանի ՀՀ օրհներգի վերնագիրը:

Խաչվող հասկացություններ	**Ժամանակ և տարածություն** Դիտարկել խորհրդանիշների փոփոխությունները ժամանակի և տարածության մեջ:
Միջառարկայական կապեր **Ներառարկայական կապեր**	**Հայոց լեզու** - Հաղորդակցվելիս մայրենի լեզուն չաղավաղի օտար բառերով և արտահայտություններով, կիրառի գրագետ հայերեն խոսք:[45] **Մայրենի** - «Որտե՞ղ ենք մենք ժամանակի և տարածության մեջ» թեմայի հետ առնչություններ: **Երաժշտություն** - Երաժշտության ունկնդրում[46] **Կերպարվեստ** - Ստեղծել աշխատանքներ՝ ըստ թեմայի, /խորհրդանիշներ/[47] **ՏՀՏ** - Տեսաֆիլմերի դիտում, ունկնդրում **Իմ հայրենիքը** - «Ես ապրում եմ լեռնային երկրում: Քարտեզն իմ գործիքն է ժամանակի և տարածության մեջ»

[45] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=176068
[46] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=176070
[47] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=176060

	թեմայի՝«Ես իմ փոքր հայրենիքում. իմ համայնքը, մարզը և երկիրը» ենթաթեմայի հետ առնչություններ:
Անհրաժեշտ ուսումնադիտողական պարագաներ և տեխնիկական միջոցներ	**Ուսումնադիտողական պարագաներ** - ՀՀ քարտեզ - ՀՀ պետական խորհրդանիշների նկարներ՝ դրոշ, զինանշան - Զինանշանի և օրհներգի հեղինակների դիմանկարներ - ՀՀ օրհներգի հղում - Տեսաֆիլմերի հղումներ **Տեխնիկական միջոցներ** - Համակարգիչ, համացանց, լուսացրիչ
Կապը ՀՊՉ-ով սահմանված վերջնարդյունքների հետ[48]	**«Հ 2)** հայերեն ազատ զրուցի իրեն հետաքրքրող թեմաների մասին, կառուցի ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք, **Հ 25)** գնահատի իր և ուրիշների կարծիքն ու փաստարկները, **Հ 28)** դրսևորի հետազոտելու, փորձարկելու, տարբեր գործիքակազմեր համադրելու կարողություն, **Հ 30)** գտնի և օգտագործի տեղեկույթ տարբեր աղբյուրներից, որոշի և բնութագրի աղբյուրի արժանահավատությունը և այն օգտագործելիս կատարի հղումներ,

[48] https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

	Հ 31) արտահայտի, հիմնավորի և պաշտպանի սեփական տեսակետը և դիրքորոշումը. **Հ 45)** ճանաչի և արժևորի իր ազգային մշակույթը, նյութական և ոչ նյութական ժառանգությունը, դրա առանձնահատկությունները և ներդրումը համաշխարհային մշակույթի մեջ»:
Դասի փուլերը և դասի ժամանակ կիրառվող ռազմավարություններ. մեթոդներ, մեթոդական հնարներ, աշխատաձևեր	**ԴԱՍԻ ՍԿԻԶԲ** Անդրադարձ նախորդ դասին: Աշխատանք քարտեզով: Բացատրություն: Հարց ու պատասխան: «ԳՈՒՍ» մեթոդական հնար:[49] **ՆՈՐ ՆՅՈՒԹԻ ՀԱՂՈՐԴՈՒՄ: ՆՈՐ ՆՅՈՒԹԻ ՅՈՒՐԱՑՈՒՄ, ԱՄՐԱՊՆԴՈՒՄ** Բացատրություն: Ցուցադրում: Հարց ու պատասխան: Տեսանյութի դիտում և քննարկում:[50] Ունկնդրում և քննարկում: Զույգերով աշխատանք: **ԱՆԴՐԱԴԱՐՁ** «ԳՈՒՍ» մեթոդական հնար: **ԳՆԱՀԱՏՈՒՄ** Ինքնագնահատման անիվ:[51]

[49] *Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, ԿԱԻ Լոռու մասնաճյուղ, ք. Վանաձոր 2008 թ.:*

[50] *Հ.Հ.Մարգարյան, Ֆիլմերի, տեսանյութերի դիտումն ու քննարկումը պատմության դասաժամերին «Ոտքի կանգնելու կամքը» ֆիլմի օրինակով.- Եր.: Տիգրան Մեծ, 2023.- 152 էջ:*

[51] https://kznakhimnadram.blogspot.com/ «ԿԶՆԱԿ» ՀԻՄՆԱԴՐԱՄի կայք: «Ձևավորող գնահատման *գործիքներ (ինքնագնահատում)»:*

Դասի ընթացքի նկարագրություն

1. ԴԱՍԻ ՍԿԻԶԲ

1.1. Անդրադարձ նախորդ դասին: Համախմբային քննարկում /3 րոպե/

Տնային առաջադրանքների ստուգում:

Սովորողները ներկայացնում են իրենց հիմնավորումները պետությունների՝ խորհրդանիշներ ունենալու վերաբերյալ: Ուսուցիչը սովորողների հետ միասին քննարկում և ընդհանրացնում է սովորողների նշած հիմնավորումները:

1.2. Աշխատանք քարտեզով: Բացատրություն: Հարց ու պատասխան /2 րոպե/

<u>Ուսուցչի գործողությունները</u>

Ուսուցիչը քարտեզի վրա ցույց է տալիս Հայաստանի Հանրապետությունը, նշում, որ բացի ազգային խորհրդանիշներից, երկրներն ունեն նաև պետական խորհրդանիշներ, և յուրաքանչյուր երկրի քաղաքացի պետք է ճանաչի իր երկրի պետական խորհրդանիշները:

Հայաստանը ևս, որպես պետություն, ունի իր պետական խորհրդանիշները: Ուսուցիչը սովորողներին տալիս է հետևյալ հարցը.

- Հայաստանի Հանրապետության պետական ի՞նչ խորհրդանիշներ գիտեք:

<u>Սովորողների գործողությունները</u>

- Թվարկում են իրենց ծանոթ ՀՀ պետական խորհրդանիշները:
- Ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների 1-ին աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողը ևս փորձում է պատասխանել հարցին:

1.3. «ԳՈՒՍ» մեթոդական հնարի կիրառում /2 րոպե/

<u>Ուսուցչի գործողությունները</u>

Ուսուցիչը ցույց է տալիս ՀՀ դրոշը և զինանշանը (համակարգչով կամ նկարները փակցնելով գրատախտակին):

Նկար 45. ՀՀ պետական խորհրդանիշներ

Այնուհետև սովորողներին հանձնարարում է «ԳՈՒՍ» մեթոդով լրացնել աղյուսակի առաջին երկու հատվածները (Աղյուսակը գծում է գրատախտակին կամ ցույց է տալիս համակարգչով):

Ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների 1-ին աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողին ցույց է տալիս ՀՀ դրոշի և զինանշանի նկարները և հարցնում՝ տրված պատկերներից որևէ մեկը ծանո՞թ է իրեն, որտե՞ղ է այն տեսել:

<u>Սովորողների գործողությունները</u>

- Սովորողներն իրենց տետրերում լրացնում են աղյուսակի առաջին երկու հատվածները: Երրորդ հատվածը պետք է լրացնեն անդրադարձի փուլում:

Աղյուսակ ԳՈՒՍ

Դրոշ, զինանշան, օրհներգ		
Գիտեմ	**Ուզում եմ իմանալ**	**Սովորեցի**

Ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների 1-ին աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողը ընտրում է իրեն ծանոթ պատկերները և ուսուցչի օգնությամբ պատասխանում իրեն տրված հարցին:

2. ՆՈՐ ՆՅՈՒԹԻ ՀԱՂՈՐԴՈՒՄ, ՅՈՒՐԱՑՈՒՄ, ԱՄՐԱՊՆԴՈՒՄ

ՀՀ պետական խորհրդանիշներ[52]
ՀՀ դրոշը

2.1. Ցուցադրում: Բացատրություն: Հարց ու պատասխան/2 րոպե/

<u>Ուսուցչի գործողությունները</u>

Ուսուցիչը ցույց է տալիս ՀՀ դրոշը, բացատրում դրոշի գույների խորհրդաբանությունը և սովորողներին տալիս հետևյալ հարցերը.

- Ի՞նչ գույներ ունի ՀՀ դրոշը:
- Ե՞րբ, որտե՞ղ են տեսել ՀՀ դրոշը:
- Կա՞ արդյոք իրենց տանը ՀՀ դրոշ:
- Ի՞նչ գիտեն ՀՀ դրոշի գույների խորհրդաբանության մասին:

Ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների 1-ին աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողին տալիս է ՀՀ դրոշի նկար և հարցնում.

- Ի՞նչ գույներ ունի ՀՀ դրոշը:

<u>Սովորողների գործողությունները</u>

- Սովորողները պատասխանում են հարցերին:
- Ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների 1-ին աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողը, նայելով նկարին, թվարկում է ՀՀ դրոշի գույները:

2.2. ՀՀ պետական դրոշի վերաբերյալ տեսանյութի[53] դիտում և քննարկում /4 րոպե/

[52] https://www.president.am/hy/state-symbols/
ՀՀ Նախագահի կայք: Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանշանները

[53] https://www.youtube.com/watch?v=0mRvHJZENPU
ՀԱՅԿԱՇԽԱՐՀ Armlands

<u>Սովորողների գործողությունները</u>

- Դիտում են տեսանյութը, ըստ անհրաժեշտության կատարում նշումներ:
- Ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների 1-ին աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողը ևս դիտում է տեսանյութը:

2.3. Զույգերով քննարկում /3 րոպե/

<u>Սովորողների գործողությունները</u>

- Սովորողները զույգերով վերհիշում և միմյանց ներկայացնում են ՀՀ դրոշի գույները և դրանց խորհրդաբանությունը:
- Ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների 1-ին աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողը ևս աշխատում է զույգով՝ ուսուցչի կամ զույգով աշխատանքն ավարտած որևէ այլ սովորողի հետ, և թվարկում ՀՀ դրոշի գույները: Օրինակին նայելով՝ ներկում է ՀՀ դրոշը:

Նկար 46. Առաջադրանք կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի համար

ՀՀ զինանշանը

2.4. Ցուցադրում: Բացատրություն: Հարց ու պատասխան/3 րոպե/

<u>Ուսուցչի գործողությունները</u>

Ուսուցիչը ցույց է տալիս ՀՀ զինանշանը, ներկայացնում զինանշանի վրայի պատկերները, զինանշանի հեղինակներին: Բացատրությանը զուգահեռ ցույց է տալիս Ալեքսանդր Թամանյանի և Հակոբ Կոջոյանի դիմանկարները և սովողներին ուղղում հետևյալ հարցերը.

- Ի՞նչ գիտեն ՀՀ զինանշանի մասին
- Որտե՞ղ են տեսել ՀՀ զինանշանը:

Ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների 1-ին աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողին տալիս է ՀՀ զինանշանի նկար և հարցնում.

- Ի՞նչ գույներ կան ՀՀ զինանշանի վրա:



Նկար 47. Ալեքսանդր Թամանյան



Նկար 48. Հակոբ Կոջոյան

2.5.ՀՀ պետական զինանշանի վերաբերյալ տեսանյութի[54] դիտում և քննարկում /4 րոպե/

https://www.youtube.com/watch?v=k2Ing-Krudk

<u>Սովորողների գործողությունները</u>

- Դիտում են տեսանյութը և ըստ անհրաժեշտության կատարում նշումներ:
- Ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների 1-ին աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողը ևս դիտում է տեսանյութը:

2.6. Զույգերով քննարկում /4 րոպե/

<u>Սովորողների գործողությունները</u>

- Սովորողները զույգերով քննարկում են տեսանյութը՝ ուղղորդվելով ուսուցչի կողմից կազմված հետևյալ հարցերով.
  - Ի՞նչ պատկերներ կան ՀՀ զինանշանի վրա:
  - Ի՞նչ խորհրդաբանություն ունեն ՀՀ զինանշանի վրայի պատկերները:

---

[54] https://www.youtube.com/watch?v=k2Ing-Krudk
ՀԱՅԿԱՇԽԱՐՀ Armlands

- Որո՞նք են ՀՀ զինանշանի գույները:
- Ովքե՞ր են ՀՀ զինանշանի հեղինակները:

- Ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների 1-ին աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողը ևս աշխատում է զույգով՝ ուսուցչի կամ այլ սովորողի հետ զույգով աշխատանքն ավարտած որևէ սովորողի հետ: Նայելով զինանշանին՝ թվարկում է ՀՀ զինանշանի գույները, ցույց է տալիս Արարատ լեռը, թվարկում մեկ-երկու պատկեր և փորձում նկարել լեռը:

ՀՀ օրհներգը

2.7. Ցուցադրում: Բացատրություն: Հարց ու պատասխան /4 րոպե/

<u>Ուսուցչի գործողությունները</u>

Ուսուցիչը բացատրում է.

- Ի՞նչ է օրհներգը:
- Ո՞րն է ՀՀ պետական օրհներգը:
- Ո՞ւմ և ո՞ր ստեղծագործության հիման վրա է ստեղծվել:
- Ո՞վ է երաժշտության հեղինակը:

Բացատրությանը զուգահեռ ցույց է տալիս Մ. Նալբանդյանի և Բ. Կանաչյանի դիմանկարները և ուղղում հետևյալ հարցերը.

- Լսե՞լ են արդյոք ՀՀ օրհներգը:
- Ե՞րբ է կատարվում ՀՀ օրհներգը:

Նկար 49. Միքայել Նալբանդյան

Նկար 50. Բարսեղ Կանաչյան

<u>Սովորողների գործողությունները</u>

Կատարում են նշումներ:

2.8. ՀՀ օրհներգի ունկնդրում և քննարկում /4 րոպե/

<u>Ուսուցչի գործողությունները</u>

Մինչև օրհներգի ունկնդրումը ուսուցիչը նշում է, որ օրհներգը լսելիս մարդիկ ոտքի են կանգնում, աջ ձեռքը դնում սրտին:

<u>Սովորողների գործողությունները</u>

Բոլոր սովորողները, այդ թվում՝ ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների 1-ին աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողը, աջ ձեռքը սրտին՝ լսում են օրհներգը:

<u>Ուսուցչի գործողությունները</u>

Ունկնդրումից հետո ուսուցիչը տալիս է հետևյալ հարցերը.

- Ի՞նչ է ՀՀ օրհներգի վերնագիրը:
- Ի՞նչ զգացողություններ ունեցան ՀՀ օրհներգը լսելիս:

<u>Սովորողների գործողությունները</u>

- Մեկնաբանում են իրենց զգացողությունները:
- Ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների 1-ին աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողը ևս, ուսուցչի օգնությամբ, մեկ-երկու բառով ներկայացնում է իր զգացողությունները և անվանում ՀՀ օրհներգի վերնագիրը:

2.9. Համախմբային քննարկում /6 րոպե/

<u>Ուսուցչի գործողությունները</u>

Ուսուցիչը հանձնարարում է քննարկել հետևյալ հարցերը.

- Ինչո՞ւ է անհրաժեշտ իմանալ մեր երկրի պետական խորհրդանիշները:
- Ինչո՞ւ և ինչպե՞ս պետք է հարգալից վերաբերմունք ցուցաբերել պետության խորհրդանիշների նկատմամբ:

Ուսուցիչը սովորողների պատասխանները գրում է գրատախտակին:

<u>Սովորողների գործողությունները</u>

- Անհատապես արտահայտում են տեսակետներ և հիմնավորում իրենց պատասխանները:
- Ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների 1-ին աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողը ուսուցչի օգնությամբ կրկնում է, որ բոլոր քաղաքացիները պետք է հարգեն ՀՀ պետական խորհրդանիշները:

Ինքնագնահատման անիվ



Նկար-գծապատկեր 51.

3. ԱՆԴՐԱԴԱՐՁ

«ԳՈՒՍ» աղյուսակի ամբողջացում /2 րոպե/

<u>Ուսուցչի գործողությունները</u>

Ուսուցիչը հանձնարարում է լրացնել «ԳՈՒՍ» աղյուսակի երրորդ սյունակը: Սովորողները սյունակը պետք է լրացնեն՝ հետևելով հետևյալ պահանջներին:

- Նշել 3 հասկացություն, որ սովորեցին:
- Գրել դասի հիմնական գաղափարն արտահայտող 1 նախադասություն:

<u>Սովորողների գործողությունները</u>

- Սովորողները անհատապես լրացնում են աղյուսակի երրորդ սյունակը:
- Ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների 1-ին աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողը փորձում է նշել, թե ինչ է սովորել ինքը դասի ընթացքում. նկարներով ցույց է տալի ՀՀ դրոշը և ՀՀ զինանշանը, թվարկում դրոշի

գույները, զինանշանի վրա ցույց է տալիս Արարատ լեռը և մի քանի պատկեր, գրում կամ անվանում է ՀՀ օրհներգի վերնագիրը:

<u>Ուսուցչի գործողությունները</u>

Սովորողների հետ համատեղ ամփոփում և ընդհանրացնում է նրանց կողմից դասակարգված տեղեկատվությունը:

4. ԳՆԱՀԱՏՈՒՄ

Գնահատում Ինքնագնահատման անվի միջոցով /2 րոպե/

<u>Ուսուցչի գործողությունները</u>

Սովորողներին հանձնարարում է կատարել գնահատում Ինքնագնահատման անվի միջոցով:

<u>Սովորողների գործողությունները</u>

- Սովորողները Ինքնագնահատման անվի օգնությամբ տրված չափանիշներով կատարում են գնահատում՝ յուրաքանչյուր գույնի մեջ գրելով «Շատ լավ», «Լավ», «Ոչ այնքան լավ», «Վատ» բառերից մեկը.
    1. հրահանգներին հետևելը, կանոնները պահպանելը,
    2. ձեռք բերած գիտելիքները,
    3. ձեռք բերած կարողությունները,
    4. ծագող խնդիրների և դժվարությունների հաղթահարումը,
    5. դասընկերների հետ համագործակցությունը,
    6. զույգով աշխատանքում սեփական ներդրումը,
    7. հաղորդակցության որակը,
    8. տրված ռեսուրսներն օգտագործելու կարողությունը:
- Ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների 1-ին աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողը ուսուցչի օգնությամբ փորձում է պատասխանել ինքնագնահատման հետևյալ երկու կետերին համապատասխանող հարցերին.
    - ձեռք բերած գիտելիքները,
    - դասընկերների հետ համագործակցությունը:

Ինքնագնահատման գործիքի կիրառման առանձնահատկություններին կարող եք ծանոթանալ «ԿՁՆԱԿ» հիմնադրամի կայքում տեղադրված «Ձևավորող

գնահատման գործիքներ (ինքնագնահատում)» նյութի միջոցով:[55]

ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Օգտվելով համացանցից՝ սեփական ընտրությամբ համեմատել պատմական և ժամանակակից որևէ խորհրդանշան:

Դասերի պլաններում ներառված հիմնական մեթոդների և մեթոդական հնարների կիրառման առանձնահատկությունները

Ստորև ներկայացնում ենք «Խորհրդանիշներ: Զինանշաններ և դրոշներ՝ ժամանակակից և պատմական» դասանյութի երկու ժամերի համար կազմված օրվա դասերի պլաններում մեր կողմից ներառված հիմնական մեթոդների և մեթոդական հնարների նկարագրությունն ու կիրառման առանձնահատկու-թյունները, որոնցից օգտվելով՝ ուսուցիչը առավել արդյունավետ կիրականացնի մեր կողմից պլանավորված դասերը:

1. «Տեսանյութերի դիտում, երգերի, երաժշտության ունկնդրում և քննարկում»

Ընդհանրապես ՏՀՏ միջոցների կիրառումը դասերի ընթացքում էականորեն բարձրանում է ուսուցման գործընթացի արդյունավետությունը: Տեսանյութերի, ֆիլմերի դիտումը, երգերի ունկնդրումն ու քննարկումը այդ միջոցներից են:

«Տեսանյութերի դիտում, երգերի ունկնդրում և քննարկում» մեթոդի նպատակային կիրառումը ոչ միայն նպաստում է առարկայական չափորոշիչներով սահմանված ծրագրային բովանդակության համակարգված յուրացմանը, զարգացնում սովորողների երևակայությունը, քննադատական և ստեղծագործական մտածողությունը, հաղորդակցման հմտությունները, այլև էապես նպաստում սովորողների՝ տարբեր իրավիճակներում ինքնադրսևորվելու, գործելու, գնահատելու, թիմային աշխատանքի, ինչպես նաև Հանրակրթության պետական նոր չափորոշչով սահմանված սոցիալական բազմաթիվ կարողությունների և հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը:

---

[55] https://kznakhimnadram.blogspot.com/
«ԿԶՆԱԿ» ՀԻՄՆԱԴՐԱՄի կայք: «Ձևավորող գնահատման գործիքներ (ինքնագնահատում)»

Տեսանյութերի դիտում, երգերի ունկնդրում և քննարկում» մեթոդի կիրառման ժամանակ էականորեն բարձրանում է նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսուցման արդյունավետությունը: Այն ապահովում է խոսքի և պատկերի միջև կապը՝ նպաստելով, որ ընկալումն ու մտածողությունը գործեն միասնաբար:

Մեթոդի կիրառման առանձնահատկությունները և ուսուցչի կողմից իրականացվող աշխատանքները

«Տեսանյութերի և ֆիլմերի դիտում» մեթոդի կիրառման համար դասի պլանավորումն ուսուցչից պահանջում է լուրջ նախապատրաստական աշխատանք: Այս մեթոդի կիրառմամբ դասի պլանավորման ժամանակ ուսուցչի կողմից պետք է հաշվի առնվեն հետևյալ պահանջները.

- **Տեսանյութի, ֆիլմի, երգի, երաժշտության ընտրություն**
  - Տեսանյութի բովանդակությունը պետք է համապատասխանի սովորողների անհատական, տարիքային և հոգեբանական առանձնահատկություններին:
  - Տեսանյութի բովանդակությունը պետք է համապատասխանի ծրագրային նյութին կամ լրացնի դրա բովանդակությունը:
- **Տեսանյութի կամ ֆիլմի ցուցադրության, երգի կամ երաժշտության ունկնդրման նպատակի ու ակնկալվող վերջնարդյունքների սահմանում**

Ուսուցանվող թեմայի վերաբերյալ կարևոր փաստեր, տեղեկություններ հաղորդելուց բացի, պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, թե սովորողների ինչ կարողություններ և հմտություններ կարող են զարգանալ տեսանյութի կամ ֆիլմի դիտման, երգի կամ երաժշտության ունկնդրման և քննարկման արդյունքում, ինչպես նաև տվյալ տեսանյութը, ֆիլմը, երգը կամ երաժշտությունը ինչ ազդեցություն կարող են ունենալ սովորողների հոգեբանության, արժեհամակարգի և դիրքորոշումների ձևավորման վրա:

- **Դասի ընթացքում տեսանյութի կամ ֆիլմի դիտման, երգի կամ երաժշտության ունկնդրման և քննարկման ժամանակահատվածի սահմանում**

Ուսուցիչը նախապես պետք է ծրագրի, թե դասի որ փուլում է իրականացվելու տեսանյութի կամ ֆիլմի դիտումը, երգի կամ երաժշտության ունկնդրումը: Պետք է նաև նախապես պլանավորել, թե դասի որ փուլում և ինչպես է կազմակերպվելու քննարկումը:

- **Տեսանյութի կամ ֆիլմի դիտման համար անհրաժեշտ հատվածի կամ հատվածների հստակեցում**

Ուսուցիչը պետք է նաև նախապես հստակեցնի, թե տեսանյութի կամ ֆիլմի կոնկրետ որ հատվածը կամ հատվածները /րոպեներով/ պետք է դիտել դասարանում: Մեծ ծավալով տեսանյութերի կամ ֆիլմերի դեպքում ժամանակի սղության և այլ պատճառներով դասարանում պետք է ցուցադրել տեսանյութի կամ ֆիլմի միայն այն հատվածները, որոնք առավել առանցքային նշանակություն ունեն տվյալ թեմայի յուրացման համար, քանի որ դասի ընթացքում պետք է ժամանակ հատկացնել նաև քննարկմանը: Որոշ դեպքերում, տարբեր հանգամանքներով պայմանավորված, ուսուցիչը կարող է հանձնարարել, որ սովորողները տեսանյութի կամ ֆիլմի որոշ հատվածներ դիտեն տանը:

- **Տեսանյութի կամ ֆիլմի դիտումից, երգի կամ երաժշտության ունկնդրումից հետո կիրառվող մեթոդների, վարժությունների, աշխատաձևերի որոշում, դրանց համար անհրաժեշտ ուսումնադիտողական նյութերի պատրաստում**

Արդյունավետ քննարկում իրականացնելու նպատակով պետք է նախապես ընտրել քննարկման համար կիրառվող մեթոդները, մեթոդական հնարները, գործնական աշխատանքները, աշխատաձևերը, ինչպես նաև ձեռքի տակ ունենալ դրանց համար անհրաժեշտ ուսումնադիտողական նյութերը և այլն:

- **Տեսանյութի կամ ֆիլմի ցուցադրության, երգի կամ երաժշտության ունկնդրման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների նախապատրաստում**

Պետք է նախապես դասարանն ապահովել ցուցադրության և ունկնդրման տեխնիկական միջոցներով, պատրաստել համապատասխան սարքավորումներ՝ համակարգիչ, լուսացրիչ, էլեկտրոնային գրատախտակ կամ այլ անհրաժեշտ միջոցներ, նախապատրաստել համապատասխան լսարան, ապահովել համապատասխան լուսավորություն և այլն:

- **Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար տեսանյութերի, ֆիլմերի դիտման, երգերի, երաժշտության ունկնդրման և դրան հաջորդող քննարկման համար առանձին առաջադրանքների պատրաստում:**

2. Մտագրոհ կամ մտքերի տարափ

Ընդհանուր նկարագրություն

Մտագրոհը խմբային (թիմային) աշխատանքի պարզ, բայց արդյունավետ մեթոդական հնարներից է: Ուսուցման գործընթացում «*Մտագրոհ*» մեթոդական հնարը կիրառվում է մտքերի, գաղափարների, տեսակետների ազատ և անկաշկանդ արտահայտման համար: Այս մեթոդական հնարի շնորհիվ վեր են հանվում սովորողների նախնական գիտելիքները, այն, ինչ նրանք գիտեն, կամ ենթադրվում է, որ պետք է իմանան տվյալ թեմայի, նյութի վերաբերյալ:

Մտագրոհը անվանում են նաև «մտքերի տարափ», քանի որ խրախուսվում է ուսումնասիրվող նյութի առանցքային հասկացություններին առնչվող բառեր թվարկելն ու գաղափարներ արտահայտելը:

Սովորողներին հստակ խնդիր է առաջադրվում. նրանցից յուրաքանչյուրն արտահայտում է սեփական տեսակետը՝ առանց որևէ մեկնաբանության կամ գնահատական տալու փորձի: Բոլոր մտքերն ու գաղափարները գրանցվում են թղթի կամ գրատախտակի վրա: Ճյուղավորումների քանակը և բազմազանությունը կախված են ուսուցչի նպատակներից, հատկացված ժամանակից, նյութի ուսումնասիրության խորությունից, հետաքրքրությունների շրջանակից և այլն: Յուրաքանչյուր բառ գծիկով միացվում է առանցքային բառին, իսկ միևնույն ծագումն ունեցող բառերը վերցվում են շրջանի մեջ՝ որպես ուսումնասիրման մեկ ոլորտ:

Երբ սովորողներն արդեն ծանոթացել կամ յուրացրել են նյութը, անպայման անդրադարձ է կատարվում Մտագրոհի արդյունքներին. ճշգրտելով, ուղղելով, լրացնելով, ամբողջացնելով նախնական մտքերի ու գաղափարների ցանկը՝ սովորողներն ուսուցչի հայեցողությամբ կազմում են նախադասություններ, փոքր տեքստեր և այլն:

Մեթոդական հնարը կիրառելիս պետք է պահպանել հետևյալ կանոնները.

- Հիշել, որ արտահայտված բոլոր մտքերն ու գաղափարներն ընդունելի են, «սխալ» չկա:
- Պետք չէ փորձել մերժել և ոչ գործնական լինելու պատճառով մշակել կամ վերաձևակերպել որևէ միտք կամ գաղափար:
- Պետք չէ ցույց տալ, որ արտահայտված այս կամ այն միտքը որևէ արժեք չունի, անտեսել որևէ մեկի ներդրումը կամ արտահայտել անգամ ոչ

խոսքային քննադատական վերաբերմունք (հոնքերը կիտել, ուսերը բարձրացնել և այլն):

- Որևէ կերպ պետք չէ քննադատել արտահայտած գաղափարը՝ ո՛չ բառերով, ո՛չ դիմախաղով, ո՛չ ժեստերով:
- Պետք է խրախուսել բազմատեսակ մտքեր արտահայտելու միտումները:
- Մասնակիցներից յուրաքանչյուրը պետք է զգա, որ իր արտահայտած միտքը ուշադրության է արժանացել:

Խորհուրդներ ուսուցչին

Այս մեթոդական հնարը նպաստում է նոր գաղափարների ի հայտ գալուն: Որպեսզի սովորողներն արտահայտեն առավելագույն քանակով մտքեր, պետք չէ սահմանափակումներ դնել, որովհետև հաճախ այն միտքը, որը ոչ տեղին կամ ոչ գործնական է թվում, կարող է նպաստել մեկ ուրիշի մոտ հետաքրքիր մտքերի ի հայտ գալուն: Եթե խմբի անդամներից որևէ մեկն ինչ-ինչ պատճառով չի կարող մտքերը կամ առաջարկությունները հստակ ձևակերպել, արտահայտել, պետք է հնարավորություն տալ, որ նա պարզապես խոսի այդ մասին, ընդունել նրա ասածն առանց մեկնաբանությունների և շարունակել գործընթացը: Եթե դասարանում կան կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներ, անհրաժեշտ է նրանց ևս ընդգրկել գործընթացում:

Մտքերի տարափը հերթականություն կամ չափ սահմանել չի ենթադրում: Սակայն պետք է հետևել, որ մտքեր արտահայտելու հարցում որևէ գերակայություն չստեղծվի: Կարելի է որոշակի հերթականության մեխանիզմ մշակել: Կարևոր է նաև ժամանակային սահմանափակումների հարցը: Պետք է սովորողներին նախապես տեղեկացնել, որ Մտագրոհի համար նախատեսված է որոշակի սահմանափակ ժամանակահատված, օրինակ՝ 2-3 րոպե:

3. ԳՈՒՍ

Ընդհանուր նկարագրություն

ԳՈՒՍ-ը (գիտեմ, ուզում եմ սովորել, սովորել եմ) երեք սյունակներից բաղկացած աղյուսակ է:

Գիտեմ	Ուզում եմ սովորել	Սովորեցի

Աղյուսակը կարելի է գծել մեծ թղթի վրա, գրատախտակին կամ ցուցադրել համակարգչով:

ԳՈՒՍ աղյուսակի լրացումը և լրացման կանոնները

Գիտեմ սյունակը լրացնելիս սովորողները վերհիշում են տվյալ թեմայի վերաբերյալ իրենց ունեցած նախնական գիտելիքները:

Ուզում եմ սովորել սյունակում լրացնում են, թե ինչ են ուզում սովորել տվյալ թեմայի վերաբերյալ, դրանով իսկ նպատակ սահմանելով՝ ավելի ակտիվորեն են ներգրավվում և մասնակցում ուսուցման գործընթացին:

Սովորեցի սյունակում լրացնում են նոր յուրացված տեղեկատվությունը:

ԳՈՒՍ աղյուսակի առաջին երկու սյունակները սովորողները լրացնում են մինչև նոր նյութի յուրացումը, իսկ երրորդ սյունակը լրացնում են դասանյութը (թեման) յուրացնելուց հետո:

ԳՈՒՍ աղյուսակը լրացնելուց հետո ուսուցիչը ամփոփում է սովորողների կողմից դասակարգված տեղեկատվությունը:

Խորհուրդներ ուսուցչին

Ուսուցիչը ԳՈՒՍ աղյուսակը կարող է օգտագործել տարբեր նպատակներով՝ թեմայի վերաբերյալ յուրաքանչյուր սովորողի նախնական գիտելիքները պարզելու և թեմայի յուրացումը վերահսկելու նպատակով, որպես անհատական, խմբային կամ ամբողջ դասարանի համար նախատեսված ուսումնասիրության գործիք և այլն: Եթե ուսուցիչը նախատեսել է ըստ թեմաների դասարանը բաժանել փոքր ենթախմբերի, ապա յուրաքանչյուր խմբին կարող է տալ մեկական ԳՈՒՍ աղյուսակ: Իսկ եթե նա ցանկանում է, որ յուրաքանչյուր սովորող տրված թեմայի համար աղյուսակը անհատապես լրացնի, այդ դեպքում հանձնարարում է այն լրացնել բոլոր սովորողներին:

ԳՈՒՍ աղյուսակը կարող է արդյունավետորեն կիրառվել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար՝ օգտագործելով պատկերներ:

ԳՈՒՍ աղյուսակը կարելի է օգտագործել նաև հայտորոշիչ և ձևավորող գնահատում իրականացնելիս:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հանրակրթության պետական չափորոշիչ
   from https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788
2. Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Իմ հայրենիքը» առարկայի 5-րդ դասարանի ծրագիր/ Հրաման N 33 -Ն, 30.03.2023 թ/:
   fromhttps://escs.am/files/files/2022-12-08/a78e1ea9e42c234fb1677fa1182d6ca7.pdf
3. Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Հայրենագիտություն» բնագավառի («Իմ հայրենիքը» 5-րդ, «Իմ հայրենիքն ու աշխարհը» 6-րդ, «Հայոց պատմություն» 7-12-րդ դասարանների առարկաների) առարկայական չափորոշիչ /Հրաման N 33 -Ն, 30.03.2023 թ/:
   from https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=179995
4. Հանրակրթական ուսումնական հաստատությունների 1-ին և 4-րդ դասարանների «Մայրենի», 9-րդ և 12-րդ դասարանների «Հայոց լեզու», 9-րդ դասարանի «Գրականություն», 12-րդ դասարանի «Հայ գրականություն» առարկաների ծրագրեր /Հրաման N 37 -Ն, 07.05.2024 թ/:
   from https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=192783
5. Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Մայրենի» 1-6-րդ, «Հայոց լեզու» 7-12-րդ, «Գրականություն» 7-9-րդ և «Հայ գրականություն» 10-12-րդ դասարանների առարկայական չափորոշիչ /Հրաման N 44 -Ն, 30.03.2023 թ/:
   from https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=176068
6. Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Երաժշտություն» առարկայի 1-12-րդ դասարանների առարկայական չափորոշիչ /Հրաման N 35 -Ն, 30.03.2023 թ/:
   from https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=176070
7. Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Կերպարվեստ» առարկայի 1-12-րդ դասարանների առարկայական չափորոշիչ /Հրաման N 35 -Ն, 30.03.2023 թ/:
   from https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=176060
8. Անվանացանկ Հայաստանի Հանրապետության հիմնական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների /Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում, փետրվարի 2023 թվականի N 216-Ն/
   from https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=174349

9. «ԿԶՆԱԿ» հիմնադրամի կայք: Ձևավորող գնահատման գործիքներ (ինքնագնահատում)
from https://kznakhimnadram.blogspot.com/
10. ՏԵՄՊՈՒՍ: Բլյումի տաքսոնոմիան և կրթական վերջնարդյունքները
https://herearmenia.wordpress.com/2011/06/01/%D5%A2%D5%AC%D5%B5%D5%B8%D6%82%D5%B4%D5%AB-%D5%BF%D5%A1%D6%84%D5%BD%D5%B8%D5%B6%D5%B8%D5%B4%D5%AB%D5%A1%D5%B6-%D6%87-%D5%AF%D6%80%D5%A9%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%BE%D5%A5%D6%80%D5%BB%D5%B6%D5%A1/
11. ՀՀ նախագահի կայք: Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանշանները
from https://www.president.am/hy/state-symbols/
12. Երևանի քաղաքապետարանի կայք: Երևան քաղաքի խորհրդանիշները
from https://www.yerevan.am/hy/symbols-of-yerevan/
13. ՀԱՅԿԱՇԽԱՐՀ Armlands ՀՀ դրոշի վերաբերյալ տեսանյութ
from https://www.youtube.com/watch?v=0mRvHJZENPU
14. ՀԱՅԿԱՇԽԱՐՀ Armlands ՀՀ զինանշանի վերաբերյալ տեսանյութ
from https://www.youtube.com/watch?v=k2Ing-Krudk
15. ՀՀ օրհներգը
from https://www.youtube.com/watch?v=23urvScayB8
16. Ուսուցման արդյունավետ հնարներ / Ս. Խաչատրյան.- Եր.: Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020.- 74 էջ:
from https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf
17. Հ. Հ. Մարգարյան, Ֆիլմերի, տեսանյութերի դիտումն ու քննարկումը պատմության դասաժամերին «Ոտքի կանգնելու կամքը» ֆիլմի օրինակով.- Եր.: Տիգրան Մեծ, 2023.- 152 էջ:
18. Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, ԿԱԻ Լոռու մասնաճյուղ, ք. Վանաձոր 2008 թ.:

Ներառական կրթության համատեքստում կիրառելի գործիքակազմը կենսաբանության դասերին

«Թող երեխան իմանա ոչ թե այն պատճառով, որ դուք նրան ասացիք, այլ որովհետև նա ինքը հասկացավ. թող գիտություն չսովորի, այլ հորինի: Եթե նրա մտքում երբևէ տրամաբանությունը փոխարինեք հեղինակությամբ, նա այլևս չի տրամաբանի. նա կդառնա պարզապես ուրիշի կարծիքի խաղալիքը... Ապրելն այն արհեստն է, որը ես ուզում եմ սովորեցնել նրան»:

Ժ. Ժ. Ռուսո

Արդեն 20 տարի է, ինչ փոքրիկ, բայց հաստատուն քայլերով հանրակրթական դպրոց մուտք է գործում ներառական կրթությունը: Հաշվի առնելով, որ յուրաքանչյուր ոք հիմնարար իրավունք ունի կրթություն ստանալու ցանկացած ուսումնական հաստատությունում իր կրթական առանձնահատկություններին և սեփական կարողություններին համապատասխան,[56] հանրակրթական դպրոցներում ուսուցիչները սկսեցին վերանայել իրենց մասնագիտական կարողությունները, մանկավարժական հմտությունները: Անհրաժեշտություն առաջացավ թարմացնել ուսումնական ծրագրերը՝ դրանք հարմարեցնելով սովորողների առանձնահատկություններին: Ակնկալվում է, որ մանկավարժները ավելի պատասխանատու կլինեն ոչ միայն սովորողներին օգնել՝ հասնելու հնարավոր լավագույն արդյունքներին, այլև օգտագործելու առավել արդյունավետ մանկավարժական տեխնոլոգիաներ:[57] Հոդվածում ներկայացնում ենք մասնավորապես կենսաբանության դասերի, դասապրոցեսի տարբեր փուլերում կիրառելի մեթոդների, առաջադրանքների վերաբերյալ խորհուրդներ, դրանց կիրառման քայլաշարեր, խոսում դրանցով դասի արդյունավետության բարձրացման մասին, հատկապես երբ աշխատում ենք կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների հետ: Այն սովորողները, որոնք ունեն առողության հետ կապված խնդիրներ և դրանով պայմանավորված սահմանափակ հնարավորություններ, սովորաբար գիտելիքը

[56] Гуровец Г. В. Коррекционно-развивающие игры как метод обучения в специальной педагогике // Дефектология. – 1996. - №2. – С. 77-83.

[57] Гуровец Г. В. Коррекционно-развивающие игры как метод обучения в специальной педагогике // Дефектология. – 1996. - №2. – С. 77-83.

որպես տեղեկույթ դանդաղ են ընկալում: Նրանց մոտ առկա են դժվարություններ ընկալման, մտածողության, խոսքի գործընթացներում, թույլ է հիշողությունը, շեղվում է ուշադրությունը, խախտվում են շարժումները, այս բոլորի հետ փոփոխվում է նաև վարքը:[58] Բնագիտական բնագավառի գրեթե բոլոր առարկաների ուսուցումը առավել արդյունավետ է ընթանում, երբ ուսուցիչը թեման ներկայացնելիս կապ է ստեղծում կյանքի հետ: Կենսաբանության դասաժամերին շատ թեմաներ արվեստի այս կամ այն բնագավառի հետ կապելով՝ շատ ուսուցիչներ հաջողում են նույնիսկ ամենաբարդ թեմաները բացատրելիս: Օրինակ՝ հաճախ են կենսաբաններին օգնում հեքիաթները: Այս հոդվածում ներառված են տարբեր ռազմավարություններ՝ առաջադրանքներ և գործիքներ, որոնք կնպաստեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների գրանցած արդյունքների բարելավմանը: Առաջադրանքները հիմք են այնպիսի ռազմավարությունների համար, ինչպիսիք են, օրինակ՝

1. ***Վարքային մոտեցումները***, որոնք դրսևորվում են դասից առաջ կամ հետո: Դրանցով ուսուցիչը հասկանում է առաջադրանքի արդյունավետությունը, չափում սովորողի ձեռքբերումների մակարդակը:
2. ***Վերլուծություն և գործառնություն***, որոնք ուսուցչից պահանջում են պլանավորում և վերահսկողություն, որպեսզի սովորողները, մի քանի անգամ հանդիպելով նույն ուսումնական նյութին, կարողանան սովորածը ամրապնդելու և կիրառելու հմտություն ձեռք բերել: Սա վերաբերում է հատկապես հիմնարար գիտելիքներին, որոնք ուսուցանվում են աստիճանական կարգով:
3. ***Ուղիղ հրահանգավորմամբ ուսուցում***: Այն բազմաբաղադրիչ ուսուցման ռազմավարություն է՝ հիմնված ուսուցչի ղեկավարությամբ հստակ, համակարգված ուսուցման վրա, որի ընթացքում իրականացվում է հաճախակի գնահատում:
4. ***Ձևավորող գնահատում և հետադարձ կապ:*** Սրանք համակցված ռազմավարություններ են, որոնց ընթացքում ուսուցիչները հաճախակի արձագանքում են սովորողներին՝ նրանց կատարողական հմտությունները բարելավելու համար:

[58] UNESCO, World Declaration on Education For All 1990.

5. ***Հասակակիցների ուսուցում***, որի դեպքում կիրառելի է «Մտածիր, միացիր, կիսվիր» մոդելը:

Հասակակիցներն իրականացնում են բազմաթիվ դերեր՝ աջակցելով և կրթելով իրենց ընկերոջը, և դրանք բնական, սոցիալական հարաբերություններ են, որոնք ուսուցիչները կարող են արդյունավետորեն օգտագործել: Որոշ սովորողներ դժվարությամբ են մասնակցում դասարանի ընդհանուր քննարկումներին: Մեկ կամ երկու ընկերոջ հետ սեփական տեղեկույթը քննարկելուց հետո սովորողի մոտ լարվածությունը թուլանում է, և նա սովորում է ընդհանուրի մեջ ևս ներկայանալ [4]: Այսպիսով, կախված դասարանի կազմից, սովորողների անհատական առանձնահատկություններից՝ հնարավոր է տարբեր առարկաների համար ստեղծել աշխատանքային գործիքակազմ՝ ուսումնասիրելով Դ. Միտչելի ուսումնառության ռազմավարությունները:[59]

Սովորողների համար ուսումնական նյութերի ստեղծման ժամանակ կարևոր է հաշվի առնել մեկ հանգամանք ևս: Առարկայի ուսուցիչը համարվում է դպրոցում առկա բազմամասնագիտական խմբի անդամ: Առարկայական ուսուցիչները ոչ միայն պետք է վստահեն բազմամասնագիտական թիմի յուրաքանչյուր անդամի, այլև դասի համար նյութատեխնիկական բազա ստեղծելիս անպայման հաշվի առնեն հատուկ մանկավարժի, հոգեբանի, ուսուցչի օգնականի, դասղեկի կամ դասվարի կարծիքները: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթության ճիշտ կազմակերպումը առարկայական դասերի վարման ընթացքում ապահովում է նրանց մշտական շփումը սովորողների մեծամասնության հետ՝ նպաստելով նրանց սոցիալական հարմարվողականության խնդիրների արդյունավետ լուծմանը, հասարակության կյանքին լիարժեք մասնակցության և արդյունավետ ինքնավարության ապահովմանը: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների գիտելիքների ստուգման համար կրթական առաջադրանքները մշակվում են մի շարք պայմանների հիման վրա.

- Օգտագործել անհատական հաջողությունների սանդղակ, որտեղ պետք է հաշվի առնել ծախսած ջանքերը և հաջողությունը,
- Կենտրոնանալ գնահատման վրա, ունենալ գնահատման ռուբրիկ,

[59] Ратнер Ф. Л., Юсупов А.Ю.. Интегрированное обучение детей с ограниченными возможностями в обществе здоровых детей /– М.: Гуманитар. изд. центр ВЛАДОС, 2016.

- Թույլ տալ նորից կատարել առաջադրանքը, եթե սովորողը դեռ չի հասցրել կամ չի կարողացել ավարտել այն,
- Պարզեցնել կամ բարդացնել ընդհանուրին տրված առաջադրանքը՝ որպես հարմարեցում, գնահատել վերամշակված առաջադրանքը:
- Ստեղծել կամ կիրառել սովորողի ձեռքբերումների գնահատման համակարգեր:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող որոշ սովորողների հետ աշխատելու ընթացքում ուսուցիչները հանգում են չափազանց կարևոր եզրահանգման. սովորողների հետ ուսումնական նյութը կրկնելը արդյունավետ է: Մի վախեցեք կրկնությունից: Շատ կարևոր է, որ ծանր հաշմանդամություն ունեցող սովորողները հնարավորություն ունենան մի քանի օրվա ընթացքում ուսումնասիրել նյութը, որպեսզի կարողանան ամբողջությամբ ընկալել այն, ինչ ուսուցանվում է: Բացի այդ, տպագիր նյութերը և դասարանային գործունեությունը պետք է համալրել տեսողական աջակցությամբ, որն օգնում է սովորողներին ավելի մեծ ուշադրություն դարձնել ներկայացված նյութի բովանդակությանը, այլ ոչ նրանցից ակնկալվող մեխանիզմներին: Վերջապես կարևոր է նաև ճիշտ հարցեր տալը: Անկախ նյութից, սովորողներին ճիշտ հարցեր տալը կստիպի նրանց մտածել ավելի խորը և արդյունավետ, քան նախկինում էր:[60]

Ըստ ՀՀ հանրակրթության նոր չափորոշչային պահանջների՝ կարողունակությունների մոտեցման տեսանկյունից կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսուցման արդյունքը պետք է լինի հիմնական իրավասությունների և կարողունակությունների ձևավորումը՝ համընդհանուր հմտություններ, որոնք կօգնեն մարդուն ինքնադրսևորվելու կյանքում և հասնելու որոշակի նպատակների:[61] Ուսուցման ընթացքում սովորողները ձեռք կբերեն.

- սովորել սովորեցնելու կարողունակություն,
- լեզվական կարողունակություն և գրագիտություն,
- ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն,
- թվային և մեդիակարողունակություն,
- մշակութային կարողունակություն:

[60] Mitchell David. Inclusive education is a multi-faceted concept.
[61] CEPS Journal 5 (2015) 1, S. 9-30.
https://elib.pnzgu.ru/files/eb/doc/yhwnoMwabRcd.pdf

Առարկայական դասաժամերի կազմակերպման նպատակը սովորողների համար ճանաչողական, հաղորդակցական, կազմակերպչական, բարոյական և այլ խնդիրների ինքնուրույն լուծման փորձը զարգացնելու համար պայմաններ ստեղծելն է: Համընդհանուր ներառման համատեքստում արդեն ուսուցչական համայնքը գիտակցում է, որ ուսուցումը պետք է տեղի ունենա համընդհանուր պետական ծրագրով սահմանված չափորոշիչներով, օրինակ՝ ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների 1-ին աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողը ևս պետք է ստանա որակյալ կրթություն, որը համեմատելի է իր հասակակիցների կրթության մակարդակին՝ լինելով նրանց միջավայրում և սովորելով նույն օրացուցային պայմաններով:

Ակնհայտ է այնպիսի խնդիրների արդիականությունը, ինչպիսիք են մեթոդականորեն գրագետ և հագեցած դասի կառուցումը, ուսումնառության գործընթացի արդյունավետության բարձրացումը, սովորողների ինքնուրույնության զարգացման խթանումը, ճանաչողական հետաքրքրության բարձրացումը և սովորողների հետազոտական և ստեղծագործական մոտեցման խրախուսումը:[62] ՀՀ կրթական նոր չափորոշիչների շրջանակներում ուսումնական գործընթացում նորարարական միտումների ներդրման առնչությամբ՝ հնարավոր է դասի արդիականացումը, դրա կառուցմանն ու մատուցմանը մոտեցումը ինտենսիվացման, տարբերակման, անհատականացման տեսանկյունից՝ օգտագործելով նոր տեխնոլոգիաներ, որոնք նախագծված են նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ճանաչողական հետաքրքրությունը բարձրացնելու համար՝ օգտագործելով տեղեկատվություն ստանալու և ուսումնասիրելու ակտիվ գործունեության մոտեցումը: Հետևաբար, կենսաբանության դասավանդումը հանրակրթական դպրոցում ներառական կրթության համատեքստում լուծում է ոչ միայն ընդհանուր կրթական խնդիրներ, այլև հաշմանդամություն ունեցող սովորողների զարգացման առանձնահատկություններով որոշվող հատուկ խնդիրներ: Նման պայմաններում կենսաբանության դասավանդման ուսումնական խնդիրը տարրական գաղափարների և հասկացությունների ձևավորումն է, սովորողների

[62] https://prowritingaid.com/art/1093/what-is-the-think-pair-share-strategy.aspx

հոգեֆիզիկական զարգացման թերությունների շտկումը: Այս հոդվածի նպատակն է ցույց տալ կենսաբանության դասաժամերին ակտիվ ուսուցման մեթոդների գործնական կիրառման իրագործելիությունն ու անհրաժեշտությունը ներառական կրթության պայմաններում: Ուստի կենսաբանության դասերը կազմակերպելիս և անցկացնելիս պետք է շեշտը դնել ուսումնական նյութի ներկայացման հարմարվողականության, յուրաքանչյուր սովորողի նկատմամբ անհատական մոտեցման վրա՝ հաշվի առնելով նրա հոգեֆիզիկական առանձնահատկությունները: Կենսաբանության դասերին կիրառվող մեթոդներից է պատկերի նկարագրությունը, որն օգտագործելիս հաշմանդամություն ունեցող սովորողները բավականին հաջողությամբ սովորում են և նույնիսկ կարող են վերապատմել դասարանում նախկինում ուսումնասիրված ուսումնական նյութը: Պատկերային գրության օգտագործման էֆեկտը պայմանավորված է նրանով, որ սովորողները հեշտությամբ ֆիքսում են ուսուցչի կողմից պատկերված ազդանշանները, այնուհետև օգտագործում տեսողական պատկերները՝ որպես իրենց պատմության պլան և որոշակի տեղեկատվության աղբյուր:[63]

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար ամենահարմարը կենսաբանության դասերին զարգացնող վարժությունների կիրառումն է, քանի որ դրանք միտված են բարձրացնելու՝

1) զարգացման մակարդակը, կենտրոնացումը, ուշադրության ծավալը,
2) տրամաբանական մտածողության զարգացման մակարդակը,
3) տեսողական-փոխաբերական և տրամաբանական մտածողության մակարդակը,
4) խոսքի զարգացումը,
5) ուսումնական գործունեության մեթոդների մշակումը,
6) անձնային-մոտիվացիոն ոլորտի զարգացման մակարդակը,
7) տարածության մեջ ընկալման և կողմնորոշման զարգացման մակարդակը:

Կենսաբանության դասաժամերին ամենամեծ ազդեցությունն ունենում են հատուկ զարգացնող այնպիսի միջոցներ, ինչպիսիք են տարբեր քարտերն ու վարժությունները.

1) աղյուսակներ,

[63] https://infourok.ru/inklyuzivniy-podhod-na-uroka-biologii-3275134.html

2) դիագրամներ (ավարտված և անավարտ),
3) բանավոր հարցման քարտեր,
4) կենսաբանական թելադրություններ,
5) շոշափելի շարժիչ ընկալման հետ կապված վարժություններ,
6) նամակ նկարներով,
7) թեստեր,
8) ազդանշաններ,
9) https://www.mote.com/activity/0 կայքի կիրառում, տեսողական դժվարություններ ունեցող սովորողների համար դասանյութի կամ առաջադրանքի ձայնագրում:

Հոդվածի այս հատվածում ներկայացնում ենք տարբեր գործիքներ, տեխնոլոգիաներ, որոնք կիրառվում են կենսաբանության դասաժամերին ուսումնառության տարբեր դժվարություններ ունեցող սովորողների հետ աշխատելիս: Հայտնի է, որ կրթության արդի մոտեցումը սովորողակենտրոն է: Այսպիսի կրթությունը նպաստում է ոչ միայն սովորողների մաթեմատիկական, լեզվաբանական, այս կամ այն առարկայից մանրամասն գիտելիքների ձեռքբերմանը, այլև զարգացնում նրանց ֆիզիկական, սոցիալ-հուզական, իմացական կարողությունները: Ուստի մեր մշակած յուրաքանչյուր առաջադրանք, հարց, թեստ կամ ռուբրիկ պետք է համապատասխանի նրա կարողություններին, և սովորողը պետք է կարողանա կատարել դրանք առավելագույնս ինքնուրույն: Ինչպես ցույց է տալիս մանկավարժական գործունեության երկար տարիների պրակտիկան, կենսաբանության դասերին դասավանդման ակտիվ մեթոդների օգտագործումը դրական արդյունքներ է գրանցում նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար: Դասարանի բոլոր սովորողներն աշխատում են հետաքրքրությամբ և մեծ ցանկությամբ, ինչը զգալիորեն մեծացնում է դասի արդյունավետությունը:

Կենսաբանության դասերին տեսողական դժվարություններ ունեցող սովորողների հետ աշխատանքում կարելի է կիրառել ստորև ներկայացված գործիքները: Գործիքակազմը հարմարեցված է այս կամ այն կենսաբանական եզրույթի, երևույթի, թեմայի կամ ենթաթեմայի ուսումնառության գործընթացին: Դրանք հնարավոր է հարմարեցնել ըստ անհրաժեշտության:

1. Կրկնի՛ր և շարունակի՛ր:

7-րդ դասարան

Թեմա՝ Ֆոտոսինթեզ

Վերջնարդյունք՝ Սովորողը հիշում է ֆոտոսինթեզին առնչվող հիմնական հասկացությունների առնվազն կեսը:

Այս առաջադրանքը տրվում է սովորողներին ինչպես դասի սկզբում հայտորոշում կատարելու համար, այնպես էլ դասն ամրապնդելիս: Միաժամանակ ստուգվում է բոլոր սովորողների ուշադրությունը: Առաջին սովորողը հնչեցնում է առանցքային հասկացությունը, երկրորդը կրկնում է, ապա ավելացնում թեմայի վերաբերյալ իր առաջարկած հասկացությունը: Սովորողները հաջորդաբար նույն տրամաբանությամբ հիշում են նախորդների առաջարկած հասկացությունները, ավելացնում իրենցը: Առաջադրանքը չի կարելի իրականացնել ողջ դասարանի համար, քանի որ, միևնույն է, սովորողների հիշողության սահմանները որոշակիորեն տարբեր են: Այն կարելի է անցկացնել խմբում կամ շարքում: Այս աշխատանքը ոչ միայն զարգացնում է սովորողների մտածողությունը, այլև մարզում հիշողությունը:

2. Տվյալները հավաքագրենք զույգով:

7-րդ դասարան

Թեմա՝ Հետերոտրոֆ պրոտիստներ

Վերջնարդյունք – Սովորողը որոշակի տեղեկատվություն է ստանում կանաչ էվգլենայի մասին, ստեղծում է համառոտ տեղեկույթ կենդանու վերաբերյալ:

Աշխատանքը նախատեսվում է իրականացնել զույգով. սովորողներից մեկը կարող է լինել տեսողական դժվարություններ ունեցող սովորող, չնայած այն կիրառելի է բոլոր դեպքերում: Թերթիկի վրա ներկայացվում են կանաչ էվգլենայի (ցանկացած կենսաբանական օբյեկտի) մասին առանցքային տեղեկություններ հնարավոր երկու տարբերակներով: Զույգից մեկը ընթերցում է տվյալն ու տարբերակները, մյուսը հստակեցնում է ճիշտ տարբերակը, զույգով քննարկում են և ճիշտ տարբերակի մոտ եղած վանդակում նշում թռչնանիշ կամ «x»: Վերջում ստեղծում են համառոտ ավարտուն միտք էվգլենայի մասին: Այսպես՝

Կանաչ էվգլենա

1. Արտաքին տեսքը.

ա. տերևանման ☒, բ. շարժման հարմարանքներ

2. Միջավայրին հարմարվելու վիճակ.

ա. կորիզ, բ. ցիստա ☒

3. Սննդառության տիպը.

ա. ավտոտրոֆ, բ. միքսոտրոֆ ☒

4. Բազմացումը.

ա. անսեռ ☒, բ. սեռական

Կանաչ էվգլենան տերևանման միքսոտրոֆ օրգանիզմ է, որը բազմանում է անսեռ եղանակով, իսկ անբարենպաստ պայմաններին դիմակայում է ցիստավորված:

Այսպիսի առաջադրանքի միջոցով սովորողները համակարգված ներկայացնում են տվյալ օբյեկտի մասին ամենակարևոր գաղափարները:

3. Եզրութաբանական թելադրություն:

Եթե թեման ծավալուն է, նախատեսվում է առաջադրանքն իրականացնել հիմնական գիտելիքը մասերով ներկայացնելուց հետո: Յուրաքանչյուր մասը բացատրելուց հետո ընկալման ստուգումը կարելի է կատարել այս եղանակով: Ներկայացումը կարող է լինել բանավոր, աուդիոնյութերով: Գրատախտակի մոտ աշխատում է երկու սովորող: Ուսուցիչը դասարանին թելադրում է նախադասություններ, որոնք արտահայտում են տվյալ օբյեկտի սահմանումը: Նախադասություններն ավարտվում են մեկ բառով, որոնք պետք է հնչեցնեն գրատախտակի մոտ կանգնած սովորողները: Գրատախտակի մոտ աշխատող սովորողներից մեկը տեսողական դժվարություններ ունի: Նա պետք է բարձրաձայն նշի որոնվող հասկացությունը: Մյուսը, ով ունի ինքնուրույն աշխատելու հետ կապված դժվարություններ, պետք է գրատախտակին գրառի այդ հասկացությունը: Դասարանը հետևում է նրանց աշխատանքին՝ տետրերում ուղղումներ կատարելով: Այսպես.

8-րդ դասարան

Թեմա՝ Տեսողական վերլուծիչ

Վերջնարդյունք - Սովորողը գիտի, թե ինչ են ակնագնդի թաղանթները, բնութագրում է դրանք որպես հիմնական եզրույթներ:

1. Աչքի թաղանթը, որն իրականացնում է պաշտպանական գործառույթ, կոչվում է . . . . . .
2. Եղջերաթաղանթի առջևի շերտը, որն անցկացնում է լույսը, կոչվում է . . . . . .:
3. Աչքի երկուռուցիկ ոսպնյակը կոչվում է . . . . . .:
4. Ընտրովի թելադրություն: Ուսուցիչը կարդում է պնդումը: Եթե սովորողը համամիտ է այդ պնդմանը, բարձրաձայն պատասխանում է «Այո», եթե համամիտ չէ՝ «Ոչ»: Դասարանում ինչ-որ մեկը հաշվում է «այո»-ի և «ոչ»-ի քանակները:

8-րդ դասարան

Թեմա ՝ Տեսողական վերլուծիչ

Վերջնարդյունք - Սովորողը գիտի ակնագնդի թաղանթները, բնութագրում է դրանք որպես հիմնական եզրույթներ:

1. Թարթիչները պաշտպանում են տեսողական ընկալիչները փոշուց և մանրէների ներթափանցումից: - «Ոչ»
2. Վերլուծիչը կազմված է երկու մասից՝ ընկալիչից և գլխուղեղի մեծ կիսագնդերի կեղևի վերլուծող բաժնից: - «Ոչ»
3. Աչքի տեսողական ընկալիչներ պարունակող թաղանթը ցանցաթաղանթն է: - «Այո»
4. Տեսողական դժվարություններ ունեցող սովորողների հետ աշխատելիս անհրաժեշտ է կիրառել տարբեր մասնագիտացված կայքեր, որոնք հնարավորություն են տալիս ձայնագրել դասանյութը կամ առաջադրանքը, ապա այս եղանակով նյութն ուղարկել սովորողին: Կարելի է առաջարկել հետևյալ կայքերը՝

- https://vocaroo.com/
- https://www.naturalreaders.com/online/

Լսողական դժվարություններ ունեցող սովորողների հետ կենսաբանության դասերին կարելի է օգտագործել հետևյալ գործիքները:

1. Ամբողջացրու գիտելիքներդ

10-րդ դասարան

Թեմա՝ Սեռական համակարգի օրգաններ

Վերջնարդյունք - Սովորողը ճանաչում է արական և իգական սեռական օրգանները, համեմատում է դրանք, ասում նմանություններն ու տարբերությունները, պատկերների հիման վրա ստեղծում մոդելներ: Դասանյութը ներկայացվում է պատկերավոր և պատկերների վրա նշված համապատասխան տեղեկատվությամբ՝ օգտվելով կայքում բերված նյութից. https://www.mozaweb.com/ru/ru/lexikon.php?cmd=getlist&let=MICROCURRICULUM&sid=BIO&book_content=&pg=4&open_extra_id=648633

Ապա ուսուցիչը գրատախտակին ամրացնում է հենքային պատկերը, օրինակ իգական սեռական համակարգի օրգանները: Նկարից աջ և ձախ գծում է տարբեր քանակներով սլաքներ: Սովորողը աջ մասում գտնվող սլաքների դիմաց գրում է այն տեղեկույթը, որը գիտի, իսկ ձախ կողմում գտնվող սլաքների դիմաց՝ այն տեղեկույթը, որը նոր է յուրացրել առցանց կայքից: Դասի ավարտին պատկերն ամբողջապես լրացվում է: Կից կարելի է տրամադրել նաև այսպիսի առաջադրանքներ: **Լրացնել ազատ վանդակները:**



Նկար 52. Առաջադրանք իգական սեռական օրգանների կառուցվածքի վերաբերյալ

2. Խաղեր՝ «Գտիր կեսը», «Երրորդն ավելորդ է», «Հավաքիր, որը քեզ անհրաժեշտ է»:

9-րդ դասարան

Թեմա՝ Անսեռ բազմացում

Վերջնարդյունք - Սովորողը նկարագրում է անսեռ բազմացման էությունը, թվարկում տեսակները, ստեղծում կապ տեսակների և այդ եղանակով բազմացող օրգանիզմների կառուցվածքների միջև:

«Հավաքիր, որը քեզ անհրաժեշտ է» խաղը լսողական դժվարություն ունեցող սովորողների համար շատ հարմար գործիք է: Առաջարկվում են քարտերի վրա գրված պնդումներ և հասկացություններ որոշակի համարակալումներով, որոնք արտահայտում են բազմացման տվյալ եղանակի տրամաբանական ամբողջությունը: Ուսուցիչը տրամադրում է մի քանի ծրար անսեռ բազմացման եղանակների թվով և առաջարկում հասկացությունների և պնդումների քարտերը տեղավորել համապատասխան ծրարներում: Եթե սովորողը ճիշտ է հավաքում (իսկ դա երևում է նաև թվերի ամբողջականությունից), ապա ունենում է ամբողջական տեղեկատվություն բազմացման տվյալ եղանակի մասին: Խաղերն ընդունելի են բոլոր դասարանախմբերի սովորողների համար, պարզապես դրանք կիրառելիս պետք է հաշվի առնել տարիքային առանձնահատկությունները:

3. Կառուցիր ճիշտ հաջորդականությամբ:

Այս առաջադրանքը ևս կիրառելի է ցանկացած դասարանի կենսաբանության ցանկացած թեմայով դասի համար, քանի որ կենսաբանության դասընթացում շատ են այնպիսի թեմաները, որոնք պահանջում են ուշադրություն երևույթը կամ կառուցվածքը ճիշտ հասկանալու համար:

7-րդ դասարան

Թեմա՝ Դասակարգում

Վերջնարդյունք - Սովորողը ճանաչում է կարգաբանական միավորները, դասակարգում դրանք ճիշտ հաջորդականությամբ, վերլուծում դասակարգումը բույսերի, կենդանիների օրինակներով:

Դասակարգման միավորները նշել բարձրից ցածր սկզբունքով: Ուսուցիչը սովորողներին տրամադրում է 13 քարտ, որոնց վրա գրված են կարգաբանական միավորները: Սովորողը պետք է իր ստացած գիտելիքների հիման վրա դրանք

դասավորի ճիշտ հաջորդականությամբ: Ցածր դասարաններում ցանկալի է քարտերի վրա կատարել հուշումներ, օրինակ՝ վերևի աջ անկյունում նշել տառեր, որոնք ճիշտ հաջորդականությամբ դասավորելու դեպքում կստանան կենսաբանության ենթաճյուղերից մեկի անվանումը: Լսողության դժվարություններ ունեցող սովորողների համար այսպիսի առաջադրանքներն առանձնակի անհարմարություններ չեն առաջացնում, ընդհակառակը, նրանք շատ վարժ և արագ կողմնորոշվում են, հատկապես եթե քարտերը վառ և գեղեցիկ գունավորված են:



Նկար 53. Կարգաբանական մոզաիկա

4. Սինքվեյն՝ հնգյակ

7-րդ դասարան

Թեմա՝ Ծաղկավոր բույսերի կառուցվածքը

Վերջնարդյունք - Սովորողը տարբերում է ծաղկավոր բույսերի օրգանները, տարբերակում դրանց գեներատիվ և վեգետատիվ մասերը, բնութագրում ըստ կառուցվածքի և գործառույթների:

Լսողության դժվարություններ ունեցող սովորողները առավել հետաքրքրություն են ցուցաբերում այնպիսի առաջադրանքների նկատմամբ, ինչպիսին է սինքվեյնը՝ հնգյակը: Հատկապես եթե սովորողն ունի ստեղծագործական հմտություններ, նրա համար ավելի հաճելի է մեկտեղել

գիտելիքը ստեղծագործական կարողությունների հետ: Կարևոր է սովորողներին սովորեցնել սինքվեյնի ճիշտ կազմման եղանակը:

1. առաջին տող - սինքվեյնի թեման մեկ բառով. սովորաբար այն լինում է գոյական,
2. երկրորդ տող - երկու բառ՝ ածականներ, որոնք կբնութագրեն թեման,
3. երրորդ տող - թեմայի բնութագիր երեք բայով,
4. չորրորդ տող - չորս բառից բաղկացած արտահայտություն, որն արտահայտում է զգացողություններ,
5. հինգերորդ տող - առաջին տողի գոյականի հոմանիշ բառը, կրկին՝ գոյական:

Ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների 1-ին և 2-րդ աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողների համար կենսաբանության դասերին կարելի է կիրառել հետևյալ գործիքակազմը:

1. Գրաֆիկական թելադրություն[64]

7-րդ դասարան

Թեմա՝ Սնկերի դաս

Վերջնարդյունք - Սովորողը ճանաչում է գլխարկավոր սունկը, նկարում կամ արտատպում տարբեր սնկերի պատկերներ: Այսպիսի թելադրությունը բավականին արդյունավետ է ոչ միայն ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների 1-ին և 2-րդ աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողների համար, այլև ներգործուն միջոց առարկայի նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու տեսանկյունից:

Ճիշտ է, այս գործիքը ավելի հարմար է կիրառել կրտսեր դպրոցականների համար, սակայն 5-8-րդ դասարանների՝ վերը նշված առանձնահատկությունն ունեցող սովորողների համար ևս հաճելի աշխատանք է: Այն հնարավորություն է ընձեռում սովորողին համատեղել խաղը, ուսուցումը, մտածողությունը,

[64] https://kssovushka.ru/zhurnal/14/1307-primenenie-aktivnyh-metodov-obucheniya-na-urokah-biologii-kak-sistema-formirovaniya-klyuchevyh-kompetentnostei-u-uchashchihsya-s-ovz-v-usloviyah-fgos/

զարգացումը: Այս թելադրության ժամանակ սովորողը կարողանում է նաև կենտրոնացնել ուշադրությունը, որպեսզի լսի ուսուցչի հրահանգները: Գրաֆիկական թելադրությունը սովորողների մոտ զարգացնում է ուշադրությունը, հիշողությունը, շարժումների համակարգումը, երևակայությունը, հաստատակամությունը, մանր մոտորիկան, աշխատանքն ավարտին հասցնելու ունակությունը, տրամաբանական և վերացական մտածողությունը, թղթի վրա տարածական կողմնորոշումը: Այն հաճախ կարելի է կիրառել 7-րդ, 8-րդ դասարաններում կենսաբանության դասերին այս կամ այն օբյեկտի արտաքին տեսքը պատկերացնելու համար:



Նկար 54. Գրաֆիկական թելադրություն

2. Կենսաբանական օբյեկտների կառուցում և մոդելավորում կիսատ կամ ամբողջական օրինակի հիման վրա:

7-րդ դասարան

Թեմա՝ Կյանքի կազմավորման մակարդակները

Վերջնարդյունք - Սովորողը ճանաչում է կյանքի կազմավորման մակարդակները նկարների միջոցով, որոշակի օգնությամբ ստեղծում է բջջի, օրգանոիդի մոդելներ: Այս գործիքը կիրառելի է կենդանիների, բույսերի, մարդու որոշ օրգանների կառուցվածքների մոդելները պատրաստելիս:

Այս գործիքը կարելի է կիրառել որպես նախագծային աշխատանքի բաղադրիչ՝ ներառելու թույլ ինտելեկտ ունեցող սովորողներին, հատկապես եթե նշված սովորողներն ունեն ստեղծագործական հմտություններ: Կարելի է մոդելները պատրաստել ծեփամածիկով, կավով, պլաստիլինով, կենցաղային իրերով, մթերքներով և այլն:

Նկար 55. Բջջի մոդել

3. Հավաքիր նկարը:

7-րդ դասարան

Թեմա՝ Միջատների դաս

Վերջնարդյունք - Սովորողը ճանաչում է տարբեր միջատներ, գիտի նրանց ոտքերի և թևերի քանակները, տարբերում է մարմնի մասերը:

Առաջադրանքի այս տեսակը առաջին հայացքից թվում է սովորողին առաջադրվող շատ պարզ խնդիր: Սակայն այն հնարավորություն է տալիս կենտրոնացնել ուշադրությունը, պարզ վերլուծություններ կատարել, ինչպես նաև պատկերացում կազմել այն օբյեկտի մասին, ինչի վերաբերյալ տրված է առաջադրանքը: Թղթի վրա գծագրված է կենդանու, սնկի, բույսի կամ մարդու որոշակի օրգանի եզրագիծը: Դրան կից սովորողին տրամադրվում են նախապես ստվարաթղթից կտրված մասեր, որոնք նա պետք է կարողանա ճիշտ դասավորել ուրվագծված պատկերի մեջ՝ ստեղծելով ամբողջական պատկեր: Այս աշխատանքի ընթացքում ուսուցիչը կամ օգնականը գտնվում է սովորողի կողքին և առաջադրում է հարցեր, օրինակ՝ ի՞նչ է սա, ո՞րն է գլուխը, քանի՞ ոտիկ պետք է դրվի գլխարկի տակ և այլն: Ստացված պատկերի վրա կարելի է հավելյալ մանրամասներ ավելացնել, օրինակ բեղիկներ, պուտիկներ նկարել:

4. Ռեբուսներ

7-րդ դասարան

Թեմա՝ Ծաղկավոր բույսերի բազմազանությունը

Վերջնարդյունք - Սովորողը ճանաչում է որոշ դեղաբույսեր, որոնք հատկապես տարածված են իրենց տարածաշրջանում, պատկերներից օգտվելով՝ կարողանում է կազմել բարդ բառեր:

Կիրառելի են կենսաբանության դասերին բոլոր դասարանախմբերում: Նման աշխատանքները կարող են լինել ծայրահեղ պարզից մինչև բարդ, ուստի հնարավոր է կիրառել տարբերակված ուսուցման համատեքստում: Ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների 1-ին և 2-րդ աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողների համար ուսուցիչը կարող է կազմել նկարներից կազմված պարզագույնից մինչև միջին բարդության ռեբուսներ, որոնք կարտահայտեն միայն բառերի համակցում: Տես ստորև բերված օրինակները:

Նկար 56. Ռեբուս

5. Գլուխկոտրուկներ

7-րդ դասարան

Թեմա՝ Թռչունների դաս

Վերջնարդյունք – Սովորողն ունի ընդհանուր տեղեկատվություն թռչունների մասին, գիտի նրանց մարմնի մասերը, տարբերակում է մարմնի վրա տեղակայված որոշ օրգաններ:

Հաճախ կարելի է կիրառել տարբեր կառուցվածքի և բովանդակության գլուխկոտրուկներ, որոնք սովորողների մոտ ձևավորում են միաժամանակ մի քանի որակներ: Օրինակ՝ ստորև ներկայացված «Թռչնի բնութագիր»-ը ուսուցչի ուղղորդմամբ կազմել է տեսողության թեթև դժվարություններ ունեցող աղջիկը իր դասընկերոջ համար: Առաջադրանքը հետևյալն է. գտնել բնութագրիչ նախադասության սկիզբը, ապա յուրաքանչյուր երրորդ վանկը միացնելով՝ ստանալ հաջորդ բառը, հետևաբար՝ նախադասությունը: Այսպես ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կարիք ունեցող սովորողների համար հեշտ կլինի սովորել տվյալ օբյեկտի մի քանի բնութագրիչներ:

Ուշադրության կենտրոնացման դժվարություններ ունեցող սովորողների հետ աշխատանքում յուրովի ջանքեր են պահանջվում բոլոր առարկաների ուսուցիչներից:

Ուսուցիչը պետք է ունենա մեծ համբերություն: Առաջարկվող միջոցները հնարավորություն են տալիս նրան որոշակի փոփոխություններ կատարելով՝ ստանալ համապատասխան թեմատիկ առաջադրանք ցանկացած տարիքի սովորողի համար: Հնարավոր է դրանք աստիճանաբար բարդացնել, պահպանել կատարված աշխատանքները, հետագայում համեմատել՝ տեսնելու այն փոփոխությունները, որոնք գրանցում են սովորողները:

Նկար 57. Գլուխկոտրուկ

1. «Գտիր տարբերությունները»

7-րդ դասարան

Թեմա՝ Ընձյուղ

Վերջնարդյունք - Սովորողը գիտի, որ բողբոջը սաղմնային ընձյուղ է: Նա բնութագրում է բողբոջի մասերը, նկարագրում բողբոջների տարբեր տեսակներ, բերում է իրեն շրջապատող բույսերի բողբոջների օրինակներ:

Վարժությունը շատ սիրված է սովորողների կողմից: Այս աշխատանքի համար ուսուցիչը պետք է հատկացնի որոշակի ժամանակ, այդ մասին տեղեկացնի սովորողներին, որոնք պետք է սովորեն տեղավորվել ժամանակի մեջ՝ կենտրոնացնելով ուշադրությունը: Կենսաբանության տարբեր թեմաներից

այսպիսի աշխատանքներ կարելի է հաճախ իրականացնել, օրինակ՝ գտնել տարբերությունները գեներատիվ և վեգետատիվ բողբոջների միջև:

Նկար 58.Գտնել տարբերությունները

2. Բացահայտիր աղավաղված հասկացությունները

7-րդ դասարան

Թեմա՝ Սնկերի թագավորություն

Վերջնարդյունք - Սովորողը գիտի սնկերի թեմայի առանցքային գաղափարները, տարբերակում է ստորակարգ և բարձրակարգ սնկերը:

Այս առաջադրանքը կարելի է ներկայացնել կամ աղյուսակի տեսքով, կամ քարտային եղանակով: Վերծանել՝ ընգծելով միայն սնկերին վերաբերող հասկացությունները:

Աղյուսակ. Աղավաղված հասկացություն

Աղավաղված հասկացություններ	վերծանված հասկացություններ
1.կտոի	ոտիկ
2.տարմա	արմատ
3.կլգրխա	գլխարկ
4.երևտ	տերև
5.պիյոնշնամպ	շամպինյոն

3. Զուգորդիր

7-ր դասարան

Թեմա՝ Ծաղկավոր բույսերի տարածվածությունը, նշանակությունը

Վերջնարդյունք - Սովորողը գիտի մշակովի և վայրի բույսերի տարբերությունները, ճանաչում է այն մշակաբույսերը, որոնք օգտագործում են սննդի մեջ, կարողանում է տալ դրանց դասակարգումը բույսերի թագավորության մեջ:

Այս առաջադրանքը միաժամանակ երկու նպատակ է հետապնդում: Օգնում է սովորողին խմբավորելու այն, ինչ սովորել է դասի ընթացքում և այն, ինչ զուգորդում է մտքում տվյալ օբյեկտի հետ: Օրինակ՝ մշակովի ծաղկավոր բույսերի մասին այսպիսի աղյուսակը շատ տեղեկություններ է հաղորդում ուսուցչին սովորողի վերջնարդյունքների մասին:[65]

Աղյուսակ Ասոցիացիա

Բույս	Ասոցիացիա
կարտոֆիլ	պալար, աչք, բերք աշուն, խյուս,դարչնագույն,օսլա.
պոմիդոր	հյութալի, կլոր կամ օվալաձև, կարմիր,համեղ,ջերմոց տոմատ, կետչուպ
ցորեն	հաց, ալյուր, հասկ, հատիկ, կոշտ, խաշիլ,զատիկ
կաղամբ	սպիտակագլուխ, բորշ, ծաղկակաղամբ, թթու,պեկինյան:

4. Հասկացությունների դասակարգում խմբերով

8-րդ դասարան

Թեմա՝ Սիրտանոթային համակարգ

Վերջնարդյունք - Սովորողը գիտի սիրտանոթային համակարգի նշանակությունը, թվարկում է օրգանները, տալիս դրանց բնութագրերը, նկարագրում արյան շարժման ընթացքը:

Ուսուցիչը գրատախտակին գրում է թեմայի վերաբերյալ հասկացություններ: Սովորողները պետք է խմբավորեն այդ հասկացություններն ըստ

[65] https://infourok.ru/inklyuzivniy-podhod-na-uroka-biologii-3275134.html
https://logopedprofiportal.ru/blog/901164

առանձնահատկությունների: Օրինակ՝ աորտա, մազանոթ, ձախ փորոք, երկփեղկ փական, զարկերակ, թոքային երակ, աջ նախասիրտ, կիսալուսնաձև փական:
Արյունատար անոթներ - զարկերակ, թոքային երակ, մազանոթ, աորտա:
Սիրտ - աջ նախասիրտ, ձախ փորոք, երկփեղկ փական, կիսալուսնաձև փական:

https://www.pinterest.com/

Աուտիզմ ունեցող սովորողների հետ աշխատանք կենսաբանության դասերին[66]

Աուտիստիկ սպեկտրի խանգարումներով սովորողների հետ աշխատելիս պետք է հիշել, որ նրանց ուժեղ կողմը ալգորիթմների իմացությունն է: Նրանց պետք է սովորեցնել մեկ անգամ և ճիշտ, այնուհետև նրանք դա ճշգրիտ հաջորդականությամբ կիրականացնեն: Ողջ ուսումնական նյութը նրանց համար պետք է ամրապնդել տեսանելի պատկերներով, հնարավորինս շատ օբյեկտների հենքային նկարներով, որոնք կլինեն օգնող ազդանշաններ: Ուստի որքան հագեցած լինի աուտիզմ ունեցող սովորողի հետ աշխատող ուսուցչի նյութատեխնիկական բազան նկար-քարտերով, այնքան արդյունավետ ընթացք կունենա դասը «Կենսաբանություն», «Բնագիտություն», «Ես և շրջակա աշխարհը» առարկաներից: Ներկայացնում ենք այդպիսի նկար քարտերի օրինակներ:

Նկ.59. Ես և շրջակա աշխարհը: Վերջնարդյունք՝ Սովորողը ճանաչում է մարմնի մասերը:

Նկ.60, 61, 62. 7-րդ դաս., Բույսերի աճ: Վերջնարդյունք՝ Սովորողը պատկերների միջոցով պատկերացնում է սերմերի ծլման, ծաղիկների բացվելու հաջորդական փուլերը:

[66] https://xn--j1ahfl.xn--p1ai/library/_korrektcionnorazvivayushie_uprazhneniya_po_biologii_055200.html

Նկար 59. Մարմնի մասեր



Նկար 60. Բույսերի աճ 1



Նկար 61. Բույսերի աճ 2



Նկար 62. Բույսերի աճ 3

Նկ.63. 8-րդ դասարան, Մարդու օրգանները: Վերջնարդյունք՝ Սովորողը ճանաչում է օրգանները, պատկերների ուրվագծերի միջոցով որոշում է դրանց տեղը մարդու օրգանիզմում:



Նկար 63. Մարդու օրգանները

Շատ հետաքրքիր է աշխատանքը աուտիզմ ունեցող սովորողների հետ, հատկապես երբ ձեռք բերած գիտելիքը ամրապնում ես գործնական աշխատանքով:[67]

[67] https://www.pinterest.com/



Նկար 64. Կենսաբանական օբյեկտներ

7-րդ դասարան, ամփոփիչ դաս: Վերջընարդյունք՝ Սովորողը տարբերում է կենսաբանական օբյեկտները նկարների հիման վրա:

Նկ. 65, 9. 9-րդ դասարան, Թեմա՝ Էուկարիոտ և պրոկարիոտ օրգանիզմներ: Վերջնարդյունք՝ Սովորողը ճանաչում է որոշ օրգանոիդներ նկարների միջոցով, դրանց նկարագրություններին համապատասխան նկարում է դատարկ վանդակներում:

Նկ. 66, 9-րդ դասարան, Թեմա՝ Նուկլեինաթթուներ: Վերջնարդյունք՝ Սովորողը ճանաչում է ԴՆԹ մոլեկուլը, պարզ առարկաներից (տվյալ դեպքում՝ իր սիրելի քաղցրավենիքներից) պատրաստում է ԴՆԹ մոդելը:

Նկ. 67, 68, 9-րդ դասարան, Թեմա՝ Գենետիկա: Էուկարիոտ բջջի ժառանգականություն: Վերջնարդյունք՝ Սովորողը կարողանում է պարզ նախադասություններով բնութագրել գենը, քրոմոսոմները: Պատկերների տեղադրությամբ կարողանում է կատարել տրված առաջադրանքները ուսուցչի կամ օգնականի ուղղորդմամբ:



Նկար 65. Կենսաբանական օբյեկտներ



Նկար 66. Նուկլեինաթթուներ

Նկար 67. Գենետիկա



Նկար 68. Բջիջ

Կենսաբանության օրվա դասի պլան

Ուսուցչի անուն, ազգանուն	Դպրոց՝ Առարկա՝ Կենսաբանություն Դասարան՝ 7-րդ Սովորողների թիվ՝ 22, որոնցից 2՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (թեթև տեսողական դժվարություններ, ուսուցման համատեքստում: Ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների 1-ին և 2-րդ աստիճանի աջակցության կարիք ունեցող)	Թեմատիկ պլանավորում https://docs.google.com/document/d/1HTosg9ZLFInC6r7R6fLeNgTm3TigtiyA/edit?usp=sharing&ouid=118112818217807699969&rtpof=true&sd=true Դասագիրք Կենսաբանություն 7, Ա. Եսայան, Ս. Պիպոյան, Լ. Հակոբյան, Աստղիկ գրատուն 2023
Ամսաթիվ	Նպատակը 1. Թարմացնել սովորողների ունեցած գիտելիքները ծաղկավոր բույսերի օրգանների վերաբերյալ որոշակի մանրամասների ներկայացմամբ: 2. Ձևավորել համեմատելու և համադրելու հմտություններ	Կարևոր դրույթները Վեգետատիվ, գեներատիվ օրգաններ, պարզ և բարդ տերևներ, առանցքային և փնջաձև

Դասի թեմա՝ **Ծածկասերմ բույսերի կառուցվածքը**	սովորողների մոտ գեներատիվ և վեգետատիվ օրգանների համեմատության օրինակով: 3. Զարգացնել *կառուցվածքը գործառույթին համապատասխան* վերլուծություններ անելու կարողություններ ծաղկավոր բույսերի օրգանների և դրանց գործառույթների օրինակով: 4. Ապահովել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ակտիվ մասնակցությունը դասապրոցեսին:	արմատային համակարգ, առէջ, վարսանդ, պսակաթերթ, ծաղկակալ, ծաղկակոթ, բաժակաթերթ:
Խաչվող հասկացություններ 1. Կառուցվածք և գործառույթ, 2. Համակարգ և մոդել, 3. Օրինաչափություններ	Վերջնարդյունքներ՝ <u>Սովորողները կկարողանան՝</u> 1. Համադրել նախկին գիտելիքները նոր տեղեկույթի հետ ծաղկավոր բույսերի օրգանների կառուցվածքի և գործառույթների վերաբերյալ: 2. Թվարկել ծաղկավոր բույսերի օրգանների նմանություններն ու տարբերությունները: 3. Կատարել տարատեսակ առաջադրանքներ ինչպես խմբում, այնպես էլ անհատապես: 4. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները կկարողանան իրականացնել առաջադրանքներ կարիքին հարմարեցված գործիքների կիրառմամբ:	

Դասարանի, դասի նախապատրաստում Հիմնական հասկացությունների պաստառ, Մ-աձև աղյուսակով պաստառ գունավոր քարտերով, խմբային աշխատանքի համար պլաստիլին, Ա 4 չափի թղթեր, խոշոր տառաչափով քարտեր, բույսերի նկարներ, սահիկների նկարներ, ծառերի, թփերի, խոտաբույսերի նկարներ տեսողական խանգարում ունեցող սովորողների համար:
Գնահատում Դասի սկզբին՝ հայտորոշիչ գնահատում (հայտորոշիչ հարցում *այո*, *ոչ* պատասխաններով), ձևավորող գնահատում՝ լուսակրի գույների միջոցով դասի արդյունավետության աստիճանի վերլուծություն:

Դասի սկիզբ **12 րոպե (7 ր՝ հայտորոշում, 5 ր՝ մարտահրավերային հարց)**		
Ուղղորդումներ պլանավորելու համար ՈՒՀՁ (UDL) ուղենիշներ	Ուսուցչի գործողությունների նկարագրություն, հրահանգներ, հարցեր	Սովորողների գործողությունների նկարագրություն
Ուղղորդումներ պլանավորելու համար 1. 1. Ի՞նչ են սովորելու սովորողները (դասի թեման և նպատակը): 2. 2. Կարևոր դրույթների ու բառապաշարի ներկայացում, որոնք օգտագործվելու են դասի ժամանակ: 3. Ինչպե՞ս է դա կապվում նրանց	1. Կատարում է հայտորոշում (հայտորոշիչ թեստը՝ տես Հավելված 1) **2.** Գրատախտակին փակցված են բույսերի նկարներ, որոնց վերաբերյալ ուսուցիչը մարտահրավերային հարց է տալիս՝ «Ի՞նչ ընդհանրություններ եք տեսնում նկարներում, պատկերված նկարներից որո՞նք են առանձնանում» (Նկարները՝ տես Հավելված 1): 3. Ներկայացնում է դասի թեման, նպատակները,	Սովորողները տետրում իրականացնում են հայտորոշումը: Լսելով ուսուցչի հարցերը՝ հաջորդաբար տալիս են *այո* կամ *ոչ* պատասխանները՝ օգտագործելով նախկին թեմայից ստացած գիտելիքները: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող

նախկին գիտելիքների հետ: 4. Ինչպե՞ս է կապվում իրական կյանքի հետ: Ինչո՞ւ է դա կարևոր: 5. Ի՞նչ են պատրաստվում անել դասին: 6. Խթանիչ վարժություն (մարտահրավերային հարց)	հիմնական հասկացությունները, որոնք ցուցադրված են գրատախտակին փակցված պաստառի վրա: Օգնականը տեսողական դժվարություններ ունեցող սովորողին տրամադրում է այդ հիմնական հասկացությունները առանձին քարտի վրա՝ ավելի խոշոր տառաչափով:	սովորողները հայտորոշիչ գնահատում են անցնում բոլորի հետ նույն թեստով: Ուսուցչի հետ ստուգում են արդյունքները: Օգնականը կամ սովորողներից մեկը, ով նստած է տեսողական դժվարություններ ունեցող սովորողի կողքին, ցույց է տալիս Հավելված 1-ի նկարները, և միասին փորձում են առանձնացնել այն բույսերը, որոնց վրա թագ պատկերված չէ: Սովորողները ներկայացնում են իրենց վերլուծությունները բույսերի նկարների վերաբերյալ և հանգում ընդհանուր գաղափարի:

Նոր նյութի մատուցում (Սահիկաշարի ներկայացում), 8 րոպե		
Ուղղորդումներ պլանավորելու համար ՈՒՀՁ (UDL) ուղենիշներ	Ուսուցչի գործողությունների նկարագրություն, հրահանգներ, հարցեր	Սովորողների գործողությունների նկարագրություն, ակնկալվող պատասխաններ

Ուղղորդումներ պլանավորելու համար 1. Ի՞նչ են սովորում սովորողները: 2. Ինչպե՞ս են սովորում այդ նյութը: 3. Արդյո՞ք նոր նյութը հանգում է կարևոր դրույթներին և տանում դեպի դասի նպատակը:	Ներկայացնում է պատրաստած սահիկաշարը, որի հիման վրա իրականացնում է նոր նյութի բացատրությունը: Բարձրաձայն ներկայացնում է սահիկներից յուրաքանչյուրում առկա պատկերները: Օգնականը կամ դասընկերը տեսողական դժվարություններ ունեցող սովորողին ցածրաձայն ներկայացնում է սահիկների թղթային տարբերակները: Յուրաքանչյուր սահիկից հետո առաջադրում է ամրապնդող հարցեր, որոնց պատասխաններն ընդհանուր առմամբ դասի հիմնական հասկացություններին են վերաբերում: Սահիկաշարի հղումը՝ Հավելված 2	Լսում են ուսուցչին, պատասխանում առաջադրված հարցերին: Հարցերի պատասխանների հիման վրա ուշադրության են արժանացնում դասի հիմնական հասկացությունները:

Ընկալման ստուգում, 5ր

Գրատախտակին նախապես փակցված է Մ-աձև աղյուսակով պաստառ (պաստառը՝ տես Հավելված 2), որի սյունակներում ամրացնում են ծաղկավոր բույսի վեգետատիվ օրգանների բնութագրիչները: Ուսուցիչը կամ ուսուցչի օգնականը դրանք նախապես ամրացնում է սովորողների դասասեղանների աջ անկյունում: Բնութագրիչների հակառակ կողմերին փակցվում են բույսերի գեներատիվ կամ վեգետատիվ օրգանների նկարներ, որոնք համապատասխանաբար պաստառին ամրացնելուց հետո սովորողները բաժանվում են երկու խմբերի: Թեթև տեսողական դժվարություններ ունեցող սովորողը մասնակցում է ընկալման ստուգմանը բոլորի հետ միասին, իսկ ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների 1-ին աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողի համար ուսուցիչը ներկայացնում է «Ուրախ եմ - տխուր եմ» հարցումը (Տե՛ս **Հավելված 2**):

Ուղղորդված աշխատանք (Խմբային գործնական աշխատանք), 12 րոպե		
Ուղղորդումներ պլանավորելու համար	Ուսուցչի գործողությունների նկարագրություն, հրահանգներ, հարցեր	Սովորողների գործողությունների նկարագրություն, ակնկալվող պատասխաններ
Ուղղորդումներ պլանավորելու համար 1. Ի՞նչ հնարավորություն է տրվում սովորողներին աշխատելու համար: 2. Արդյո՞ք այդ աշխատանքը վերահսկվում է, կամ սովորողներին առաջարկվում է օգնություն: 3. Արդյո՞ք ներկայացված նոր նյութը նախապատրաստել է սովորողներին աշխատելու: 4. Կա՞ն սպասելիքներ լսելու, մասնակցելու, մյուսներին օգնելու: 5. Արդյո՞ք իրականացվող գործողությունները կազմակերպված են:	Նախապես երկու խմբերի համար սեղաններին դրվում են բույսերի վեգետատիվ և գեներատիվ օրգանների ուրվագծված պատկերներ A 4 չափի թղթի վրա և պլաստիլին: Զուգահեռաբար՝ թղթի վրա գրված հարցեր, որոնց պետք է պատասխանեն խմբի անդամները աշխատելու ընթացքում: Առաջադրանքը հետևյալն է. 1. Պլաստիլինապատել օրգանների եզրագծված պատկերները, դրանք կպցնել իրար և ստանալ բույսի որևէ մաս: 2. Պատկերները ստանալուց հետո պատասխանել հարցերին: 3. Ընտրել խմբի աշխատանքը ներկայացնող մեկ կամ երկու սովորողի: Խմբերի համար ներկայացված հարցերը՝ տես Հավելված 3:	Սովորողներն իրենց խմբերում ընտրում են պլաստիլինով աշխատող, հարցերին պատասխանող, ինչպես նաև նյութը ներկայացնող սովորողներին: Սովորողները պլաստիլինապատում են պատկերները, միասին պարզում, թե որ օրգաններն են իրենց բաժին ընկել, ապա պատասխանում առաջադրված հարցերին, միևնույն ժամանակ օրգանները իրար կպցնելով՝ ստանում բույսի որևէ հատված: Աշխատելու համար յուրաքանչյուր խմբի տրվում է 10ր, իսկ պատասխանի համար՝ 1ր:

	Օգնականի հետ ակտիվ մասնակցում են խմբային աշխատանքին, իրականացնում ուղղորդումներ և աջակցություն:	

Ինքնուրույն աշխատանք (Քարտային աշխատանք), 5 րոպե		
Ուղղորդումներ պլանավորելու համար և ՈՒՀՁ (UDL) ուղենիշներ	Ուսուցչի գործողությունների նկարագրություն, հրահանգներ, հարցեր	Սովորողների գործողությունների նկարագրություն
Ուղղորդումներ պլանավորելու համար 1. Ինչպե՞ս է ուսուցիչը հնարավորություն տալիս սովորողներին ինքնուրույն աշխատելու: 2. Ի՞նչ վարժություն կամ առաջադրանք է նախատեսված սովորողների ինքնուրույն աշխատանքի համար:	Յուրաքանչյուր սովորողի տրվում է ինքնուրույն աշխատանքի թերթիկ, որում ներառված է 3-4 առաջադրանք՝ կախված սովորողի կարողություններից: Ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների 1-ին աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողի համար ուսուցիչը կազմում է ռեբուս: Ռեբուսի օրինակը՝ տես Հավելված 3:	Սովորողները նախատեսված ժամկետում կատարում են ինքնուրույն աշխատանքը: Թույլ տեսողական դժվարություններ ունեցող սովորողն աշխատում է իր համար նախատեսված թերթիկով, որում ներառված նյութը համապատասխանում է նրա կարիքին: Ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների 1-ին աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողը

		օգնականի կամ ուսուցչի հետ աշխատում է ռեբուսով:

Դասի ամփոփում (Դասի ընկալման ստուգում լուսակրի գույների միջոցով՝ ձևավորող գնահատում), 3 րոպե		
Ուղղորդումներ պլանավորելու համար և ՈՒՀՁ (UDL) ուղենիշներ	Ուսուցչի գործողությունների նկարագրություն, հրահանգներ, հարցեր	Սովորողների գործողությունների նկարագրություն, ակնկալվող պատասխաններ
Ուղղորդումներ պլանավորելու համար 1. Ինչպե՞ս է անդրադարձ կատարվում կարևոր դրույթներին ու դասի նպատակներին: 2. Ինչպե՞ս է իրականացվում քննարկում սովորածի կարևորության և հետագա կիրառելիության վերաբերյալ: 3. Ի՞նչ անդրադարձ է կատարվում սովորողների	Առաջադրում է երեք հարց գիտելիքների ընկալման աստիճանը ստուգելու համար: 1. Եթե դասի ընթացքում սովորածը մոտ էր ձեր իմացածին, բարձրացնել կանաչ քարտը: 2. Եթե դասի ընթացքում սովորածը բարդ էր ձեզ համար, բարձրացրեք կարմիր քարտը: 3. Եթե դասի ընթացքում սովորածը դեռ ամրապնդելու կարիք	Սովորողները, լսելով ուսուցչի հրահանգը, իրականացնում են համապատասխան գործողությունները:

վարքին և կատարողականին (գնահատում/ խրախուսանք), ինչպե՞ս է դասին հետադարձ կապ ապահովվում:	ունի, բարձրացրեք դեղին քարտը:	

Հավելված 1

1. Հայտորոշիչ թեստ

1. Մերկասերմերը բազմանում են սպորներով: այո/**ոչ**
2. Ավտոտրոֆ պրոտիստները պարզագույն օրգանիզմներ են: **այո**/ոչ
3. Սոճին եղևնուց բարձրահասակ է: այո/**ոչ**
4. Ֆիտոնցիդները թունավոր նյութեր են: այո/**ոչ**
5. Պտերանմանները ունեն վեգետատիվ օրգաններ: **այո**/ոչ

2. Մարտահրավերային հարցի նկարներ

Ո՞ր նկարների բույսերն են ընդհանուր: Ինչպե՞ս պարզեցիք այդ:

Նկար 69. Ծաղկավոր բույսեր

Հավելված 2

1. Սահիկաշարի հղում

https://drive.google.com/file/d/1GXkTRLLqIZm_19azFrO_BpaIgSPzWVtB/view?ts=6731e080

2. Աղյուսակ Մ-ածև

Արմատ	Ցողուն	Տերև

3. Հարցում «Ուրախ եմ - տխուր եմ»: Ուսուցիչը կարող է ստեղծել այս առաջադրանքի մոդելը:

1. Ծաղկավոր բույսերի գեներատիվ օրգան են՝
   ա) ռիզոիդները ☹ բ) արմատները ☺
2. Մերկասերմերի գեներատիվ օրգան է՝
   ա) ծաղիկը ☹ բ) կոնը☺
3. Արմատային համակարգը լոբու մոտ՝
   ա) փնջաձև է ☹ բ) առանցքային է ☺

Հավելված 3

1. Ինքնուրույն աշխատանք

Տարբերակ 1.

1. Նշել ճիշտ պատասխանը.

Ծաղկավոր բույսերն ունեն՝

ա) կոներ, բ) ծաղիկներ, գ) ռիզոիդներ

2. Կատարել համապատասխանեցում.

ա) վեգետատիվ օրգան

բ) գեներատիվ օրգան

ծաղիկ, տերև, ցողուն, սերմ

3. Լրացնել բաց թողնված բառը

Տերևը բույսի _____ օրգանն է: Այն տեղակայված է ցողունի վրա: Բույսի այդ օրգանը կատարում է _____: Բացի ծաղկավոր բույսերից տերևներ ունեն նաև _____ բույսերը:

4. Նկարի վրա նշել 4 և 3 թվերին համապատասխանող մասերը:



Նկար 70. Ծաղկի կառուցվածքը

2. Ռեբուս ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների 1-ին աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողի համար

Նկար 71. Ռեբուսներ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Гуровец Г. В. Коррекционно-развивающие игры как метод обучения в специальной педагогике // Дефектология. – 1996. - №2. – С. 77-83.
2. Ратнер Ф. Л., Юсупов А.Ю.. Интегрированное обучение детей с ограниченными возможностями в обществе здоровых детей /– М.: Гуманитар. изд. центр ВЛАДОС, 2016.
3. UNESCO, World Declaration on Education For All 1990.
4. Mitchell David. Inclusive education is a multi-faceted concept.
5. CEPS Journal 5 (2015) 1, S. 9-30. https://elib.pnzgu.ru/files/eb/doc/yhwnoMwabRcd.pdf y
6. https://prowritingaid.com/art/1093/what-is-the-think-pair-share-strategy.aspx
7. https://infourok.ru/inklyuzivniy-podhod-na-uroka-biologii-3275134.html
8. https://kssovushka.ru/zhurnal/14/1307-primenenie-aktivnyh-metodov-obucheniya-na-urokah-biologii-kak-sistema-formirovaniya-klyuchevyh-kompetentnostei-u-uchashchihsya-s-ovz-v-usloviyah-fgos/
9. https://infourok.ru/inklyuzivniy-podhod-na-uroka-biologii-3275134.html
10. https://logopedprofiportal.ru/blog/901164
11. https://xn--j1ahfl.xn--p1ai/library/_korrektcionnorazvivayushie_uprazhneniya_po_biologii_055200.html
12. https://www.pinterest.com/
13. https://joy2teach.com/product/biology-1-curriculum-special-education-7-units-joy2teach/

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Նախագծային ուսուցումը որպես ներառող դասավանդման միջոց

«Փորձ անելով չենք սովորում. սովորում ենք մեր փորձի մասին դատողություններով անդրադարձ կատարելիս: Նախագծի իրականացման ողջ ընթացքում սովորողները և ուսուցիչը պետք է պարբերաբար անդրադարձ կատարեն իրենց անցած ուղուն՝ պատասխանելով այս հարցերին, թե ինչ են սովորել, ինչպես են սովորել և ինչու են սովորել: Այդպես նրանք արժևորում են իրենց ստացած գիտելիքներն ու կարողությունները և գիտակցում են, թե որտեղ կարելի է դրանք կիրառել»:

Ջոն Դյուի *(1859-1952),*
ամերիկացի փիլիսոփա և մանկավարժ

Համաշխարհային մանկավարժության մեջ նախագծային ուսուցումը նոր երևույթ չէ: Այն առաջին անգամ նկարագրվել է 20-րդ դարի 20-ական թվականներին ԱՄՆ-ում կրթական բարեփոխումների շրջանում, ինչի արդյունքում կրթությունը դարձավ սովորողակենտրոն: Հետագայում այն լայն տարածում ստացավ եվրոպական երկրներում: Վերջինիս ի հայտ գալը կապվում է Ջոն Դյուիի անվան հետ: Նախագծային ուսուցումը ժամանակի ընթացքում զգալի զարգացում է ապրել: Իսկ արդեն մեր օրերում, 21-րդ դարի փոփոխվող աշխարհում միայն ուսուցման ավանդական մեթոդների կիրառումը դասապրոցեսին չի կարող նպաստել ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը և ստեղծարար կարողունակությունների զարգացմանը: Հայաստանի Հանրապետության կրթական համակարգում տեղի ունեցող փոփոխությունների շնորհիվ ներդրվեցին նորագույն մեթոդներ և մոտեցումներ: Այս համատեքստում, կարծում ենք, նշանակալի իրողություն է Նախագծային ուսուցման հայեցակարգի և մոդուլի մշակումն ու ներդրումը, որի հիմնական նպատակը սովորողների մոտ կարողունակությունների ձևավորումն է: Այն, որպես ուսուցման կարևոր բաղադրիչ, այսօր ներառված է նաև պետական հանրակրթական նոր չափորոշիչներում: Նախագծային ուսուցման մեթոդը իր նշանակությամբ կարևոր տեղ է զբաղեցնում մանկավարժական ժամանակակից մեթոդների շարքում: Այն թույլ է տալիս

անհատական մոտեցում ցուցաբերել ուսուցմանը, սովորողներին հնարավորություն է տալիս դրսևորելու ինքնուրույնություն իրենց գործունեության պլանավորման ընթացքում: Նախագծերն իրականացնելիս ուսումնառությունը պետք է կազմակերպել սովորողների նպատակային գործունեության միջոցով, ընդգծել սովորողների կապը կյանքի հետ, ուսումնասիրության հիմնախնդիրները բերել իրական կյանքից: Այս դեպքում կապահովվեն սովորողների հմտությունների, կարողությունների, տեղեկատվական դաշտում ճիշտ կողմնորոշվելու, քննադատական մտածողության զարգացումը: Ցանկացած նախագիծ անպայման ունի իր իրականացման փուլերը.

1. *հիմնահարցի ձևավորում,*
2. *աշխատանքային խմբի (խմբերի) ձևավորում,*
3. *հետազոտական աշխատանքների, հարցերի բաժանում,*
4. *խմբերի ինքնուրույն աշխատանք,*
5. *հետազոտություն,*
6. *ստացված արդյունքների ընթացիկ (միջանկյալ) քննարկում,*
7. *կատարված աշխատանքների ներկայացում:*

Նախագծերի ներկայացման ձևաչափը որոշվում է նախապես, այն կարող է լինել տեսանյութի, ֆոտոշարքի և/կամ հոդվածի տեսքով:

Ցանկացած նախագծի հիմնական նպատակն է տարբեր կարողությունների ձևավորումը, որոնք ժամանակակից մանկավարժության մեջ անվանում են անձնային համալիր առանձնահատկություններ՝ գիտելիքների, հմտությունների, արժեքների փոխկապակցում, ինչպես նաև համապատասխան իրավիճակում ստացած գիտելիքները կիրառելու պատրաստակամություն:

Նախագծերը կարող են լինել անհատական և խմբային ձևաչափով: Վերջինիս իրականացման ժամանակ սովորողների մոտ զարգանում են տարբեր կարողություններ, որոնք հաջողություն են բերում կյանքում: Մասնավորապես, բովանդակային գիտելիքը և հասկացությունների ընկալումը ինքնին բավարար չեն այսօրվա աշխարհում: Դպրոցում, քոլեջում, համալսարանում, ժամանակակից աշխատավայրում և, ընդհանրապես, իրենց կյանքում մարդիկ պետք է կարողանան քննադատաբար մտածել, խնդիրներ լուծել, իրենք իրենց դրսևորել թիմային աշխատանքում: Այս բոլոր կարողությունները նպաստում են հաջողություններ գրանցելուն: Դրանք հայտնի են նաև որպես «21-րդ դարի կարողություններ»: Հարկ ենք համարում նշել, որ հաջողության կարողությունները կարելի է սովորեցնել

միայն բովանդակային գիտելիքի ձեռքբերման միջոցով: Սովորողները քննադատական մտածողության կարողությունները ձեռք չեն բերում առարկայական բովանդակությունից առանձին, վերացական ձևով: Նրանք այդ մտածողությանը հասնում են քննադատականություն դրսևորելով մաթեմատիկայի, բնական գիտությունների, պատմության, մայրենի լեզվի մասին գիտելիքներ ձեռք բերելիս: Առաջարկվում է, որ բոլոր ուսումնական նախագծերը կենտրոնանան հաջողության նշված կարողությունների վրա՝ քննադատական մտածողություն, խնդրի լուծում, համագործակցություն և ինքնակառավարում: Հաջորդը անընդհատ հարցադրումներ անելն է, ինչը նշանակում է փնտրել տեղեկություններ կամ հետազոտել: Դա ավելի ակտիվ գործունեություն է, քան տեղեկատվական գրքերից կամ համացանցից ինչ-որ բան արագ վերցնելը: Երբ սովորողները դեմ առ դեմ հանդիպում են բարդ խնդիրների՝ առանց պատրաստի լուծումների, նրանք շատ կրկնողական գործողություններ և հարցադրումներ են անում, և հնարավոր է, որ ավելի օպտիմալ լուծումների հանգեն իրենց ինքնատիպ և քննադատական մտածողությամբ: Նրանք հարցադրումներ են անում, դրանց պատասխանները գտնելու համար աղբյուրներ որոնում, հետո ավելի հեռուն գնացող հարցեր տալիս: Այդ գործընթացը կրկնվում է այնքան, մինչև նրանք խնդրի լուծմանն են հանգում կամ էլ հարցին բավարար պատասխան են ստանում: Նախագծերը կարող են միավորել տարբեր տեղեկատվական աղբյուրները. ավանդական գիրք կարդալը և համացանցում տեղեկատվություն փնտրելը միահյուսվում են իրական կյանքի տեղեկատվական աղբյուրներին՝ առարկայական փորձերին, տվյալ բնագավառի փորձագետների հետ հարցազրույցներին: Սովորողները կարող են նաև հարցեր տալ այն մարդկանց, որոնք օգտագործելու են իրենց նախագծով ստեղծվող արտադրանքը, կամ հարցումներ անել սոցիալական ցանցերում:

Երբ մարդիկ ասում են, որ ինչ-որ բան վավերական է, նկատի ունեն, որ դա իսկական է, կեղծ չէ: Ուսումնական նախագծեր ձեռնարկելիս պետք է մտածել, թե որքանով են դրանք իրական կյանքին մոտ: Վավերականությունը մեծացնում է սովորելու շարժառիթը, ձգտումները: Ուսումնական նախագծերում նշվող խնդիրները պետք է նման լինեն այն խնդիրներին, որոնց մարդիկ առնչվում են իրական կյանքում. օրինակ՝ ձեռներեցները գործարար պլան են մշակում, ճարտարագետները կամուրջ են նախագծում, նախագահի խորհրդականները խորհուրդներ են տալիս իրականացվող քաղաքականության վերաբերյալ, լրագրողների խումբը հասարակությանը հուզող որևէ հարցի մասին

արհեստավարժ վավերագրական ֆիլմ է ստեղծում՝ օգտագործելով համակարգչային խմբագրող տարբեր ծրագրեր: Ուսումնական նախագիծը մեծ ազդեցություն կունենա հանրության վրա, եթե սովորողները հանրային, համայնքային նշանակության նախագծեր իրականացնեն. օրինակ՝ դպրոցական պարտեզի նախագծումը և ստեղծումը, հանրային զբոսայգու բարելավման աշխատանքներ կատարելը և այլն:

Սովորողները նախագիծն իրենցն են համարում, եթե դրա ստեղծման գործում մասնակցություն են ունեցել: Այդ դեպքում նրանք ավելի ջանասիրաբար են աշխատում: Նրանք նախագծի իրականացման վերահսկողությունը իրենց ձեռքն են վերցնում, որպես աշխատանքային թիմի անդամ որոշում իրենց դերը աշխատանքի բաժանման ընթացքում: Հետազոտական աշխատանքի ժամանակ իրենք են ընտրում տեղեկատվական աղբյուրները: Եվ հակառակը, եթե սովորողներին նախագծի առաջարկ անելու, իրենց դատողություններն օգտագործելու հնարավորություն չի տրվում, ապա այդ աշխատանքը նրանք չուզենալով և պարտավորված են անում՝ ըստ ցուցումների:

Նախագծային ուսուցմամբ դպրոցում պետք է սովորեցնել, որ սովորողները քննության ենթարկեն և գնահատեն իրենց հասակակիցների կատարած աշխատանքը, իրականացվող նախագծի ընթացքը: Իրականացվող և արդեն իրականացված նախագծերը կարող են գնահատել նաև նախագծերի ուղղությամբ մասնագիտացած արտաքին փորձագետները:

Ուսումնական նախագծի վերջնական արդյունքը կարող է լինել առարկայական, շոշափելի, կամ որոշակի խնդրի լուծման կամ հանրային հնչեղություն ունեցող հարցի պատասխանի ներկայացում: Նախագծի վերջնական արդյունքի հանրային ներկայացման հեռանկարը մեծացնում է նախագծի լրջությունն ու դրա նկատմամբ պատասխանատվությունը: Մի բան է նախագծի արդյունքը դասընկերներին ներկայացնելը, մեկ այլ բան՝ դա ամբողջ դպրոցին, առավել ևս՝ դպրոցից դուրս, համայնքին ներկայացնելը: Նախագծի վերջնական արդյունքի հանրային ներկայացմամբ հետաքրքրվում են նաև ծնողները, և այն ավելի սոցիալական բնույթ է կրում: Նախագծային ուսուցմամբ ձեռք բերվող կրթության հանրային գնահատականն ավելի բարձր է, քան առարկայական քննական թեստերից ստացած միավորները: Նախագծային աշխատանքների շնորհանդեսի գնահատման համար դպրոցը կարող է հրավիրել հանձնաժողով՝ կազմված տարբեր ոլորտների մասնագետներից, ովքեր նախագծերին

ծանոթանալուց հետո կիրականացնեն դրանց գնահատումը, կծավալեն քննարկումներ: Նախագծային խմբերը ձևավորում են թղթապանակներ, որոնցում ներառում են նախագծերի աշխատանքների հետ կապված բոլոր նյութերը: Նախագիծը ներկայացնող խումբը հանձնաժողովին է հանձնում իր թղթապանակը, ներկայանում իր պատրաստած շնորհանդեսով: Հարց ու պատասխանի արդյունքում հանձնաժողովի անդամներն իրականացնում են նախագծերի միավորային գնահատում:

Նախագծի բուն նպատակներից մեկը սովորողների մոտ ուսումնասիրվող նյութի վերաբերյալ հետաքրքրություն առաջ բերելը և դրան գնահատական տալն է: Այն պետք է լինի նպատակաուղղված, զարգացնի սովորողի ճանաչողական ունակությունները, նպաստի բարոյական հատկանիշների ձեռքբերմանը՝ սեր հայրենիքի, նրա մշակույթի, պատմության, ինչպես նաև՝ հարգանք հարևան ժողովուրդների նկատմամբ:

Իհարկե, նախագծային մեթոդի կիրառման ժամանակ ի հայտ են գալիս դժվարություններ՝ պայմանավորված աշխատանքի ընթացքում միջառարկայական կապերին վերաբերող գիտելիքների օգտագործման անհրաժեշտությամբ: Այս խնդիրը հեշտ է լուծվում, եթե նախագծային աշխատանքների բաժանում կատարելիս ուղղորդվենք նախագծի իրականացման համար անհրաժեշտ այլ առարկաներից սովորողների պատրաստվածության հաշվառմամբ: Ուսումնական նախագծերը նպաստավոր պայմաններ են ստեղծում սեփական հնարավորությունները ճանաչելու և հետագայում զարգացնելու համար: Մասնավորապես նպաստում են վերջիններիս մոտ հետազոտական հմտությունների, արդյունավետ հաղորդակցության կարողությունների, թիմային և համագործակցային հմտությունների լավարկմանը:

Նախագծային մեթոդը ճկուն է. կարող է հարմարեցվել տարբեր միջավայրերի և ուսումնական նպատակների: Այն առավել արդյունավետ է, երբ դուրս է գալիս դասարանային և դպրոցական մակարդակից և գնում դեպի համայնք: Ակնհայտ է ուսումնական մեթոդի և քաղաքացիական ակտիվության կապը. այն առավելապես ակնհայտ է այն նախագծերում, որոնց մասնակիցները փորձում են անդրադառնալ համայնքային հիմնախնդիրներին:

Իրականացնելով համայնքային նախագիծ՝ սովորողները ձեռք են բերում կարևոր գիտելիքներ և հմտություններ, ինչպես նաև արժեքային դիրքորոշումներ, որոնք ժամանակակից քաղաքացիական ներգրավվածության տեսանկյունից շատ

կարևոր են: Սովորողները տեղեկանում են, թե որտեղից են ծագում համայնքային տարատեսակ խնդիրները և պատասխանատվություն ու կապվածություն են ձեռք բերում իրենց համայնքի հանդեպ: Սովորողը հավասար պատասխանատվություն է ստանձնում իր համայնքի թե՛ ձեռքբերումների, թե՛ այն բացասական երևույթների համար, որոնք առկա են իր շրջապատում:

Ուսուցչի դերը նախագծային ուսուցման գործընթացում անչափ կարևոր է. սովորողներն իրենց ուսուցչին դերային մոդել են համարում: Փոփոխվող աշխարհի և տեղեկատվական մեծ հոսքի պայմաններում դա մեծ մարտահրավեր է ուսուցչի համար, որից լուրջ պատրաստվածություն և աշխատանքի կարևորության գիտակցություն է պահանջվում:

Նախագծային ուսուցման միջոցով ստացած ամեն գիտելիք կամ հմտություն լիովին համապատասխանում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կրթության չորս գերակայությունների տրամաբանությանը, մասնավորապես.

- Ս**ովորել իմանալու համար**, այսինքն՝ մենք սովորում ենք գիտելիք ստանալու համար, որը մեզ անհրաժեշտ է, ինչպես նաև օգտակար տվյալ պատմական ժամանակաշրջանի համար: Նախագծային ուսուցման մեջ ներգրավված բոլոր մասնակիցները կոնկրետ թեմայի կամ առարկայի շրջանակում ստանում են կոնկրետ խորքային գիտելիքներ:
- **Սովորել կիրառելու համար**, այսինքն՝ սովորածը կյանքում, համապատասխան իրավիճակում կյանքի կոչելու համար:
- **Սովորել կյանքի համար**, այսինքն՝ այնպիսի արժեքներ ենք ձևավորում մեր սովորելու և փորձի ընթացքում, որոնք անհրաժեշտ են ողջ կյանքի համար: Սովորողների մոտ ձևավորվում են շրջապատի, համայնքի հանդեպ անտարբեր չլինելու, փոխարենը՝ շրջապատում տեղի ունեցող երևույթների հանդեպ պատասխանատվություն ստանձնելու որակներ:
- **Սովորել միասին ապրելու համար**. այս աշխարհում մենք միայնակ չենք, և մեզ շրջապատում են շատ մարդիկ, որոնք մեզանից տարբեր են: Այսինքն՝ մենք սովորում ենք համակեցության կանոնները և ձևերը:

Այսպիսով, նախագծային ուսուցումը ուսուցչի և սովորողի աշխատանքը կազմակերպելու յուրօրինակ ձև է: Վերջինիս շրջանակում սովորողները կազմում են թիմեր և իրականացնում մեծածավալ, երկարաժամկետ նախագծեր, որոնք ուղղված են իրական համայնքային խնդիրների լուծմանը: Նախագծերի իրականացման արդյունքում սովորողների մոտ զարգանում են մի շարք

կարևորագույն հմտություններ, ինչպիսիք են թիմային աշխատանքը, բիզնես մտածելակերպը, պատասխանատվությունը, աշխատանքի պլանավորումն ու բաշխումը, ժամանակի կառավարումը, առաջնահերթությունների կարգավորումը և այլն: Նախագծային ուսուցման շնորհիվ սովորողները, փորձելով սեփական ուժերը այս կամ այն ոլորտում, կողմնորոշվում են նաև ապագա մասնագիտության ընտրության հարցում:

Այստեղ հարկ ենք համարում հիշատակել Ա. Դը Սենտ-Էքզյուպերիի խոսքերը. «Եթե ուզում ենք, որ մարդը նավ կառուցի, պետք չէ նրան սովորեցնել օգտվել գործիքներից, այլ պետք է սովորեցնել սիրել ծովը»: Եթե սիրում է ծովը, ապա նա ինքնուրույն սովորում է օգտվել բոլոր գործիքներից: Նախագծային ուսուցումը հենց «ծովը սիրելու մասին է»: Նախագծային ուսուցումը պայմանականորեն սովորեցնում է «սիրել ծովը», երեխան ձևավորում է իրական ցանկություն, գիտակցում է, թե ինչի համար է պետք սովորել, ինչ հմտություն, ինչ կարողունակություններ են պետք, միջանձնային, թիմային, վերլուծական ինչ հմտություններ են պետք: Եվ այդ ամենը նա անում է, որովհետև ունի նպատակ, որը կյանքի է կոչում: Այստեղ շատ կարևոր է, որ նախագծային ուսուցման ղեկավարի՝ ուսուցչի և սովորողների մոտիվացիաները համընկնեն. այդ դեպքում նախագիծը հաջողվում է: Իսկ այդ նախագծի արդյունքը, ըստ էության, փոխում է սովորողների կյանքը:

Նախագծային ուսուցումը ներառող դասավանդման համատեքստում

Հանրակրթական հաստատություններում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները հաճախ անկարող են համընթաց քայլել իրենց հասակակիցների հետ: Չնայած նրանք կարող են ներառվել ուսուցչի կողմից մշակված տարբեր համագործակցային խմբում, սակայն հակված են դժկամությամբ արտահայտվել, խոսել՝ վախենալով սխալվելուց: Բայց երբ սովորողները մասնակցում են ներկայացվող նախագծին, նրանք ներդրումներ են կատարում թեմայի և առաջադրանքի լուծման գործում: Նախագծային ուսուցումը ուսուցիչներին ազատություն է տալիս սովորողների անհատական կարիքներին և հետաքրքրություններին համապատասխան նախագծեր, ուսուցման ուղիներ և գնահատման չափանիշներ մշակելու հարցում: Բացի այդ, երբ տարբեր ակադեմիական ունակություններ ունեցող սովորողները միասին աշխատում են, նրանք բացահայտում են միմյանց ուժեղ կողմերը և սովորում ապավինել այդ ուժեղ կողմերին՝ հաջող նախագիծ ստեղծելու համար: Կրթության առանձնահատուկ

պայմանների կարիք ունեցող սովորողների կրթական գործընթացն իրականացվում է երկու հիմնական կրթական միջավայրերում՝ հանրակրթական և հատուկ կրթական դասարաններում: Այս համատեքստում նախագծային ուսուցման մեթոդաբանության կիրառումը կարող է զգալի արդյունավետություն ապահովել ակադեմիական և սոցիալ-հուզական առանձնահատկություններ ունեցող սովորողների կրթական ներառման գործում: Մասնավորապես, նախագծային ուսուցման վերաբերյալ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ խմբերում աշխատանքը դրական ազդեցություն է թողնում հատուկ կրթական կարիքներով երեխաների սոցիալական հմտությունների զարգացման վրա: Հատկապես խմբային փոխգործակցությունը նպաստում է նրանց սոցիալական հարմարմանը՝ ապահովելով լիարժեք համագործակցություն հասակակիցների հետ: Այն թույլ է տալիս սովորողներին ազատորեն զարգացնել իրենց ուժեղ կողմերը՝ զբաղվել իրենց համար կարևոր գործով: Եթե ուսուցիչները կարողանան ճիշտ մշակել նախագծային ուսուցման պլան և ժամանակահատված, հնարավոր կլինի բացահայտել թաքնված կամ ոչ այնքան զարգացած տաղանդներ, որոնք կարող էին երբեք չհայտնաբերվել առանց նախագծային ուսուցման ընձեռած ազատության: Ահա այն հիմնական գործոնները, որոնք պետք է հաշվի առնի ուսուցիչը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողին նախագծային աշխատանքի մեջ ներգրավելիս.

1. **Անհատական կրթական կարիքներ**
   - Յուրաքանչյուր սովորողի սահմանափակումների և ուժեղ կողմերի մանրակրկիտ վերլուծություն
   - Սովորողի ֆիզիկական, մտավոր և զգայական հնարավորությունների գնահատում
   - Անձնային զարգացման և ուսուցման անհատական ծրագրի մշակում
2. **Հարմարեցված միջավայր և ռեսուրսներ**
   - Ֆիզիկական միջավայրի հարմարեցում (աշխատանքային տարածք, սարքավորումներ)
   - Տեխնոլոգիական աջակցության միջոցներ
   - Հատուկ ուսումնական նյութեր և դիդակտիկ պարագաներ
3. **Մեթոդական աջակցություն**
   - Ուսուցման տարբեր մեթոդների կիրառում
   - Աշխատանքի՝ քայլերի բաժանում և պարզեցում

- Անհատական ուղղորդում և խորհրդատվություն

4. **Հուզական և սոցիալական աջակցություն**
   - Դրական և ներառական մթնոլորտ ստեղծելու ռազմավարություններ
   - Հասակակիցների հետ համագործակցության խթանում
   - Հուզական աջակցություն և վստահելի միջավայր
5. **Գնահատման ճկուն մոտեցումներ**
   - Անհատական առաջընթացի գնահատում
   - Տարբեր գնահատման ձևեր
   - Ուժեղ կողմերին ուշադրություն դարձնելը
6. **Մուտքի և մասնակցության հարմարեցում**
   - Նախագծի առաջադրանքների հարմարեցում
   - Աշխատանքի տևողության և պահանջների կարգավորում
   - Տարբեր դերերի և պարտականությունների տրամադրում
7. **Մասնագիտական աջակցություն**
   - Դպրոցի հոգեբանի և սոցիալական մանկավարժի խորհրդատվություն
   - Անհրաժեշտ մասնագետների ներգրավում
   - Ուսուցիչների վերապատրաստում
8. **Ծնողական աջակցություն**
   - Ծնողների հետ սերտ համագործակցություն
   - Տնային աջակցության ռազմավարություններ
   - Նախագծի մասին պարբերաբար տեղեկատվության տրամադրում
9. **Անվտանգության և հարմարավետության ապահովում**
   - Անվտանգ աշխատանքային միջավայրի ստեղծում
   - Հուզական և ֆիզիկական հարմարավետության ապահովում
   - Անձնական տարածության հարգում
10. **Շարունակական գնահատում և հետադարձ կապ**
    - Նախագծի ընթացքի շարունակական մշտադիտարկում
    - Սովորողի առաջընթացի վերլուծություն
    - Անհրաժեշտ փոփոխությունների կատարում:

Այս գործոնները հաշվի առնելը կնպաստի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների լիարժեք ներառմանն ու հաջողությանը նախագծային աշխատանքի ժամանակ: Ավելին, փաստական տվյալները վկայում են, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները,

ովքեր ներգրավված են նախագծային ուսուցման գործընթացում, հակված են ցուցաբերելու ավելի բարձր ուսումնական առաջադիմություն: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս ստեղծել ներառական, աջակցող և փոխօգնության վրա հիմնված կրթական միջավայր: Այսպիսով, նախագծային ուսուցումը անհատականության վրա հիմնված ուսուցման ձև է, որը թույլ է տալիս հաշվի առնել երեխայի հոգեկան և ֆիզիկական վիճակը՝ ապահովելով իրատեսական և իրագործելի ուսումնական, իմացական, հաղորդակցական ծանրաբեռնվածություն: Բացի այդ, վերջինիս իրագործման ընթացքում անհրաժեշտ է տարբեր մասնագետների ներգրավվածությունը, ինչը կնպաստի երեխայի խնդրի բազմակողմանի լուծմանը թիմային մոտեցմամբ, իսկ ծնողները կրթական գործընթացի ակտիվ մասնակիցներն են, ինչը առավել անհրաժեշտ է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին:

Միաժամանակ, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ներգրավումը նախագծային ուսուցման գործընթացում ունի նաև մի շարք դրական կողմեր: Նախագծային ուսուցումը կարող է նպաստել այս սովորողների ներառմանը կրթության գործընթացում և սոցիալական հմտությունների զարգացմանը մի քանի կարևոր ուղղություններով: Այն ներառում է կրթական, հուզական, սոցիալական և այլ հմտությունների զարգացման մի շարք բաղադրիչներ, մասնավորապես.

1. **Անձնային զարգացում**
   - Նախագծերը հնարավորություն են տալիս սովորողներին ցուցադրել իրենց ուժեղ կողմերը և ստեղծագործական ներուժը:
   - Աշխատանքի տարբեր փուլերում նրանք կարող են զարգացնել սեփական ինքնավստահությունը և ունակությունների գիտակցումը:
2. **Սոցիալական հմտություններ**
   - Խմբային նախագծերը խթանում են թիմային աշխատանքի և համագործակցության կարողությունները:
   - Սովորողները սովորում են շփվել և փոխգործակցել տարբեր ունակությունների տիրապետող մարդկանց հետ:
3. **Հարմարվողականություն**
   - Նախագծային ուսուցումը կարող է հարմարեցվել տարբեր կրթական կարիքներին:

- Հնարավոր է ստեղծել աջակցող միջավայր՝ հաշվի առնելով յուրաքանչյուր սովորողի առանձնահատկությունները:

4. **Գործնական հմտությունների զարգացում**
   - Նախագծերը նպաստում են խնդիրների լուծման, քննադատական մտածողության, սեփական ժամանակի կառավարման և ինքնուրույն աշխատելու ունակությունների զարգացմանը:
   - Սովորողները կարող են ձեռք բերել կյանքի համար կարևոր գործնական հմտություններ:
5. **Կրթական ազդեցություն**
   - **Բարձրացնում է նյութի յուրացման մակարդակը:** Նախագծային աշխատանքների ընթացքում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները հնարավորություն են ստանում թեման տեսողական, լսողական և գործնական մեթոդներով ուսումնասիրելու, ինչը օգնում է ավելի լավ ընկալել բարդ նյութերը:
   - **Աջակցում է խնդիրների լուծման հմտությունների զարգացմանը:** Նախագծերը սովորեցնում են ինքնուրույն մտածել, հետազոտել և գտնել ստեղծագործական լուծումներ:
6. **Հուզական ազդեցություն**
   - **Ապահովում է ինքնավստահության աճ:** Նախագծերում հաջողության հասնելը, անգամ փոքր մասերի իրականացման դեպքում, բարձրացնում է սովորողի ինքնավստահությունը և մոտիվացիան:
   - **Ստեղծում է պատասխանատվության զգացում:** Նախագծերում յուրաքանչյուր սովորող ունի իր առանձին դերը, ինչը սովորեցնում է պատասխանատվություն կրել իր աշխատանքի համար:
7. **Սոցիալական ազդեցություն**
   - **Խթանում է համագործակցությունը:** Նախագծային ուսուցման գործընթացում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները ներգրավվում են թիմային աշխատանքում, որտեղ նրանք սովորում են համագործակցել և հաղորդակցվել իրենց հասակակիցների հետ:
   - **Խթանում է սոցիալական ներառվածությունը:** Նախագծերում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներն աշխատում

են մյուսների հետ հավասար պայմաններով, ինչը նպաստում է բոլորի կողմից ընդունված լինելու և հավասարության մթնոլորտի ստեղծմանը:

Ընդհանուր ազդեցություն

Նախագծային ուսուցումը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար ստեղծում է ներառական միջավայր, որտեղ նրանց կարիքները ոչ միայն հաշվի են առնվում, այլև դառնում են համագործակցության և արդյունավետ ուսուցման կարևոր մաս: Սակայն կարևոր է նաև հաշվի առնել, որ արդյունավետ ներառական նախագծային ուսուցման համար անհրաժեշտ է.

- ❖ մանկավարժների լավ նախապատրաստում և զգայունություն,
- ❖ անհատական մոտեցումների կիրառում,
- ❖ բավարար աջակցության և ռեսուրսների առկայություն:

Վերջինիս մասին փաստում են միջազգային տարբեր հետազոտություններ, համաձայն որոնց՝ նախագծային ուսուցումը կարող է զգալի դրական ազդեցություն ունենալ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար, նպաստել նրանց սեփական սոցիալական հմտությունների, ինքնագնահատականի ու մոտիվացիայի աճին: Ամփոփելով, կարող ենք արձանագրել, որ նախագծային ուսուցումը կարող է լինել արդյունավետ գործիք կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար՝ նպաստելով նրանց ներառականությանը, սոցիալական և կրթական զարգացմանը:

Ստորև կներկայացնենք նախագծային ուսուցման օրինակներ, որոնցում ներգրավված են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներ.

Նախագիծ 1.

Թեմա: Հայոց ցեղասպանության պատմությունը և դրա ազդեցությունը ժամանակակից աշխարհում

Դասարան՝ 9-րդ

Ընդհանուր նպատակ: Վերլուծել պատմական իրադարձությունները և դրանց պատմաքաղաքական հետևանքները՝ խթանելով հետազոտական և համագործակցային հմտությունները:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ներդրումը և ակնկալվող արդյունքը.

1. **Առանձին առաջադրանքներ**
   - Պատմական քարտեզի վերլուծություն: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողին կարելի է տրամադրել պարզեցված քարտեզ, որտեղ նշված են այն վայրերը, որտեղ տեղի են ունեցել հայերի զանգվածային կոտորածներ:
   - Նկարազարդումների պատրաստում պարզեցված գործիքներով, օրինակ՝ Google Slides-ի միջոցով կամ թղթային տարբերակով՝ պաստառի վրա:
2. **Աջակցություն**
   - Վիզուալ/տեսողական նյութերի պատրաստում՝ ներառյալ նկարչական տաբլետները կամ պարզ գծագրերը:
   - Գործընկեր սովորողի օգնություն նյութի վերլուծության ընթացքում:

Նախագծի արդյունքներ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի համար.

- Սովորողը ոչ միայն մասնակցում է նախագծային աշխատանքին, այլև վերջնական արդյունքի կարևոր մաս է կազմում, օրինակ՝ ներկայացնում է իր պատրաստած վիզուալ նյութը:
- Ձեռք է բերում գործնական ու սոցիալական նոր հմտություններ, որոնք կարող է կիրառել այլ առարկաների ուսումնասիրման ժամանակ և իրական կյանքում:

Տեխնոլոգիաների կիրառման օրինակ
Նախագիծ 2.
Թեմա: Հայաստանի պատմության ժամանակագրական քարտեզի պատրաստում:
Գործիքներ.

- **Canva** կամ **Google Slides**՝ գրաֆիկական տարրերի համար:
- **Google Earth**՝ ժամանակագրական քարտեզների համար:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի դերը.

1. **Տեսողական նյութերի (վիզուալ տարրերի) պատրաստում**
   Օրինակ՝ առանձնացնել Հայաստանի պատմական շրջանների հիմնական փուլերի վերաբերյալ տեղեկատվություն և տեղադրել ժամանակագրական գծապատկերի վրա:

2. **Հիմնական փաստերի ամփոփում:**
   Սովորողը պատրաստում է պարզեցված ամփոփումներ՝ ներկայացնելու համար:

Արդյունքներ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի համար

- Ստեղծագործական աշխատանքը նպաստում է տեխնոլոգիական հմտությունների զարգացմանը:
- Սովորում է իր հնարավորությունների շրջանակներում վերլուծել և ներկայացնել տեղեկատվությունը խմբի առջև:

Հուզական և սոցիալական ազդեցություն

Նախագիծ 3.

Թեմա: Խմբային թատերական ներկայացում պատմական իրադարձության մասին:

- **Նպատակ:** Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողին ներգրավել թատերական խմբում որպես դերասան կամ նյութեր պատրաստող:
- **Օրինակ:** Եթե սովորողը չի կարող ակտիվ մասնակցել գործընթացին, նրան կարելի է վստահել մանրամասն նկարազարդումներ կամ պաստառների պատրաստում:

Արդյունքներ

1. **Հուզական աջակցություն:** Սովորողը զգում է իր կարևորությունը խմբի աշխատանքում:
2. **Սոցիալական ներառում:** Ապահովվում է թիմի հետ աշխատելու հնարավորություն:

Նախագծային աշխատանքը նպատակաուղղված է ոչ միայն կրթական խնդիրների լուծմանը, այլև սովորողի անձնական զարգացմանը և հասարակության մեջ ներառմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ալեքսանդր Շագաֆյան, Նախագծային ուսուցում, ԲՈՒՆ թիվի, https://www.youtube.com/watch?v=PFc6sbAZSzk&ab_channel=%3A%D4%B2%D5%B8%D6%82%D5%B6TV
2. Դավիթ Սահակյան, Նախագծային կրթությունը «ԱՅԲ» դպրոցում, տեսանյութի հղումը՝ https://shorturl.at/dHNY9
3. «Դպիր» մանկավարժական հանդես, Նախագծային ուսուցում. այլոց փորձի ուսումնասիրում, https://dpir.mskh.am/hy/node/1759
4. Նախագծային ուսուցման կիրառումը նախադպրոցական հաստատություններում
5. https://escs.am/files/files/2021-10-18/e2d8fba12e16f3699429e9bf678dd872.pdf Diamanto Filippatou Stavroula Kaldi, The effectiveness of Project-Based Learning on pupils with learning difficulties regarding Academic performance, Group work and Motivation, International Journal of Special Education, University of Thessaly Vol 25 No 1, 2010, pp. 17-18. https://files.eric.ed.gov/fulltext/EJ890562.pdf
6. John Dewey. "What is thought?" Chapter 1 in How we think. Lexington, Mass: D.C. Heath, (1991).
7. The Benefits of PBL for Students with Special Needs, Mississippi College, November 1, 2018 (09.03.2023), https://bit.ly/49v6Mpv
8. Ashley M. Kilby, New York, 2018, Using Project-Based Learning in Special Education Classrooms https://soar.suny.edu/bitstream/handle/20.500.12648/326/Kilby_Ashley_MastersProject_Fall2018.pdf?sequence=1&isAllowed=y
9. Jerry Webster, Project Based Learning for Special Education and Inclusion, January 31, 2019, https://www.thoughtco.com/project-based-learning-for-special-education-3111012

Բազմակողմանի համագործակցությունը առանցքային նշանակություն ունի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների (ՏՄԱԿ) գործունեության համար: Ինչպես կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման, այնպես էլ աջակցության ծառայությունների մատուցման, վերապատրաստումների և խորհրդատվության տրամադրման պարագայում անչափ կարևոր է տարածքային թիմի անդամների համագործակցությունը:

Համագործակցությունը կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման գործընթացում

Եթե ուսումնական գործընթացում սովորողի մոտ նկատվել են ուսումնառության հետ կապված կայուն դժվարություններ կամ բացառիկ ընդունակություններ, ապա կրթության առանձնահատուկ պայմաններ սահմանելու նպատակով սովորողը կարող է ներկայացվել կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման՝ երեխայի կրթության վայր հանդիսացող հաստատության դիմումի հիման վրա, եթե դիմումին կցված է ծնողի ստորագրած համաձայնագիրը, կամ խնամակալության և հոգաբարձության մարմնի դիմումի հիման վրա (Ձև 5, 6, 7): Սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը կարող է իրականացվել նաև անմիջականորեն ծնողի դիմումի հիման վրա՝ նույն ընթացակարգով (Ձև 8)[68]:

ՏՄԱԿ-ի տնօրենի հրամանով ձևավորվում է տվյալ սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը գնահատող մանկավարժական աշխատողների խումբ (Գնահատող խումբ): Գնահատող խմբում ներառվում են ՏՄԱԿ-ի առնվազն երկու մանկավարժ (հատուկ մանկավարժ և սոցիալական մանկավարժ) և մեկ հոգեբան, ըստ անհրաժեշտության գնահատող խմբում կարող են ներգրավված լինել նաև այլ մանկավարժներ և մասնագետներ[69]: Անչափ

[68] ՀՀ կրթության և գիտության նախարարի N 370-Ն հրամանը կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգը հաստատելու մասին, 13 ապրիլի 2017 թ.:

[69] ՀՀ կրթության և գիտության նախարարի 13 ապրիլի 2017 թ. N 370-Ն հրաման:

կարևոր է, որպեսզի գնահատող խմբի անդամների միջև առկա լինի սերտ փոխգործակցություն: Գնահատման գործիքի կիրառման ընթացքում բացահայտվում են ինչպես երեխայի ուժեղ կողմերը, այնպես էլ այն կայուն դժվարությունները, որոնք խոչընդոտում են երեխայի՝ լիարժեք կրթություն ստանալուն: Գնահատող խմբի անդամները գնահատման գործիքը կիրառելիս պետք է պարբերաբար խորհրդակցեն միմյանց հետ, փոխանակվեն մտքերով, արտահայտեն իրենց կարծիքներն ու դիրքորոշումները: Ընդ որում, դրանք պետք է հիմնավորված լինեն փաստերով: Նման պարագայում գնահատման գործընթացն անշուշտ կշահի, կտրուկ կբարձրանա դրա օբյեկտիվությունը:

Եթե որևէ օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառով այս համագործակցությունը խաթարվում է, կարող են առաջանալ խնդիրներ: Մասնավորապես, կարող են հակասություններ ի հայտ գալ գնահատող խմբի անդամների դիտարկումներում, ինչն, իհարկե, տարակուսելի է: Նման խնդիրներից և տարակարծություններից խուսափելու համար անչափ կարևոր է խմբի անդամների սերտ փոխգործակցությունը:

Պակաս կարևոր չէ նաև ՏՄԱԿ-ի տնօրենի՝ գնահատման և մշտադիտարկման հարցերով տեղակալի վերահսկողական գործառույթը: Վերջինս մի կողմից պետք է ուսումնասիրի գնահատող խմբի անդամների՝ հատուկ մանկավարժի, սոցիալական մանկավարժի և հոգեբանի կողմից կատարված աշխատանքը՝ հնարավորինս բացառելով երկիմաստություններն ու սխալները, մյուս կողմից՝ պետք է կարողանա ստեղծել այնպիսի աշխատանքային միջավայր և մթնոլորտ, որի շրջանակներում հնարավոր լինի ձևավորել փոխվստահության և փոխօգնության մշակույթ: Այս առումով կարևոր նշանակություն ունի տնօրենի տեղակալի փորձառությունը և արհեստավարժությունը: Գնահատող խմբի անդամների համագործակցությունից, տնօրենի տեղակալի վերահսկողական գործառույթից զատ կարևոր է նաև գնահատող խմբի և գնահատվող երեխայի ծնողների (կամ օրինական ներկայացուցչի) միջև փոխգործակցությունը: Երեխայի վարքագծի, բնավորության և խառնվածքի շատ առանձնահատկությունների վերաբերյալ լիարժեք և ամբողջական տեղեկատվություն կարող է տալ միայն ծնողը: Դրանք հաճախ այնպիսի մանրամասն և ճշգրիտ նկարագրություններ են, որոնք կարող են օգտակար լինել գնահատող խմբի անդամների համար, ունենալ կողմնորոշիչ դեր և նշանակություն՝ մեծապես նպաստելով գնահատման գործընթացի օբյեկտիվության բարձրացմանը: Գաղտնիք չէ, որ կրթության

առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումն իրականացվում է ծնողի գրավոր համաձայնությունը ստանալուց հետո: Անշուշտ, եթե ծնողը տվել է իր համաձայնությունը, ապա որոշակի հույսեր է կապում գնահատման գործընթացի, ինչպես նաև դրա ավարտից հետո անհատական ուսուցման պլանի շրջանակներում իրականացվող աշխատանքների՝ անհատական և խմբային պարապմունքների, վերապատրաստումների և խորհրդատվությունների հետ:

Մյուս կողմից՝ լինում են դեպքեր, երբ ծնողն ի սկզբանե ունի բացասական նախատրամադրվածություն, չի վստահում գնահատման գործընթացի արդյունավետությանը: Պատճառներն, իհարկե, կարող են տարբեր լինել՝ սկսած տարաբնույթ ոչ հավաստի տեղեկություններին տուրք տալուց մինչև երեխայի մոտ առկա կայուն դժվարությունները չընդունելը, սակայն մեր նպատակն այդ պատճառներին անդրադառնալը չէ: Ե՛վ ծնողների կողմից որոշակի վստահության, և՛ անվստահության դրսևորումների ու տարակուսանքի պարագայում գնահատող խումբը զգալի աշխատանք պետք է իրականացնի: Եթե առաջին դեպքում խնդիր կա այդ վստահությունն ամրապնդելու և հուսալիության մթնոլորտ ձևավորելու, ապա երկրորդ պարագայում անհրաժեշտ է քանդել արդեն իսկ ձևավորված, երբեմն՝ նույնիսկ կարծրացած «անվստահության պատերը»:

Ինչպե՞ս ձևավորել վստահության մթնոլորտ գնահատող խմբի և ծնողների միջև

- ✓ **Ապրումակցում**

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ծնողները հաճախ ավելի զգայուն են արտաքին ազդակների նկատմամբ, երբեմն դյուրագրգիռ են, կարող են հուզվել, բարկանալ, մեղադրել կամ հանդիմանել: Գնահատող խմբի գործառույթն այս առումով պետք է լինի ապրումակցելը, հուզական կամ դյուրագրգիռ վիճակում հայտնված ծնողին հասկանալը, նրան հնարավորինս ռացիոնալ և կառուցողական դաշտ բերելը:

- ✓ **Մասնագիտական և աշխատանքային արհեստավարժություն**

Վստահություն կներշնչի՞ արդյոք ծնողին իր երեխայի կրթական կարիքի գնահատումն իրականացնող այն մասնագետը, որը խոսում է անվստահ, հաճախ տարակուսում և տատանվում է, երբեմն դադարներ է վերցնում՝ չկողմնորոշվելով, թե հաջորդիվ ինչ պետք է անի: Պատասխանը, թերևս, միանշանակ է՝ Ո՛Չ: Իսկ ծնողի համար վստահելի՞ է այն մասնագետը, որը որոշակի համոզվածությամբ

պնդում է երեխայի մոտ առկա այս կամ այն դժվարության մասին, սակայն ընթացքում պարզ է դառնում, որ այդ վստահությունն այնքան էլ ամուր հիմքերի վրա խարսխված չէր կամ կամ էլ անհիմն էր ամբողջապես: Անվիճելի է, որ ծնողը չի վստահի նման գործողություններով «աչքի ընկնող» մասնագետին: Ակնհայտ և անհերքելի իրողություն է նաև, որ վերոնշյալ դեպքերում գործ ունենք մասնագիտական արհեստավարժության պակասի և էթիկայի նորմերի խախտումների հետ, ինչն անթույլատրելի է: Եթե մասնագետը ցանկանում է վստահության մթնոլորտ ձևավորել, պետք է ի ցույց դնի իր գիտելիքներն ու փորձառությունը՝ այդպիսով ապացուցելով ծնողին, որ նրա երեխան հուսալի ձեռքերում է:

Միևնույն ժամանակ, սակայն, մասնագետը պետք է խուսափի ավելորդ ինքնավստահության դրսևորումներից և անհրաժեշտության դեպքում խորհրդակցի այլ գործընկերների հետ: Եթե ծնողը համոզվի, որ իր երեխայի կրթական կարիքի գնահատումն իրականացնում է արհեստավարժ մասնագետներից բաղկացած փորձառու մանկավարժների խումբը, մեծ է հավանականությունը, որ գործընթացը կանցնի հարթ, առանց էական խոչընդոտների:

Համագործակցությունը գնահատվող երեխայի հետ

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման գործընթացում համագործակցություն հաստատելու տեսանկյունից թերևս կարևորագույն նշանակություն ունի գնահատվող երեխայի և գնահատող խմբի փոխգործակցությունը: Որքան էլ արհեստավարժ և կոմպետենտ լինի գնահատող խումբը, որքան էլ ամուր հիմքերի վրա խարսխված լինի ծնողների և գնահատող մասնագետների միջև ձևավորված վստահությունը, այս ամենը ցանկալի արդյունքին չի հանգեցնի, եթե ձախողվի գնահատվող երեխայի հետ արդյունավետ կոնտակտ հաստատելու գործընթացը:

Ինչպե՞ս հաստատել արդյունավետ կոնտակտ գնահատվող երեխայի հետ

Համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի՝ **կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձ** է համարվում խոսքի և լեզվի, հաղորդակցման, լսողության, տեսողության, ինտելեկտի (մտավոր), հուզական, վարքի, շարժունակության և այլ խնդիրներով պայմանավորված՝ ուսուցման հետ կապված դժվարություններ ունեցող, ինչպես նաև բացառիկ

ընդունակություններ ունեցող անձը, որին հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացնելու համար անհրաժեշտ են կրթության առանձնահատուկ պայմաններ, ներառյալ՝ խելամիտ հարմարեցումներ:[70]

Նշված ոլորտներում սովորողի մոտ նկատվող դժվարությունները կարող են տարբեր լինել: Գնահատման գործիքակազմի համաձայն՝ առանձնացվում է 0-ից 4 միավորանոց սանդղակը, որտեղ 0-ն տվյալ ոլորտում որևէ դժվարություն չունենալու ցուցիչն է, իսկ 4-ը՝ համապատասխանաբար առավել խորը դեպքերի, երբ սովորողն ունի անհամեմատ ավելի մեծ աջակցության կարիք: Վերոնշյալ սահմանման մեջ հստակորեն ընդգծվում է, որ բացառիկ ընդունակություններ ունեցող անձը ևս համարվում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող: Վերջիններս, սակայն, հասկանալի պատճառներով գնահատվում են բոլորովին այլ գործիքակազմով և սկզբունքներով:

Ստացվում է, որ Գնահատող խմբի անդամները կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողին գնահատելիս կարող են գործ ունենալ ուսումնառության ամենաչնչին դժվարություններ ունեցող երեխայից մինչև անգամ առօրյայում և կենցաղում պարզունակ գործողությունները դժվարությամբ կատարող երեխայի հետ: Չմոռանանք նաև բացառիկ ընդունակություններ ունեցող անձանց, որոնց պարագայում, ինչպես արդեն նշեցինք, գնահատման գործիքակազմը բոլորովին այլ է: Ուստի գնահատող խմբի անդամները պետք է հաշվի առնեն վերոնշյալ տարբերությունները և գնահատման ներկայացված սովորողի հետ կոնտակտ հաստատելիս լինեն ճկուն, նրբանկատ ու հետևողական: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման ներկայացված սովորողները, ի թիվս վերոնշյալ տարբերությունների, բնականաբար ունեն նաև միմյանցից տարբերվող բնավորություն, խառնվածքի տարբերություններ, ինչը ևս հարկավոր է հաշվի առնել:

Գնահատող խմբի համար այս առումով կարևոր նշանակություն ունի նախքան գնահատումը սկսելը ուսումնական հաստատության կողմից ուղարկված հայտին ծանոթանալը, որտեղ (Ձև 9) ներկայացվում է մանրամասն տեղեկատվություն ինչպես գնահատման ներկայացված սովորողի կարողությունների (ձևավորող գնահատման արդյունքներ), այնպես էլ կայուն դժվարությունների վերաբերյալ:

[70] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 3, 10.2 կետ

Սույն փաստաթղթի՝ հավուր պատշաճի լրացման պատասխանատուն ուսումնական հաստատության տնօրենի տեղակալն է:

Ձև 9-ի լրացման առումով հաճախ խնդիրներ են առաջանում, քանի որ ուսումնական հաստատության մանկավարժների (հաստատության խմբի) կողմից տրամադրվող տեղեկությունները, որոնք հաստատվում են հաստատության տնօրենի տեղակալի ստորագրությամբ, հաճախ լիարժեք և ամբողջական տեղեկատվություն չեն տրամադրում: Երբեմն այդ տեղեկությունները պարունակում են ընդհանրական ձևակերպումներ, որոշակիորեն հակասական և տարակուսելի նկարագրություններ, ինչը ոչ միայն թույլ չի տալիս նախնական պատկերացում կազմել գնահատման ներկայացված սովորողի մոտ նկատվող կայուն դժվարությունների և/կամ բացառիկ ընդունակությունների մասին, այլև որոշ առումներով ունենում է ապակողմնորոշիչ նշանակություն: Ձև 9-ի լրացման ամենահաճախ հանդիպող սխալներից մեկն էլ այն է, երբ ուսումնական հաստատության մանկավարժների կողմից սովորողի մոտ նկատվող ուսումնառության կայուն դժվարություններին զուգահեռ պարտադիր կերպով լրացվում է նաև «Ուսումնառության ընթացքում արձանագրված բացառիկ ընդունակությունների վերաբերյալ ամփոփ նկարագիր» հատվածը: Եվ սա՝ այն պարագայում, երբ սովորողը բացառիկ կարողություններ չունի: Այդ հատվածը լրացնելիս ուսումնական հաստատության մանկավարժները երբեմն թվարկում են երեխայի բնավորության որոշակի գծեր, տալիս նկարագրողական բնույթի այլ տեղեկություններ, որոնք, սակայն, որևէ առնչություն չունեն բացառիկ ընդունակությունների հետ:

Իրականում Ձև 9-ի՝ «Ուսումնառության ընթացքում արձանագրված բացառիկ ընդունակությունների վերաբերյալ ամփոփ նկարագիր» բաժինը պետք է լրացվի միայն այն պարագայում, երբ երեխայի մոտ նկատվում են բացառիկ կարողություններ, երբ կա որոշակի հիմնավոր կասկած, որ այս երեխան ունի այդ բացառիկ կարողությունը: Խոսքը կարող է վերաբերել ոչ միայն ակադեմիական, այլև գեղագիտական առարկաներին: Ընդ որում, նշված հատվածն անհրաժեշտ է լրացնել այն դեպքերում, երբ սովորողը կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման է ներկայացվում բացառիկ ընդունակություններով պայմանավորված, կամ էլ այն դեպքերում, երբ, ի թիվս ուսումնառության ընթացքում դրսևորվող կայուն դժվարությունների, որևէ այլ ոլորտում բացառիկ ընդունակություններ է ցուցաբերում: Որքան էլ առաջին հայացքից կարող է

զարմանալի թվալ, նման դեպքեր ևս գրանցվում են, և անհրաժեշտ է հաստատության խմբի հետևողականությունը՝ դրանք արձանագրելու համար:

ՁԵՎ 9

ՍՈՎՈՐՈՂԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

ՆԿԱՐԱԳԻՐ

Անուն, հայրանուն, ազգանուն՝ _____

Ուսումնական հաստատություն՝_____, **Դասարան՝** _____

Ուսումնառության ընթացքում արձանագրված կայուն դժվարությունների ամփոփ նկարագիր

_____

_____

_____

_____

_____

_____

Ուսումնառության ընթացքում արձանագրված բացառիկ ընդունակությունների վերաբերյալ ամփոփ նկարագիր

_____

_____

_____

_____

Հայտորոշիչ և ձևավորող գնահատման ընթացքում հավաքագրած տեղեկատվություն

_____

_____

_____

_____

_____

_____

Ուսումնական հաստատության տնօրենի տեղակալ՝ _____ (ստորագրություն) _____ (անուն, ազգանուն)

Ամսաթիվ՝ _____

(ձևը լրաց. 30.05.24 N 47-Ն)

Նշված խնդիրը լուծելու, Ձև 9-ի լրացումն հավուր պատշաճի ապահովելու նպատակով ՏՄԱԿ-ի մասնագետների կողմից ինչպես հաստատության խմբի անդամներին, այնպես էլ տնօրենության ներկայացուցիչներին պարբերաբար տրամադրվում են խորհրդատվություններ:

Ըստ վերոնշյալ կարգի՝ սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը կարող է տևել 5-25 աշխատանքային օր: Ժամանակային նման միջակայքի սահմանումը պայմանավորված է բազմաթիվ գործոններով՝ սկսած սովորողների տարաբնույթ առանձնահատկություններից մինչև որոշ դեպքերում երեխայի հետ արդյունավետ կոնտակտ հաստատելու դժվարությունը: Կարևոր է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը բաղկացած է երեք փուլից՝

1) 1-ին փուլ՝ սովորողի կրթական ծրագրերին մասնակցության դիտարկում,

2) 2-րդ փուլ՝ սովորողի զարգացման հնարավորությունների բացահայտում և գնահատում,

3) 3-րդ փուլ՝ կրթության առանձնահատուկ անհրաժեշտ պայմանների սահմանում:

Սովորողի՝ կրթական ծրագրերին մասնակցության դիտարկումն ու զարգացման հնարավորությունների բացահայտումը իրականացվում են սովորողի ուսումնական հաստատությունում՝ ուսուցման և ուսումնառության ընթացքում[71]:

Ստացվում է, որ եթե, օրինակ՝ գնահատումը ամռան ամիսներին է իրականացվել (ծնողի դիմումի հիման վրա), այն չի կարող վավերական համարվել, քանի որ այդ ժամանակ ուսումնական գործընթաց տեղի չի ունենում, և ըստ էության խաթարվում է 1-ին փուլի՝ «սովորողի կրթական ծրագրերին մասնակցության դիտարկման» օրենսդրական պահանջը:

Ինչպես արդեն նշեցինք, սովորողները կարող են ունենալ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք՝ պայմանավորված խոսքի և լեզվի, հաղորդակցման, լսողության, տեսողության, ինտելեկտի (մտավոր), հուզական, վարքի, շարժունակության և այլ խնդիրներով: Նշված խնդիրներից յուրաքանչյուրն ունի իրեն բնորոշ յուրահատուկ դրսևորումներ, ինչը ևս պետք է հաշվի առնվի գնահատող խմբի կողմից:

Համագործակցությունը հաստատության մակարդակի կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման գործընթացում

Հաստատության մակարդակի աջակցության ծառայությունները տրամադրվում են Հաստատության մանկավարժահոգեբանական աջակցության խմբի կողմից (Հաստատության խումբ), որի կազմում ընդգրկվում են առարկայական մեթոդական միավորումների մանկավարժները, դասղեկը, ուսուցչի օգնականը, գրադարանավարը, սոցիալական մանկավարժը, հոգեբանը, լաբորանտը և երկարօրյա խմբերի մանկավարժական աշխատողները:

[71] ՀՀ Կրթության և գիտության նախարարի 13 ապրիլի 2017 թ. N 370-Ն հրաման, բաժին 2-րդ, կետ 8-րդ և 9-րդ:

Հաստատության խումբն աջակցում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի հետ աշխատող մանկավարժական աշխատողներին.

- ✓ պլանավորելու, ապահովելու և գնահատելու առարկայական չափորոշիչներով և ծրագրերով նախատեսված՝ սովորողի առանձնահատկություններին, զարգացման հնարավորություններին և առավելագույն ներուժին համապատասխան գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների ու արժեքների ձևավորումը.
- ✓ կիրառելու դասավանդման սովորողակենտրոն և ինտերակտիվ մեթոդներ՝ յուրաքանչյուր սովորողի համար ուսումնական գործընթացը հավասարապես խթանելու, ինչպես նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ներառումն ու ակտիվ մասնակցությունն ապահովելու համար.
- ✓ սովորողի մանկավարժներին՝ սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքին համապատասխան իրականացնելու առաջադրանքի, թեստերի, գիտելիքների ստուգման, գնահատման ու ժամանակի պլանավորման խելամիտ հարմարեցումներ.
- ✓ սովորողներին և ծնողներին՝ ուսման մեջ, առօրյա հարաբերություններում և արտակարգ իրավիճակներում հանդիպող արգելքների և դժվարությունների հաղթահարման գործընթացում.
- ✓ տրամադրելու երկարօրյա խմբերում ընդգրկված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին նրանց ԱՈՒՊ-ներով սահմանված աջակցության ծառայություններ՝ դասապատրաստում, ինքնուրույն սովորելու հմտությունների ձևավորում ու զարգացում:

Հաստատության տնօրենի տեղակալը կարող է հրավիրել ընդլայնված ժողով տարածքային խմբի անդամների մասնակցությամբ, եթե անհրաժեշտություն է առաջացել վերանայելու սովորողի ԱՈՒՊ-ով սահմանված աջակցության ծառայությունները՝ համաձայն սովորողի ուսումնառության արդյունքների:

Սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը, գնահատման արձանագրության և եզրակացության պատճենը, հայտորոշիչ, ձևավորող և ամփոփիչ (բնութագրող և

միավորային) գնահատումների փաթեթները և Անհատական ուսուցման պլանի բնօրինակը պահպանվում են սովորողի Անհատական թղթապանակում:

Ըստ կարգի՝ նշված մասնագետները, ինչպես նաև տարածքային խմբի անդամները և սովորողի ծնողները (կամ օրինական ներկայացուցիչը) պետք է հանդիպեն նվազագույնը 2 ամիսը մեկ անգամ հրավիրվող միասնական ժողովների ընթացքում՝ ամփոփելու տվյալ ամիսների ընթացքում տրամադրված աջակցության ծառայությունները, արձանագրելու սովորողների ունեցած ձեռքբերումները, առաջընթացը և առկա դժվարությունները, առաջարկներ ներկայացնելու սովորողի մոտ առկա դժվարությունների հաղթահարման աշխատանքների ձևերի և մեթոդաբանության ուղղությամբ:[72] Միասնական ժողովի արձանագրությունը հաստատում են տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի տնօրենի տեղակալը և հաստատության տնօրենի տեղակալը (Ձև 4):

Ձև 4

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Անհատական ուսուցման պլանի գնահատման

Սովորողի անուն, հայրանուն, ազգանուն՝ _____
Ուսումնական հաստատություն՝ _____, **Դասարան՝** _____
Ամփոփ նկարագիր (ձեռքբերումներ, առաջընթաց, առկա դժվարություններ)
_____
_____
_____
_____
_____
_____

Առաջարկություններ (առկա դժվարությունների հաղթահարմանն ուղղված աշխատանքների ձևեր և մեթոդաբանություն)
_____
_____
_____
_____
_____
_____

Ուսումնական հաստատության տնօրենի տեղակալ՝ _____
(ստորագրություն, անուն, ազգանուն)

_____ տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի տնօրենի տեղակալ՝ _____
(ստորագրություն, անուն, ազգանուն)

Հաստատման օր, ամիս, տարի՝ _____

[72] ՀՀ Կրթության և գիտության նախարարի 13 ապրիլի 2017 թ N 370-Ն հրաման, կետ 4-րդ,.:

Անհատական ուսուցման պլանը (Ձև 1) լրացվում է բոլոր այն մանկավարժների կողմից, որոնց առարկաների դասավանդման ընթացքում սովորողին անհրաժեշտ են հարմարեցումներ: Ուսուցիչները, բնականաբար, ունեն տարբեր մոտեցումներ, դասավանդման սկզբունքներ և մեթոդներ, ուստի բացառված չէ, որ մանկավարժներից մեկին հաջողվի սերտ կոնտակտ հաստատել սովորողի հետ, մյուսներին՝ ոչ: Հաճախ լինում են դեպքեր, երբ մանկավարժը նկատում է սովորողի վարքի կամ բնավորության այնպիսի առանձնահատկություն, որը կարող է օգտակար լինել գործընկերների համար ևս: Անհրաժեշտ է անպայման կիսվել նման տեղեկություններով, ինչն անշուշտ կնպաստի աշխատանքի արդյունավետ կազմակերպմանը՝ երեխայի լավագույն շահը կարևորելով:

Առաջին հայացքից կարող է թվալ, որ վերոնշյալը պարզ ճշմարտություն է, և ենթադրաբար բոլորն էլ այդպես են վարվում: Իրականում, սակայն, տեղեկատվության փոխանակումը, կառուցողական քննարկումները և մտքերի փոխանակությունը հաճախ չէ, որ ինտենսիվ բնույթ են կրում, ինչի հետևանքով ապագայում կատարվելիք աշխատանքների արդյունավետությունը կարող է էականորեն նվազել:

Տարածքային մակարդակի կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրում

«Տարածքային մակարդակի աջակցության ծառայությունները տրամադրվում են տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մանկավարժահոգեբանական խմբի կողմից (Տարածքային խումբ), որի կազմում ընդգրկված են հատուկ մանկավարժ, սոցիալական մանկավարժ և հոգեբան, իսկ ըստ անհրաժեշտության՝ նաև այլ մանկավարժներ և մասնագետներ:

Տարածքային աջակցության ծառայությունների կազմակերպման և տարածքային խմբի աշխատանքների համակարգման պատասխանատուն տարածքային կենտրոնի տնօրենի տեղակալն է:

Հաստատությունում տարածքային մակարդակի աջակցության ծառայությունները տրամադրվում են սովորողին, նրա մանկավարժներին և ծնողին՝ համաձայն ԱՈԻՊ-ով սահմանված գործողությունների:

Տարածքային աջակցության ծառայությունների տրամադրումը սկսվում է ԱՈԻՊ-ի հաստատումից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Տարածքային կենտրոնը խորհրդատվություն և գործնական աջակցություն է տրամադրում ուսումնական հաստատությանը.

- ✓ սովորողի ԱՈՒՊ-ով սահմանված խելամիտ հարմարեցումների (ուսուցման անհատական տեխնիկական միջոցներ, գույք և սարքավորումներ, մատչելի ձևաչափերով (տպագիր, աուդիո և վիդեո) մշակած ուսումնական նյութեր, բանավոր և գրավոր հաղորդակցման այլընտրանքային միջոցներ) ձեռքբերման ու ստեղծման հարցերով.
- ✓ մշակելու «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքով սահմանված մատչելի միջավայրի ստեղծման տեխնիկական առաջադրանքներ՝ մատչելի միջավայրի չափանիշներին, այդ թվում՝ համընդհանուր դիզայնի չափանիշներին համապատասխան[73].
- ✓ ձեռք բերելու համապատասխան գույք և սարքավորումներ, ապահովելու մատչելի տարածքով դասասենյակներ, լաբորատորիաներ, ճաշարան, մարզադահլիճ, գրադարան և սանհանգույցներ:

Հաստատությունում Տարածքային խումբը Հաստատության ուսուցիչներին և մանկավարժական թիմին տրամադրում է աջակցություն հետևյալ ուղղություններով.

- սովորողի՝ ուսումնական գործընթացում ակտիվ մասնակցությունը խթանելու նպատակով իրականացնում է սովորողի առաջընթացի, դասաժամերին նրա ներգրավվածության և մասնակցության դիտարկում.
- սովորողի հետ աշխատող մանկավարժներին (Հաստատության խումբ) տրամադրում է խորհրդատվություն և տեխնիկական աջակցություն սովորողի ուսումնական նյութերի հարմարեցումների, դասի պլանավորման, սովորողի մասնակցությունը խթանող դասավանդման մեթոդների, դասարանում սովորողի նստատեղի, առաջադրանքների հանձնարարման ու կատարման ձևերի ընտրության, դասընկերների հետ սոցիալական հարաբերությունների և շփումների խթանման հարցերում.
- խորհրդատվություն և գործնական աջակցություն է տրամադրում սովորողի հետ աշխատող մանկավարժներին սովորողի՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքին համապատասխան,

[73] ՀՀ օրենքը Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին՝ ընդունված 2021 թվականի մայիսի 5-ին

իրականացնելու առաջադրանքի, թեստերի, գիտելիքների ստուգման, գնահատման ու ժամանակի պլանավորման խելամիտ հարմարեցումներ ապահովելու նպատակով.

- խորհրդատվություն է տրամադրում երկարօրյա խմբերում ընդգրկված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների հետ աշխատող մանկավարժներին՝ դասապատրաստման, ինքնուրույն սովորելու հմտությունների ձևավորման ու զարգացման հարցերում.
- խորհրդատվություն է տրամադրում սովորողի ծնողին նրա ուսումնառության արդյունավետության բարձրացման, առկա դժվարությունների հաղթահարման և սոցիալական ու կենցաղային հմտությունների զարգացման ուղղություններով:

Դասերից հետո սովորողի ԱՈՒՊ-ով սահմանված աջակցության ծառայությունները սովորողին տրամադրում են հաստատությունում, իսկ ծնողի դիմումի հիման վրա՝ նաև տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնում: Սովորողին տրամադրվող կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տեսակը, տևողությունն ու ծավալները սահմանված են Ձև 10-ում:

Տարածքային կենտրոնը հաստատության մանկավարժների և նրանց ծնողների համար մշակում և իրականացնում է դասընթացներ ու գործնական պարապմունքներ՝ կրթական ծառայությունների մատչելիության, ներառականության, որակի ու արդյունավետության բարձրացման վերաբերյալ»:

Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները, որոնք սահմանվում են Ձև 10-ում, տրամադրվում են սովորողներին գերազանցապես անհատական, երբեմն նաև խմբային պարապմունքների ձևով: Այս առումով ևս չափազանց կարևոր է, որպեսզի մասնագետի՝ հոգեբանի, հատուկ մանկավարժի և/կամ սոցիալական մանկավարժի կոնտակտը սովորողի հետ հաստատվի հնարավորինս դինամիկ և սահուն կերպով: Սեպտեմբերին, երբ մեկնարկում են պարապմունքները, նախևառաջ կատարվում է սովորողների դիտարկում, որի ընթացքում մասնագետները ծանոթանում են սովորողի առանձնահատկություններին՝ փորձելով ընտրել նրա հետ աշխատանքները կազմակերպելու առավել արդյունավետ միջոցն ու մեթոդաբանությունը: Բնականաբար, տարբեր են նաև մասնագետները. նրանցից յուրաքանչյուրն ունի և՛ իր մասնագիտությանը բնորոշ, և՛ հոգետեսակով պայմանավորված

առանձնահատկություններ: Դիտարկման փուլում մասնագետը հնարավորություն ունի իր մասնագիտական կոմպետենտության շրջանակներում սահմանել լավագույն նպատակները և փորձել հասնել դրանց:

Ձև 10

Ծառայությունների ժամկետային և ծավալային ցուցանիշներն ըստ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի և մանկավարժահոգեբանական աջակցության աստիճանի				
Հատուկ մանկավարժական ծառայություն	1-ին աստիճան = հսկում	2-րդ աստիճան = հաճախակի աջակցություն	3-րդ աստիճան = մեծ հաճախականությամբ աջակցություն	4-րդ աստիճան = մշտական աջակցություն
Ըստ կարիքի ապահովել լոգոպեդի, էրգոթերապևտի, տիֆլոմանկավարժի, սուրդոմանկավարժի, օլիգոֆրենոմանկավարժի ծառայություն	*Ըստ կարիքի ապահովել համապատասխան մասնագիտական աջակցությունը՝ շաբաթական 60 րոպե տևողությամբ, որից առավելագույն 45 րոպե սով որոշի հետևանքի կամ խմբային պարապմունքների տեսքով*	*Ըստ կարիքի ապահովել համապատասխան մասնագիտական աջակցությունը՝ շաբաթական 90 րոպե տևողությամբ, որից առավելագույն 60 րոպե (շաբաթական երկու անգամ՝ 30 րոպե) սով որոշի հետևանքի կամ խմբային պարապմունքների տեսքով*	*Ըստ կարիքի ապահովել համապատասխան մասնագիտական աջակցությունը՝ շաբաթական 90 րոպե տևողությամբ, որից առավելագույն 60 րոպե (շաբաթական երկու անգամ՝ 30 րոպե) սով որոշի հետևանքի կամ խմբային պարապմունքների տեսքով*	*Ըստ կարիքի ապահովել համապատասխան մասնագիտական աջակցությունը՝ շաբաթական 90 րոպե տևողությամբ, որից առավելագույն 60 րոպե (շաբաթական երկու անգամ՝ 30 րոպե) սով որոշի հետևանքի կամ խմբային պարապմունքների տեսքով*
Հոգեբանական ծառայություն	**1-ին աստիճան = հսկում**	**2-րդ աստիճան = հաճախակի աջակցություն**	**3-րդ աստիճան = մեծ հաճախականությամբ աջակցություն**	**4-րդ աստիճան = մշտական աջակցություն**
Հոգեբանի ծառայություն	*Ըստ կարիքի ապահովել համապատասխան մասնագիտական աջակցությունը՝ շաբաթական 60 րոպե տևողությամբ, որից առավելագույն 45 րոպե սով որոշի հետևանքի կամ խմբային պարապմունքների տեսքով*	*Ըստ կարիքի ապահովել համապատասխան մասնագիտական աջակցությունը՝ շաբաթական 90 րոպե տևողությամբ, որից առավելագույն 60 րոպե (շաբաթական երկու անգամ՝ 30 րոպե) սով որոշի հետևանքի կամ խմբային պարապմունքների տեսքով*	*Ըստ կարիքի ապահովել համապատասխան մասնագիտական աջակցությունը՝ շաբաթական 90 րոպե տևողությամբ, որից առավելագույն 60 րոպե (շաբաթական երկու անգամ՝ 30 րոպե) սով որոշի հետևանքի կամ խմբային պարապմունքների տեսքով*	*Ըստ կարիքի ապահովել համապատասխան մասնագիտական աջակցությունը՝ շաբաթական 90 րոպե տևողությամբ, որից առավելագույն 60 րոպե (շաբաթական երկու անգամ՝ 30 րոպե) սով որոշի հետևանքի կամ խմբային պարապմունքների տեսքով*
Սոցիալ-մանկավարժական ծառայություն	**1-ին աստիճան = հսկում**	**2-րդ աստիճան = հաճախակի աջակցություն**	**3-րդ աստիճան = մեծ հաճախականությամբ աջակցություն**	**4-րդ աստիճան = մշտական աջակցություն**
Սոցիալական մանկավարժի ծառայություն	*Ըստ կարիքի ապահովել համապատասխան մասնագիտական աջակցությունը՝ շաբաթական 60 րոպե տևողությամբ, որից առավելագույն 45 րոպե սով որոշի հետևանքի կամ խմբային պարապմունքների տեսքով*	*Ըստ կարիքի ապահովել համապատասխան մասնագիտական աջակցությունը՝ շաբաթական 90 րոպե տևողությամբ, որից առավելագույն 60 րոպե (շաբաթական երկու անգամ՝ 30 րոպե) սով որոշի հետևանքի կամ խմբային պարապմունքների տեսքով*	*Ըստ կարիքի ապահովել համապատասխան մասնագիտական աջակցությունը՝ շաբաթական 90 րոպե տևողությամբ, որից առավելագույն 60 րոպե (շաբաթական երկու անգամ՝ 30 րոպե) սով որոշի հետևանքի կամ խմբային պարապմունքների տեսքով*	*Ըստ կարիքի ապահովել համապատասխան մասնագիտական աջակցությունը՝ շաբաթական 90 րոպե տևողությամբ, որից առավելագույն 60 րոպե (շաբաթական երկու անգամ՝ 30 րոպե) սով որոշի հետևանքի կամ խմբային պարապմունքների տեսքով*

(ձևը խմբ. 30.05.24 N 47-Ն)
(հավելվածը լրաց., փոփ., խմբ. 30.12.22 N 88-Ն, 30.05.24 N 47-Ն)

Համագործակցությունը ՏՄԱԿ-ի և ուսումնական հաստատությունների ղեկավարների միջև

ՏՄԱԿ-ի և ուսումնական հաստատությունների ղեկավարների միջև գործընկերային փոխգործակցությունը, թերևս, հիմքը և գրավականն է այն համագործակցության, որը պետք է ծավալեն երկու կառույցների աշխատողները՝ նպաստելով համընդհանուր ներառական կրթության կազմակերպմանը: Այդ համագործակցությունը պետք է հենվի այն օրենսդրական հիմքերի վրա, որոնք սահմանում են ՏՄԱԿ-ների և ուսումնական հաստատությունների փոխգործակցության բնույթը և շրջանակը: Ամենից առաջ դա ՀՀ կառավարության 2023 թ. փետրվարի 16-ի N 216-Ն որոշումն է «Հանրակրթական ուսումնական հաստատության և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մանկավարժական և վարչատնտեսական աշխատողների պաշտոնների անվանացանկը, դրանց նկարագիրը սահմանելու մասին»: Ըստ սույն որոշման՝ ՏՄԱԿ-ի տնօրենի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա հետևյալ կառավարչական հմտությունները և ունակությունները.

ա. թիմային աշխատանքի կազմակերպում,

բ. հաշվետվությունների մշակում և ներկայացում,

գ. միջանձնային հարաբերությունների և հաղորդակցության հմտություններ,

դ. տեղեկատվության հավաքագրում, վերլուծում և կառավարում,

ե. աշխատանքի, կատարողականի գնահատում և կառավարում,

զ. անձնակազմի կառավարում,

է. ժամանակի կառավարման հմտություններ,

ը. ռեսուրսների բաշխում և կառավարում,

թ. որոշումների կայացում,

ժ. խնդիրների լուծում,

ժա. բանակցություններ վարելու հմտություններ,

ժբ. ելույթներ ունենալու հմտություններ,

ժգ. որոշումների և փաստաթղթերի նախապատրաստում[74]:

[74] ՀՀ կառավարության 16 փետրվարի 2023 թ. N 216-Ն որոշումը Հանրակրթական ուսումնական հաստատության և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մանկավարժական և վարչատնտեսական աշխատողների պաշտոնների անվանացանկը, դրանց նկարագիրը սահմանելու մասին:

Ի թիվս վերոնշյալ կառավարչական հմտությունների և ունակությունների, չափազանց կարևոր է, որպեսզի և՛ ՏՄԱԿ-ների, և՛ ուսումնական հաստատությունների տնօրենները գործնական կառավարումն իրականացնեն գերազանցապես ժողովրդավարական կառավարման սկզբունքներով: Ժողովրդավարական կառավարումը ուսումնական հաստատությունում և ՏՄԱԿ-ում կարևոր է այն պարզ պատճառով, որ Հանրակրթության պետական չափորոշչի (ՀՊՉ) հիմքում ընկած 8 առանցքային կարողունակություններից մեկը ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակությունն է, ըստ որի՝ սովորողները պետք է նպաստեն ժողովրդավարության, ազատության, բարեվարքության, սոցիալական արդարության և իրավական պետության գաղափարի վրա հենվող հասարակության զարգացմանը: Նրանք ճանաչողության միջոցով պետք է ձևավորեն սեր հայրենիքի նկատմամբ, գիտակցեն Հայաստանի Հանրապետության սահմանադրությունից բխող ազգային, պետական, հասարակական շահերն ու առաջնահերթությունները տարածաշրջանային և համաշխարհային մակարդակներում: Սովորողները պետք է արժևորեն մարդու կյանքն ու արժանապատվությունը, կարևորեն սեփական քաղաքացիական պարտքը, քաղաքացիական մասնակցության մշակույթը՝ որպես ժողովրդավարության կենսունակության հիմք: Նրանք պետք է ճանաչեն հասարակության կյանքի մշակութային, պետաիրավական և տնտեսական ոլորտներն ու համակողմանիորեն վերլուծեն դրանք, ցուցաբերեն նախաձեռնողականություն, ինքնուրույն որոշումներ կայացնելու, դրանք իրագործելու ունակություն և հետևանքների համար պատասխանատու լինելու պատրաստակամություն[75]:

Իսկ հնարավո՞ր է արդյոք, որ սովորողը լինի ՀՊՉ-ից բխող վերոնշյալ կարողունակության կրողը, եթե ուսումնական հաստատությունում կամ ՏՄԱԿ-ում պաշտոնավարի այնպիսի ղեկավար, որը հեռու է նշված կարողությունների, հմտությունների և արժեքների կրողը լինելուց: Պատասխանն այս պարագայում միանշանակ չէ, սակայն մի բան, թերևս, հստակ է. նման դեպքում սովորողի մոտ կառաջանա խզում. մի կողմից տեսական գիտելիքները և արժեքները, որոնք միտված են արժանապատիվ մարդ և քաղաքացի ձևավորելուն, մյուս կողմից՝

[75] ՀՀ կառավարության 4 փետրվարի 2021 թ. N 136-Ն որոշումը ՀՀ կառավարության 2010 թ. ապրիլի 8-ի N 439-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

պաշտոնավարող տնօրենը, որը, օրինակ, աչքի է ընկնում կառավարման ավտորիտար ոճով, կառավարում է վախի մթնոլորտում կամ վարչահրամայական համակարգը որպես լծակ օգտագործելով: Նման խզումն անթույլատրելի է մի քանի պատճառներով:

Նախ, սովորողն այդպիսով կարող է կասկածի տակ առնել կառավարման ժողովրդավարական ոճի արդյունավետությունը և կենսունակությունը: Երկրորդ՝ կարող է ստեղծվել այնպիսի մթնոլորտ, որը հիմնավորապես հակասում է ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակության սկզբունքներին ու բնույթին: Նման պարագայում մեծ է հավանականությունը, որ ժողովրդավարական մոտեցումները և արժեհամակարգը իրականություն չեն դառնա և գործնականում տեսանելի չեն լինի, հետևաբար՝ չենք ունենա այն արդյունքը, որը սահմանվում է ՀՊՁ-ով և այլ օրենսդրական փաստաթղթերով:

Այժմ անդրադառնանք ուսումնական հաստատություններում և ուսումնաօժանդակ կենտրոններում կառավարման ժողովրդավարական ոճի առանձնահատկություններին:

Ուսումնական հաստատություններում և ուսումնաօժանդակ կենտրոններում (ինչպիսին ՏՄԱԿ-ն է) ժողովրդավարական կառավարման սկզբունքները նպաստում են կրթության կառավարման ներառականությանը, թափանցիկությանը և արդյունավետությանը: Դրանք ներառում են հետևյալ հիմնական սկզբունքները.

1. Ներառականություն և մասնակցություն

- Որոշումների կայացման գործընթացին բոլոր շահագրգիռ կողմերի (ուսուցիչներ, սովորողներ, ծնողներ, վարչական անձնակազմ) մասնակցության հնարավորություն:
- Աշխատանքային խմբերի և խորհրդակցական մարմինների ձևավորում:

2. Թափանցիկություն

- Բոլոր որոշումների, ֆինանսական և վարչական հարցերի բաց ներկայացում շահառուներին:
- Հաշվետվողականության ապահովում հրապարակային զեկույցների և ժողովների միջոցով:

3. Իրավահավասարություն

- Բոլոր անձանց համար հավասար հնարավորությունների ապահովում՝ անկախ սեռից, սոցիալական վիճակից կամ այլ հատկանիշներից:
- Խտրականության բացառում կառավարման գործընթացներում:

4. Կենտրոնացում սովորողի վրա

- Որոշումներ ընդունելիս սովորողի կարիքների և բարօրության առաջնահերթություն:
- Սովորողների ձայնի լսելիություն և նրանց ներգրավում կառավարման գործընթացում:

5. Համագործակցություն

- Համատեղ աշխատանք և երկխոսություն բոլոր շահառուների միջև:
- Համայնքի ներգրավում ուսումնական գործընթացի և կառավարման հարցերում:

6. Նորարարություն և ճկունություն

- Կրթության ոլորտում նոր գաղափարների ու մեթոդների ընդունում և իրագործում:
- Ճկունության դրսևորում՝ փոփոխություններին և մարտահրավերներին արձագանքելու համար:

7. Հաշվետվողականություն

- Վարչական և ուսումնական արդյունքների պարբերական գնահատում:
- Շահագրգիռ կողմերի նկատմամբ կառավարման համակարգի պատասխանատվության ապահովում:

8. Էթիկական կառավարում

- Կառավարման մոտեցումների համապատասխանեցում բարոյական և սոցիալական արժեքներին:
- Համերաշխության և փոխադարձ հարգանքի խթանում:

Այս սկզբունքները նպաստում են կրթական միջավայրի բարելավմանը՝ ձևավորելով համագործակցության, վստահության և արդարության մթնոլորտ:

Հիշենք և ընդունենք հետևյալ պարզ ճշմարտությունը.

Մարդիկ աշխատում են այնպես, ինչպես իրենց ղեկավարում են: Պրոֆեսիոնալ ղեկավարը վատ աշխատակից չի ունենում[76]:

Ալեքսանդր Ֆրիդման

[76] Фридман А., «Вы или вас: профессиональная эксплуатация подчиненных. Регулярный менеджмент для рационального руководителя», 514 стр., «Издательство «Добрая книга», 2009.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք:
2. ՀՀ կառավարության 4 փետրվարի 2021 թ. N 136-Ն որոշումը ՀՀ կառավարության 2010 թ. ապրիլի 8-ի N 439-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
3. ՀՀ կառավարության 16 փետրվարի 2023 թ. N 216-Ն որոշումը հանրակրթական ուսումնական հաստատության և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մանկավարժական և վարչատնտեսական աշխատողների պաշտոնների անվանացանկը, դրանց նկարագիրը սահմանելու մասին:
4. ՀՀ օրենքը Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին՝ ընդունված 2021 թվականի մայիսի 5-ին:
5. ՀՀ կրթության և գիտության նախարարի N 370-Ն հրամանը կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգը հաստատելու մասին, 13 ապրիլի 2017 թ.:
6. А. Фридман, «Вы или вас: профессиональная эксплуатация подчиненных. Регулярный менеджмент для рационального руководителя», 514 стр., «Издательство «Добрая книга», 2009.

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՆԵՐԱՌՈՂ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ 3

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ
ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Տպագրությունը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 1500:
Տպագրված է «Սեկո-Պրինտ» տպագրատանը: